

Մ. Ա. ԱՎԱԳՅԱՆ



ՎԻՄԱԿԱՆ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԲԱՌԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

С. А. АВАКЯН

ЛЕКСИЧЕСКИЕ
РАЗЫСКАНИЯ
ПО АРМЯНСКОЙ
ЭПИГРАФИКЕ



4
4-71

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՎԻՄԱԿԱՆ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

20



Մենագրության մեջ հետազոտված են X—XIV դարերի վիճակն արձանագրություններում վկայված սոցիալ-տնտեսական, հարկային, պարհակային բաներ ու տերմիններ: Վիճակն քննազերի հույսական, էչզբիտ վերձանությունների հիմամբ առաջարկվում են շուրջ 200 տերմինների, անձնանունների, տեղանունների բառարևություն ու ստուգաբանություն, որոնք մեծ մասամբ չեն արտացոլված միջին դարերի մատենագրական երկերում և կարևոր նշանակություն ունեն ոչ միայն միջին հայերենի բառապաշարի անդաշարծերն ուսումնասիրելու, այլև երկրի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, միջնադարյան Հայաստանի հարկային-պարտության համակարգերի հետազոտության առումով:

Աշխատությունը կարող է օգտակար լինել հայ ժողովրդի, հայերենի պատմության, հայկական վիճագրական հուշարձանների ուսումնասիրության հետաքրքրվողների համար:

Խմբագիրներ՝ Ս. Վ. ԳՏՈՒՐՅԱՆԻԱՅԱՆ
է. Լ. ՄԿՐՏՅԱՆ

70103—36
Ա 704(02)—78 13—78

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978

ЛВАКЯН СУРЕН АРТЕМОВИЧ
ЛЕКСИЧЕСКИЕ РАЗЫСКАНИЯ ПО АРМЯНСКОЙ
ЭПИГРАФИКЕ

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван — 1978

ԵՐԿՈՒ ԽՈՒՔ

Միջնադարի վիճագրական հուշարձաններին փորագրված նրա բազմաթիվ նոր կամ ինչ ծանր բաներ, տերմիններ, անձնանուններ ու տեղանուններ, որոնք չեն ավանդված մատենագրական աղբյուրներում և կարևոր նշանակություն ունեն ոչ միայն միջին հայերենի բառամբերի տեղաշարժերի, այլև երկրի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, ժողովրդի կենցաղի, հարկային-պարհակային համակարգերի ուսումնասիրության համար: Պատմական Հայաստանի տարածքի վրա պահպանված տարբեր դարերի մեծ ու փոքր մեկ տասնյակ հազարից ավելի վիճակն արձանագրությունները մեզ են հասել ժամանակի, տարբերի, մարդու ավերածություններից մեծ մասամբ եղծված, խաբարված վիճակով, որի հետևանքով երանց հավաստի վերձանությունն ու բնագրերի լիակատար վերականգնումը զգալի ղժվարություններ են հատուցում, և հաճախ անվստահելի են՝ երանցում ամբողջված լեզվական միավորների բառաֆենության կամ ստուգաբանության առումով:

Այսպես անցյալ դարի սկզբներից՝ հայկական վիճագրերը բնօրինակվել, վերձանվել ու երատարակվել են ժամանակի պարբերական մամուլում կամ առանձին զավառների ու հնավայրերի տեղագրությանը նվիրված երկերում: Այս հրատարակումներն այսօր էլ անգնահատելի աղբյուր են ծառայում հատկապես այն բնագրերի հետազոտության համար, որոնք չեն պահպանվել, եղծվել կամ անմատչելի են նոր ուսումնասիրությունների համար: Սակայն պատշաճ հատուցելով վիճակն բնագրերի նախորդ վերձանողների տեղանուն վաստակին՝ չենք կարող չնշել այդ վերձանությունների մեծ մասի անհաբազատությունը իրականի՝ քարի վրա փորագրվածի հետ, ոչ նույնական լինելը, անթիվ այլընթերցումներն ու աղավաղումները, որոնց հետևանքով նույնիսկ անաղարտ պահպանված վիճագրերը ներկայացվել են զգալապես աղեակված, մասամբ

խմբագրված, ընդմիջակված և ուշ ժամանակների գրական լեզվի օրինաչափություններին ու ուղղագրությանը հարմարեցված տեսնոք: Հասկանալի է, որ փառագրված տառաչափերի այսպիսի ոչ իրական ընթերցումներն ու բառաշարադասերը չեն կարող հավասարի հիմք ծառայել լեզվական միավորների ստույգ բառակենտրոնացման, ըստ այդմ, ամբողջ արձանագրության բովանդակության վերականգնման համար:

Վերջին ժամանակներս հայ վիճակային բնագրերի վերծանության ու հրատարակության գործը դրվել է արդյի արձանագրագիտության մակարդակին համապատասխանող հիմքերի վրա՝ շնորհիվ հայ վիճագրագիտության հրատարակողներ Ն. Մատի. 2. Օրբելու, Կ. Ղաֆաղարյանի, Ս. Բարխուդյանի ջանքերի: Այժմ արձանագրությունների գիտական վերծանությանն իրև աճեցածեշտ հավելում ստորգում են բնագրերի լայնակարներ, զարգացր պատենդանտներ՝ հրատարակման հատուկ պայմաններով, բայց ամենայն ընդարձակ ու սպասելի վերլուծականներով, որոնք հնարավորություն են տալիս յուրաքանչյուր առանձին դեպքում ստույգելու ընթերցումների հավաստիությունը, եզրակացու առկա տարբերություններն ու եղծված հատվածների վերականգնումները: Վիճագրերի գիտական հրատարակման այս սկզբունքներով են իրականացվել Ն. Մատի. 2. Օրբելու՝ հնագույն շինարարական կառուցողական արձանագրությունների վերծանությունները, Կ. Ղաֆաղարյանի հրատարակած՝ Հովհաննեսյանի, Ստեփանի, Հարությունի, Երևանի վիճագրական ժողովածուները, 2. Օրբելու և Ս. Բարխուդյանի կազմած «Իրվան հայ վիճագրության» մասնաշարի պրակները, որոնցում բնագրերը տրվում են նույնական, վստահելի կամ ստույգելի ընդօրինակություններով, հանգամանակի մեկնություններով և օժանդակ յուսարանող այլ հյուրերով:

Վիճակային արձանագրություններում վկայված անձանքը բաների, տերմինների, հատուկ անունների մի մասի քաջատարությունը պահանջի ընդգրկանով և տարբեր եզրագրությամբ տալիս են այդ բնագրերը վերծանողները, մեկնարանողները, բարձրամակերիներ և բառարանագիրները՝ հիմք ընդունելով իրենց ձեռքի տակ եղած հասկանալի ոչ այնքան հարագատ ընդօրինակություններ: Այդ է պատահար, որ հիշյալ գիտությունների բառակենտրոնացումներում տեղ են գտել բազմաթիվ անիրական մեկնություններ, որոնք անհարձ են վկայ-

ված իրադրությունը և հակասում են բնագրերի բովանդակությանը: Վիճագրերում արագացված նոր բառաչերտի զգալի մասը, նախալին, ցայժմ մնում է կամ անհորշ ու բեական, կամ բնավ չըպարզարանված վիճակում: Դժվար է այս վիճակի համար կշտամբել վիճագրերի բառամբերը հետազոտող նախող վիճագրագետներին ու բանասերներին. չէ՞ որ հայկական հագարավոր վիճագրերի գիտական, վստահելի կամ ստույգելի վերծանությունները միայն վերջերս են դրվում հայագետների սեղանին, և նրանց լեզվագիտական, բառակենական լիակատար հետազոտությունը դեռ նոր է սկսվում:

Բառակենտրոնությունների սույն հաստքը զայն և մասամբ լրացնելու այդ բացը: Այստեղ հավակված, եզրագրված ու մեկնարանված են գիտությանը հայտնի վիճակային բնագրերում ավանդված անձանքը, սակավ հայտնի կամ աղհատված բառեր, տերմիններ, տեղանուններ և անձնանուններ: Մեր բառակենտրոնությունների լեզվական առաջըր քաղված է արձանագրությունների՝ վերևում հիշված գիտական, ստույգելի ժողովածուներից, անհրաժեշտ դեպքերում նաև առանձին վիճագրագետների անտիպ հավաքածուների հյուրերից: Տարիներ շարունակ աշխատելով պատմական հուշարձանների պահպանության մարմիններում և ԳԱ հնագիտության և օգագրության ինտիտուտի հայ վիճագրության բաժնում՝ հնարավորություն ենք ունեցել այցելելու Հայկ. ՍՄԷ և Ադրբ. ՍՄԷ հայկական հուշարձաններն ու հնավայրերը, ինճետույն ընդօրինակել, վերծանել և ըստույգել ենք մեծ թվով վիճակային բնագրեր, որոնք կազմում են մեր ստվար հավաքածուն և օգագրծվել են եղած անհորշ ընթերցումները եզրակցելու համար: Հարկային-պարհակային ու վաշխաղային հակա մի շարք տերմիններ հայագիտությանը հայտնի են դառնում մեր վերծանությամբ, սույն հրատարակումով (բաճակար, բարաթ, ձիակայն, միսալում, մատերի, շորտայ, չափող, ընկկի, սարյոք և այլն):

Մեր առաջարկված ստուգաբանությունների առաջին անհրաժեշտ նախապայմանը մեջ բերվող վիճագրական վկայությունների նույնակերությունն է իրական հնա: Ձեռագիր մատյանների երկման, վիճակային բնագրերը ևս շարադրված են ոչ բառաշարագրությամբ, բազմաթիվ կցագրերի ու փակագրերի կիրառումով, հնագրական բազմազան հնարաններով, ժամանակի գրական համա-

կարգված լեզվից զգալի շեղումներով և բարբառային ներքափանցումներով, որոնք մեծապես ղոճարացնում են պահպանված առաջաբերի վերձևություններ և լեզվական միավորների հավաստի վերականգնումները: Ենդիր բարբառում է նաև ճրանով, որ, ինչպես ասվեց, վիմագրերից շատեր դուրսի ընթացում էայնայնի, եղծվի, անընթեռնի կն դարձել, սոսի ճրանց ընդօրինակությունը, վերձևությունը մեծ նախություն ու խոնարհվել են պահանջում, և միշտ չէ, որ ցանկալի արտանմներ են ստացվում:

Տվյալ լեզվական միավորի բառակենտրոնը նեեկայացնելուց առաջ նախ արվում է այդ միավորը պարունակող հատվածի հավաստի, յուսանկարով կամ գծագիր պատկերումով ստուգվող ընդօրինակությունը, ապա նախորդ վիճելի ալլերբերցումների ու հրեապարսկի վրա եղած մեկնությունների կենտրոնը:

Տերմինների ու հատուկ անունների վիճագրական վկայություններ նշգրտելու և ճրանց իրական մեկնությունը հասնելու նպատակով հանախ ստիպված ենք եղել վիճարկելու եղած տեսակետները և առաջարկելու վիճական բնագրերի նոր վերձևություններ և ըստ այդմ՝ ճշգրտված բառերի այլ ստուգաբանություններ: Մի շարք դեպքերում նախորդ մեկնությունները հիմնված են եղել վիճագրերի ոչ իրական ընթերցումների վրա, և սրանց շակումով այդ բացատրությունները ինքնին ներկվել են (*գեռազաց—ստազաց, Թամար—Թարթ, դանագիր մեծի և զգիրու—դանագիր մեծ և փոքր, իրիցի—բիցի, Խորասու—Խորամ, Աշոտկա վասն—Աշոտ կաւասն* և այլն):

Մի քանի օրինակներում վերլուծներն առաջացել են ճիշտ արտագրված առաջաբերի ոչ ստույգ բառակազմումից, որի հետևանքն էր վերականգնվել և բացատրվել են բնագրին անհարկ, երբևէ անհիմաստ միավորներ (*Հասարակ—Հասարա, յանուն ալ—Հանաց, նասին—նասի ճ (100), շորտայ—իշոր տայ, ու եղնիս—Ու եղնիս, խարճ ով—խարճող* և այլն):

Մեր բառակենտրոններում սեղ են գտել և այնպիսի բառեր ու տերմիններ, որոնք հայագիտությանը այս կամ այն չափով հայտնի են միշին դարերի մատենագրական հուշարձաններից կամ կենդանի խոսվածքներից: Չարկ ենք համարել նույն անցարդատեալու դրանք մեկնությանը, քանի որ վիճագրերում պահպանված հնագույն ու հավաստի վկայությունները մեծ մասամբ էլ հայտ են բեր-

ում այդ բառերի կամ տերմինների նոր անուններ, իմաստային ուշագրավ ներբանցներ, կամ լրացում, ճշգրտում են գրավոր հիշատակությունների ցանկը: Այսպես, օրինակ, բարթթ=մորթթակ, փոխանակագիր պարսկերեն փոխառությունը բոլոր աղբյուրներից հայտնի է հայագիտությանը և բացառված բառարաններում, սակայն Աշտարակի Մարինե կնիգում 249 (1317 թ.) մի արտանագրում, որի միակ վերձևությունը մեջ է բերված սույն աշտարանությունը, որի միակ վերձևությունը մեջ է բերված հարկերի շարքում, այլ հարկանան պաշտոնյաների թվարկում մեջ (*և պարտնայնի զայն աներոյն զամէն չարկ թողին. ոչ բարթթ, ոչ պարթ, ոչ ամիրայ, ոչ ձեռնատր, ոչ զգիր... ոչ ով Հնա տներոյն զայն չարթ*), ըստ այդմ պարզվում է, որ տվյալ բնագրի բարթթը արտացոլում է մեղդղական հարկանավաճման կապալառական Էղանակը՝ այլ անվանումներով լայնորեն հայտնի պատմագիտությանը: Այսպես նաև՝ բաճակար, զաճիակ, զիր, զուկակ, խամ, խեշ, կուպար, Հատ, սենակ և այլ բառեր, որոնք վիճագրերում հիշատակված են իմաստային այլ, երբեմն սովորականից զգալիպես արբեր անուններով:

Սույն աշխատության որոշ բառանդղվածներ արհիներ առաջ նետարակվել են հայագիտական հանդեսներում, սակայն դրանց զգալի մասը այստեղ է մուծվել կարևոր նշգրտումներից, լրացումներից ու բարեփոխություններից հետո:

Վիճագրական վկայությունները մեջ են բերվում ներազդողին շափ կարևորապես, բայց ամփոփ կապակցություններում՝ ճշելով հուշարձանը, որից անվանված է կազմվածը, փորագրման ժամանակը՝ հայկական մեծ թվականով (երբ պահպանվել է թվագիրը), կամ ցույց առալով անթվականների դարը, ապա մատենագիտական համակրն տեղեկություններ: Այդ վկայություններն ալիլի հավաստի ու վստանելի դարձնելու նպատակով անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրությանն առնել կարևոր, ճշգրտված բնագրերի յուսանդարները կամ գծագիր պատկերումները, որոնք ընթերցողին հնարավորություն կտան ստուգելու մեջ բերվող վերձևությունների նույնականությունը, հարագատությունը՝ քարի վրա փորագրվածի հետ:

«Բառակենտրոններ» հայ վիճագրական հուշարձաններում անվանված բառաբերի հետազոտության առաջին փորձ է և իբրև

այդպիսին գուեկ է լիակատար ու սպառիչ լինելու հավանություն-
նից: Հեղինակը կցանկանար, որ առաջարկվող վիճական բնագրերի
հզգաումներ, ստուգաբանություններն ու մեկնությունները համա-
զիչ, բնդունելի լինեին հայագետների համար, նեանց օգնելին հիշա
ընկալելու և օգտագործելու վիճագրերում ամբարված հսկայական
բազմաբնույթ նյութերը:

Բ Ա Ռ Ա Ք Ն Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. ԱՔՆԻ ԱԿՆ

Արևմտյան Շիրակի Հոռոմոս հուշարձանի ՉժՁ (1269) թվա-
կիր արձանագրության մեջ ոմն Քաիկ թագուհի վանքին է նվիրում
Արելի ակն, որը գտնվում էր Անի քաղաքում, ի Դվնա դրանն: Բնա-
գրի այդ հատվածը ն. Սարգիսյանի հավաստի ընդօրինակությամբ
կարգաշջվում է. նա՝ Քաիկի բազմի, դուստր Ծարսպշանին նաու ի
Հոռոմոսի վանքս գԱրելի ակն, որ ի Դվնա դրանն, զոր իմ օրդին
Հազրպէկն ի Գաւէգայնէն գեակնեց: Է: ձ: սպ: Ը: ձ: սպ ի վեռս
խառն աբա, որ եղա: Թ: Ծ: սպ... սպա հետևում են հատուցման և
անեծքի ձևակերպումները (ՍԱՐ 158):

Հարց է առաջանում, ի՞նչ է նվիրել Քաիկ թագուհին Հոռոմոսի
վանքին, կամ ինչպե՞ս հասկանալ Արելի ակն ունեցվածքը Առա-
ջինն այդ հարցը բնում է էմինը և գԱրելի ակն թաղմանում МЕЛН-
НИЧНЫЙ ПОСТАВ, այսինքն ակը հասկանում է ջրաղացի աշր (ИЭА
43): Կ. Բասմաջյանը Տիրբան Հոսենցի ՌԿԷ (1215) թվականի նը-
վիրագրության մեկնության մեջ, այլ առիթով, առանձին հիշատակ-
ված ակը թարգմանում է աղաց, ջրաղացի աշր, մեկ զույգ Կար ու-
նեցող ջրաղաց (КВА 40): Ուշագրավ է պրոֆ. Բ. Առաքելյանի կար-
ծիքը այս խնդրի մասին. քանի որ վանքին նվիրված Արելի ակն
գտնվում է ի Դվնա դրանն, այսինքն Անի քաղաքի զոների մոտ, ու-
րեմն այն չէր կարող ջրաղաց լինել, ուստի մնում է ենթադրել, որ
ավյալ իրադրության մեջ ակն պետք է հասկանալ աղբյուր, աղը-
յուրի ավազան կամ ձուակ: Ավելի ստուշ տանելով իր այս միտքը՝
հեղինակը հասնում է հետաքրքիր և մինչ այդ չդիտված եզրահանգ-
ման. բնվող ժամանակաշրջանում (ԺԲ—ԺԳ դդ.) աղբյուրի ծորակ-
ները կամ ավազանները սոսկ բարեգործական ձեռնարկումներ չէին
Անի քաղաքում, ինչպես ենթադրվել է, այլ հաճախ նաև հասութա-

բեր կառուցումներ, որոնք կհամտի աղբյուր էին ծառայում կառուցողների համար և իբրև այգուխեր կարող էին փոխանակվել, վաճառվել կամ նվիրաբերվել հողեր կենտրոններին¹:

Գիտնականը նման շահութաբեր աղբյուրների շարքին է դասում նաև Անիի վիճագրերում երկու անգամ հիշատակվող միլ կոշված կատույցը, որ, ինչպես պարզվել է, աղբյուրի խողովակաշարի և այգուխան-ծորակի շինություն էր (տե՛ս միլ բառահոգվածը):

Այս տեսակետն այնքան էլ չի հիմնավորվում Որ Արելի ակն ջրաղաց է նշանակում, հաստատվում է նույն Հոռոմոսի վանքի ՈՉԳ թվականի մի այլ նվիրադրությամբ, որով Ջմրուխտ խաթունը վանքին է տալիս ակն ի մին ջրաղաց բոլոր ի Կարմեթին ձորին, ու Արելյանց կոշի (ՍՍԲ 153, ՂԱՇ 24), այսինքն Արելյանց կամ Արելի ջրաղացի մի ակը, որ ամենայն հավանականությամբ զրանից երեք տասնամյակ անց նորից է նվիրվել վանքին: Ոչ մի հիմք չկա Արելի ակը և Արելյանց կոշվող ջրաղացի ակը տարբեր ձևանաբանություններ համարելու:

Ինչպես հայտնի է, Անիի բազմաթիվ ջրաղացները կառուցված էին Ախուրյան գետի վրա, Գայիծորի (= Գլիծոր), որի գտնվմանը ավերին էին տեղավորված զարարի մի քանի դարպասները, զոները՝ Գվնա դուռ, Գլիծորի դուռ, Ջոր դուռ, Սարգիս ծիլենցի դարպաս, Աղելաբերցի դարպաս և այլն:

Հասկանալի է, որ Ախուրյանի վրա կառուցված ջրաղացների տեղադրությունը ցույց տալու համար առավել հարմար էր մատնանշել նրանց դիմացի կամ մերձակայքի հուշարձանները, այս զեպրում՝ եզած դռները կամ դարպասները, ինչ է արված է խնդրոտ առարկա նվիրադրում՝ ի Գվնա դռանն: Պատահական չէ, որ մեր մատնանշած մյուս արձանագրության մեջ Ջմրուխտ խաթունի բնծայած Արելյանց ջրաղացը նույնպես տեղորոշված է մերձակա հուշարձանով, այս անգամ ոչ թե Գվնա դռնով, այլ Ախուրյանի կամուրջով (ի Կարմեթին ձորին): Հիրազի, Անիի Գվնա դռնից ոչ հեռու, նրա դիմաց պահպանվել են մոտ 28 մետր թուխջով հույունի կամուրջի ավերակները (ՕՈՒ 125): Անիում Ջարարիի եկեղեցու ԺԳ դարակղերի մի նվիրադրում հետևյալ կերպ են մատնանշվում

վանքին նվիրված ջրաղացները. ակն մի ջրաղաց յկարեմաց ձորին... և զգետաղաց և ձորաղաց ջրաղացանյն ծառայութիւնն (Գ 1 58): Ինչպես ցույց ենք տալիս գետաղաց թև տաղաց բառահոգվածում, այժյալ հասվածը պետք է հասկանալ՝ Ապարանքի ձորում գտնվող ջրաղացի մի աչքը, ինչպես նաև՝ գետաղաց ու ձորաղաց ջրաղացների ազունավածը (= ծառայութիւն):

Մեր ասածը կարելի է հաստատել Բագնայր հուշարձանի նույն ժամանակների մի արձանագրությամբ, որտեղ նույնպես կառույցը (ճիշտ է, ոչ ջրաղաց) տեղադրված է թաղարի դռների մոտ. ևս՝ Սարկալազ ևսու գիւմ ձիւրանեաց կիւ ակն, ու ի Կարուց դռանն (ՍՍԲ 182, ՂԱՇ 120): Ակներե է, որ այստեղ է, որ այստեղ ևս նվիրված ձիւրանայր գտնվում էր ոչ թե Անիի Կարուց (Կարսի) դռների կից կամ շատ մոտ, այլ հավանաբար այդ դռների ուղղությամբ, Բայտաղեղի և Վրացական եկեղեցիների մերձակայքում, որտեղ, հիրավի, պահպանվել են 5—6 ձիւրանայրների ավերակներ (ՕՈՒ 128): Հենց Տիգրան Հոնենցի ՈկԳ (1215 թ.) նշանավոր արձանագրության մեջ վանքին նվիրվել է՝ պանելն, զոր գնել էի և շինել Գվնա դռանն (Գ 1 63), բայտ այս, պարտեղը կամ բանջարանոցը (պանել) գտնուվելիս է եղել ոչ թե անսպասման Գվնա դարպասին մոտ կամ կից, այլ նրա ուղղությամբ, դիմաց, հավանաբար Ախուրյանի ափին:

Ինչ մնում է Անիի միլ կոշված կատույցին, այս ակներե է, որ երկու դեպքում էլ այն հիշատակվում է նվիրատուների շինարարական գործերը թվարկելիս, և ոչ մի ակնարկ չկա նրա՝ կհամառաբեր հաստատություն լինելու մասին: Այսպես, Արելարիք Պահլավունու ՆՁԾ (1036) թ. շինարարական արձանագրում միլը հիշվում է Փրկիչ տանարի կառուցման կամ բարեկարգման առիթով (կանգնեցի միլ առ Սուր Փրկչիւ) և ոչ թե նվիրատուություններում, որից կարելի լիներ մակարերել, թե այս միլը կհամառաբեր հաստատություն էր վանքի համար: նույնը պետք է ստել նաև Տիգրան Հոնենցի նվիրագրի մասին. այստեղ էլ միլը հիշատակվում է թաղերի հետ միասին (ի Բագնայր բաղնիսն ու միլն—Գ 1 45, 63) և, հավանաբար, նրա կառուցվածքների մեջ է մտնելիս եղել:

Արելի ակը ջրաղացի կամ ձիւրանայրի ակ, այլ համարելու դեմ, բայտ Առարելյանի, առարկում է այն պարագան, որ բնադրուտ Արելի ակն տեղադրված է Անիի Գվնա դռան մոտ, և այդ պատճառով ջրաղացի կամ ձիւրանայրի ակ լինել չէր կարող, այլ միայն

¹ Տե՛ս Ռ. Աստեկյան, Փաղարները և արձանները Հայաստանում IX—XIII դդ. Գ, Բ, 1964, էջ 211:

աղբյուրի ակ, որի վրա շենք էր կառուցվել և այսպիսով վերածվել էր համաարեր հաստատության: Ի Գվնա դրանք կապակցությունը, անշուշտ, պետք է հասկանալ Գվնա դռների, դարպասների մոտ, սակայն այդ մտտիկությունը չպետք է ընդունել բացարձակ իմաստով, որ չբաղա՞ր կամ ձիթհանքը չէին կարող գտնվել այդտեղ: Ավելի շուտ ի Գվնա դրանք կուրց է տալիս, թե Ախուրյան գետի կամ Գլխոտի որ մասում էր կառուցված ջրաղացը, այսինքն՝ ավելի կողմնորոշման իմաստ ունի, քան տեղագրության: Որ ասանձին հիշատակված ակն բառը ջրաղացի աչք (մեկ բարանոց ջրաղաց) է նշանակում, հաստատվում է նաև Սանահեի վանքի ԺԳ դ. հետևյալ նվիրագրով. Ես՝ Վաչե Ավվեցի էտո ակն ի ճարհապանս և այլ բազում արդիւնս (ԿՂՄ 127): Այս բնագրի վերանորոգ իրավամբ նրվիրված ունեցվածքը հասկացել է՝ ջրաղացի մի ակը ճարհապանում:

2. ԱԹՈՌԱՀԱՐԿ, ԱԹՈՌԻ ՀԱՐԿ

Այս անվան տակ հասկացվում է այն հասույթը, որ միջին դարերում գանձվում էր բնակչությունից՝ հողեր հիերարխիայի բարձր աստիճանների կամ եպիսկոպոսական աթոռի սպասավորների պահպանության համար: Գրական աղբյուրներում, հատկապես նկատեցական ժողովների կանոններում և դատաստանագրքերում, հեղափոխված որոշվում աթոռահարկի և եկեղեցական մյուս հարկերի՝ պտղի, հատի, տասանորդի սահմանները: Պրոֆ. Բ. Առայրյանը պաղին կամ պտուղը համարում է բնակչությունից հավաքվող բերքի 1/10 մասը, որ վարից վեր բաշխվում էր հողերսականության վրա, մինչդեռ, այսպես կոչված հայրապետական հարկերը և եպիսկոպոսական աթոռի օգտին հավաքվող տարբեր ծախսվում էին միայն հողեր հիերարխիայի բարձրագույն աստիճանների կարիքները հոգալու համար:

Վիամարական հուշարձաններում ավելի որոշակի են արոտի հարկ տերմինի հիշատակությունները, բոտ այդմ, պետք է տարբերել եպիսկոպոսական աթոռի վերաբեր հարկը այն հարկից, որ գանձվում էր այդ նույն աթոռի օգտին, քանի որ հաճախ այդ եր-

կուան էլ վկայված են միևնույն՝ արոտի հարկ տերմինի տակ: Այսպես, հաջորդ օրինակներում խոսքը վերաբերում է մոնղոլական իլխանական պետությանը Անիի եպիսկոպոսական աթոռի վերաբեր հարկին. Առաքելոց եկեղեցում, ՉԼԸ թվականին. Եստֆ գվենա արոտս է գրիցանիս, որ հարկ կը ի վերեցին... նույն Անիում, զբրանից մեկ տասնամյակ հետո. Եւ գարոտին հարկն, որ յետո ի շարաց դեմ էր, զկապալն յեպիսկոպոսն բարձին եւ յառաջին սահմանս դարձուցին (Դ 1 1 22):

Այս վերջին վկայությունը գարոտին հարկն որոշ ուսումնասիրողներ արտահարկ են համարում և բնագրեր հասկանում այն իմաստով, որ քաղաքի պարտները մի շարք մոնղոլական հարկերի հետ թեթևացրել կամ վերացրել են նաև այս հոգևոր տուրքը: Այնինչ ակներև է, որ այստեղ գարոտին հարկն Անիի եպիսկոպոսական վրա դրված հարկն է, որ յետո ի շարաց դեմ էր, և որի կապալը վերցնում են եպիսկոպոսի վրայից: Ինչպես հայտնի է, Անիի եպիսկոպոսական աթոռը և հողեր դասը աղատված էր մոնղոլական հարկատվությունից, սակայն հաճախ այս սպահարկությունը խախտվում էր, և մոնղոլ հարկահանները հարկ էին պահանջում նաև հողեր հաստատություններից ու եկեղեցու սպասավորներից: Այդ պատճառով էլ ահա մեր օրինակում շեշտվում է, որ արոտի հարկը յետո դեմ էր ի շարաց, որը և վերացնում ու նախկին սահման են դարձնում Անիի պարտները:

Սակայն կան արձանագրություններ էլ, որոնցում հստակորեն հաղորդվում է եպիսկոպոսական աթոռին ազվող հասույթի մասին, հրրեմն էլ նշվում են հասույթի չափերը: Այսպես, նույն Անիի ՈւԹ (1230) թվականի մի արտոնագրում. ազատեցաք զամենայն քաղաքս քանակաց զգրիցակեղ մասա՝ զմանու եւ զկենաց եւ զըմստաղց... բէ լաւ բէ վարաք իրիցակեղ վախճանի, ոչ մեծ մասա՞ զչ փոք ի յարոտս շտալ... (Դ 1 17): Այստեղից պարզվում է, որ Անիի եպիսկոպոսական արոտին անեցիները վճարել են մեծ կամ փոք մասով կոչված տուրքը զմանու և զկենաց եւ մտաղց. որ այլ արձանագրություններից հայտնի է իբրև հարկ բաղված քանակացից կամ զհարկ քանակաց. զոր ի մանուան արե տաին (Դ 1 18):

Ավելի որոշ է արոտի հարկի հիշատակությունը Անիի ՈւԶ (1217) թ. մի այլ արձանագրության մեջ. սահման էր ի սկզբանէ յանեանայն զեղէ երկու գրիս հաց յարոտս տալ եւ ի քաղաքս ամենայն

² Տե՛ս Բ. Առայրյան, Քաղաքները..., Բ, էջ 222:

Եկեղեցիս մորթի մին զատկին տաին, ադ կս... բողի գալս հնցս
ամենայն զեղի մեծի եւ փոփու եւ զատկի մորթին ամենայն/եկե-
ղեցոյ... (Կ I 16): Արտոնի արժող հասույթի՝ ամբոսհարկի մասին
ամենացալտուն վկայութիւնը պահանջել է ն. Գեորկի վանքի 2Թ
(1260) թվականի արձանագրութեան մեջ, որ վրկայել է եկեղեցական
հարկերով զբաղվող պատմաբանների ուղարկութունից: Խոսքը
Հաղաթրին է ն. Գեորկի վանքիի տաշեորդ Յովանէս եպիսկոպոս
Արմանեցու արտոնագրի մասին է, որի վերձանութիւնը առաջինը
տալիս է Լու. Ջանիփոլայանը. նս՝ տէր Յովանէս Արմանեցի ազատ
զբեցի զԳեալա ժողովուրդս ի հաւել, որ տաին յարոսն, յիշխա-
նութեան Գոնցա խարունին. ի խնդրս Կիրակոս վարդապետին...
(Կ VI 82):

Այս արձանագրութեան մեկնութեան մեջ վերջանող Հովանէս
Արմանեցու վերացրած հարկը եկեղեցական տուրք՝ արուսանակ չի
համարում, այլ տեղական իշխանութեանը՝ Զարարյան Գոնցային
վճարվող աշխարհիկ հարկ, որն անհարկ է բնագրին և զալիս է նրա
անտուց զվերձանութունից: Մինչև ևս անհնգի, որ Յովանէս Ար-
մանեցին, անտուց է ն. Գեորկի վանքի վարդապետ, նշանավոր
պատմիչ Կիրակոս Գանձակեցու խնդրանքին, ժողովրդին ազատել է
հինց արոսանակից (նկ. 1):

Կ ԱՎԵՄՏԻՅՈՎԱՆ
ԷՍ ԱՄԵՆՅԻԱՋԱԿՊԵՏԻ

ՉՊԵՏԿԱՍՊՈՂՎՈՒՌԻՄՍԿԱՆԱԿԵՄՍԱՆՅԱՌՈՒ-
ՆՅԻՇԵԱՆՈՒԹԵՎՈՆՅԱՊԵՏԱՊԵՏՆԻՏԵՆՆԻՑԻՆՈՒԿԻ
ԱԿՈՍԿԻՒԿԻՆՅԱՅՐՈՒԹԵԱՐԱՄԱՐԿԻՄՉՈՋԱՍԱԿՈՎՈՒ
ԷՅՄՅԵՒՅԵԱԼ ԷՍԱՐՈՏԵՉՈՎԵԱՆԵՄԻՍԻԿԵՎԱՏԱՆՈՂԷՆ
ԱՐՅԵԱՆԱՆԱՄՈՒՏԱՐԱԿՄԱՐՊԱՎՈՋՈՄԵՏԵԿԵՆԵՅԻՍ
ԻՅԱԼԻՆՅՈՎԱՆՈՒԿՈՎՈՋԱԿՆԱՄԱՊՈՒՏԱՎՈՐԵՅՎ:ՉԶ:ԹՈՒՍ:
ԱԿԱՌՈՒԹԵՅՈՎՅՈՒՍԻՍԻ ---ՎԱՐՆԱԿԵՎԱՊԵՏԻ

Նկ. 1

Եկեղեցական հարկերի և տուրքերի բովանդակութեան պարզա-
բանմանը մեծապէս կարող է նպաստել Վահրամ (բնագրում Վա-
համ) Պահլավունու նշն (1026) թվականի շինարարական և օրենս-
դրական արձանագրությունը՝ փորագրված Ամբրդի եկեղեցու

Հյուսիսային դրան բարավորի վրա, ներքուստ: Այս կարեր բնա-
զիրը զնուս գիտականորեն հրատարակված չէ և այդ պատճառով
անձանթ է պատճաղիտական լայն շրջաններին: Միակ ընդօրինա-
կութիւնը պատկանում է բանասեր Ե. Տեր-Մինասյանին և հրա-
տարակվել է «Էջմիածին» ամսագրում, 1961 թ.: Ընդհնակի վերձա-
նութեան մեջ կան մի քանի շղարգված և մոխր կետեր, սակայն այս
տեսքով էլ բնագիրն ընդհանուր զարգափար է տալիս եկեղեցական
հարկերի և այլ հասույթների առթիվ Պահլավունի իշխանի կատա-
րած օրինականացման մասին: Նկատի ունենալով Վահրամ Պահլա-
վունու այս հրամանագրի կարեւորութիւնը՝ արձանագրութիւնը
մեջ ենք բերում ամբողջութեամբ, մեր վերձանութեամբ. «Յամին
նշն (1026), նս՝ իշխանս Վահրամ շինեցի զվաթողիկես ամոռ հա-
րապետական և սահմանեցի պտուղ նիցի տունն. Բ. կապինց ցո-
րեան, յկրագածոտնն յէզին. Բ. փասօր, ի Քաղաղաշաի բարակն. Ժ.
լիտր, Յէրէջն. Ա. զահեկան չիտր ե ի կնոջէ, Գ. զահեկան հողագը-
րամ, ձենագրել է Գ.: ՅԱՆԵՐԿԻ պտուղ տունն. Գ. կապինց ցորեան.
Ա. կառահատ: Այլ տար զաղաղաց վերա կարմեհեր: Ժողովուրդ, որ ոչ
կատարէ, պատձեցի յատուծոյ, իշխան, որ սիրէն, հակառ կա, զա-
սի յատուծոյ» (նկ. 2):

858

ԱՄՆ ՆՅԵ
ԵՍԻՆԵՍԵՆԱԿՄԱԿՆԱԿԱԶՆ
ՆԵՅԻՁԵԱՅՐՈՒՅԵՍԱԿՈՒ-
ՅԱՐՈՄԵՏԱՍԱԿԱՆԵՍԱԿԱՆ
ԵՄԻՊՈՂԻՆՆԻԳՆՈՒՄԷՆ. Բ. ԱՅՎՈՒՅ
ՄԱՐՏՆԱԿՈՒՄՆԵՆԳԻՆ ԲՈՒՍՈՒՅ
ԻԿ ԱՆՔՈՂԱՍՏՈՒՍԱՎԱԿՆ Ժ. ԼԵՍՆԵՐԵՍԿ
ՆԱԳՅ. ՅՈՒՌՈՒՆԵՆՆԵՅԳ Գ ԳՅ ՏՈՂԱԿՐ. ԵՆՈՒ
ՈՆԱԿՐԵԼԵՒ. ԴՆԱԿՐԵՄՊԻՍՏՈՒՍՊԵՍՈՒՍ
Ռ. ԿԱՍՏԻՃ. ՄՐ. ԱՎՄԱՆԱՅԱՍԱԿԱՍՆԵՍԵՑ. 2
ՐԱՆԱԿՆ ԿԵՐԱԿԱՐՄՆՆ ԻՆԵՐՆ ՊՍԱԿԵ. Գ.
ԳՅ: ՏՈՂԱԿՐԱԿՆ ՔԱԿՐ ՍՆԱԿՐՅՆԵՉՆԵՉՆԵՉՆԵՉՆԵՉՆԵՉ
ՈՒՐԻԴՈՒ ՈՂ ԿԱՍՄԱՐԵ ՄԱՍԿՅԵՒ ՅԵՒ ՅԵՒ
ԻՇԽԱՆ ՈՐՍՊԻՐՆ ՅԱԿԱՌԿԱԿԱՍՏՅԱՍՅԱ:

Նկ. 2

Յ ե. Տեր-Մինասյան, Ամբրդաթոր արձանագրությունը, «Էջմիածին»,
1961, թ, էջ 50-51:



Համանարար այստեղ նշված հայրապետական արձող պետք է հասկանալ իբրև եպիսկոպոսական արձող, իսկ սահմանված հարկերն ու հոգևոր արարողությունների դիմաց Համարվող տուրքերը իբրև այդ աթոռի օգտին գանձվող հասույթներ, ըստ այդմ, աթոռին ենթակա թեմերը կամ գավառները՝ Նիքոս, Արագածոտնը, Քաղաքաշարը (Վաղարշապատ) և Անբերդը պտուղ և մյուս վճարումները եպիսկոպոսական աթոռին պետք է հասկացնենք համաձայն այս օրինականացման:

Վահրամ Պահլավունու արձանագրության մեջ հիշատակված են ժամանակի հոգևոր բուրդ տուրքերը, նաև հակածե անվանել վերաբերված եկեղեցական արարողությունների դիմաց վերցրվող վրձարումները (պտուղ, հողադրամ, կենգադրամ, ձեռնադրել, տեսարներեք, պսակի և այլն): Սակայն, ինչպես երևում է, Պահլավունու հրամանագրում չի հիշվում առանձին արձանագրի կամ եպիսկոպոսական արձողի օգտին հավաքվող հարկի մասին: Այստեղ պտուղն ու աթոռահարկը միենույն՝ պտուղ հարկի անվան հանդես գալիս:

Այստեղից, դատելով վիմագրական հուշարձանների մեր մեջ բերած ամպլյաներով, պտուղը կամ պտղին (մեծ մասամբ բերքի տասանորդի շահով) և արձանագրել միենույն հարկն են և ոչ մի հիմք չկա դրանք առանձին-առանձին տուրքեր համարելու:

Յ. ԱՂԲԱՐ ԱՌԵՂ (=ԱՂԲԱՐԱՂԵՂ), ԹԵ՝ ԱՂԲ... ԱՌԵՂԱ

Վարդենիք հնավայրի ս. Գրիգոր եղեկեցու բնակի հյուսիսային որմնաշան վրա փորագրված նվիրագրում ըստ Ս. Բարխուդարյանի միակ վերձանության կարգացվում է. Ես՝ աղբ... արեզա միայրանեցա Սուրբ Գրիգորիս... և վանեյակնիս գատիկ շարար արեին պատարագ ինձ էյեսա (Գ IV 165):

Անադարտ պահպանված այս բնագրում նվիրատուի անունը չի վերականգնված և տեղ չի գտել անձնանունների ցանկում: Արձանագրության գծագիրը ընթացիկանություն մեջ աղբ գրերից հետո զրբված կետերն ավելորդ են, բանի որ այդ մասում գրեր չեն եղել և արեզա կարգացված տառաշարքը զրանց անմիջական շարունակությունն է:

Հուշարձանի մոտ ստուգելով բնագրի տառածները՝ համոզվեցինք, որ նրանց ընթացիկանությունն այնքան էլ ստույգ չէ, և ամբողջ անձնանունը կարելի է վերձանել՝ Աղբար Առեզա կամ Աղբարաղեզա, այսինքն աղբ գրերից հետո փորագրված կցագրեր պետք է կարդալ առ, իսկ արեզա կարգացված գրերից վերջինը ոչ թե ա է, այլ՝ ս, իսկ բ-ի փոխարեն հնարավոր է ո կամ ղ ընթերցում (նկ. 3):

Սակայն խնդր առարկա անձնանունը կարելի է ճշգրտել նաև Վարդենիքից ոչ հեռու Ալուշալու (հին կթանոց) հնավայրի «Կարմիր խարտաք» գյուղատեղի մաստու-տապանատան թաղին փորագրված շինարարական արձանագրության միջոցով, ո՞րը, ի դեպ, դուրս է մնացել վերջերս հրատարակված «Գրիվանի» 4-րդ պրակից և ստորև հրատարակվում է առաջին անգամ. կամա բարեբարին սատուծոյ ես՝ Աղբար Առեզա (կամ Աղբերաղեզա),

Խաչատուր, Խաչայնարոս շինեցամ սք զխուրանս յիշատակ մեզ Եւ ձնողաց մեռոց Եւ գառակաց (ՄՀ): Թև Աղբերաղեզ, Աղբեր Առեզ ձեներից որն է ավելի իրականը, զժովարանում ենք որոշել, բանի որ երկրայնիս և կամ ղ գիրը կցագրված է ա-ի աջ ստեղծին, որը կարելի է կարդալ և՛ առ, և՛ աղ:

Եթև Ալուշալու արձանագրում կցագրի կարելի է վերձանել աղ և առ, ապա Վարդենիքում ավելի հավանական է առ ընթերցումը, ըստ այսմ, Աղբար առեզա կամ Աղբար Առեզա: ԺԲ—ԺԴ գրերի վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում ավելի շատ գործածական է եղել Նղբարաղեզ, Աղբերաղեզ ար. անձնանունը, Հայրաղեզ, Սիրաղեզ, Խոցաղեզ բարդությունների նման արտահայտելով համապատասխանաբար՝ եղբոր, հոր ապավեն, սիրո հար, լսցի ամուսնում և այլ իմաստներ: Ինչ մեծում է աղբար Առեզ ընթերցմանը, ապա այստեղ էլ կարելի է մտածել, որ գործ ունենց հարազդր բարդության հետ՝ կազմված աղբար-եղբարյա = վանական, միարևն բառից և Առեզ անձնանունից:


ԵՍԱՂԲԱՐ
Ա. ԴԵՄԱՍԻ
ԱՅԲԱՆԵՅ
ԱՅ ԼԳՐԻԳ
ՈՒՍԵՒՎԱՆ
ԱՅ ԿԱՆԻՍ
ԲԱԹԱՒԻՐՆԵ
ՊԱՍԱՂԱԿՆ
ԻՆՑԵՅ ԵՄ
ՈՎԽԱՔԱՆԵ
ԴՊԻՅԱՅ

նկ. 3

4. ԱԽԲԷՐԱՆՈՒՆ (<ԵՂԱՅՐԱՆՈՒՆ), ԹԵ՝ ԱԽԲԷՐԱՆ

Հազրասի վանքի ԺՊ դարի նվիրագրերից մեկում այս անձնանվան արական հոլովածն փորագրված է հետևյալ կապիկցության մեջ. որչափ մեկ կենդանի եմք մեք ծնողացն առնեն զպատարազն՝ Կարունին, ԱնՊԷՐԱՆՆՈՒ և Խորատու; և յնա ելից՝ մեզ (ԿՂՀԲ, 165):

Խնդրո առարկա անձնանվան ուղիղ ձևը, առանց ստուգարանության փորձի, վերծանողը համարում է Ախբեբան, որ նրա կարծիքով սեռ., ար. հոլովներում պետք է տար՝ Ախբեբանն, Ախբեբանն (նո 278): Այս մեկնությունը խիստ առարկելի է. Ախբեբանն բառ կամ անձնանուն հայտջ մեջ զոլովյալուն շունի և մատենագրության մեջ էլ չի վկայված: Կա Ախբեբանուն <եղբայրանուն ար. անձնանունը, որ բազմիցս տարբեր հոլովածներով հիշատակված է Ժ-ԺՊ դարերի վիճագրերում ու ձեռագրերի հիշատակարաններում: Հնագույն վկայությունը գտնում ենք Արփիկից ոչ հեռու Մակարավանքի եկեղեցու արևմտյան բարավորի վրա փորագրված Ժ դարի նվիրագրում. Նս՝ եղբայրանուն ետու զիմ հայրենի զայզին զԴաւենյանց հողն, որ յԱզին է, ի տանն ի Սուր Սիոն Մակարավանց (նկ. 4, 4 ա):



նկ. 4

Անուն բարդ հին հայերենում ենթարկվում է ներմասնիկավոր Ա հոլովման, որի վեր հոլովներում սպասելի էր՝ անուան, յանուան, անուան, անուանց և այլն: Մակայն մեր օրինակում գործում է հին հայերենի մի այլ օրինակավորում. բարդ բառերի վերջին բաղադրիչը հաճախ փոխում է իր հոլովումը՝ իրրե ինքնուրույն բարդություն ենթարկվելով այլ հոլովման: Այսպես, նույն Հազրաս-

սի Ս. Սիոն մատուռի շինարարական արձանագրության մեջ Տեբունուն անձնանվան արական հոլովածն փորագրված է Տիբանն, փոխանակ կանոնավոր Տեբանուն. գրեցա զիբ յիշատակի Դ Բանանայից, եղբարց Անդրի՛ Դանիելի, ՏԻՄԱՆՆՈ, Գորգա (ԿՂՀԲ 248):



նկ. 4ա

Կամ նույն եղբայրների հիշատակին կանգնեցված խաչարձանի հիշատակագրում. կանգնեցա յաչա ի բաւեխատարիւն շորից եղբարց՝ Անդրէի, Դանիէի, ՏԻՄԱՆՆՈ, Գորգա (ԿՂՀԲ 250): Նշված օրինակագրությանը տիկին բառը, որ զբարարում ոչ հոլովման է (տիկնոչ, ի տիկնոչէ), իբրև բարդ անձնանունների երկրորդ բաղադրիչ փոխում է իր հոլովումը և ենթարկվում ա կամ ս հոլովման: Օրինակ, Հովհաննանյանքի ԺՊ դ. մի հիշատակագրում ունենք Մարտիկնա, փոխ. Մարտիկնոչ (ԿՂԶ 77): նույն վանքի մի այլ բրնագրում : Ռ: տիկնա = Հագարտիկնա (նո 85), Խծկոնքի ՈՉԲ (1240) Բ. մի նվիրագրում՝ զկենս ինձ առնեն՝ Բոնատորիս և զկէսն զուզակցի իմո՝ Տղատիկնա (<Տղատիկն): Իսկ Հայրավանքի ԺՊ դ. մի բնագրում նույն տիկին բառը բարդության երկրորդ կարում ենթարկվում է ս հոլովման՝ Ա: Ժամ առնեն Ասատրիկն (<Օսատրիկն) (Դ IV 73):

Այսպիսով, Այսպէրանոն, Այսպէրանուն <Ներայրանուն անձնական սեռ>, որ հելլոյզական է և ոչ մի կերպ չի կարող առնչվել Այսպէրան անիրական տառադարբի հետ:

5. ԱԿՆՆՅԸ

Այս նորագոյտ անձնանունը, որ անշուշտ ծագում է ականջ—լսելիք բառից, վիզլած է պատմական Մանհանարեից դավաճի Մակարափանջ հուշարձանի երկու նվիրատուական արձանագրութիւններում, չորս անգամ Այց նվիրագրերը հայանարեղվել և ընդօրինակվել են հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտի հայ վիճագրութեան բաժնի գիտական արշավախմբի ջանքերով 1964 թ., անձանոթ են բանասիրութեանը, ուստի հարկ ենք համարում մերերեւել Ականջ վիզլոյն ունեցող հատկաձեւեր մեր վերձանութեանը: Մակարափանքի Հին կէղեղցու արեւելյան խորանի կիսակտր թաղի կենտրոնում, քիվից վերև. Յանուն առուստոյ այս իմ գիր է Յանհարիս և միաբանաց, որ տված Ականջա, որ մեծ յուսով միաբանեցաւ և ետ հող և այլ արդիւն և : Բ : ազ շուր : Բ : գիշեր (ՄՎ) : Նույն վանքի Աստվածածին կէղեղցու արեւելյան խորանի թաղին, պատմականից վերև. Այս մեր գիր է Յանհարիս և միաբանաց, որ տուաք Ականջա, յարժամ շինեցաք զկէղեղցիս... Ականջ մեծ յայս կալաւ և միաբանեցաւ մեզ և արգեակն եղի արդեմ... : և այլ : Կ : առ ի տարին... իւր մտուր և ե հար և Հասանա և կենդանաց իւր Ականջա... (Դ VI 195):

Այս արձանագրութիւնները թվական չունեն, սակայն նրանց փորագրման ժամանակը մի բանի տարվա ճշտութեամբ որոշվում է փորք կէղեղցու շինութեամբ, որ ըստ բարափորի վիճագրի տեղի է ունեցել 1198 թ., ինչպէս նաև Յոհաննա վարդապետի հիշատակումով, որ Մակարափանքի մեզ հայտնի առաջին վանահայրն է, և ըստ վանքի վիճագրութեան, գործել է մինչև ԺԳ դարի առաջին տասնամյակը (Դ VI 154, 194):

Ականջ բառի մեջ աճ փորագրվում է տառակցումով, որ կարիք է կարողալ և՛ աճ, և՛ նա. սակայն բնագրի այլ բառերում աճ տառակցումը ամենուրեք կարողացվում է աճ (միաբանաց, յանուն, կէղեղցի և այլն), ուստի Ականջ բառի մեր վերձանութիւնը կարիքի է ստույգ համարել:

Ականջ բառը, ըստ Աճառյանի, հին մասնակարգութեան մեջ գործածվում է միայն իբրև ունկն ձեռն հոգանկին (ականջը, ականջոր), ինչպէս ակն-ի համար աշլ-ը՝ Մակարափանքի ԺԲ դարի վիճագրերում հիշատակված Ականջ անձնանունն, այսպիսով, այդ բառի կրակիտի գործածութեան հնագոյն վիզլոյնն է հայ գրական ու վիճական հուշարձաններում:

6. ԱՂԲՈՅՆՔ, ԱՂԲԻՆ

Այս բառը իբրև հողի, այդու հատկանիշ մի բանի անգամ հիշատակվում է ԺԳ դարի արձանագրութիւններում, որոնց հատկապէս վերձանութիւնները տեղագրում ենք այստեղ. Կենտրոնի վանքում՝ ևս՝ Մխիթարի, որի Գեղարի ետու զիմ աղբին այգին յեւեան և Սուրբ ուխտս... (ԳԶԽԳ 32): Հազուց թառի զխափոր կէղեղցու պատին. ևս՝ Կուկար... ետու զիմ տունն, զայգին, զաղացն և : Բ : աղբին ի Սուրբ ուխտս (ԳԶՄ 23): Տեղերի վանքի Աստվածածին կէղեղցու պատին. ևս՝ Աղբարիկ ետու զայգին աղբին ի Սուրբ Աստուածածին (ՄԶ): Մանհարի վանքի գավթում, ԺԳ դարի տանական թվորին. ևս՝ վասակ և ամուսին իմ թարսն տուաք... զՄուսա՝ Մարգարէին որդին իւր շահ և զԵնով և : Ժ : աւափար հող յաւ աղբոյն, ազատ յաւնե հարկէ (ԿՄ 123):

Այս օրինակներում աղբին, աղբոյն(ի) անականի իմաստը տվող կապակցութեան մեջ ընդհանուր ստմամբ դիտորին է հասկացվում. խոսքը աղբոս, պարտաւայգված, բերքի հողի կամ այգու մասին է: Հիշյալ նվիրագրերը փորագրելու ժամանակներում էլ բնութի այդ իմաստը հանրահայտ է եղել այն աստիճան, որ Հազուց թառի արձանագրութեան մեջ աղբին որոշիչը գործածվում է միայնակ, առանց որոշյալի, իբրև փոխանուն անական (ետու : Բ : աղբին):

Աղբին ծագում է աղբ, աղտեղութիւն, կեղտ բառից, որը, ըստ Հ. Աճառյանի, փոխառված է կովկասյան լեզուներից և ին անձնից, որ տարբեր բաներից անականներ է կազմում, իսկ անականների վրա գրվելով՝ սաստկացնում նրանց իմաստը (հմտոս):

4 Հ. Աճառյան, Հայ. արձ. բարոսն, Ա, էջ 104:

վերջին, հետին, արտաին, տակավին, աղջամուղջ-աղջամղջին, ծմակ-ծմակին, նուր-նուրին, խու-խուրին, խավարչուտ-խավարչութին և այլն)։

Աղբյուր-ը առաջանում է աղբ արմատից և սեռական հոլովի ոչ վերջավորությունից, և որոշիչ հոդի և Բ հոդանկերով հավելումով, աղբյուրին, աղբիւս պարարտացված նշանակությամբ։

7. ԱՂԼԷԱԿ

Բառս հզակի հիշատակությամբ ավանդված է Անիի Առաքելոց եկեղեցու դավթի 29 թվականի մի արտոնագրում, որով Չարարյան Աղբուղան վերացնում է քաղաքի բնակիչներին գանձվող մի քանի հարկեր, որոնց թվում և աղլհակը։ Արձանագրության այդ մասը Ն. Օրբելու հավաստի վերծանությամբ կարգացվում է. ես՝ Աղբուղայս... բոլի զեղինն հագրն, զկովին համբելին, զոչխրին ալլը-հակն (Գ 1 28)։

Բառն առաջին ստուգարանությունը տալիս է Կարսոթ Սմբատի Դատաստանագրքի ուսումնասիրության բացատրականում, ըստ որի աղլհակ ծագում է պարս. աչալ=զամ, փարախ կամ արաբ. lgal = ոչխարի տարեկան հարկ բառերից⁵։ Այս մեկնությունը սպասելի չէ, չի բացահայտում հարկալին տերմինի բովանդակությունը, քանի որ բացատրվում է միայն աղլհակ բարբոթյան առաջին բաղադրիչը՝ աղալ > աղլ, անտեսելով երկրորդ բաղադրիչը կամ ամբողջ բարբոթյան արտահայտած իմաստը։

Անվիենել է, որ աղլհակ կազմված է երկու բառից՝ աղլ < ազալ և հակ (haggə)։ Ազալ (> աղր) արմատը բոլոր ուսումնասիրողների ծագած են համարում Թարս. աչալ, ուլջուր. աչալ, ջաղաթայ. աչալ = մակաղատեղ, փարախ, զամ, բակ բառից, որ անասորելի է։ Բարբոթյան երկրորդ մասը՝ հակ-ը Անաոյանը դնում է արաբ. hagg = իրավունք բառից և աղլհակ բարբ բառը բացատրում՝ ոչխարի վրա դրված հարկ⁶։ Այս մեկնությունը, հատկապես բարբոթյան երկրորդ բաղադրիչի՝ հակ-ի վերաբերյալ, այնքան էլ համոզիչ չէ։

⁵ J. Karst, Sempadscher Kodex, B. II, էջ 12։

⁶ Ա. Անաոյան, Արմ. բառարան, Ա, էջ 131։

Նույն ժամանակաշրջանի հայ վիճագրության մեջ բազմաթիվ այլ զեպերում հակ բառն առանձին կամ բարբոթյունների մեջ հիշատակվում է ոչ թե իրավունք իմաստով, այլ իրրն հարկ բառի համանիշ՝ հարկ, տուրք, հասույթ նշանակությամբ։ Այսպես, ունենք՝ հակ, զլխահակ՝ (նաև զլխահարկ), ձիբահանաց հակ (ԿՂԸ 81), ձթի հակ (նաև ձթիին հարկ) ձեռնվորահակ (ԿՂԸ 252), շահնայահակ, ամիրահակ, հարսենհակ (ՂԱԱ 273, ՎՏ 227), և այլն, որոնցում հակ բառը հանդես է գալիս հարկ, տուրք, հասույթ իմաստով և քեզհասար ոչինչ շունի իրավունք բառի հետ (Թարս. haggə), թեև ծագումնաբանորեն աղբյուրի բացատրությունը կարող է և իրավացի լինել⁷։ Բացի դրանից, աղլհակը չի կարելի ոչխարի հարկ կամ ոչխարի վրա դրված հարկ համարել, քանի որ այդ բառի մեջ ոչխար իմաստ չկա և հենց այդ պատճառով էլ քննարկում դրանից առաջ հատուկ շեշտված է զոչխարի աղլհակը։

Այսպիսով, աղլհակ-ը բարբոթյուն է կազմված ուլջուր, շաղաթայթ. աչալ (աղր) = զամ, մակաղատեղ և հայ. հակ (=հարկ) բառերից և նշանակում է մակաղատեղի, փարախի, զամի հարկ, որ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում հարկատու բնակչությունը վճարում էր տեղական կազմածատերերին՝ նրանց պատկանող փարախներում, արտառվալբերում կամ մակաղատեղերում անասուններ արածացնելու և պահելու համար։

8. ԱՂՄԱՆ

Անիի և մերձակայքի ԺԳ դարի վիճական արձանագրություններում բանիցս հիշատակվում է աղման բառը, մեծ մասամբ իրրն աղման անել (առնել) հարադրավոր բառի բաղադրիչ։ Այդ բառը սովորաբար կիրառվում է արձանագրությունների վերջում, անեծիթ

⁷ Սևանի տաճարի 2ԻԳ (1265) Թ. արձանագրում, անում ենք մեր հավաքածուից, Ջալալանցի դրամ (Ա, 91) ի շարս ալ անշուտությունների կողակցությունը վերանված է զլխահակ վերկալամբ, այնինչ քարի վրա պարզ կարգավում է զլխահակ վեր կալամբ։

⁸ Տե՛ս մեր «Նակ հարկալին տերմինը վիճական արձանագրություններում» հոդվածը, շեշտադրական հեռադատություններ, ժողովածուում, Ե, 1974, էջ 44—60։

ձևակերպման մեջ և արտահայտում է բնագրերում հազորզող իրողության դեմ բողոքելու, բնզդիմանալու, վեճ բանալու, առարկելու նշանակությունը:

Աղման-ը ավանդված է միայն վիժագրերում, ուստի նրա բառազարանության համար կարևոր է բոլոր վկայությունների հավաստի և սպառնչ ընդօրինակությունը: Բառիս շորս վկայությունից միայն երկուսը կարելի է ստուգելի համարել՝ Անիի և Բջինի, իսկ Մրենի և Խծկոնքի արձանագրությունների վերծանությունն անբաստուգելի է՝ ուստի ստիպված ենք հիմք ընդունել նախկին հրատարակությունները: Ահա աղման բառի բոլոր հիշատակությունները. Անիում, Առաքելոց զավթի պատին, ՉժԼ Թվականին (1269)... և ով այլ խառն ան է կամ աղման ան է բաժ ուղելու, : 3ժԼ: հայապետացն երզված է... (Դ 1 24): Մրենում, ԺԼ դարի մի արտոնագրում. որ շլա ոչինչ աղման Բագրե՛ն, ոչ Անոյ վեհա Մրենոյ վասն ոչխարի... (22 41): Խծկոնքում, ՈԶԲ Թվականին, այլ ոչ ում աղման շլա հետ Խեզին (ՍԱԲ 211, ՂԱՆ 128): Բջինում, ԺԴ դարի մի բնագրում, աղման շանեն, որ յայսմհետ է մինչև յաիտեան հաստատուն կայց է ածանա իմ... (ՇՄԲ 183, ՂԱՆ 273):

Բոլոր հրատարակիչների մոտ էլ աղման բառի վերծանությունը նույնական է իրականի հետ և որևէ տարակույս չի հարուցում. միայն Անիի արձանագրության մեջ աղման ան է բայը Սարգիսյանը արտագրել է աղմանանլ (ՍԱԲ 133), որը և հիմք է հանդեսացրել Աճառչյանի համար՝ այն աղման բառի հոգնակին համարելու:

Աղմանի մեկնությունը հիշյալ վկայությունների հիմամբ, առանց ստուգաբանության, առիտ է Աճառչյանը, ըստ այդմ, բառս վկայված իրադրության մեջ նշանակում է դատ, վեճ և համապատասխանում է այլ բնագրերում հանդիպող դալի անել բային⁹. ոչ իմ որդու, ոչ իմ ագրար, ոչ իմ ազգի մարդոյ դալի շկայ, ով դալի աբե՛ն..., հայար է (ՂԱՆ 162):

Աղման բառի ստուգաբանության առաջին փորձը զտնում ենք Երևմիա Մեղրեցու բառարանում՝ աղմայ արմատի տակ, որ բացատրված է՝ դե շար կամ սիրող: Անհայտ է Մեղրեցու վկայության աղբյուրը, ուստի և մեկնությունը կասկածելի, սակայն դժվար է այն անհիմն համարել:

Վիժագրական վկայությունների հիմամբ հայազետ Կարսոբ բառս բացատրում է վեճ, խառնակություն՝ հավանաբար նկատի ունենալով նրա արտահայտած իմաստը ավյալ կապակցության մեջ (KWM):

Մեզ ազելի հավանական է թվում աղման բառի ծագումը, այնուամենայնիվ, զնել հեի. p⁰l=m=աղմուկ արմատից, ան վերջածանցի հետագա հավիտումով, ինչպես նույն արմատից աղմ(ուկ) բառը, որ ձևազորվել է ով ածանցով: Ան ածանցը աղմ-ան բառում կարող էր արտահայտել իր բազմաթիվ իմաստներից մեկը՝ գործիք, միջոց, իր, նյութ. այս առումով համեմատելի են, օրինակ, խրան, շեբան, գլան, տափան, կուս կազմությունները¹⁰:

9. (Յ)ԱՂՈՒՀԱՑԻ(Ն), ԹԵ՞ (Յ)ԱԽՆԱՑԻ(Ն)

Այս անորոշ տառաշարը վերծանված է Սանահնի վանքի ՈԶԲ (1229) Թ. մի նվիրագրի հատուցման ձևակերպման հետևյալ կապակցության մեջ. և հաստատեցա՛մ նոցա զամէն եկեղեցիս պատարագ Թ ար Տոհանեա՛ տունի՛ն յայնացն. շարսար արե՛ն Համլ-կանն, կիրակի՛ն՝ Մամանա (ԿՂՍ 130—131): Վերծանող Կ. Ղաֆազարյանը յայնացն հնարավոր է համարում կարդալ նաև յախանայն, սակայն ավյալ տառաշարի վերծանությունն ու իմաստը թողնում է անորոշ, անհասկանալի: Բնագրի նախորդ ընդօրինակողները այդ բառը անվերծանելի համարելով՝ բաց են թողել (ՍՃՁԱ 23, ՎՏ 73):

Նախ առկա տառաձևերի ընդօրինակության մասին: Լուսանրկարի վրա հոտակ երևում են յայնացնի գրերը, միայն 2-րդ ա-ի ձախ ստեղծի վրա կցադրված տառը յավ չի երևում, մետաղած է. հ-ի՛ն հնարավոր լինի այն կարգով և, այդ դեպքում ամբողջ բառը կբաժանվի յայնացն: Այստեղ յ-ն նախգրի է, վերջնահանգ և-ն՝ որոշիչ հոգ, ուրեմն բառի անսիտոփոս ձևը կլինի՝ յախացն <աղնաց (դ ձայնեղի յայցում հաջորդ է կոկորդային խուլի առձմանիչ աղեցությունը) կամ աղունաց (նախաշեշտ ու շաղկապի անկում), որ

¹⁰ Մ. Արեղյան, Երգեր, 2, 1974, էջ 201:

⁹ Հ. Աճառչյան, Արմ. բառարան, Ա, էջ 133:

նշանակում է՝ ժամանակ աղ և հաց նաշակելոյ, քառասներգական պաճԻ¹¹,

Աղունացք, աղնացք տարբեր հնչյունական փոփոխություններով բազմիցս վկայված են ժԱ—ժԳ դարերի վիճական բնագրերում, սովորաբար նվիրատուներին խոստացած պատարագամանքի կատարման տոներն ու ժամանակի մատնանշելու առիթով: Օրինակ, Հաղբառի վանքի ժԱ դ. նվիրագրում ունենք. Եւ կուռ զքվ գուուր Գրիգորի տանին շարբար աւր ՅԱՂԱՆԻՆՅԱՅԻՆ ժամ նմա տանենք (ԿՂԸԲ 156): Սանահնէր ՈճԶ (1197) թ. արձանագրութեան մէջ նր. վիրատու Գրիգոր Տուսեորուն նվիրելոյ դիմաց խոստանում են. պառօնի ինձ երարւումամ Գ քառասունք, Եւ գուուր Գրիգորն տունն, որ ՅԱՂԱՆԻՆՅԱՅԻՆ ամէն եկեղեցիքս (ԿՂՍ 111):

Սակայն բնութեան առարկա յախնացքն ձեռն ալիլի մտա է Անիում Գր. Պահլավունու եկեղեցու ճԶԹ (1040) թ. շինարարական արձանագրութեան մէջ վկայված ազգացն բառը՝ կիրառված նույն նշանակութեամբ: Ահա համապատասխան կապակցութիւնը. Եւ առաջարուացն ուրբարիճ Եւ ԱՂՅԱՅԻՆ ուրբարանոյն փոխան յարձակաուրքն արացնն: Ը : աւր (Գ I 33),

Գտնալով բնութեան առարկա բնագրի անհասկանալի տառաշարքին, ապա յախնացքն ուղղելով յազհացքն և վերականգնելով աղունացք բառը, տվալ կապակցութիւնը կարելի է հասկանալ այն իմաստով, որ Յոհաննու տանի 2 պատարագներից մեկը՝ աղունացքը շարբար օրվանը պետք է արվի Համիկիին, մյուսը՝ նույն տոնի կիրակի օրվանը՝ Մամբանին:

10. ԱՍԱՐԱՆՈՅ

Այս բառը և նրա սաւրնոց, սաւրնոց հնչյունափոխված տարբերակները վկայված են Վալոց ձորի ժԳ—ժԳ դարերի երեք վիճական արձանագրություններում, որոնց՝ լուսանկարով հաստատված քատույզ վերձանութիւնները գտնում ենք Մ. Բարխուդարյանի կազմած վիճագրերի ժողովածուներում: Ահա բնագրերի մեկ հետաքրքրող հատվածները: Վաղազնի վանքի ս. Կարապետ եկեղեցու փր-

լատակների մէջ ընկած երեսուցասման բարի վրա. Եւ՝ Քարանս միարունցա Սուրբ Կարապետի Եւ գնեցի ի Վաղաղոյ գասրնոցի: Ը : բամնէ գմնն (Գ II 104): Հնթհերի վանքի Աստվածածին եկեղեցու արքիդի վրա. Եւ՝ Վարդան վաղապետս գասարնոցիս շարկէն ի հիւսնէն գնեցի, ի Սուրբ ուխտս ալի, թվ ՉՄէ (1308): Քանասի վանքի ս. Ստեփանոս եկեղեցու արքեւլյան պատին. Եւ՝ Հասիկ շինեցի գասարանոցն Եւ ալի Վարդա Սուրբ նշանիս... թվիս : ՉԿ : (1311) (Գ III 52, 77): Այս արձանագրությունները նախկինում հրատարակվիլ են բազմիցս, սակայն բոլոր ընդօրինակողները սասարանոց (սարնոց, սարնոց) բառը կամ բառ են թողել, կամ վերձանել իրականից զգալի շփոթ հետացած և աշտվաղված:

Առաջին ընդօրինակող Ջալալյանցը իր գրքում մի հատվածը բաց է թողել, իսկ մյուսը վերձանել՝ գասրնոցիս շարկէն (ԱԶՄԲ 140): Քաջբերունին երրորդ օրինակում սասարանոց բառը երկու մասի բաժանելով՝ կարգացել է գալս սքրանոցս¹²: Ալիշանը, հետեւելով Քաջբերունուն և սքրագրելով նրա ընդօրինակութիւնը, վերջին երկու վկայութիւնները վերձանում է զսարանոցիս շարկէն, գալս սքրանոցս և վիճելի բառը բացատրում, սքրանոց՝ աղորիք է, գոռոյ չորսոց մասն գնէ (ՂԱՍ 114, 120): Սիսուր երկրորդ բնագիրը վերձանում է զսարանոցիս շարկէն, իսկ երրորդ՝ կիճեցի գամարանոցն (ՄԱԿ 129—130): Գ. Հովսեփյանը ստույգ հարցալով տառաշարքը՝ վերձանութեան մէջ համերաշխ է Սիսուրին և, սասարանոց բառի մէջ փորագրողի սխալ տեսնելով, առաջարկում է այն կարգալ ամասանոց (ԳԶՊ 78): Ճարբեր է հասկացվել նաև բառի արտահայտումը իմաստը. Ը Եւ հիրալի, ի՛նչ ունեցվածք են նվիրել վանքերին նվիրատուները: Ը Եւ Քաջբերունու սասարանոցը պետք է հասկանալ սքրանոց, քնն անհայտ է մնում վերջինիս ինչ լինելը: Սիսուր Վարդան վաղապետի նվիրած սեփականութիւնը նրա կառուցած ջր-դառացի շարկէն է համարում, իսկ Հասիկին՝ ամառանոցի շինել: Ալիշանը, ինչպես տեսանք, երկու դեպքում էլ սասարանոց, սասարանոց ընթերցվածը ուղղում է սքրանոց և նրա իմաստը նույնացնում աղորիքի, աղացի հետ:

Հարցը ալիլի հիմնավոր բնում է Ն. Աղոնցը՝ Գ. Հովսեփյանի «Տարաբակյանք կամ Պոռոյանք» աշխատութեան մասին գրած «Քըն-

¹¹ ՆԵՐ, Ա, 43.

¹² «Արարատ», էջմփածին, 1889 թ., էջ 104:

նական տեղեկագրում», որ նա ներկայացրել է «Թարգմանչաց—
Կուրյան» գրական մրցանակի հանձնախմբին՝ իբրև կարծիք-գրա-
խոսական: Այստեղ Ազոնցը, ի շարս այլ էական ուղղումների, ա-
ռարկելի է համարում նաև Հովսեփյանի ամառանոց ընկերցումը և
առաջարկում հիշյալ տառաշարքը վերծանել հասարանոց՝ ծաղած
համարելով պարս. hasar ստույց կամ նույն արժատի և, Տ հնչյուն-
ների դրափոխությանը առաջացած բրդերին sahar բառից, որ հն-
դինանի կարծիքով երկու դեպքում էլ կարող էր նշանակել սառցա-
րան, սառցատուն, այսինքն մասն (ՉՀԽՊ III ԻԲ)՝¹³ Ասարանոց
բառի հավանաբար վերծանությունների հնդկնակ Ս. Քարխուդարյանը
թեև հատուկ չի անդրադարձել նրա մեկնությանը, սակայն ժողո-
վածուի առարկայական ցանկում իրավամբ բառը հոմանիշ է համար-
ել ձիթահանքին:

Մրանոց բառը ձիթահանք խմատով փորագրված է նաև Արցա-
խի Փշազ գյուղի եկեղեցու արևմտյան պատի մեջ ազուցված սալա-
նման երեսպատման քարի վրա, պարզ խաչերի շարքը: Աճա այդ
բնագրեր մեր հավաքածուից. Ցանուն աստուճայ, ևս՝ Ակիզ սրանո-
ցին հայրենիքն: Դ: բաժին, : Ա: իմ էր, Եովմ վախճ Հստեփանո-
սիճ... (ՍԲ):

Արձանագրությունն անթվական է, տառածեղից կրեում է, որ
փորագրվել է 15—16-րդ դդ.: Քնարից պարզվում է, որ ունի Ակիզ
(Հայկազ անձնանվան տեղական արտասանությունը, այլ > է հնե-
չլուսափոխությանը) սեփական սրանոց, ձիթահանքի հատույթի,
եկամտի իրեն հասանելիքը՝ այսինքն ամբողջի շարս մասից մեկը՝
շարեֆը, վախճ է անուճ Ստեփանոս վանքին:

Ասարանոց (ասարնոց, սարնոց) բառի հիշյալ վիպություննե-
րը ներկայումս դիտականորեն հրատարակված են, ուստի այդ տա-
ռաշարքերի ընկերցումը միանգամայն հավաստի է, ստուգվում է
լուսանկարներով և որևէ կասկած չի հարուցում: Այդ պատճառով
էլ բառիս նախկինում կատարված վերծանությունները և մանավանդ
ստուգարանության փորձերը դժվար է որևէ շարժով ընդունելի հա-
մարել: Մի բան ակնհայտ է, որ ասարանոց բառը օվյալ իրազու-

¹³ Պատմաբան Լ. Բարսյանը նույնպես ասարանոց>սրանոց ժառան է հա-
մարում (սն՝ս նրա «Հայաստանի սոց. տնտես. և բազ. պատմությունը 19—14-րդ
դարերում, Երևան, 1964, էջ 114):

թյան մեջ արտահայտել է որևէ շահութաբեր ձեռնարկության ի-
մաստ, բանի որ նպիրատուները մեր բերած առաջին երկու օրինակ-
ներում վանքերին նվիրել են ոչ թե ամբողջ ասարանոցը, այլ նրա
մի շառեֆը կամ : Ը: բաժնի վրինն, այսինքն հաստատության եկա-
մտուի որոշ մասը:

Թե ինչ հատույթների հաստատություն է եղել ասարանոցը մի-
ջին գարեբում, պարզում է ավելի ուշ շրջանի մի այլ վիճագրի, որ
փորագրված է Վ. Ղարանլուխ գյուղում գտնվող հին ձիթահանքի
հարավային պատի մեջ պղտցված խաչաքարի վրա. կաման այ նա՝
Վուկաս և եղբայրն իմ Ավան, որդի ներսէլին, շինեցինք սրա-
նոց վերի : Բ: հաղագ Սև Բարի մտա, յիշատակ որոց մեռց,
ըվին Ռձ (1651) (Դ IV 225):

Հեշտ է համոզվել, որ այս բնագրերում հիշատակված սրանո-
ցը բնության առարկա ասարանոց բառի հնչյունափոխված ձևն է և
նշանակում է ձիթատու հատիկներից ձիթ ստանալու արժեսանոց՝
ձիթահանք, որ միջնադարի վիճագրության մեջ բազմիցս հիշատակ-
ված է ձիթահանք, ձիթահանք, ձիթահաց, ձիթատուն տարբերակներով:

Մրանոց բառը նույն նշանակությանը ներկայումս էլ գործա-
ծական է Արցախի և Հյուսիսային Հայաստանի շրջանները մի բանի
խոսվածքներում (Իջևան, Շամշադին, Նոյնմերձյան, Կրասնոսելսկ
և այլն): Առաքելոց պատմական գյուղաքաղաքի հուշարձանների
թվում պահպանվել է ԹԳ դարի միակամար մի կամուրջ, որը մինչև
օրս էլ տեղացիների կողմից Մրանոց կամուրջ է անվանվում՝ հա-
վանաբար այն հնազույն ձիթահանքի անունով, որ ժամանակամեծ
է կամուրջին և կառուցվել է նրանից ոչ հնուս, Կիրանց շուր գետա-
կի ձախ ափին (գ. Գետաշեն, Իջևանի շրջան):

Ասարանոց բառը դրական աղբյուրներում չի հանդիպում, և
թերևս այդ պատճառով նրա ստուգարանությունը կամ բացատրու-
թյունը չենք գտնում հայերենի բառարաններում: «Վաստակոց զըր-
քի» հայերեն թարգմանության մեջ, որ ԹԳ դարի դրոժ է համար-
վում, հիշատակվում են մասարայ, մասարաբ բառերը («զձիթին
մասարայսն և զջաղացանին և զամանսն սպրկիկ և անուշահոտ
պարտ է աննել...», «և վաղն զիքն ի մասարաբաբն ի թեթևն ա-
ղա...» և այլն)¹⁴, որոնք վկայված իրազույթյանը համապատաս-

¹⁴ «Գիրք վաստակոց», Վենետիկ, 1577, էջ 183, 184:

խան բացատրվել են նախ ՆՃԲ-ում (Ք 210), Ն. Բյուզանդացու և Կարսոսի՝ միջին հայերենի անտիպ բառարաններում (KWM, ՆԲՍ, տվյալ բառերի տակ) և ապա՝ Հ. Աճառյանի Արժատական բառարանում (Գ 851): Ըստ այդ մեկնության՝ մասսարայ ծագում է արար. masara—մամուլ, ֆամիլ, մամիլիլ արժատից և տվյալ դեպքում նըշանակում է ձիթահատիկ ծեծելու գործիք, ձիթաջ, սևոնքածև կամ մաշարածև սանդ աղալու, կամ ձեռնելու զձիթացտող...», այլն՝ «ե՛հ տե՛ս, ի մեջ որոշ դիագրոֆ լցնել նմիին—հայերեն նե՛ճան և արարերեն մը՛սարէ», որտեղից և մասսարաբար = ձիթաջի ֆար, ձիթահատից ֆար:

Ասարանց (ասարեաց, սարեաց) անձնագլոր բարո կազմված է արար. ասար արժատից և հայ. անց տեղ ջուլց տվող անձնցից: Ասար արժատը ծագում է արար. asara բայից, որ նշանակում է մամլել, նմլել, ֆամել, ըստ այդմ էլ ասարանց = ձիթահատիկները մամլելու և ձեթ քամելու արհեստանոց, գործատուն, ձիթահանք:

11. ԱՍԱԼԱՍԱԹՈՒՆ, ԹԵ՛ ՈՒԱՍԱԼԱՍԱԹՈՒՆ

Այս անորոշ տառաշարքը իբրև իդ. անձնանուն է վերականգնվել Արկադի Ս. Խաչ եկեղեցու պարսպի տակ կանգնած խաչքարի ՉՊԳ (1304) թ. հետևյալ հիշատակագրում. Աստուած ողորմի Ասլանբեկին, Ոսպախարունին (Գ III 70): Վերծանող Ս. Բարխուդարյանը, ըստ երևույթին հետևելով նախորդ հրատարակողներին (Ալիշան, Հովսեփյան), վիճելի անձնանունը բաժանում է 2 մասի և «Իվվանին» ցանկում տալիս՝ Ոսպալ Խարուն: Ոսպալ բաղադրիչ անսովոր անուն է, չի ստուգարանվում և հայերի մեջ ոչ հնում, ոչ էլ նոր ժամանակներում գործածություն չի ունեցել: Բնազդի հենց զձագիր ընդօրինակությունից ակնհեր է, որ Ոսպալախարունին տառաշարքի ու-ն պետք է առանձնացնել և համարել շաղկապ, այդ դեպքում կստանանք անձնանվան տրական հոլովածներ՝ Ասլախարունին, որից բուն ուղիղ ձևը՝ Ասլախարուն (նկ. 5):

Ինքնուրույն կիրառությունից բացի, առաջին կդրում ախի, այլ ունեցող մի շարք բաղադրյալ ար. կամ իդ. անձնանուններ են վերկայված վիճագրերում ու ձեռագրերի հիշատակարաններում՝ Աբլըգաղէ, Ասլիմելիֆ, Ասլիպարուն, որոնցում ախի, ալի, ալլ Աճառ-

յանի ստուգարանում թյամբ ծագում են արար. asl, asli = բուն, խկական, նսրագատ արձատներից, ըստ այսմ, օրինակ. Ասլիմելիֆ կարող է նշանակել բուն, խկական մելիֆ, մելիֆական տոնմից, Ասլիխարուն կամ Ասլախարուն՝ խկական, ճշմարիտ, տոհմիկ խախուն և այլն¹⁶:

Այստեղից, քննության առարկա անձնանունը պետք է վերականգնել Ասլախարուն և համարել հողակապով բարդություն՝ կազմված ալի, ալի, ալլ—բուն, խկական, հարազատ և խարուն = բազունի փոխառյալ բառերից: Մյուս կողմից, ակնհեր է, որ այս կարգի բաղադրյալ անձնանուններում (Սիխարուն, Անախարուն, Սիրիխարուն և այլն) խարուն = ազնվական կին, բազունի բուռ լիպտց է առանձնացնել ու դրի մեծատառով, որպես թև ինքնուրույն անձնանուն, ինչպես վարվել են Արկադի սույն բնագրի վերձանաղևերը, այլ պետք է դիտել իբրև ամբողջական բարդություն:

12. ԱՍԱՆՆ ԵՓԱ, ԹԵ՛ ԱՍԱՆՆԱԹ

Այս անձնանվան տարբեր հոլովածները քանիցս հիշատակված են ԺԹ—ԺԳ զգ. վիճական բնագրերում, որոնցից մի բանիսը մեջ ենք բերում կարճատա կապակցություններում: Հաջորդապես կեղևում, ՈՂԱ (1242) թ. Ծա՛ Մասնա, որի Ասլանապիին, նույն վանքում, ԺԳ զգրի մի այլ նմիբազում, այս մեջ գիր է շարժառա կպիսկուպսիս եւ միարանացս, որ առաւ Ասլանապիին (4ՉՃԲ 178, 209), նոր վարդազանցում, ԺԳ զ. ի աունի արբյւն Կեարզա: Թ: Ժամ լինիլ յաունն Ասլանապիին (ՄՃ): նույն տրական հոլովածով անձնանունը վկայված է նաև Ձիեջիբլուի Սլիտակապուր եկեղեցու շինարարական արձանագրության վերջում. ՉՄ (1301) թ. ի աունի խաչին: Ա: սլա-տարուց Ասլան ափին, : Ա: Թամբէ՛ Վարդապետի մտուն (ԳՃՏԲ



¹⁶ Ը. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 226:

18); եվ վերջապես Ն. Գեանկի վանքում ունենք. ի տանի վարդավառնի ք մի խորանի մատչյ պատարագ Ասլան ավախին (Գ VI 76):

Անվան ուղիղ ձևը, բայտ Հաղբատի բնագրերի, Կ. Ղաֆաղարյանը առանց ստուգարանության փորձի համարում է Ասլանափ (ԿՉԶԲ 278), որ չի հիմնավորված և առարկելի է: Անձնանունը ստույգ կարելի է վերականգնել թանաթի վանքի ՉԸՆ (1326) թ. մի արձանագրության հիմամբ, որի մեջ իբրև նախադասության ենթակա, նույն անհատը հիշատակվում է ուղղական հայովով. նա՝ Ասլան ավաչյա եւ իմ որդիս միարանցավ ար Սանփանուսիս և առաւ ։ Ճ ։ դեկանընձա (Գ III 79): Այսպիսով, անվան ուղիղ ձևը ոչ թե Ասլանափ է, այլ Ասլան ավա(չ), որ հարադրություն է թրք. aslan = «սառուծ» և շաղալաթ. arā = «մայր» բառերից և կարող էր նշանակել մայր առյուծ, ինչպես ունենք Ալի ավալան = «բաշ առյուծ», Ասլան խարուն = «սառուծի նման կին»¹⁰: Ավա(չ) = «մայր» իր. անձանունը վիզյաված է Սանահնի 2 բնագրերում հետևյալ կապակցություններում. ԽԿԿ (1214) ք. ետու իմ սմուսնոյն հոգոյն Ավաչին... եւ նատաւանցաւ Ավաչին զամէն Եկեղեցիս մինչ ի կատարած աշխարհի (ԿՂՍ 122): Մյուսը նույն Սանահնի ապականագրերից մեկում է՝ Ավաչն (ԿՂՍ 142): Ակներե է, որ ինչպես այս օրինակներում, այնպես էլ վերը թվարկված հարադրավոր բարդություններում՝ Ասլան ավախին անձանվան ուղիղ ձևը հարկ է կանխարել ոչ թե Ասլանափ, այլ Ավա(չ), Ասլան ավա(չ), որի տրական հոլովածներ այ հնչյունախմբի սղումով կրինի Ավաչին > Ափին, Ասլան ավաչին > Ասլան ավփին (հմմտ. Բանանային > Բանանին, աղաչին > աղին, աղաչին > աղին, արեղային > արեղին, ՎԱՀ 160—161),

18. ԱՐՔԱՌԻԹԻՆ, ԹԵ՝ ԱՐՔԱԹԻ

Հաղբատի վանքի ԺԳ դարի արձանագրություններից մեկում իբրև նվիրատուի անուն է վերձանված այս անորոշ տառաշարը, որ ճշգրտման կարիք ունի: Ահա համապատասխան կապակցությունը. նա՝ մեղուցեալ աղախին Քրիստոսի արքաբի ապախնեցա ի

¹⁰ Уйгурско-русский словарь, сост. Э. Н. Наджин, М., 1968, էջ 14, Ճ. Անառայն, Հայ. անձն. բառարան, Ա, 1942, էջ 224—225:

սուրբ ոլխաւ Հաղբատ եւ էտու ձ Գանեկան (ԿՂԶԲ 201): Վերձանոգր, անշուշտ գրան, որ անորոշ տառաշարում արքաբի-ն պետք է անձնանուն լինի՝ նվիրատու կնոջ անունը, սակայն բառասկզբում մի տառ կամ կցագիր բաշխյալված լինելու պատճառով անհարկն է համարել նրա հավաստի վերականգնումը, ուստի և բավարարվել է սոսկ ներկայացնելով եղած գրերը, որոնք, սակայն, որևէ բան չեն կազմում:

Քնարի նախորդ հրատարակողները չեն կարող օգնել ընկերացումը ճշգրտելուն, քանի որ Ջալալյանց ու Երզնկյանցը այդ մասում ավելի են հետո իրականից և աղախին Քրիստոսի արքաբի փոխարեն ունեն աղախին Քափափի (ՎՏ 233):

Ինչպես ակներև է զծագիր արտապատկերից, արձանագրության տառաձևերը գրեթե անխաթար են մնացել և վնասված կամ կործնված մասեր չունեն: Տեղում նորից ստուգելով բնագրի բնօրինակությունը՝ համոզվեցինք, որ աղախին Քրի ցրեցի հետ վնասված կամ պակասող գիր չկա և շարունակության վրա պարզ փոքրգրված է նվիրատուի առով սկսվող իր. անունը: Վերձանոգրները չեն կորստել, որ արքաբի վերջին վանկը սողադարձի պատճառով չունի պատվի գծիկ, որը հնարավորություն կտար ավալա տառաշարում վերականգնել հապավված վերջածանցը՝ արքաբին և ու գրի հավելումով ստանալ Արքաուրին անձնանունը (նկ. 6): Այս

ԱՄՍՆԱԹԵՍԱԵՐՈՍԵԱՄԱՂԱԽԻՆԻՔԻ ԼՔԲԱՐԻ
ԽԱՄԱԽԵՏ ԱՄՔՐՈՒՄՆԱԿԱՄԵՒԵՐՈՒԾ
ԴԱՅԵԿԱՆՆԵԱՄԲԵՆԱՆՍ

Աղ. 6

ար. և իր. անունը հայոց մեջ դորձածական է կզել ԺԲ—ԺԳ դարերում: Այսպես, Բագնայրի տաճարի ՈՍԸ (1209) թ. նվիրագրի հատուցման բանաձևում կարդացվում է. եւ տես փոխարեն հատուցին ինձ : Ի : աւր ծամ ։ Ը : ինձ, ։ Ե : Արքանամու, ։ Գ : Դինարկանն, ։ Թ : Ըրանուչին, ։ Բ : Արքայութեան (ՍԱԲ 180):

Հը. Աճառայնը Արքայ, Արքայութիւն միայն արական անուն է համարում, սակայն ԺԲ—ԺԳ դարերի վիճաբարում ու ձևադարձի հիշատակարաններում այս անունները հավասարապես կրում են թե՛ կանայթ, թե՛ աղամարդիկ: Օրինակ, Գեղարդավանքում ունենք.

նս՝ Առավ և ամուսին իմ Արգայ միայրանեցաք սուրբ ոսյախս Այրի-վանս (ԳՂԵԳԳ 88)։ 1331 թ. ձևազրի Շիրապատկարանում վկայված է. յիշեցէք և զհոգևոր մայրն իմ՝ զԱրգայն և զգիրազկան եղբայր մեր զԳզնկիկ¹⁷։ Մյուս կողմից, Աճառայանը Արգայի-ն նորագույն շրջանում Պուստում գործածվող ար. անուն է համարում, որն ըստ կրթվարող էր առաջանալ Յարուսինն անվան փառաբանականից¹⁸։ Սակայն մեր օրինակում Արգայի-ն ազգային Քրիստոսի է, այսինքն կին, ուստի և բացառվում է նրա և Յարուսինն > Արգայի-ի նույնացումը։

Այսպիսով, Հաղրասի արձանագրության մեջ խնդրո առարկա անորոշ գրիքը պետք է վերծանեն Արեւ | ա | րի | ն և համարել նվիրատու կենդ անունը՝ նս՝ մեղուցեալ աղայսին Քրիստոսի Արեւու-րին... և այլն։

14. ԱՓՆԵՐ, ԱՓՆԻ, ՏՆԱՓՆԻՔ

Արևմտյան Շիրակի Բագխայր հուշարձանի ՈՁԲ (1233) թվականի մի նվիրագրության մեջ հանդիպում է այս բառի գործիական հոլովածը՝ ավինեով։ Ահա բնագրի այդ նախադասությունը. նս Ասրգիս ժմալինն աագբեւէց, որդի Կրիգոր Բանանայի ետու զիմ զանձազին հայրենիք այցին զՇեջանի զներքի դենքի դենն իւր ծաղկոցովն, իւր չարեսին ավինեովն (ՄԱԲ 185, ՂԱՇ 119)։ Ինչպես հասկանալ չարեսին ավինեովն։ Ընդհանրապես կրթությունը կարծմանում է՝ со всем к нему прилегающим с четырёх сторон, որից չի իմացվում, թե ինչ է հասկացել ավինե(ով) բառի տակ (ՀՅԱ 62)։

Հաղիվ թե հնարավոր լինի սովյալ իրադրության մեջ բառիս արտահայտած իմաստը որտեղ գրական լեզվի համապատասխանություններով, ավելի հավանական է բառիս առաջմասն արջ-յաբները որտեղ հայ բարբառներում կամ խոսակցական լեզվում։ Եվ չիրավի, հայ բարբառներում ավինե կամ ավինի(վ) են կոչվում խաղողի այգու շորս կողմի բաց մասերը, որտեղ միայն ծառեր են անկում, կամ այգիների պատերի տակի ազատ հողաշերտերը, ո-

րոնք ազատ են վազերից և ծածկվում են թփերով կամ ծառերով¹⁹։ Իհարկե, այս իմաստն էլ վերջին հաշվով ծագում է գրական լեզվի ավին արմատից, սակայն ակնհայտ է, որ վիճագրության մեջ ներ-թափանցել է բառի յուրահատուկ իմաստային նեղացումը, որ պայս էր խոսակցական լեզվից։ Մյուս կողմից, չի կարելի այդ բառի առաջացումը զննել գրաբարի ավին = հունեմից եկտո մնացած բա-րբիտով հասկեր, մնացորդներ արմատից, քանի որ ակնհայտ է իմաստների անհարթությունը։

Նույն բառի ավինի(վ) տարբերակը (ավին բառը ի անանցով և Բ հոգևակիրտով) տեսալինք բարդության մեջ վկայված է նաև Արշո-տանի հուշարձանի մի անթվական նվիրագրության մեջ. նս ետու զիմ զանձազին հոգներն զԻրմաստու տնափնիքն (ՄԱԲ 223, ՂԱՇ 123)։ Այստեղ արդեն խոսքը սան շրջակայքի բաց տարածությունների մասին է, կամ սուրբ եղբայրացող այն հողակտորների մասին, որոնք ենթակա են մշակման։

Այսպես մեկնելով ավինը (ավն) բառը՝ Բագխայրի արձանագրության հիշյալ նախադասությունը կարելի է հասկանալ այն իմաստով, որ այգին վանքին է նվիրվել իր շրջակայքի ազատ տարածու-թյուններով կամ եղբայրներով։

15. ԲԱՎԱՍԽԱԿԱԿ

Միայն մեկ անգամ այս տերմինը հանդիպում է Գառնիի հե-թանոսական տաճարի մուտքի պարակալին Չե (1291) թ. փորագրված մի քնդարձակ արտոնագրում, որով Զարբայան եռոչաք և իր որդի ամիր Զաքարիան վերացնում են իրենց տիրույթների բնա-կիչներից զանձվող մի շաքը հորկերի։ Բնագիրն առաջին անգամ 1910 թ. հրատարակել է Գ. Հովսեփյանը, սակայն նրա քնդորինա-կությունը, հակուսակ ապստամբ, այնքան էլ հաշող չէ և ունի մի քա-նի մութ անզին։ Հենց քննվող բառը արտագրվել է բալավասին, որ հետո է իրականորդ²⁰։

¹⁹ Ս. Ամատունի, Հայոց բառարան, էջ 77։ Լ. Անտյան, Հայերեն զավասակալ բառարան, էջ 160։

²⁰ Գ. Հովսեփյան, Գառնիի ավերակները, «Հովիտ», 1910 թ. Մ 8, էջ 120—122։

¹⁷ ԺՊ Գ. Տարինն ձևազրի Շիրապատկարաններ, էջ 233։

¹⁸ Լ. Ամատյան, Հայ անձանունների բառարան, Ա, էջ 275։

Վերջերս նույն արձանագրությունը հրատարակել է նաև պրոֆ. Բ. Առաքելյանը, Գառնիի պեղումների արդյունքներին նվիրված իր գրքում: Բնագրի մեջ հետաքրքրող հատվածը այստեղ վերծանված է. գիր տալիս Գառնե մեր սեփական հայտնեացն, որ եզն : ԺԱ : սպիտակ շարիատ էր եւ : Ի : Ելաւն : Ա : բալխիտանկ, եւ մեկ վերուցալ գայս հարկ. ազատեցալ զեզն եւ զըլխար յամենայն հարկաց, վերուցալ եւ զգին բաժ... և շարագրվում է անհծրի ձևակերպումը²¹:

Պրոֆ. Առաքելյանն այս արձանագրության վերլուծականում հիմնվելով վրաց գիտնականներ Շանիձնի և Բերձնեիշվիլու բանավոր ցուցումների վրա՝ բալխիտանկը մտնողական շրջանի հարկային տերմին է համարում, համապատասխան այդ նույն շրջանից վրաց գրականության մեջ հայտնի սարալխո նույնիմաստ բառին, որ անասուններ արածացնելու կամ արտուների հարկ էր նշանակում²², Բալխիտանկ բարդ բառի ստուգաբանությունը հաստատում է այդ կոնոնը, բոտ այդմ, բարդությունը կազմված է վրաց. բալխիխ=խոտ և հայերեն նախ (=հարկ) բառերից և վկայված ժամանակաշրջանում կարող էր արտահայտել՝ արածահարկ, խոտհարքի հարկ, իշխանական արտոներում անասուններ արածեցնելու համար անեվող հատույր, անուբ:

16. ԲԱՀԱՎԱՐ

Այս բառը վկայված է Ավանի տաճարի ՈԿԸ (1219) թվականի մի արտոնագիր-կալվածագրում, որով աթաբեկ Իվանն մի շարք արտոնությունների է շնորհում Ավանի բնակիչներին, հատուկ շեշտելով՝ վառ միամտութեան սոցա: Գրեթե անողորմ պահպանված արձանագրությունը զգալի ազդեցություններով սուպրին անցած հրատարակել է Մխ. Տեր-Մկրտչյանը «Հանդես հայագիտության» ամսագրում, այստեղից հետագայում անմոխիս արտատպվել է «Վիճական տարեգրում»: Բնագրի սպառիչ գիտական հրատարակությունը՝ լուսանկարով և գծագրական պատշաճ բնագործակու-

թյամբ իրականացրի է Կ. Ղաֆադարյանը, նախ՝ 1945 թ. Ավանի երկեղզյան ծածկագիր արձանագրության վերծանության առթիվ, այս վերջերս Երևանի միջնադարյան հուշարձանների մասին մենագրության մեջ: Այստեղ մեր բառարանության հետ անեվող հատվածը կարգացվում է. Ի բախս հայոց ՈԿԸ, նս՝ Խաճէ արարակ Հաոց եւ Վրաց էտու գիտագ Ասեւա... Արդ, որք յիժոց կամ յասարաց յինին տէր երկիրս, հող եւ շուր ավելցանել պարտ է Ասեւա զան միամտութեան սոցա: եվ ով իլէ ակաս մի կամ ի բանավարէ վարետ անու, 3 : Ժ : Ը : սուր հարցն երզվեցի... (ԿԳԱ 18, ԿԳԵ 192—193):

Մեզ հետաքրքրող ի բանավարէ բառով կապակցությունը Մխ. Տեր-Մկրտչյանը վերծանել է՝ ով իլէ ակաս մի կամ մի բանով վարէ, շարէ տայ... որ հեռու է իրականից և անիմաստ²³, Կ. Ղաֆադարյանը ստույգ վերծանելով բնագիրը, ի բանավար-(և) բառի մեկնություն մեջ հավանաբար սխալվում է, կարծելով, թե այն հասարակական տերմին է և նշանակում է բանով վարող: Այս բացատրությունից ստացվում է, որ Իվանն արգելում է բանով վարողներից շարիատ հարկ անել (ԿԳԵ 193):

Բանավար բառը շնայած արտաբոստ սյարզ ու հասկանալի կազմությանը՝ բանով վարած (հող, այգի) գրական աղբյուրներում հիշատակություններ չունի, և Ավանի արձանագրության հիշյալ վրկայությունը եղակի է: Բարբառներում գործածական է բանափոր՝ բանով փորած հող, կամ բանով փորելը²⁴, Բարդության երկրորդ կերպով վար(=վարել) ունեցող մի բանի բառեր են վկայված Ժ—ԺԳ դարերի վիճական արձանագրություններում. արավար=մի օրում գուժանի կամ արորի վարած տարածությունը, կոսավար=այն հողամասը, որ վարվում կամ մշակվում էր կոսով, գուրանավար=գուժանով վարած, վարվող հող, կիսավար=կեսը վարած և այլն: Մատենագրական հուշարձաններում հանդիպում են նաև՝ անպավար, իշավար, գիշեբավար, կոսավար, գորավար և այլն, սակայն այստեղ գործում է նույն արմատի (կառավարել, բշխի իմաստը,

²³ Մխ. Տեր-Մկրտչյան, Մի բանի հին արձանագրություններ, ZAPH. Marburg. 1903, էջ 12, «Վիճական տարեգիր», էջ 62:

²⁴ Դ. Ամատունի, Հայոց բարբառներ, Վարդապետ, 1912, էջ 41—49, Սոմալիայոյցեց, Բացարար. բառարան, Ա, էջ 319:

²¹ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի, Հ. 3-րդ, Երևան, 1962, էջ 45:

²² նույն տեղում:

ուստի որանք շղեւոր է շփոթել րահավար, օրավար կազմութիւն-
ների հետ²⁶: Մեր օրինակում աթարեկ Իվանեն, իբրև վաճանգինե-
րին շնորհման արտոնություն, արգելում է րահավար-ից (ի բահա-
վարէ), այսինքն որոշ մշակման հողատարածությունից շարխատ
(>շարխո) հարկ առնել: Ի՞նչ է ուրեմն րահավար, կամ ս"ր մշակ-
ված հողամասն է ազատվում հարկից:

Այլ հարցի պատասխանը կարելի է մակարերկ Ավանի տաճա-
րի մյուս արձանագրութուններից, որոնցում մի դեպքում Վրաց թա-
գավորացն Դավիթը (Դոմանիթ թագավորի որդին), երկրորդում ա-
թարեկ և ամիրսպասալար հովիտորուզան (աթարեկ Սազունի որ-
դին) ավելի ուշ, ԺԳ զ. վերերին, թողնում են զԱւանայ զայգեց
(<զայգեաց) շահեան... վասն միամտութեան սոցա... որ, ինչպե՞ս
եկատել է Կ. Ղաֆարդյանը, րահավար էր ավանցիների դավանա-
բանական միասնություն՝ երկարնակների հետ (ԿՂԱ 19—21):

Այստեղից, հեշտ է համոզվել, որ աթարեկ Իվանեն շարխատ
հողային հարկը վճարելուց դատու է ոչ թե Ավանի մշակովի բոլոր
հողամասերը, այլ միայն րահավար հողերը, այսինքն այգիները,
բանջարանոցները և անամերձ մյուս հողակազմները, որոնք մեծ
մասամբ վարվում, հերկվում, մշակվում էին ոչ թե վեցիկով կամ ես-
խազութանով, այլ բահով՝ րահավար, րահավոր հողերը:

17. ԲԱԿԻ ԶՈՐ

Այս կապակցությունը, իբրև հոսող ջրի բանակության միավոր,
վկայված է Արցախի Խաթրաշվանք հուշարձանախմբի ԺԳ դարի մի
եպիքրոտիվական արձանագրության մեջ: Բնագիրը չի պահպանվել և
նրա վերծանությունը բանասիրությանը հայտնի է Շահխաթունյան-
ցի միակ, խիստ պակասավոր հրատարակությունից, որտեղ այդ
հատվածը կարգացվում է. նս՝ Ասիի, դուստր աբալայալու իշխանին
Տառախլինին, թագազամ մաւրն իմյն Միեա խարունին... որ և
տուի գվեր խաս հողն Բլրի հանդի, գնենեկպան է Ա: րահի ջուր...²⁶:

²⁵ 2. Անտոյան, Արձատական րատարան, 2, էջ 576:

²⁶ ՇՄՔ 362, սկիզբական տարիներ, էջ 148, տեղագրված է 1251 թ. տակ,
որ անհնաժող վրիպում է, քանի որ Ավանը (Ասիկ) այդ ժամանակ զեռ մեզում չէր:

Այլ արձանագրություններից հայտնի է, որ միջնադարյան Հա-
յաստանում ջրօգտագործման կանոնավորման նպատակով գործե-
լիս է եղել ջրանցքների կամ րահկան առունների հոսող ջրերի բա-
նակության հաշվամասն սահմանված հատուկ եղանակ, քառ օրի
այդ բանակությունը որոշվում էր ժամանակի տվյալ միավորում,
մեծ մասամբ մեկ օրվա ընթացքում, համար՝ նաև գիշերը կամ ցե-
րիկը տվյալ ջրատարով հոսող ջրի քանակով: Մի շարք վիճակըրե-
րում վերադաս իշխանավորները ջրօգտագործման առթիվ հարևան
գյուղերի կամ հոգևոր կենտրոնների միջև ծագած վեճերը լուծում
էին՝ երկիով այս կարգից, այսինքն սահմանելով տվյալ ջրանցքի
կամ րահկան ամփ հոսող ջրի օգտագործման շափր յուրաքանչ-
յուր գյուղի համար շարաթվա որոշ օրերին: Զրօգտագործման սույն
կարգի հնագույն վիճազրահկան վկայությունը Արուճի տաճարի
մուկի վրա ՅԺԶ (867) թ. փորագրված օրինականացման մեջ է, որ-
տեղ անդական բարձրատիճան իշխանավոր Գրիգորը Սմբատ Բագ-
րատունու հրամանով հետևյալ կերպ է լուծում Արուճ և Կոշ րահկա-
վայրերի միջև ջրի համար ծագած վեճը. եւ ես հուսասարեցի գշուրն
ընդ Կոշ եւ ընդ Արուճ, գինչ իւրեանց բնիկ ոսամ էր լիլ՝ Ա: եւ կէ
Կոշա եւ Ա: Արեւ²⁷: Տեկորի տաճարի ՂԵԹ (1036) թ. արձանագը-
րությամբ արևմտյան Շիրակի Ազարակ և Տեկոր գյուղերի ջրօգ-
տագործման վերաբերյալ վեճը լուծվում է՝ վերականգնելով այն
կարգը, «գինչ առաջի թագաւորացն լէլ է», այսինքն Գ աւրա եւ Գ գի-
րե Տեկորայ է. եւ Գ աւր Գ գիշեր Ագրիուց... (ՍՄՔ 207, ՂԱԵ 154):
Իսկ Մահկանաբերդ զավառի Մակարաբյանքի հնագույն անթվակիր,
հավանաբար ԺԳ դարասկզբի մի նվիրագրում նվիրատու իշխան
Ականձըր վանքին է ապխա՝ հող եւ այլ առդիւն եւ Բ: աւալգաւան
ջուր : Բ : գիշեր (Գ ՄՄ 158), այսինքն նվիրված հողամասը ուղղն-

Շահխաթունյանց չի առնել այս արձանագրությունը և նրա համառոտագրությունը
մէջ է բերել նաչի կաթողիկոսի ձեռագիր ժողովածուից, այդ մասին եղելով:
«Արձանագրութիւնք աշխարհէն Աղուանից՝ զորս ժողովեաց յնկղեցեաց և ի խալար-
մանոց Եսայի կաթողիկոս և նոցին Աղուանից ի թուականութեանն Հայոց ԹճԿԷ
(1718) ի մի տար, յորտ գրուածոց անսլո մեր զիցօր սասէն (էջ 356): Բնա-
գրին ամբողջությամբ՝ սեանթա վանոց արձանն էս խորագրով, տե՛ս Մատենա-
դարան, ձեռ. N 7821, էջ 16 ա:

²⁷ Գ. Հովսեփյան, Գրություն արվեստը հին Հայոց մեջ, Վարդաշապատ, 1913,
էջ 11:

լու համար հատկացվում է վանական համալիրից դեպի հյուսիս-արևելք կառուցված ջրամբարներից երկուսի պարունակած ջուրը, միայն շարժվա երկու դիրքեր:

Վիճագրության մեջ և գրական աղբյուրներում բանի ջուրը որպես ոռոգման հոսող ջրի միավոր հիշատակվում է միայն Խաթրավանքի այս արձանագրության մեջ: Ազգագրական և բարբառագիտական ուսումնասիրություններից երևում է, որ նոր ժամանակներում այդ միավորը կիրառություն է ունեցել Հայաստանի մի քանի շրջաններում: Ս. Ամատունու բառարանում, օրինակ, գիտվում է մի բան էլ ջուր կապակցությունը, որ նշանակում է այնքան հոսող ջուր, որ քիչ բաժնաճան ջրի մեջ տեկված բանի վրիք, կամ հոսող ջրի այն քանակը, որ կարող է անցնել մի բանի խորությամբ և լայնքով կտրված արխով, առվով²⁶:

Մեր բնության ենթակա օրինակում տիկին Ասփան Խաթրավանքին նվիրում է իր հայրենիք Բյրի հանդի նենեկպան կոչվող խաս հողը և այն ոռոգելու համար տերունական ջրանցքից հատկացնում միայն մեկ բանի ջուր:

18. ԲԱՐԱԹ

Աշտարակի Մարինն հուշարձանի արևելյան պատին փորագրված 242 (1317) թվակիր արձանագրության մեջ հոտակ կարդացվում է բարաբ բարը, որը դասական մատենագրությանը հայտնի է և զուրա է մնացել հայերենի բառարաններից: Միջին հայերենի գրական հուշարձաններում բարը վկայված է հնագույն²⁷ Ֆրիկի քերթվածներից մեկում. «Բարաթ մի ստոի ստուն, Որ չէրոց ի նան ցուցանեն», որտեղ այն կիրառված է սոփրական²⁸ պարտաբուրը, մուրհակ, փոխանակազիւ նշանակությամբ²⁹: Այդ երկարաշունչ բնագրի միայն առաջին երեք տողերը, այն էլ առանց բարաբ բարոի հիշատակության, անճանաչելի աղավաղված՝ հրատարակված են Շահաթունյանցի անգղազարական գրքում, իսկ այնտեղից էլ անփոփոխ՝ «Վիճական տարեգրում» (ՇՄԲ 86, ՎՏ 159): Մեղ հետաքրք-

²⁶ Ս. Ամատունի, Հայոց բառարան, էջ 477, Սա. Մալխայանց, Բացարձակաբառարան, Ա, էջ 319:

²⁷ Նրիկ, Գրուհ, Նյու-Յորք, 1952, էջ 354, 639:

բրրող բարի իմաստը ստույգ մեկնելու նպատակով և եկատի ունենալով բնագրի հրատարակված շիխնիլը, մեջ ենք բերում սույն բառարանության հետ առելիղ ընդարձակ հատվածը մեր վերծանությանը. կամաւ ամենայկային աստուծոյ և զգոմալբամբ պարոն Աղբուղային և Միքի Խարունին, Ես՝ Յակոբ Էւէց ի վաճախ շինեցի հոյրատուն: Գ: զուռն ի պարսպին դռնէ, : Լ: տներ շինեցի և զամէն հոյրատունն տլի: Ով որ հանգչի զզուռն Է՛ի, հոյրատուն տան: Եւ պարտեալն զայն տներոյն զամէն հարկ բողին, ոչ բարաբ, ոչ պարտն, ոչ ամիթալ, ոչ ձեռնաւոր, ոչ զգիր..., ոչ ով հետ տներոյն բան շունի..., և հետեւում է անճեքի շարադրանքը (ԵԿ. 7):



Կ. 7

Արդ, ինչպես հասկանալով տվյալ իրարության մեջ բարաբ-ը Պարսիկերեն barat բարը մուրհակ, պարտամուրհակ, փոխանակամուրհակ նշանակությամբ առաջին հայացքից կարծես թե անհամաձայն է տվյալ վկայությանը, բանի որ բարաբ բարը այստեղ հիշա-

տակված է ոչ թե վերացված հարկերի կամ պարտույթների շարքում, այլ զրանք հավաքող կամ իրականացնող պաշտոնյաների թրվարվման մեջ՝ ոչ բարար, ոչ ամիրայ, ոչ ձեռնաուր, ոչ զգիր... և այլն, որ մտածել է տալիս, թե բարար-ը նույնպես կարող է հարկերի և տուրքերի հետ անաշխատե անեցող պաշտոնյա նշանակել:

Մոնղոլական պետության հարկային բաղաբաղկանությունն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարար տերմինի տակ պետք է հասկանալ վճարման մի առանձին եղանակ կամ փաստաթուղթ, որ անշվում էր մոնղոլական հարկերի և տուրքերի դանձման կապալառական կարգի հետ: Համաձայն այդ կարգի, պետական, արքունական հարկերի նահանգական կապալառուները պարտավորվում էին հարկերի կապալային վարձը իշխանական գանձարանը մտնել կամ նախօրոք, մինչև հարկատու քնակությունից հարկերի լիակատար գանձումը, կամ որոշ ժամանակի ընթացքում՝ մաս-մաս, և կամ մոնղոլական պետության կենտրոնական զինվանի բաց թողած հատկացագրերի կամ բարարների զիմաց, որոնք որվում էին երկրի նահանգներում երթևեկող պետական պաշտոնյաներին, էլլի-սուրհանդակներին, արտոնյալ վաճառականներին և երթևեկող այլ անձանց՝ հասանելիք գումարները տեղերում ստանալու համար³⁰:

Հարկերի կապալառուները պարտավոր էին այդ հատկացագրերի կամ բարարները ներկայացնողներին վճարել այնտեղ նշանակված գումարները, իհարկե, տվյալ նահանգի հարկերի կապալավարձի զիմաց: Հարկերի գանձման այսպիսի իրանակը հանազան շարաշահումների և կամայականությունների զոտ էր բաց անում թե բարար ունեցողներին և թե, մանավանդ, հարկերի կապալառուների համար, որոնք, առիթից օգտվելով, հաճախ քնակությունից հարկերը կրկնակի չափերով կամ մի քանի անգամ էին գանձում:

Հայանաբար, նույն բարար տերմինի կիրառությունն է ակնարկում նաև Մանուչիի մզկիթի (Անիում) պարսկերեն արձանագրությունում մեջ մի քանի հարկերի շարքում՝ հիշատակված ազդերի վճարումները կապակցությունը, որ ակաղ. Բարտուղը թարգմանել է

³⁰ А. Али-Заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, էջ 195, И. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв., М.—Л., 1960, էջ 366.

незаконные ассигнования, առանց բացահայտելու անբմինի բովանդակությունը: Ահա Աբու-Մախր-Բահազոր խանի հրովարտական այդ հատվածը. «...как перед этим в городе Ани и других областях Грузии по причине (податей) калан, немеры, незаконных ассигнований и (подати) тарх поборы производили и применяли насилие»³¹, Ալստեղից պարզվում է, որ բարար-ը մի հատկացագիր կամ հանձնարագրեր է, որով մոնղոլական զինվոր տեղերում զանազան վճարումներ էր կատարում՝ կապալով տրված հարկերի և տուրքերի կապալավարձի հաշվին:

Դառնալով քննարկվող արձանագրությունը, պետք է կարծել, որ Մարին վանքի պատրոններ Զարբայան իշխանները ծագոր Երեցի շինած և վանքի հյուրանոցին նվիրած 30 սենյակները ազատել են բոլոր տեսակի հարկերից, բոտ այդ հաստի շնորհիվ է, թե հարկ չի տրվելու ոչ հարկաճան պաշտոնյաներին (ամիրայ, ձեռնաուր, զգիր և այլն) և ոչ էլ հարկերի կապալավարձի զիմաց բարար-հատկացագիր, հրամանագիր, հանձնարագրեր ներկայացնողներին:

10. ԲՆԱՋՈՒՐ ԱՌՈՒՐ

Կոշի հուշարձանախմբի հնազույն վիմագրից մեկում, որ փորարված է տաճարի հարավային պատին ՇԺ (1061) թ., հիշատակվում է քնապար առուն, որ քափել է (փրկագեցել, ազատել) հիշատակագրի հեղինակ վանքի վանահայր ծոհանեար՝ տեղի մյուս պաշտոնյաների հետ: Այս շատ կարևոր քնագիրը, ինչպես և Կոշի վանական խմբի մյուս արձանագրությունները, մեծ մասամբ անծանոթ են հայագիտությանը: Մի. Տեր-Միքայելան «Հանդես հայագիտության» և «Բանասեր» ամսագրերի էջերում 1903 թ. հրատարակել է Կոշից և Արուճից մի քանի արձանագրություն, սակայն դրանց ընթերցումները զգալապես աղավաղված են, անկատար և ոչ մի պատկերացում չեն տալիս բնագրերի բովանդակության մասին³²: Կոշի հիշյալ վիմագիրը այստեղ մեջ ենք բերում մեր ընդ-

³¹ В. Бартольд, Персидская надпись, СПб., стр. 7.

³² Մի. Տեր-Միքայել, Մի քանի հին արձանագրություններ, 1903, էջ 41—49: «Վիմանակ սարկիր», էջ 28:

րինակությանը, որը ավելի հարգանք է իրականին. Շժ րվակա-
նիս, ես՝ հայր Յոնանես բազում աշխատութեամբ Մաղաթին եր-
դուեալ Կոչա տանուաւերաֆս, դատաւորն, աագերէցն, մանկեալսն
բափեցին զրնաչուր առուն, : Մ : դանկեակն զիր, որ Աագինն տան :
Մե այս ջրայս նակառ կա, : ՅժԲ : իցն նգովակ Եղիցի³³: Արձա-
նագրութեան հիմնական բաժանդակությունը հասկացվում է. Կոչի
վանահայր Յոնանեսի, Կոչի տանուաւերի, դատաւորի, ավագներե-
ցի և մանկիվագի ջանքերով 200 դահեկանով բափել են, այսինքն
ազատել կամ զբաժանել վերագրածնելով հետ են վերցրել րնա-
չուր առուն, 200 դահեկանը կամ ազատման պիտը տալով Աագինն
(կամ՝ աագինն), որ կամ անձնանուն է, կամ իրավասու պաշտոնայն:

Այսպես դատելով րնագրի մասին, կարելի է կարծել, թէ նրա-
նում մտք կհետք չեն մնում, և թէ չհատվենք մանկեակագի-ի ինչ պաշ-
տոնայ լինելը: Մակայն սորաղ է նաև րնաչուր առուն: Տեր-Մկրտու-
չյանք այն մեծատառով է տպագրել, ուրիմն տեղանուն է համա-
րում, բառ երևույթին մասանելով, որ առուն դանվում կամ սկիզբ է
տանում Քնաչուր կոչվող վայրում, կամ պարզապես, առուն, ջրանց-
քը այդպես է կոչվում, անկասկա նրա գտնվելով վայրին: Ավելի ան-
հավանական է Ս. Հակոբյանի կարծիքը, բառ որի հայր Հովհան-
նեսը սբազում աշխատութեամբ, ծախելով Մ (200) դահեկան³⁴, Կո-
չի տանուաւերի հետ սոց է կանչում զգրնաչուր առուն³⁵: Երա-
կանում ոչ թէ րնաչուր առուն անցկացնելու մասին է խոսքը, այլ
այն բափելու, ազատելու, այսինքն փրկացնելու մասին: Վերջերս
Կոչի այս արձանագրությունը ընդհանուր բովանդակությունը անդ-
րագրածն է նաև պատմարան Գր. Գրիգորյանը: Նրա կարծիքով բը-
նագրեր պետք է մեկնարանել այն իմաստով, որ միջնագրումը ջրի
համար ծագած վեճներ լուծող թաքատաւորն աւագերէցն է եղել և որ
այդ «դատաւոր աագերէցը» դատը վարելիս է եղել նրզվյալ տանու-
աւերի ներկայությամբ: Այս մեկնությունը ընդհանուր ույինը չու-
նի խնդրո աուրիկա արձանագրության հետ և ոչ մի չափով չի հիմ-

նավորված: Կոչի արձանագրության մեջ հետագոր ակնարկ անգամ
չկա ջրի համար ծագած վեճերի և դրանք երզվյալ տանուաւերի
ներկայությամբ ավագերցի կողմից դատելու մասին: Ինչպես սա-
վեց, այստեղ խոսքը երբեմն վանքին պատկանած րնաչուր առուն
բափելու, այսինքն փրկացնելու մասին է, որ զլուխ են բերել բնա-
գրում թվարկված պաշտոնյաները³⁶:

Թվում է, րնաչուր-ը շուկաք է հասկանալ իրեն հատուկ անուն՝
տեղանուն կամ հատկացուցիչ առաւել համար: Ավելի ստույգ կի-
նար կարծիք, որ րնաչուր առուն րնական առուն կամ գետակն է, ի
տարբերություն արհեստական՝ մարդկանց անցկացրած ապի կամ
ջրատարն եվ, իրոք, մտաւորապես նույն ժամանակներին (նճ
984) մի վիճակում, որը փորագրված է Բյուրականի տաճարի հա-
րավային պատին, առու անցկացնելու մասին ասվում է. ես՝ հայր
Կրիզոր, որ Հալաբաղի գաղկն զրի եւ գառառ հանի: Այստեղ Հա-
լաբաղի հատկացուցիչը օրինակաւի կիրպով զրված է սեռական հո-
ւովով, այնինչ մեր օրինակում զրնաչուր առուն հայցական հոլով է:
Քանցի դրանից, ամիրսպասաւար Զարաբաղի մի արտոնագրում, որ
փորագրված է նույն Կոչի վանքի արևելյան ճակատին, արտաբուստ,
մեր կարծիքով հայտնվում է նույն րնաչուր աղի կամ նրա ակուն-
ների մասին, այս անգամ հստակ անվանելով՝ Աանա աղբիւրն: Ահա
այդ նորահայտ արձանագրության մեջ հետաքրքրող հատվածը.
ես՝ ամիրսպասաւարս Զաւարես եւ Իսանէ... տաւալ սուրք ուխտիս
գտնելագոր իւր ջրովն եւ հանդովն, լեւաւն եւ դաշտով եւ վիստիկն
դարձուցալ ի սուրք Եկեղեցիս եւ աղբիւրն Աանան եւ զինչ հայրէ-
նի կա ի գաւառիս, ազատ յամենայն հարկաց...³⁶ Զարաբաղան շիշ-
տում է վերստին դարձուցալ, ուրեմն այդ աղբիւրը կամ առուն եր-
բեմն պատկանել է վանքին, հետագայում զեպերի րերումով խլվել
է նրանցիկ և ապա նորից վերագրավել:

Այսպիսով, րնիվող արձանագրության ստույգ վերծանություն-
նից երևում է, որ Կոչի վանքի առաջնորդ Յովանէշը և տեղի պաշ-

³³ Մյու. Տեր-Մկրտչյան, Իմ գործակալության ժամանակ հավաքած մի քանի
արձանագրություններ, Բրանսուրս, Փարիզ, 1903, էջ 26—32, Էվիմական սարե-
ցին էջ 9, Թվականը արտագրված է Շժ, Մաղաթին երզուելու-ը՝ ստասիկ երզումալ,
մանկեակագի՝ Եկեղեց, և որ... բուտրից Նուս չի ընդգրկեալովս:

³⁴ Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Ա, երևան, 1937, էջ
400.

³⁵ Գր. Կրիզորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9—13-րդ դա-
սերում, Ե, 1973, էջ 204:

³⁶ Անունը նեք մեր հավաքածուից: Կոչի հուշարձանի արևելյան ճակատի ար-
ձանագրությունները ընդօրինակման համար զգվարստատաւիչի լինելու պատճառով
հրատարակված չեն:

տունյաները 200 դահեկանով բախել են վանքին պատկանող առուներ, աղբյուրներ, որն ըստ Երևույթին մինչ այդ վաճառված, խլելած կամ գրավ գրված է եղել: Հնարավոր է նաև, որ այդ փրկագիրը վճարվել է այն հողատերերին, որոնց հողամասերի մեջով անցնելիս է եղել բնաջուր առու:

20. ԶՀԱՐԿՆ ԲՆՈՒԼԻՄԲ

Տեկորի տաճարի հնագույն արձանագրություններից մեկում, որ բառ էության թագավորական արտոնագիր է տեղի բնակչությանը հարկատվությունից ազատելու մասին, երբից այլ հարկերի հիշատակվում է նաև զհարկ բնովիմբը՝ Բնաջուրը բանասիրությանը ծանոթ է ն. Սարգսյանի եզակի հրատարակությունից և անհնար է ստուգել, սակայն այդ բնորոշանկությունը, դասելով ներկա տեսքից, շսկետը է մեծ տարբերություններ ունենա իրականի հետ: Արձանագրության առաջին մասը շարադրված է հայոց Կատրանիդն թագուհու անունից և թվագրված ՆՄԷ (1608) թվականով, իսկ երկրորդ մասը՝ Աշոտ թագավորի անունից և ունի ՆԿԳ (1614) թվականը^(*): Ամբողջ բնագրի զմլար բացատրելի հատվածը Աշոտ Բագրատունու արտոնագրի մեջ կարդալով զհարկն բնովիմբ բառերն են, որ մինչև այժմ էլ մնում են վիճելի: Ահա այդ հատվածը ն. Սարգսյանի վերծանությամբ. Եւ նս՝ Աշոտ թագաւոր հաստատեցի եւ բողեւլ եւ զհարկն բնովիմբ յախտեցից եւ գրաստակն վասն իմ աքեչաւառութեան եւ իմ ծնոցայ եւ եղբարց եւ գաւակաց իմոց (ՍԱՐ 206, ՂԱՇ 133, ՎՏ 13), և հետևում է անձձրի ձևակերպումը:

Արդ, ինչպես հասկանալ բողեւլ եւ զհարկն բնովիմբ յախտեցից, կամ ի՞նչ հարկ է թողել Աշոտ թագավորը, Մ. Էմինը այս որձանագրության ոտներեն թարգմանության մեջ բնովիմբ բառը բաց է թողել՝ ըստ Երևույթին անբացատրելի համարելով տվյալ կապակցության մեջ, իսկ մնացածը թարգմանել ՕСВОБОДИЛ НАСКИ от налогов (НЭА 81): Ս. Հակոբյանը զհարկն բնովիմբ հասկանում է իբրև աշխարհական հարկ, ի տարբերություն պետական հարկերի՝ արքունի հարկի, արքունական շարի կամ նեպակի, ըստ այդմ, հեղինակը աշխարհական հարկ անելով հասկանում է այն

տարբերն ու հարկերը կամ արդյունքներով ունեան, որ հարկատու բնակչությունը վճարում էր հողատեր կալվածատերերին կամ իշխաններին՝ նրանց կողմից հատկացված հողակտորների օգտագործման համար³⁷:

Չառարկելով արքունի և աշխարհական հարկերի այս սահմանումների զեմ, որ տալիս է Ս. Հակոբյանը, շնք կարող բնութենել նրա համոզումը այն մասին, որ հարկ բնովիմբը աշխարհական հարկ է, և որ Կատրանիդն թագուհին և Աշոտ թագավորը վերացրել են հենց այդ աշխարհական հարկը: Հեղինակը գտնում է, որ աշխարհական հարկը վիճագիր արձանագրություններում հաճախ կոչվում է «բնովիմբ հարկ»: Ի իբրև օրինակ մատնանշում է Տեկորի հիշյալ արտոնագիրը: Սակայն բնովիմբ բառ-մակբայը ոչ մի պարագայում չի կարող նշանակել հարկի տեսակ՝ ոչ աշխարհիկ և ոչ էլ արքունի կամ եկեղեցական:

Բնովիմբ > բնովիմբ վկայված իրադրության մեջ և բնզանբուպես կարող է նշանակել՝ ամրոցովին, ամրոցություն, լիսվին, իսպառ և այլն, որ վերաբերում է ոչ թե վերացված հարկի տեսակին, ինչ հարկ լինելուն, այլ ավելի շուտ այդ հարկերի վերացման եղանակին կամ կարգին, քանի որ բնովիմբ մակբայը գրված է ոչ թե զհարկն գոյականի, այլ բողեւլ եւ թալ-ստորոգյալի վրա և ցույց է տալիս թե ինչպես է թողնված կամ վերացված զհարկն: Եվ պատահական չէ, որ արձանագրության հարձակություն մեջ, անձձրի բառնակում հարկը անվանվում է առանց այդ բնովիմբ մակբայ որոշելի. երե ո՞ր հավառակ կա կամ հարկիս, կամ շարխախս բողուս, ՅՅՎ իցն նզոված է:

Բնովիմբ մակբայը կազմված է բուն բառի գործիական հոլովվածների՝ բնով, ին մակբայական ածանցից և գործիական հոլովի երկրորդ հոլովակազմից բ-ից, որի առնանմամբ ին ածանցի ց-ն հեշունսափոխվել է մ-ի՝ բնով-իմբ-ը = բնովիմբ (հմմտ. բուրսովին/բուրսովիմբ, գլխովին/գլխովիմբ և այլն)³⁸:

³⁷ Ս. Հակոբյան, նյմ. աշխատ., Ա, էջ 395:

³⁸ Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, 1955, Երևան, էջ 296—297:

Երկրայնի անձնանունը վերծանվել է Սանահճի վանքի մեծ գավթի թաղին փորագրված նվիրատվական արձանագրության մեջ. Ի րովի ՈԿ (1211) ևս՝ Բուրայս, քոռն Զար... Ետո յԱստուածածինս զՄամախարունին այգիս յԱռինջբ (ԿՂՄ 129): Վերծանող Կ. Ղաֆաղարյանը նվիրատուի անձնանունը վերականգնելիս հետևել է նախորդ հրատարակիչ Զ. Ղրիմեցուն և այդ անվան մասին ծանոթացրել. նվիրատու Բուրայն այլ տեղերից մեզ անձանք է, աստի և անճնար է վերականգնել նրա պապի անունը, որն սկսվում է Զարսի: Հուշարձանի մոտ և Ղաֆաղարյանի գրքում գետնիցված լուսանկարի վրա ի նորո ստուգելով պահպանված տառաշարքերի ընթերցումը, գտնում ենք, որ նվիրատուի անունը ոչ թե Բուրայ է, այլ Բուրայ (նկ. 8, 8 ա): Կարելի էր գտնել այս անվան մեջ ընդամենը մեկ գրի տարբերությունը և շրթոնել նրա պապի անունը, և թե վերծանողին անձանոթ Բուրայ-ն չլիներ միջնադարյան Հայաստանի ականավոր գործիչներից մեկը՝ իբրև մեծ սպարապետ, տե՛ր երկրիս, մեծն Բուրայ քանիցս հիշատակված հայ և վրաց աղբյուրներում: Զարարյան Իվանիի գործակալ, վերատեսուչ, սպարապետ Բուրայի (= Բուպա, Բուպակ) գործունեության տարեգրությունը

Ի ԲՈՒՐԱՅ-ՈԿ: ԱՆՈՒԼ ԲՆԱՅՏ ԵՄՈՒԲԱՅՍՈՒ ՈՒՌԱՅՏ
ԱՆԻՍԱՍՏԱՆԱ ԲՈՒՆ ԻՆԱՅԳՆԱՅԻՄԻՄԱՆԵՐՏ

նկ. 8

բոս հայ և վրաց մատենագրության տրված է բանասեր Պ. Մուրադյանի՝ Թեմառույրի վանքի վրացերեն արձանագրությունների մեկ նաբանությանը նվիրված ուսումնասիրության մեջ: Այստեղ համառոտակի կներկայացնենք հայկական աղբյուրներում սույն Բուրայի մասին պահպանված տեղեկությունները՝ ցույց տալու համար, որ Սանահճի խնդրո առարկա արձանագրության մեջ մեր վերականգնած Բուրայն նույնն է այլ աղբյուրներից հայտնի Բուպայի, Բուրաի, Բուպակի հետ:

Սույն հաղորդման առարկա Բուրայի, Բուպակի մասին առաջինը պատմում է Ստ. Օրբելյանը ԺԳ դարասկզբի իրադարձությունները նկարագրելիս. Լբ գործակալ և նրամանատար ի վերայ ամեն

նայն իշխանությանց իւրոց (Իվանեի—Ս. Ա.) և ասզ հեղապց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ²⁹: Այլ առիթներով Օրբելյանը Բուպա=Բուպակին բնութագրում է մեծ իշխան Բուպակ, ի մեծ դէղչպուլացն ոմն Բուրա անուն, իսկ Պատմության մեջ զնտեղված Բուրայի ընդարձակ կալվածագրում՝ իշխանաց իշխան³⁰:



Նկ. 8ա

Այնուհետև Բուրայն բազմիցս հիշատակվում է նույն ժամանակների վիճական բնագրերում: Հայրավանքի ՈԿ (1211) թ. արձանագրության մեջ Բուրայն ներկայացված է իբրև մեծ սպարապետ, տե՛ր երկրիս, որ իր տիրույթ Առինջբում գտնվող Ոսկերակ այգին ու Նորաշենիկի երկրաբանի ջրաղացը տալիս է վանքին (Գ ԻՎ 69): Կեչառիսի դավթի հյուսիսային պատի ՈՄՆ (1206) թ. մի նըվիրաբրից իմանում ենք, որ ոմն Հայրաձայն իր պատրոն Բուպայից զնկ և վանքին է նվիրել նույն Առինջբում գտնվող մի այգի. Ես՝ Հայրաձայն զնեցի իող յԱռինջբ յիմ պատրոն Բուպայն բազում արդեամբ առկեցի այգի և Ետո սուրբ ուխտն Կեչառոս (Գ 2ևՊ Ա 42): Սանահճի ՈԿ (1211) թ. նվիրագրում արդեն ինքը՝ Բուրայն է դարձյալ Առինջբում գտնվող Մամախարունի այգին նվիրում վանքին:

Այս բոլորից պարզ է, որ իշխանաց իշխան, մեծ սպարապետ

²⁹ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 253:

³⁰ Նույն տեղում, էջ 256—257:

Կուրսայն եղել է Զարբարան Իվանեի գործակալը, նրա տիրույթների կառավարիչը, մեծ ազդեցություն ունեցել նաև Վրաց արքունիքում՝ արժանանալով մեծ դիվանագիտական աստիճանների: Ազգայնականների տվյալներից դատելով, Բուբայի ժառանգական տիրույթների եղել են Առինջի շրջակայքում, ինքը թագաված է Թեմա-տուրի վանքի բակում. տապանադրի վրա վրացերեն գրված է. Աստուած ողորմի մեծն Բուբայի հողուն⁴¹:

Հարկ ենք համարում սովեցանել, որ նույն անձնանունը Բուբայի մեծ վկայված է նաև Մղարթի խաչքարանի ՉՄԹ (1303) թ. հիշատակարանության մեջ, որտեղ պատվում է շուր բերհույու և խաչարար կանգնեցնելու մասին. Ես՝ Բուբայն և կենեկից իմ Մանդրատ բազում աշխատութեամբ բեւաբ գշուս և կանկեցեցա՞մ գնաշա (ՄՀ անտիպ):

22. ԶԳԵՂՆ ԳԱՌՆԱԿԵՐ, ԹԵ՛ ԳԱՌՆԻ

Ցաղաց քարի վանքում Տարսայիճ Օրբելյանի թողած հայանի նվիրագրում հողեր կենտրոնին բնծայված արժեքները նշված են. ավա՞ ի սուրբ ուխտա Ցաղաց Բառոյ ի հայրենեցն մեռոց ի Կեղար-տունի զգեղն Գառն... Ե ի Մերոկաձոր գմբե ձննատունի այղին (Գ III 149):

Արժանագրությունը մասամբ եղծված է և հատկապես նվիրված գյուղանվան վերջին գրերը զմված է վերականգնելու. Բնագրի բոլոր հետազոտողները հետևել են առաջին հրատարակող Զայազանցին և հարցի ստորակա գյուղանունը վերականգնել՝ զգեղն Գառն, Ս. Բարխուդարյանը՝ զգեղն Գառն (ԱԶՃԲ 161, ՂԱՍ 154, ՄԱԿ 107—108, Գ III 149): Վերջերս պատմական Մյունխենի վանքոպոստական գյուղերի քանակը նշարտելու կապակցությամբ Տարսայիճի այս կալվածագրին է անդրադարձել Գր. Գրիգորյանը, որի կարծիքով Տարսայիճը վանքին նվիրել է թե՛ Գառնակեր գյուղը և թե՛ հողա-մաս Գառնի գյուղում, այսինքն երկու առանձին կալվածքներ⁴²: Ղգեղն Գառնի կամ Գառն վերականգնման հետ զմված է համաձայ-նելու. պատմագրական աբրուրները, հատկապես Սա. Օրբելյանի

նշանավոր հարկացուցակը Գեղարքունիքում Գառնի հայտնի գյուղաբնակավայրը տարբեր է Տարսայիճ Օրբելյանի պատկանող գյուղ չին ճանաչում: Սակայն խնդրո առարկա գյուղի անունը կարելի է ստուգապես որոշել Օրբելյանի «Պատմություն նահանգին Մեռական» երկի միջոցով, որտեղ Տարսայիճի հիշյալ նվիրագրում մեջ է բերված ազատ շարագրմամբ Ահա համապատասխան հատվածը. «Սա (Տարսայիճ Օրբելյանը—Ս. Ա.) շինեց եկեղեցիս և աբաբ բազում աղղիս ի վանորայս. ես և ի վանեմ Ցաղաց Բառոյ գիւղ ի Կեղար-տունի զԳառնակերն, և այղի մի ի Մեռակալ ձորե»⁴³:

Այսպիսով, այլևս անվիճելի է, որ Ցաղաց քարի վանքին Տարսայիճ այս արձանագրությամբ նվիրել է Գեղարքունիքում գտնվող իր սեփական ոչ թե Գառնի, այլ Գառնակեր գյուղը:

Ճշգրտման կարիք ունի և Տարսայիճի այս կալվածագրի թվա-կանը. իրականում, քարի վրա այն 2 է, այսինքն 1251 թ., որը, սակայն, առհարիր է բնագրի բովանդակությանը: Արձանագիրը կա-րող էր փորագրվել միայն 1273 թվականից հետո, երբ Տարսայիճը Ամբաս Օրբելյանի մահից հետո ժառանգեց նահանգի իշխանապետությունը, և մինչև իր մահը՝ 1290 թ., ըստ այսմ, թվագրի մեջ րաց են թողնված տասնավորը և միավորը (Գ III 150):

23. ԳԵԹՎՈՐ

Միայն մեկ անգամ քստո հանդիպում է Անիի Ասարեից եկեղեցու ԶԹԹ թվակիր մի արձանագրության մեջ, որով տամ գալի նուրայղին Քոթիթը իր բնկերներով վերացնում է քաղաքի քահանաների հարկերը՝ բաժը և տամղան: Արտոնագրի վերջում, անեժքի ձե-վակերպման մեջ ստույգ կարգազրկում է. ով որ այլ բաժ ուղ կամ տամղալ, յաստուձալ ու ղեկին զեթվուր լինի ու նզովամ է: ՅԹԹ: Կայրապետացե... (Գ I 23):

Մի կողմ թողնելով բնագրի հնչյունական ու լեզվական այլ անհետևողականությունները, անհասկանալի է մնում մանավանդ զեթվուր լինի կապակցությունը: Այս արձանագրության առաջին բնագրից հետո և Արաղիսյանի գրքում և Կ. Բաժաճյանի ժողովածուում

⁴¹ Ըստ Պ. Մուրադյանի հիշյալ հոդվածի
⁴² Գր. Գրիգորյան, Մյունխենի վանքի կալվածատիրությունը, էջ 61, 103.

⁴³ Սա. Օրբելյան, Պատմություն..., էջ 424:

բառս կարգացվել է ինգերվոր (զան՞ի՞ն բառի վերջին ին գրերը միացվել են գերվոր շարքին=ինգերվոր լինի, որ Բասմաչյանի կարծիքով ոչ մի բնօրենի ստուգարանության չի ենթարկվում (ՍՍՔ 103, ԿՅԱ, № 69, էջ 84): Կարտաբ միջին հայերենի իր անսխալ բառարանում մեջ բերելով այս վկայությունը՝ բառի արմատը համարում է ինգեր-ը (որ վերջածանցով) և նրա ծագումը դնում արար. in-yet = nallat = անենձ բառից, Սակայն նույն բառարանում հեղինակը գեր բառահոլովածի տակ է. Աճառյանի գավառական բառարանից մեջ բերելով Սայաթ-Նովայի հայտնի խոսքերը՝ ինչ գեր են արել Բեզ, սաս, ընդգծված բառը Աճառյանի հետևությունը մեկնում է վնաս, հանցանք, թեև ստուգարանությունը ի տալիս (KWM, այդ բառերի տակ)⁴⁴, Ավելի համոզիչ է գեր, գերվոր բառերի մեկնությունը ն. Բյուզանդացու անավարտ անտիպ բառարանում: Ըստ հեղինակի գեր նշանակում է հանցանք, մեղք և ծագում է գայր արմատից (գայրել, առգայր) = սխալվել, սայրախել, սղորովել. բառ այդմ գեր անել = վնաս տալ, անգեր = անվնաս, գերվոր = հանցավոր, մեղավոր (ՆԲՄ):

Այստեղից մեր օրինակում յաստուձոյ ու դանին գերվոր լինի անեծքի բանաձևը, բառ վերը բերված ստուգարանության, կարելի է հասկանալ՝ ասածուն ու դանին մեղապարտ լինի, ասածու ու դանի (նկատմամբ) հանցավոր է և այլն:

24. ԳԵՏԱԳԱՅ, ԹԵ՛ ՍՏԱԳԱՅ

Անիում Զարարիա ամիրոպասալարի կառուցած եկեղեցու հարավային պատին արտաբուստ փորագրված է կառուցողի շինարարական-նվիրատվական արձանագրությունը, որտեղ այլ ընձանների թվում ընթերցվել է նաև (գ)տաղաց ինքնուրույն ստաղաշարը: Արձանագիր ունեցող բարերը, որոնց վրա եղել են առաջին հինգ տողերի սկզբի մասերը, չեն պահպանվել, վնասված են մի քանի այլ բարեր և, և այդ պատճառով բնագիրը լիակատար ու սպառիչ վերածանություն չի ենթարկվում: Սակայն նրա հիմնական բովանդակությունը և հասկապես բննությունն առարկա բառի վկայությունը հը-

նարավոր է վերականգնել հենց հրատարակված լուսանկարից: Բեյքերն այդ հատվածը է. Օրբելու ընդօրինակությունը... Էսու նուրընձանից... ակն մի շաղաց յկարեուց ձորին և Արուն: Գ: դրամ ի լուսացոց... ևի գասաղաց ևի զձորաղաց շաղացանոյն ծառասորինե... (Գ I 58): Ակներև է, որ այստեղ (գ)տաղաց-ը անտարբերակություն է հայերենի բառամիջբուն և հավանաբար տարբերակման արդյունք: Արձանագրության լուսանկարի վրա նորից գննելով պահպանված տառածևերը՝ համոզվում ենք, որ գտաղաց շարքը ստույգ չի կարգացվել, և այստեղ հնարավոր է նաև զգեռաղաց ընթերցումը, պարզ երևում է գ գրի փոքր-ինչ վնասված գնդիկը և Նորիդունական գծիկը, իսկ ե-ն ավելի հասակ է կարգացվում և կտակած չի առաջացնում, թեև ներքևի կիսակոր ստեղծող զգալի շափով վնասված է: Զցն գրերի և տաղաց շարքի միջև սովորականից ավելի մեծ տարածություն է թողնված, և փորագրողը իրապագայ է այդ գծի վրա տեղավորել ո գրերը (Գ I տախ. XIX): Եթե մեր այս վերականգնումը (զգեռաղաց) արդարացված է, ուրեմն արձանագրության այդ հատվածը կարելի է հասկանալ այն իմաստով, որ Զարարիան իր շինած եկեղեցուն նվիրել է զգեռաղաց և զձորաղաց շաղացանոյն ծառասորինե, այսինքն երկու շրջաղացների ծառասորությունը՝ կապալավարձը, աղունավարձը, ոչ թե այդ շրջաղացներն առձավառ, այլ նրանց եկամուտը միայն, զուցն մի որոշ ժամանակամիջոցում, որի մասին բնագրում չի նշված:

Հաջովի թե հնարավոր լինի զեռաղաց կամ ձորաղաց անվանումների տակ հասկանալ այդ ձևնաարկությունների որակական հատկանիշը կամ նրանց արտադրանքի տարբերությունը: Ավելի հավանական է մտածել, թե արձանագրողը ցանկացել է այդ բառերով ցույց տալ հիշյալ շրջաղացների դրսևված տեղը կամ մասնաշենքի, թե որ շրջաղացների աղունավարձն է (ծառասորին) նվիրում վանքին (զեռի աղաց, ձորի աղաց), ինչպես որ նույն արձանագրությունում մեջ մի այլ նվիրված շրջաղացի մասին ասվում է. ակն մի շաղաց յկարեուց ձորին, այսինքն Ապարաճնի ձորում գտնվող ջրաղացի մի աշխարհ, կամ Ապարաճնի ձորում գտնվող միաշխարհի (մի զույգ Բարով) ջրաղացը:

⁴⁴ Ըր. Աճառյան, Գավառական բառարան, էջ 227.

25. (Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՆ ՎՐԱՅ) ԳԵՈՐԳԻ ԱՃԱՅԻ, ԹԵ՝ ԹԱՄԱՐԻ

Նորատուսի Ա. Գրիգոր (Դափուց վանք) կնկնդեցու վերանորոգման մասին արձանագրության մեջ ժամանակի բանաձևեր ըստ Ա. Բարխուդարյանի վերծանութայան հետևյալն է. ի քաղաանութեան վրաց Քամարի, եւ ինֆնակայ տերութեան Իվանէի եւ Շահնշանի, ի հայրապետութեան տեսն վերանորոգի... և այլն (Գ IV 19): Բնագրի փորագրման ժամանակի մասին վերծանողը ժամնագրում է. գրված պե՛տ է լինի 13-րդ դարի սկզբներին, երբ Իվանեն դեռ կնկնդանի էր և Շահնշանը՝ հասուն զործիչ: Այս քաղաքությունը հակասում է բնագրի՝ վերնում մեջ բերված բանաձևին և առարկելի է մի քանի կետերում. ա) ամիրապատար Զարարախի որդի Շահնշանը հոր մահվան ժամանակ (1212—1213 թթ.) հայրիվ 16—17 տարեկան էր, ուրեմն ծնվել է 1196—1197 թթ., բ) Վրաց Քամար քաղաքին մահացել է 1212 թ., ուրեմն այդ ժամանակ 16—17 տարեկան Շահնշանը չէր կարող հասուն զործիչ լինել, գ) Շահնշանի հիշատակությունը իր հորեղբոր՝ ամբարկ Իվաննի հետ ապացույց է, որ արձանագիրը փորագրվել է Զարարախի, նաև Քամարի մահից հետո:

Շահնշանի հիշատակումը ամբարկ Իվաննի հետ, քնդակառակը, ցույց է տալիս, որ նա դեռևս չարահաս, ինքնուրույն զործիչ էր, այսինքն նրա ծննդից (1196—1197 թթ.) մեկ-երկու տասնամյակ էր միայն անցել, քանի որ նախնազույնս 1220 թվականից է, որ ամիրապատար տիրողսով Շահնշանը վճարված է Անիի Առաքելոց կնկնդեցու մի արձանագրում՝ ջաղազ պատուհան վերցնելու արարակ Իվանէի եւ ամիրապատար Շահնշան Մարգոի եւ Ալագի յերկար կնկնդանութեան» (Գ I 17): Օձունի ՈՂԷ (1228) թ. խաչարձանի հիշատակագրում ևս Շահնշանը հիշատակված է ամիրապատարի տիրողսով. «վասն երկարկնկնդութեան ամիրապատար Շահնշանի» (ՄԷ)⁴⁵: Գրանից փորք-ինչ առաջ նույն նորատուսի ՈՂԷ

⁴⁵ Բնագրի միակ հրատարակությունը՝ Մ. Բոլշևիկոյ, Ճանապարհորդություն... Վ, 1830, էջ 82: Վարդանի տեղեկությունը, 1212 թ. Շահնշանը ստացա մի հեղանակ էր, այսինքն 1207 թ. ծնված լինելու մասին, ինչպես ցույց է տվել բանալեռ Պ. Մարաղյանը, ուղղել է մն կամ մէ, քանի որ Հռոմայի 1206 թ. և Հառի-

(1226) թ. խաչարի հիշատակագրում Շահնշանը ամբարկ Իվաննի և նրա որդի Ավագի հետ նշված է սոսկ ժառանգորդական առումով, առանց որևէ տիրողսովորման՝ յիշխանութեան արարակին Խալանի, Ալագին, Շահնշանի (Գ IV 22), հավանաբար այն պատճառով, որ Գեղարքունիքը եղել է Իվաննի և նրա շառավիղների տիրույթը, և Զարարի ժառանգներն այստեղ իշխանություն չեն ունեցել:

Այս բուրդից ակնհեր է, որ Դափուց վանքի խնդր առարկա շինարարական արձանագրության ժամանակի ձևակերպման մեջ Վրաց Քաղաքի անունը հարկ էր վերականգնել ոչ թե ի Քաղաքության Քամարի, այլ նրան հաջորդած՝ Գեղիկ Լաչալի, որը հակակալի է 1213—1222 թթ.:

Ճշգրտման կարիք ունի նաև այս կարևոր քաղաքի հնդիանակի կամ կնկնդեցին հիմնովին վերանորոգելի անունը: Ա. Բարխուդարյանի վերծանութայան մեջ սովյալ հատվածը կարգացվում է. Ես՝ առուսով վարդապետ... և շարունակության վրա եղծված 5—6 առաստեղից հետո՝ շինեցի գուեղեպ կնկնդեցիս: եղծված մասում, անշուշտ, եղել է շինարարի՝ առաջ վարդապետի անունը, որն անհնար է վերականգնել, սակայն վերծանողը ստույգ բառը դնում է զլխազրուով, այսինքն այն դիտում է իբրև անձնանուն՝ նրան վերագրելով հուշարձանի վերականոցումը (Գ IV 512):

Հասկանալի է, որ առուսովուք, նվաստ, հեաին, անաղ, կրտսեր և այլն, սովյալ իրադրության մեջ որոշիչ է անհնայտ անունով վարդապետի համար և կիրառվել է ձեռագրերի հիշատակարաններում սովորական ինքնանվաստացման, իր անձը նաեմացնելու, հասնեստություն նպատակներով, ըստ այսմ, անհնար է այն անձնանուն համարել:

Նույնպիսի մի վրիպում էլ հանդիպում է Հովհաննավանքի ՊԶԶ (1427) թ. նվիրագրի նախարանում, նվիրատուի անձնանվան վերականգնման մեջ. Ես՝ պիսակ վարդապետ Սիմեոն բնծանցի զիմ նորեմա Այսմաուրս սր՝ Կարապետի (ԿՂԷ 79): Պիսակ անվանին այստեղ նույն իմաստ ունի, ինչ առաջը նորատուսի քաղաքում՝ պուք, կուսեր, անվարձ, նվաստ, ստորին, մինչդեռ վերծանողը պի-

մի 1201 թ. արձանագրություններում Հավաստված է Շահնշանի գոյությունը (անս Պ. Մարաղյան, Կաշի վրացերեն արձանագրությունների շուրջը, Վրարքը, 1974, ԺԱ, էջ 56):

տավր դրել է մեծատառով, այսինքն այն համարում է Սիմէոն վարդապետի ազգանունը կամ մականունը:

26. ԳՈՐԻՍԻ «ԽԱՍԻՆ ԱՂԲՅՈՒՐ» ՄԱՏՈՒԹԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Այս մատուռի շինարարական արձանագրությունը փորագրված է աղբյուրից ոչ հեռու հսկա ժայռաբեկորի արևելյան երեսին: Մասամբ խաթարված բնագիրն ըստ Ս. Բարխուդարյանի միակ վերծանությունն հետևյալն է. «...շինեցի Սուրբն Քրիստափոր մեզ եւ մնողաց բարեխոյս ի Քրիստոս : Թվին: Են: օ (1031) (Գ II 72): Մատուռի կառուցողական ձևերը չեն համապատասխանում այդպիսի հնության և լրջորեն առարկում են ավյալ թվագրման դեմ: Գործիս տարածքում ժԱ դարի հուշարձանի առկայությունն անհավանական համարելով, նորից ստուգեցինք թվագրի ընդօրինակությունը մեր զաշտային դրսուսմաներում և լուսանկարի վրա Պարզվեց, որ

• • • ՏԻՍՈՒԲԵՆՅ
• • ԱՓՈՐՄԵԶԵ
- ՇՆՈՂԱՅԲ
ԵԽՈՎԵՍԻԳՍ
: Ռ: Հ: Խ:
Ա. 9

թվականի շ կարդացված գիրը ապահովորեն չ է (նկ. 9), ըստ այդմ Քրիստափոր մատուռի թըվագրեր հարկ է շտկել 2և—1291, այսինքն ԹԳ դարի վերջերին և ոչ թե ԺԱ դարում (տես նաև Գ II, լուսանկար 81):

27. ԳԱՀԻԱԿ (= ԳԱՀԻԱՔ, ԳԱՀԵԿ)

Այս բառը գրական աղբյուրներում չի հանդիպում: Հիշյալ հեյլուսափոխված տարբերակներով երեք վկայություն է պահպանվել ԹԳ դ. կեսերի վիճակի արձանագրություններում: Այդ հիշատակությունները նախկինում հրատարակվել են զգալի անճշտություններով, ուստի բառարանության նպատակով անհրաժեշտ ենք համարում մեջ բերել դրանց ստույգ վերծանությունները: Անիում,

Առաքելոց եկեղեցու գավթում (նկ. 10), եւ՝ Մխիթար աղի Գեիգորեացիսին... բողի զշաղացնայս ամեկոյ զգամղէն եւ զգանէկ (Գ I 28): Քանաքեռում, որմնափակ խաչարձանի հարավային պատին, ԶԺԵ (1266) թ. եւ՝ Պարսիմ եւ

ԵՍԽԻՌԱՐՈՐ
ՐԻԳՐԻ ԳՈՐԻՍ ԻՍԻՍԻՆ
ՈՐԱՆՈՅՄԱՐԱԶԻԵՄԻԴՈՆ
ԱՏԼԵԷՇԱՄՈՒԹԵՆՆՈՒԵ
ԱՄԱՅՆՈՅՍԱՄԵՆՈՅՈՎԱՂ
ԸՆԵՒՉԴԱՅԵԿԼԻԿԱԿԱՆՈՅ
ԱՕԻՆԼՈԳՈՅՆ

որդի իմ ձանճա(*) եւ մայր իմ եւ Իվեր իմ՝ Մարտիրոս, նախարանու ծախեցաք մեր սրտի յամառութեամբ զվեր հայրենիք այգիս Պէտաւանին: ԳԹ: ԹՃ: սպիտակ: անգլական առաք: Աստուած շեմահար առնէ հալալ հայրենիք յորդեց յարդիք: Ոչ ում դասի չկա, ոչ մեքոց, ոչ ատարաց: Ով դաս անէ: ՏժԷ: ից եզոված (Է), տուգանք տա: Մ: դէկ: Թվի: ԶԺԵ: (1266 թ.): Վկա: աստուած: և Աղուշափն, Կույայն, Տրեւեր, Վահրամ, Մաքրե, Դափր, Ասահել, Կարապետ, Ստեփանոս, Մխիթար վարդապետ, Խոսրով, Դեղ, Յակոբ, Աշրափն Խաչենցի, Վահրամ, Գեղ, Անպատ, Բարսեղ Էրեց, Ամիրզառն Բջնցի, և Մխիթարիչ Էրեց, որ զգիրս գրեցի: Դանիակն: ՅԹ: Պ: ի պարտն և: Մ: Պ: շահանախն և մեղունախն:

Վ. 10

Մենք գիտակցաբար բնագիրը հրատարակում ենք ամբողջությամբ և հեարափորին շափ նույնական վերծանությամբ, քանի որ միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակն ու իրավական հարաբերություններն արտացոլող այս կարևոր ու հազվագյուտ արձանագրությունը նախորդ ընդօրինակողների կողմից ներկայացվել է զգալիապես աղավաղված, իրականից, քարի վրա փորագրվածից խիստ հեռացած ու անիմաստ, որը և խանցարել է նրանում տեղ գտած տերմինների ստույգ բառարանությունը (ՇՍՐ 159, ՄՍՍ 207—208, ՂԱԱ 298):

Վերջերս Քանաքեռի այս արձանագիրը հրատարակվեց նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանի շեքեան. միջնադարյան հուշարձանները մենագրության մեջ: Ցավոք, այս հրատարակումը ևս, չնայած զորում դետեղված հատակ լուսանկարին և զծագիր պատճենմանը, շատ քիչ բանով է տարբերվում անցյալ դարում կատարված հիշյալ

վերձանութուններին, իսկ տերմինների բացահայտման առումով ալեկի սխալաշատ է⁴⁶:

Այժմ դահիակ տերմինի մեկնաբանության մասին: Քանաբե-
ռի խաչարձանի և Անիի խնդրո առարկա բնագրերի հրատարակիչ-
ները տարբեր ստորմեթոդներով ընդօրինակելով դահիակ տա-
ռաշարքը, շեն գրազվի նրա բառարնությունը: Այիշանը կասկա-
ծելի համարելով բնթերցումը՝ բառի մասին գրում է. բնուս դա-
նեկան, երկրայելի են հետևելով առաին (ՂԱԱ 297—298): Կ. Բա-
մաշաշար Անիի արտահայտի ֆրանսիական ֆարգմանության մեջ դա-
նեկ հասկացել է հին հայերենի դայեակ բառի իմաստով (= ինա-
մակալ) և ֆարգմանել gouvernante, որ անհարկ է բնագրին և ակ-
ների վրայում (KBA 74): Ալեկի անհավանական է Կ. Ղաֆաղար-
այեի բացատրությունը: Իր սեղանն գրում նա Քանաբեռի արձա-
նագրության դահիակը, առանց բառաբանության կամ ստուգաբա-
նության փորձի, համարում է կանխավար (ԿՂԵ 209), իսկ նույն
գրքում գետնզված երևանի գնման մասին Մահմադինի արձանա-
գրության դահիակ-ն՝ անհայտ աղբյուրից բաղելով, հասկանում է
բնատուր: Ինչպես կոտանենք ստորև, հիշյալ բնագրերում դա-
հիակ = դահիակ տերմինը ոչ բնատուր է և ոչ էլ կանխավար:

Հր. Անառայանը դահիակ (դանեկ) բառը ծագած է համարում
պարս. dahyak բառից, որ կազմված է dah = առար և yak = մեկ բա-
ռերից, և նշանակում է տասից մեկը, առաստուղ: Այս մեկնությունը
հիմնված է Անիի և Քանաբեռի հիշյալ աղավաղված վկայություն-
ների վրա և, ստուգաբանորեն հավաստի լինելով, ոչ մի չափով չի

⁴⁶ Անա Ղաֆաղարյանի վերանայման մեջ սեղ գրած աղբյուրները գրքում,
Փորագրված է խաչարձանի հր. Հակառին, Վերձանված է Ղաֆաղարյանի գրքում,
յուսանակար № 167, էջ 209:

էջ 209

Պարսիսն	Պարսիս
և ուրի իմ ճանե՛՛՛ ար	ուրի իմ ճանե
և մայր իմ	մայր իմ
Նախարուն	Նախարուն
Պախանին	Պախանին
Յին: Բձ: ՍՊ	Յին: Բձ: ՍՊ
ով դաի անէ	ով դաի անի
Տիրեն	Տիրեն
Անիդան Բձնեցի	Անիդան Բձնեցի
դահիակն: Յին: Պ: Ի պարուն	դահիակն: Յին: Պ: Ի պարուն
: Մ: շանեպին և մեղունեպին	: Մ: շանեպին և մեղունեպին

բացահայտում դահիակ տարբային տերմինի բովանդակությունը
Անառայանը անձանսթ է եղել դահիակ բառի մի նոր, կորոպ հիշա-
տակությունը, որ գտնում ենք Երևանի Կաթողիկոս նորահայտ հու-
շարձանի հյուսիսային պատերի փորագրված արձանագրության մեջ,
որը մեծապես նպաստում է հարցի պարզաբանմանը: Անա բնագրի
համապատասխան հատվածը Կ. Ղաֆաղարյանի նույնական ընդ-
օրինակումը. Ի ք. ԶժԿ (1264 թ.) Ե՛՛ Մանմառին, պարուն Ան-
անց ուրիս, գերեան գեցելի հողով եւ բրավ ևս իբրավոմ զայս արա-
րի, հայրենիք, որ գնամ Երևին ու գիր առավ վկայում ու դահիակն
առում կամ հայրենիք, որ փոխած լինի ու մին առի անցել լի-
նի, այլ յետ չնասանէ (ԿՂԵ 137):

Արք. Ի՛նչ իմաստ ունի մեջ բերած օրինակներում դահիակ,
դահիակ, դանեկ (տասից մեկը, առաստուղ) բառը: Անիի արձանա-
գրության մեջ դանեկը հավանաբար տարբի անվանում է, որ
առնվել է նկամուտի՝ տվյալ դեպքում ջրաղացի նաստյալի ստա-
նոր մասից, քանի որ հիշատակվում է ջրաղացների մյուս հարկի՝
առնալի չնա միտահին, որ վերացրել է Խուցիտի որդի Մխիթարը:
Քանաբեռի արձանագիրը բառ է ունեցան առնալիս գործարքը վը-
կաներով վավերացնող մի պայմանագիր է, որով սեփականատե-
րերը՝ Պարսիսն իր հարազատներով, իրենց հայրենի վայրեն Կա-
ձառում են Պետանինին: ԳՌ: Բձ: սպիտակի, այսինքն 3200 արծաթ
գահեկանի, ըստ այդմ, վաճառքի ընդհանուր գումարի առաստու-
ղը, մեկ տասներորդ կամ դահիակը՝ (3200 : 10 = 320) Յին = 320
գահեկան վճարելով տեղի իշխանին՝ սպարսին, Ս (50) սպիտակ էլ
մաս հանելով շանեպին և մեղունային⁴⁷, Երևանի արձանագրու-

⁴⁷ Քանաբեռի խաչարձանի արձանագրության մեջ վաճառվող սպարս արձեքը
իրականում, բարի վրա և բարձր ընդօրինակողների մաս : ԳՌ: Բձ: է, այսինքն 3200
արծաթի, կար է Կ. Ղաֆաղարյանն այդ գումարն ուղղում : ԳՌ: Բձ = 4200: Նախ՝
բարի վրա պարզ փորագրված է : ԳՌ: Բձ: և, այսպես ինչպիսիք մի քանի տեղ
ներքև հիշատակված է ավել գումարի մեկ տասներորդ՝ ուղիք 320 (Յին) սպիտակ,
այսինքն 3200 (ԳՌ Բձ) թվիք հսկվում է իր առաստուղով, և անհարկ է թեկն ուղ-
ղել, մյուս անփոփոխ թուղեն, Անառայանյան առաջանում, որը Ղաֆաղարյանի գր-
քում ներկայացվել է Գահեկան: Յին: սպիտակ ի պարուն անորոշ ու անիմաստ
ընթերցումով: Հարկ ենք համարում նշել, որ Քանաբեռի խնդրո առարկա արձանա-
գրության առույզ մեկնաբանությունը իր ձևով սակ եղավ ոչ հարազատ վերձա-
նագրության առույզ մեկնաբանությանը, որ համարում էր ձևով առաջարկել է ականավոր բանաձև
ևս վրանների հիմանը, գրատպության ուժով առաջարկել է ականավոր բանաձև

Քյան մեջ քաղաքի տեր կամ պատրոն մեծահարուստ Սահմադինը օրերն է սահմանում սեփականության առուծախի կամ փոխանակման կարգի մասին, բոլոր այդ, առևտրական գործարքները վիճանորով, պայմանագրով ձևակերպվելու և պարտին այդ գործարքների բնչհանուր արժեքի մեկ տասնհարյրը՝ դանիաբ, վճարելուց հետո, կարող են լուծման ենթարկվել միայն մեկ տարվա ընթացքում, որից հետո՝ «այլ յետ շահասանջ»:

Այստեղից պարզվում է, որ միջին դարերում գոյություն է ունեցել շարժական կամ անշարժ ունեցվածքի առուծախի կամ փոխանակության գործառնություններից մասնաճյուղ, դատակամ տալիս տեղական իշխանի, կալվածատիրոջ կամ պարտնի օգտին՝ փոխանակման և վճարողի գործարքի բնչհանուր արժեքի մեկ տասներորդի չափով, որ անվանվել է դանիակ (դանիաբ, դանեկ): Քանիտեղի արձանագրից հայտնի է դառնում նաև, որ բացի տեղական իշխանի կամ պարտնի վճարվող տասնհարյր-դանիակից, այդ առևտրական գործարքներից ինչ-որ զումարի մասհանում պետք է կատարվեր նաև տեղական հարկահավաք պաշտոնյաների՝ շահնայի և մեղուլախի օգտին, թեև վերջինիս ինչ պաշտոնյա լինելը գիտես պարզված չէ⁴⁵:

Ք. Ավղայեզյանը՝ գիտն 1927 թ. հրատարակած իր արձեղտեր ուրի գաղափար հայ վիճակահարմարությունների մեջ հարվածում (ՏԿՄ Ք. Ավղայեզյան, Հասարակական հետազոտություններ, 6, 1969 թ, էջ 315):

⁴⁵ Կատարածի արձանագրության վերջին նախադասության՝ դանիակ :Յ: սպիտակի պատել, և :Մ: շահնախ և մեղուլախ անուանող վերծանության հետևանքով միաբանել է ոչ միայն տեղի պարտնի առևտրական գործարքներից մասհանվող հասուկ հատույթը՝ դանիակը, այլև հարկալի մյուս պաշտոնյաների՝ շահնայի ու մեղուլախի օգտին այդ գործարքներից կատարվող հասուկացումները (Մ=50 սպիտակ երկուսին), 4. Չափազարյանը շահնախ, մեղուլախ, նախորդ վերծանողների հետևանքով, սպառել է գլխազրով, ալյուրին այդ տերմինները համարում է հասուկ անուններ, անձնանուններ (ՎԳԼ 209), միջոցառնալայտական քրեականության մեջ վաղուց պարզված է, որ շահնախ նշանակում է հարկահավաք պաշտոնյա (որտեղից էլ այդ պաշտոնյայի օգտին զանձվող հասուկ տուրքի անունը՝ շահնախակ), իսկ մեղուլախ ինչ պաշտոնյա լինելը գիտես չի պարզված (Ք. Ավղայեզյանի առաջարկում է այդ մասում վերապահելու՝ շահնախ և տեղա մեղուլախի (ահարկահավաք պաշտոնյա), սակայն ուղի վերծանությունն արհեստական է, քանի որ տեղում, քաղի վրա այդպիսի գրեթե չկան), բայց որ մեղուլախ անձնանուն չէ, ամեն կասկածից վեր է:

Հոռոտոսի վանքի ԺԳ դարի նվիրագրերից մեկում այս տառաչարքը փորագրված է հետևյալ կապակցության մեջ. Ես՝ Առիմս, որդի Աստաճատա ետու ի յԱն Բուն փողոցին զիմ գանձագին կուպակն, որ շինեցի, Եբեբի դեճն բանակից է Աստեղացն, : Բ : կուպակի կտեճն մէկն ի վերս կուպակին է և մէկն իւրեճն դիմաց, որ դաղայն է Եբեբ (ՍԱԲ 155): Բնագիրը գիտական հրատարակություն չունի, և Սարգիսյանի սույն բնագրից հանդիսանալով հարազատության անհնար է ստուգել, դատի և դժգուհ է երաշխավորել: Ընդհանուր առմամբ դուրբերկայելի բնագրում անորոշ է մնացել դաղայն-բառը, որը տվյալ կապակցության մեջ վիչայված է նվիրված կրպակի տեղը մասնանշուկո նպատակով՝ այն կուպակը, որից ներքև ճանվում է դաղայն: Հոռոտոսի արձանագրությունների նախորդ հետազոտողները այս բառի մեկնությունը չեն անդրադարձել: Մ. էմիրը բնագիրը թարգմանելիս այդ հատվածը անհասկանալի համարելով, բաց է թողել (ՀՅԱ 39): Ստ. Մալխասյանցի բացատրական բառարանում հավանաբար սույն արձանագրից բաղված դաղայնը զրված է անստույգ բառերի մեջ և թողնված անմեկնելի:

Դաղայն(յ) բառի ստուգաբանության համար պետք է նկատի ունենալ արաբ. դախլ, դախիլ, դախլա (խ > դ օրինաչափ ձայնեղացումով) արմատը, որ նշանակում է գանձարկղ, արկղակալ, նաև գանձատուն, փողերանոց: Մեր հողորդման ստարիկ արձանագրում ինչպես Առուժինի նվիրած կողպակը, այնպես էլ նրանից ներքև ճանվող դաղայն Անիի Բուն՝ Գլխազար փողոցի վրա են, որ մտածել է տալիս, թե դաղայն (=դախլայն) կարող է գանձատուն, լուսամայափոխարան, սեղանավորների հաստատություն լինել, որտեղ անեցի վախառուները դրամական գործառնություններ էին կատարում:

29. ԴԱՆԳ ԿԱՄ ԳԱՆԿ

Մատենագիտական արչությունների վկայություններում որոշ է բառիս արտահայտած իմաստը՝ նվազագույն կշառաչափ, 2 դարեր

հատ կշռող, կամ պղծծի, արծաթի և ոսկու դրամի փոքրագույն միավոր⁴⁹։ 2. Աճառչանք բառի ծագումը համարում է պահլ. պարս. dāug կամ dānk արմատից, որ նշանակում է շորհող մասը մեկ դիրեմի կամ շորհող մասը մեկ մագալի⁵⁰։

Այստեղից հեշտ է համոզվել, որ աջակողմյան խաչքարը ևս պետք է նվիրված լիներ Կյուրիկյանների արքայական գերդաստանի անզամներին որևէ մեկին, ցուցն նույն Գավթի՝ Քամար անունով ամուսնուն կամ դստերը:

⁸² Գ. Սարգսյան, Անապատ կամ Նոր-Վարազ գլանը և նրա վիճաբանությունը, «Էջմիածին», 1952, № 11—12, էջ 20:

⁸³ Կ. Ղաֆազարյան, Եղված տեղում, էջ 169—172, Գ. Սարգսյան, Գեղձնուտի գլանը և նրա վիճաբանությունը, «Էջմիածին», 1952, № 4, էջ 43:

⁸⁴ Տե՛ս Ս. Թուխուդարյան, Նույն տեղում, էջ 132:

⁸⁵ Գ. Սարգսյան, Եզմ. աչխ., էջ 28, այլն՝ Կ. Ղաֆազարյան, Եզմ. աչխ., էջ 169: 93

Արևմտյան Շիրակի Բազմայր և Արազածոտն գավառի՝ Տեղեր հողատերերի ժԻ դարի միամարտության մեջ երկու անգամ Տանդիպում է միևնույն ի Քամիր արտահայտությունը՝ հիշատակված այդ վանքերին նվիրվող այգիներից անհիշապես հետո Այդ նվիրագրերից Բազմայրի գիտականորեն հրատարակված չէ, անհնար է ստուգել, ուստի ստիպված ենք հիմք ընդունել ն. Սարգսյանի և Կ. Բամաջյանի ընդորինակությունները, որոնք իրար հետ բացարձակ նույնական լինելով, հավատ են ներշնչում, որ հարազատ կիրեն նաև իրականի հետ։ Տեղերի արձանագրությունը հրատարակված է Մխիթար Տեր-Մկրտչյանի անհատիկ ընդորինակմամբ, զգալի շափով ազավազված է և այդ պատճառով հիմք է տվել ի Քամիր կապակցության թյուր մեկնարանություններին Ահա այդ բնագրերը. Բազմայրում. Ես՝ Անտիս և Շագարեղս ատաղ զվարտանառին կէնն ի սուրբ ուխտս։ Առնեն ծամ ի տարին։ Բ : ար, : Ա : Անտեցն : Ա : Շագարեղին։ Այգին ի Քամիր (ՍՍՔ 182, ԿԵԱ 218)։ Տեղերի վանքում. Ես Խնձորիկս միարանեցա սուրբ ուխտիս Տեղերու, Եսու յԱռան զիմ այգին ի Քամիր և յես իմ մանուան այլ զինչ լինի...⁸⁶։

Արդ, ինչպես բացատրել ի Քամիր կապակցությունը Մ. Հիմքը Բազմայրի արձանագրության վերջում ավելացված այգին ի Քամիր կապակցությունը առաջ է բերել և տեղավորել նվիրված Ուղտանա կոչվող այգուց հետո, այսպիսով, Քամիր-ը նույնպես հողատար անուն հասկանալով՝ հատվածը թարգմանել է. отдал половину Ухтаната и виноградника в Тамире, այսինքն Ուղտանայի կեն ու Քամիրի այգին տարբեր նվիրել է համարում (ՄՅԱ 58)։ Հիմք ընդունելով Տեղերի արձանագրության վկայությունը՝ Մառք այլ կերպ է մեկնարանում Քամիր-ը նրա կարծիքով և Եսու յԱռան զիմ այգին ի Քամիր նախադասությունը պետք է հասկանալ և дат я в Арахе свой сад для обработки, այսինքն ի Քամիր պետք է վերծանել ոչ թե իբրև տեղանուն, այլ հասարակ անուն, առաջացած արաբ. tamir—մշակել (հողը) արժատից (ՎՏ X)։

Այսպիսի բացատրության համար Մառք հիմք է ընդունել Տե-

⁸⁶ Մ. Տեր-Մկրտչյան, Մի քանի հին արձանագրություններ, ZAPh B. II, Մարտից, 1903, S. 62.

գիրի արձանագրության այն ընդորինակությունը, որը հրատարակված է «Վիճակն տարեցրում» և զգայապես ազավազված է Քանի որ Եսու յԱռան զիմ այգին ի Քամիր նախադասության մեջ արդեն նշված է, թե որտեղ է գտնվում նվիրված այգին (յԱռան = Առանում), ուստի Մառք ի Քամիր այլևս տեղանուն չի համարում և աշխատում է բառի ստուգաբանությունը պարզել նրա նշանակությունն այդ կապակցության մեջ։ Այնինչ Տեղերի այս նվիրագրի նորագույն ստույգ վերծանությունից պարզվում է, որ այնտեղ յԱռան տեղանուն չի կարգացվում, այլ յառաջ (նկ. 17), բոս այդմ. հիշյալ հատվածը պետք է հասկանալ. և Եսու յառաջ զիմ այգին ի Քամիր, և յես իմ մանուան՝ այլ զինչ լինի⁸⁷։ Այստեղից պարզվում է, որ նվիրատու Խնձորիկը (<Խնձորիկ) Տեղերի վանքին նվիրել է իր կենդանության օրոք, կամ մինչև մահանալը (յառաջ)՝ Քամիրում գտնվող իր այգին (այգին ի Քամիր), իսկ մահվանից հետո (և յես իմ մանուան)՝ ինչ որ մնա (այլ զինչ լինի) (նկ. 17 ա)։

Քամիր բնակավայրի կամ դաշտամասի տեղորոշումը ղժվարություն չի հարուցում. հենց Տեղերի վանքից ոչ հեռու, Արազածի փեղեկերին ընկած է պատմական Քամիր հնավայրը և դրողը (ոչ շքբանում՝ Ղզրամիր և Աղթամիր), որը հերթադի հռչակված է իր այգիներից (նեղկախիս Ոսկեվազ, Ոսկեմառ դշուղերի տարածությունները)։ Քամիրի այգիների մասին հիշատակվում է նաև Աշտարակի Կարմրավոր հին եկեղեցու պարտի ժԻ դարի մի արձանագրության մեջ. և Ես լուխ տարենն : Ի : փասցի ի Քամիրայ այգոյն, ով որ գայիցն Եսու, բաժակ տա (ՄՎ)։

Ինչ մնում է Բազմայրի նվիրագրի Քամիրին, այդպես պետք է կարծել, որ այստեղ նկատի է առնված կամ այս նույն Քամիրը, կամ Բազմայրի մերձակայքում եղել է այդ անունով մի այլ բնակավայր։

⁸⁷ Ե. Տեր-Մխչյանյան, Ամբերգածորի արձանագրությունները, հեղինակներ, 1901, № 5, էջ 52—53.

կա՛վար կամ դաշտման, որտեղից Ուղանաա կոչվող այդու կեսը նվիրատուներ Ավետիան ու Հաղարդեղը ընծայել են վանքին:



Նկ. 17 ա

44. ԹԱՐԹ

Անիում Տիգրան Հոննեցի հայտնի նվիրադրության մեջ է թիվս բազմաթիվ այլ նվերների հիշատակվում է նաև քարոփ բառը հետևյալ կապակցություններում. ես ետու ընծայն ի վանս սր Գրիգոր... կէս ահն շաղաց, քարոփ մի բոլոր ու մին այլ քարոփն շարաբ: Բ: աւր, Գլիծորին շաղաց, : Ա: քարոփին շարաբ: Բ: աւր... և այլն (Գ I 63): Հոննեցի երկարաշունչ արձանագրությունը՝ փորագրված իր իսկ կառուցած եկեղեցու հարավային պատին՝ արտաբուստ, չընայած պատկառելի հետիվյանը (ՈՅԳ—1215 թ.) միանգամայն անկող է պահպանվել և բոլոր ընդօրինակողներն էլ հրատարակել են զրեթև անսխալ: Բնագրի վերածնունդները, սակայն, հատկապես Հոննեցի նվիրած անշարժ և շարժական ունեցվածքի բացահայտումը, որոշ զգվարությունների է հանդիպում, և չի կարելի սպասել համարել: Հենց մեջ բերված հատվածում պարզ չի հասկացվում քարոփ բառի կապակցությունը, արտահայտյած իմաստը:

Առաջինը բառի բացատրությունը տալիս է էմիլը՝ արձանագրության ոտներին թարգմանության մեջ քարոփ-ը թարգմանելով

թերսա — ձկնաբակողով, ձկնաբասակաւ կամ մայտղ (ՀՅԱ 31): էմիլը, ժողովածուի նպատակներից ելնելով, չի պարզում քարոփ-ի, իբրև ձկնորսական սարքավորման, էտիլունը և հավանաբար բառի մեկնության համար հիմք է ընդունում հայերեն բարբանների ավայնները: Եվ, հերածի, մի շարք հայ բարբաններում (Սրեան, Մուշ, Մարազա, Այաշկերտ, Խոյ, Զնիթուն և այլն) մինչև օրս էլ քարոփ-ը գործածական է քարե, քոյփ, քոբփ հեղյունափոխված ձևերով, որ նշանակում է ձուկ բռնելու կողով, ձուկ, աղվես բռնելու ցանց, վառմ³⁸: Գրական աղբյուրներում քարոփ բառը հազվադեպ է: իբրև մասնագրական երկերում ավանդված վկայություն, սովորաբար մասնացույց է արվում Մովսես Կաղանկատվացու Վեղվանից պատմության մեջ մեկ անգամ հիշատակված քարք մեք, որ ավյալ իրադրության մեջ արտահայտում է վանդակաձև էյուպածի, վանդակապատ իմաստը և զորածաված է եկեղեցու ծածկի եղանակը բնութագրելու նպատակով³⁹:

Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է քարոփ բառի շատ կարևոր մի վկայություն, որ գտնում ենք Անանիա Շիրակացու «Տաղապա հարցման եւ յոժման» խնդրաշարքի է հարցման հետևյալ կապակցության մեջ. ես ի Մարմնա էի՝ յուտանի Կանթառականաց, և երթեալ յեզր գետոյն, որում Ախուրեանն կոչեն՝ տնի երեսմ ձկանց, և ետու արկանն ուղիսն և հանին զգասարակն, և զշուրեւ ձկանքն երազ երամոյն. և որ յուպաննն գեթմա, ի քարքի բնկաւ (ՕՄԻ 515, 521): Ահեհրև է, որ այս օրինակում քարոփ կիրառվում է ճիշտ նույն նշանակությամբ, ինչ բառը ուներ բարբաններում՝ ձկնաբակողով, ձուկ բռնելու ցանց, վառմ: Կարելի էր սրանով սպասված համարել քարոփ (= քարք) բեկի հայերեն արժատի մեկնարանությունը և նորից շանդրազոտնալ նրա բուսացնությունը, եթև չլինեին այդ բառի մասին ականավոր գիտունների արտահայտած անհարկ կարծիքները, որոնք զրեթև բաղաբացիություն են ստացել հայագիտության մեջ: Ահա թև ինչպես են ինկարանում քարոփ=քարք բառի վերջ հիշված վկայություններն Ն. Մարք և Հ. Մանանդյանը:

³⁸ Հ. Անայան, Արմ. բառ., Բ, էջ 162, Ս. Ամատունի, Հայոց բառարան, 1912, էջ 206:

³⁹ Հ. Անայան, Արմ. բառարան, Բ, էջ 162:

Իր «Անի» գրքում մանրամասն վերլուծելով Տիգրան շահնեցի նվիրարեամբ անշարժ ու շարժական դուլքը՝ Մաթր այն կարծիքն է հայտնում, թե տվյալ վկայություններում քաղաքի պետք է հասկանալ ջրաղացի աղացվածք, տվյալ ժամանակահատվածում ջրաղացի արտադրանք (ПОМОЛ) ըստ այդմ, բնագրի ընդգծված հաստվածը առաջարկում է թարգմանել. ПОЛ МЕЛЬНИКИ ВСЕЯ ПОМОЛ (քաղի մի բոլոր) ... В НЕДЕЛЮ ДВА ДНИ ПОМОЛЪ (մինչ այլ քաղիին շաբաթ : թ : առ)⁹⁰, նույնպիսի նշանակություն է տեսնում քաղի բառի մեջ նաև Հ. Մանանդյանը: «Քննական պատմությունում» մեկ առ մեկ վերադիելով շահնեցի նվերները՝ Մանանդյանը համապատասխան հատվածը աշխարհաբար թարգմանում է, կես ակն ջրաղացի ամբողջ մի քաղիք և մի այլ քաղիի շաբաթական երկու օրը, նաև Գլխոդի ջրաղացի մեկ քաղիի շաբաթական երկու օրը⁹¹:

Դժվար է համաձայնել բազմահմուտ դիտնականների այս վարկածի հետ. նիշտ է, Անիին և նրա վիճագրությունը ամենից խորը և բազմակողմանի դիտող Մաթր, բայց այս դեպքում նա ակնհեռաբար վրիպել է: Անիի և մերձակայքի հուշարձանների հարյուրավոր արձանագրություններում բազմաթիվ հիշատակվում են նվիրարեղված կամ դեղված-վաճառված ջրաղացներ, նրանց տարբեր տեսակները, սակայն դրանցում չի հանդիպում որևէ ջրաղաց, որի արտադրանքը կամ մեծությունը բնութագրվեր քաղի անբխնով:

Հայտնի է, որ վիճակահարմանագրություններում ջրաղացներին մեծությունը կամ հզորությունը սովորաբար արտահայտվում է ակն (ալք) կամ աղաց բառերով, ըստ այդմ հայտնի են մեկ (զույգ քարոտենցող), երկու, չորս ալք ունեցող ջրաղացներ (Ա : ակն, : թ : ակն, : Գ : ակն և այլն)՝ վիճակահարման նվիրարեղում երբեմն վանքերին ընծայվում են ոչ թե ջրաղացներն ամբողջությամբ, այլ նրանց մի մասը՝ աղացները կամ ակները (ալք), ըստ այդմ, հիշատակություններ են պահպանվել ջրաղացների ձևի աղացն, ալ ակն, միջի ակն ընծայելու մասին: Հասկանալի է, որ բոլոր այսպիսի դեպքերում խոսքը վերաբերում է ջրաղացի տվյալ աղացի եկամուտը, աղանավարձը վանական կենտրոններին հատկացնելու մասին: Մեք

որինհանում Տիգրան շահնեցի նվիրած ջրաղացը կես ակն է, այս գիտնում խոսքը վերաբերում է ոչ թե ջրաղացի մեծությունը, այլ նրա եկամուտին, աղանավարձին, որի միայն կեսն է հատկացվում վանքին: Այլ նվիրագրերից հայտնի է, որ նվիրատուները համախառն ամբողջությամբ, այլ վերջինիս միայն մի մասը կամ դանգը (դանկ = 1/6 մաս), ըստ այդմ հանդիպում են ջրաղացի՝ : Բ : և : Դ : դանգերի նվիրաբերումներ, որ հավասար են համապատասխանաբար եկամուտի 2/6 = 1/3 և 4/6 = 2/3 մասերին: Գ : դանգի փոխարեն որո՞ծածվում է նրան հավասար կես դանգը (3/6) կամ կես ակն, իսկ : Ա : դանգը և : Ե : դանգը սակավ են հանդիպում (ավելի մանրամասն տե՛ս դանկ—դանկ բառահոլովածը):

Մտածի և Մանանդյանի բացատրությունը չի բխում բնագրի բացատրումից կամ քաղի բառի ստուգաբանությունից, այդ արդյունք է նվիրագրության միանշանակ պարզ տառածներին և նախադասության անդամներին ոչ ստույգ տրոհման: Այսպիս, կես ակն ջրաղացը ինքնուրույն, ավարտված թվարկում է և պետք էր հասկանալ այն ինչպեստով, որ շահնեցը նվիրել է այդ ջրաղացի մի աղացի (ակն) եկամուտի կեսը, սակայն հեղինակները դրան կցում են քաղի մի բոլոր... բառերը, որով վերջիններս ստորադասվում են ջրաղացին, դանկում նրա աղացները կամ աղացվածքը. ըստ որում միանշանակ անմեկնելի է մնում այդ բառանշատման հետևանքով ստացված նախադասությունը. արդարև, ի՞նչ հասկանալ՝ կես ակն ջրաղացի ամբողջ մի քաղիք և մի այլ քաղիի շաբաթական երկու օրը... բառերից:

Այնինչ, միանշանակ ակներ է, որ քաղիք ինքնուրույն չափաբանք ենձևանարկ է, դետում ձուկ որսալու հարմարանք, որով որսած ձկան որոշ բանակը՝ շաբաթվա որոշ օրերի ձկան որսը, Տիգրան շահնեցը հատկացնում է իր կառուցած վանական կենտրոնի սպասավորներին:

45. ԹԱՅԷԿ(Կ)

Այս անձնանունը վերծանված է վայոց ձորի Քարաղույս դուռի մոտ, խճուղու եզրին, ժայռաքեղների վրա կանգնեցված խաչար-

⁹⁰ H. Mapp, *Ann.* (—Մ.—, 1934, էջ 34:

⁹¹ Հ. Մանանդյան, *Քննական աեսություն*, Գ, էջ 151:

ձանի հիշատակագրում, որի առաջին ամբողջական ընդօրինակությունը տալիս է Ս. Բարխուդարյանը. «Ն» բովիս : ԱԿԻ : (1290) ես՝ Քաջկկ, դատար Սարգսի, օրդոյ խորիշանի կանգնեցի գլխաշու ի բարեխառութիւն ինն եւ ծնողաց ինոց» (Գ III 177); Քաջկկ իրական անձնանուն անծանոթ է հաշվաւորին եւ Անաոյանի բառարանում չի արտացոլւած։ Մեր դաշտալին գրառումներում սույն անունը վերծանւած է Քալկկա, այսինքն Ց ընկալւած գրի տեղում սյարղ երևում է շղագիր Յ : Քալկկ (Քալիկ), Քալիկ իբ. անունը, թեև ցարդ չի ստուգաբանւած, բայց բաղձիցս վկայւած է ԺԳ—ԺԷ զգ. վիմագրերում⁹²;

46. ԹԱՓԵՄ

Միջին դարերի վիմագրական հուշարձաններում բառս զործածվում է իր բազմաթիվ իմաստներէջ միայն մեկով՝ բոբափնի, ի բաց կորզել, ազատել, նոզողրել եւ այլն⁹³։ Վիմական բնագրերում այդ նշանակութիւամբ քափել բառի հնազույն հիշատակութունը գտնում ենք Կոչի տաճարի հարավային պատին ՇԺ (1051) թ. փորագրված արձանագրութեան մեջ. ես՝ հույր Յոնանէս բազում աշխատութեամբ, Մաղաթի երզուեալ Կոչս տանուտէրաւ, դատատեւ, աագէւէցն, մանկեազն քափեցիւ զբնաջուր առուն, : Մ : դանկեան, զի որ Աագիին ստն : եւ որ այս շրայս հակառ կա, : ՅԺԷ : յնն նզովեալ եղիցի (ՄՎ) : Բնազրի միակ հատարակութիւնը պատկանում է Միւ. Տեր-Մկրտչյանին, խիստ ազգավաղված է, պակասավոր եւ ոչ մի պատկերացում չի տալիս այս կարևոր արձանագրութեան իրական բովանդակութեան մասին⁹⁴։ Մեր քննութեան առարկա քափեցիւ զբնաջուր առուն նախադասութիւնը ստույգ չի մեկնարանվել ուսումնասիրողների կողմից. պրոֆ. Ս. Հակոբյանը, օրինակ, ինչպէս տեսանք, այդ հատվածը հասկանում է այն իմաստով, որ Կոչի վանահայր Յովանեսը եւ մյուս պաշտոնյաները բազում աշխատութեամբ եւ 200 դահեկան ծախսելով անց են կացնում

զՍնաջուր առուն⁹⁵, որ ակնհայտորեն վրիպում է։ Բնագրում խոսքը Կոչի վանքին պատկանող բնաջուր առուն քափելու, ազատելու, համարաբար զբաղական վիճակից 200 դահեկանով փրկագնելու մասին է (ան՝ս Բնաջուր առու) :

Քափել = փրկագնելով ազատելու բառիմաստը ավելի ակնառու է Հասունի վանքի Չ (1251) թ. մի նվիրագրում, որի միակ ընդօրինակութիւնը տալիս է Ն. Սարգիսյանը. ես՝ Յովանէս, մականուն Յիսիկ միաբանեցա սուրբ ուխտիս, լեա անտման ասարախ վանացո ջազանիս աներ եւ գրաւական էր. : ե : դանկեան ետու եւ շաքան քափեցի... (ՍԱԻ 156, ՎՏ 95) : Այստեղից պարզվում է, որ վանքի ջրաղացները (ջաղացի-ս) թափարների ավերածութունից հետո գրավ են դրվել եւ նվիրատու Յիսիկը 40 դահեկանով քափում է, այսինքն զբաղի գումարը վճարելով՝ ազատում, ես է վերցնում կամ վանքին վերադարձնում դրանք :

Գեղարգավանքի ԺԳ դարասկզբի մի նվիրագրութեան մեջ եւս հազորդվում է վանքին պատկանող, բայց գրավ դրված կալվածքի վրկագնման, ազատման կամ քափելու մասին. ես Ուսուլուն միաբանեցա սուրբ ուխտիս, ետու : Չ : դանկեան եւ քափեցի գճառնայ խուպանն (ԳՀեՊԳ 48) :

Միջին դարերում շարժական կամ անշարժ ունեցվածքը ստացված դրամի դիմաց գրավ դնելու եւ որոշակի ժամկետում գրավականը համապատասխան վաշխով եւ վերադարձնելուց հետո ունեցվածքը վրկագնելու = քափելու գործառնութիւնների ակնառու օրինակ է Անիի մեծահարուստ վաշխատու Տիգրան Հոննեցի⁹⁶ 1215 թ. նշանավոր շինարարական-նվիրատական արձանագրութիւնը՝ փորագրված իր կառուցած Ս. Գրիգոր եկեղեցու պատին : Այստեղ մեզ հետաքրքրող հատվածը ըստ Հ. Օրբելու ստույգ ընդօրինակութեան կարգացվում է ...զայս, որ գնամ է եւ այլ քազում գրակնամ էր. գոր ոչ արձանագրեցի, վանացս էի ավել, ու թէ անէմ քափեմ, ոսկին վանացս, զոր ուրիշ իմ անզարմագիւն եմ գրել... (Գ I 63) : Այստեղից պարզվում է, որ Հոննեցը վանքին նվիրել է ոչ միայն ոսկով զնված ունեցվածքը (զայս, որ գնամ է), այլև գրավական վերցվածները, որոնց գրավական ոսկին եւ վաշխը նույնպէս վանքին են մնա-

⁹² Ըր. Անաոյան, Հայ. անձն. բառարան, Բ, 1944, էջ 273—274,

⁹³ ՆՄԲ, Ա, էջ 802, Ըր. Անաոյան, Արմ. բառարան, Բ, էջ 116 :

⁹⁴ «Բանասեր», Փարիզ, 1903, էջ 27.

⁹⁵ Ս. Հակոբյան, Հայ գյուղատնտեսական պատմութիւն, Ա, էջ 400 :

լու, էթն տերերը վճարեն այդ ոսկին և քափեն-փրկագնեն իրենց ունեցվածքը:

Տիրան Հոննեցի նվիրագրի հիշյալ հատվածի միանգամայն ակնհայտ թվացող այս իմաստը ուսումնասիրողների մոտ տարբեր կերպ է հասկացվել: Մի կողմ թողնելով միջին հայերենում լայնորեն հայտնի գրավիճել (<գրապականել) իրավական տերմինի ոչ իրական և վկայված բնագրերին չհամապատասխանող բացատրությունը, որ հանդիպում է էմինի և Եղիազարյանի աշխատություններում (գրաւ ընկալվել է իբրև կանխավար՝ տուր և առի գործառնութիւններում, այնինչ սվյալ զնայրում խոսքը ոչ թև ունեցվածքը վաճառելու, այլ գրավ դնելու մասին է, այսինքն վաշխավ վարկ տալու մասին), շի կարիկի շնչել, մասնավոր, Հոննեցի արձանագրության հիշյալ հատվածում քափել բառի այն մեկնությունը, որ տալիս է էմինը և որը միանգամայն անհարիր է բնագրին. «если бы начальники (монастыря) вздумали силою взять деньги, то пусть они знают, что об этом записано в другом моем завещании... (НЭА 21)⁹⁶, այսինքն, և քէ տէրքէ քափեն, որ վերաբերում է զըրավ դրված ունեցվածքը տերերի կողմից քափելուն, փրկագնելուն կամ ազատելուն, հեղինակը հասկանում է՝ «если бы начальники (монастыря) вздумали силою взять, ауկին վաճագս բաց է թողնվել և նրա փոխարեն ավելացվել՝ то пусть они знают рատերը, որ միանգամայն անհարիր են բնագրին: Այս վերլուծմանը, անշուշտ, գալիս են բնագրի գրավնամ և քափեն բառերի ոչ ստույգ բացատրությունները:

47. ԹԻԻ ԲԱՆՈՒՇԱԷ, ԹԵ՝ ՅԹԻՒՆ ԲԱՆՈՒՇԱԷ

Այս տառաշարք-անձնանունը վերծանվել է Մարցի զեղաբան-դակ խաչարձանի թիկունքին ՉԼԳ (1285) թ. փորագրված հիշատակագրության մեջ, որի միակ նույնական ընդօրինակությունը հրա-

⁹⁶ С. Егнazarov, Исследования по армянскому праву, ԿԻՆ, 1910, էջ 99.

տարակել է Գ. Հովսեփյանը՝ Ամենափրկիչը հուշարձաններին նվիրված իր ուսումնասիրության մեջ:

Համապատասխան հատվածն այնտեղ վերծանված է. ես՝ Թոմաս Բանան և Եղրայր իմ Տիրացու կանգնեցաք զԱմենափրկիչ ինչասակ հար մերս Գրիգոր Բանանաի և մար մեր յրին Բանուշանի և Էվերաց մեքց (ԳՂՀ 76): Այստեղ անորոշ է խաչարձանը կանգնեցնողների մոր անունը, անհասկանալի են Բանուշան բառից ստացված վերծանված յրին գրերը: Բանուշան իդ. անձնանունը հայ-կական միջավայրում գործածական է եղել ըստ Հր. Աճառյանի միայն ԺԶ—ԺԷ դարերում: Սակայն անձնանվան հնագույն վկայություններ գտնում ենք Հատիճավանի ՈԶԳ (1235) թ. մի նվիրագրում, որի Բանուշաչ աղավաղված ձևը Ալիշանից ստանկով, Աճառյանը դատողության ուժով ուղղում է Բանուշայ⁹⁷: Մեր ընդօրինակությունը Հատիճի բնագրում տվյալ անձնանունն ունեցող կապակցությունը կարգացվում է. և ևստատեցին ի ասրին : Գ: ար զաստաթագ՝ : Բ: ար ինձ, : Ա: Բանուշանին (ՄՎ), ըստ այսմ, վերականգնվում է այստեղ և Մարցի հիշատակագրության մեջ վկայված իդ. բարդ անվան երկրորդ բաղադրիչը՝ Բանուշան: Մյուս կողմից, այլ առիթով այցելելով Մարցի խաչարձանին՝ մենք ի նորո վերծանեցինք նրա արձանագիրը և համոզվեցինք, որ անորոշ հատվածը պետք է կարգավ ոչ թև մար մեր յրին Բանուշանի, այլ՝ մար մեր՝ ոյ՛լ քիւ Բանուշանի, որտեղից իդ. անձնանվան ուղիղ ձևը՝ Թիւ Բանուշան: Այս անվան ստուգաբանությունը տալիս է Հր. Աճառյանը, ըստ որի, այն կազմված է պարս. tuva = ծով և banaiša = մանուշակ մասերից, մանուշակի ծով, քերք նշանակությունը⁹⁸:

48. ԻՇԽԵՅՈՂ Է Ի..., ԹԵ՝ ԻՇԽԵՅՈՂ Է Ի

Ցաղաց բարի և Ամաղուի նորավանքի երկու կալվածագրերում Տարաշիճ Օրբելյանը այս իմ գիր է բանաձևից հետո մասնանշում է իր իշխանության օաճմանները: Նույն ժամանակներում (1270-ական թվականներ) փորագրված այդ բնագրերը գրեթե անեղծ են

⁹⁷ Հր. Աճառյան, Հայոց անձն. բառարան, Ա, էջ 350:

⁹⁸ Հ. Աճառյան, Հայ. անձն. բառարան, Բ, էջ 310:

մեացի և կարգացվում են առանց զմխարության: Մեչ ենք բերում հարցի հետ անշլոզ մասերը Ս. Բարխուղարյանի վերծանությամբ. Յաղաց բարի Ս. Կարապետ Եկեղեցու հարավային պատին, մուտքից վերև. այս գիր նշմարա իշխատակ հոգո անցնելի է Տարախինի իշխանաց իշխանի, որդի մեծի կյապտոի, եղբայր Մեղապատա արձի ցճառնի, սամմանն մեր Երասխ, մեր յուս Քրիստոս Է... (Դ III 149): Այս բնագրի թվականը՝ 2 (1251) է, սակայն ինչպես ցույց ենք տվել Գառնիեր բառահոգովում, այն լրացվելու է Ի (20) տասնավորով և որևէ միավորով, քանի որ այս բովանդակությամբ կավանդագիր Տարապետի կարող էր գրել միայն 1273 թ. հետո, երբ իր կղբայր Սմբատի մահից հետո ժառանգեց Սյունիքի իշխանությունը:

Ամաղուի նորավանքում իր կղբայր Սմբատի դամբարանի հյուսիսային պատին Տարապետը 2ԻԿ (1275) թ. փորագրել է տվել. այս իմ գիր է Տարապետին, իշխանաց իշխանին, որ իշխանցող էի Սիւնեց նահանգին Ռոստան և Շենեռոյ... այնուհետև նշվում է հրամանագրի բովանդակությունը (Դ III 235):

Չառարկելով մեջ բերված տառաշարերի ընդօրինակության դեմ՝ անհրաժեշտ ենք համարում ճշգրտել նրանց բառանշատումը: Ս. Բարխուղարյանի վերծանությունից ստացվում է, որ երկու դեպքում էլ Տարապետը իր իշխանության մասին նշում է անցյալ ժամանակով, իբրև մի իրողություն, որ եղել է անցյալում և այժմ չկա՝ իշխանցող էի, միջնդուս ակներն էլ, որ իշխանաց իշխանը բնագրի առաջին՝ այս իմ գիր է բառերով սկսվող մերա շարադրել է այս կարգի վավերագրերին հասուկ իշխանական ոճով, երրորդ դեմքով, ըստ այսմ, տվյալ հատվածները պետք է հավանալ ներկա ժամանակով, բայց 3-րդ դեմքով՝ որ իշխանցող է: Այսպես բառանշատելով, խոզոր տառակա կավանդագրերում կունենանք. Յաղաց բարում, այս գիր... անցնելի է Տարախինի իշխանաց իշխանի, որ իշխանցող է ի Բարդաշատս ցճառնի (այսպես է տվյալ բնագրի ձևակերպումը նաև Ստ. Օրբելյանի «Պատմության» մեջ): Նորավանքում. այս իմ գիր է Տարապետին, իշխանաց իշխանին, որ իշխանցող է ի Սիւնեց նահանգին Ռոստան և Շենեռոյ: Այստեղից այլևս ակնհայտ է, որ տվյալ տառաշարերում ի-ն ոչ թի անցյալ անկատար բայածամանակի

գիմային վերջավորություն է՝ իշխանցող էի, այլ նախօրը՝ ի Բարդաշատս ցճառնի, ի Սիւնեց նահանգին:

Այս կարգի վրայում է տեղի ունեցել նաև նորավանքի 2ԻԷ (1298) թ. մի այլ նմիրագրում, որի հեղինակն է Սյունիքի պատմիչ Ստ. Օրբելյանը: Արձանագրության մեջ վանքին օտարված 2վա (— 2ուս) գյուղի արժեքի մասին ասված է. գոր գնել էի իմ այսպարեկն ի Ջալալեկն և տվելի զինն : ԻՒ : հազար դրամ (Դ III 216): Վերծանողը տվելի բնկալել է՝ տունայ էի > տվել էի, այսինքն արձանագրել է բայածանում էի > ի Շնչյունափոխություն, որ արդարև գիտվում է մի քանի հայ բարբառներում: Սակայն այս դեպքում ի-ն գիմային վերջավորություն չէ, այլ գինն բառի վրա զրված նախօրը, և տվյալ կապակցությունը հարկ էր բառանշատել՝ եւ տվել ի զինն : ԻՒ : հազար դրամ, ինչպես որ նույն կապակցությունը Ստ. Օրբելյանի երկում վկայված է. և տունայ էաք ի զինն ԻՒ հազար դրամ⁹⁹:

49. ԻՐԻՑԱՆԻ (< ԵՐԷՑ)

Անիի Առաքելոց եկեղեցու երեք արձանագրություններում հրապարակվում են Ջաբարյան Աղբուղայի և տաղվայիների արտոնագրերը բաղաբի իրիցանու հարկերը՝ բաժն և տամզան վերանշենյու մասին: Այդ արտոնագրերը նախկինում բաղմիցս հրատարակվել են նախան տարբերակներով ու բացթողումներով, ուստի քրե-նընդոլ խոչորը պարզելու նպատակով հարկ ենք համարում մեջ բերել բնագրերի մեջ հետաքրքրող հատվածները ակադ. Ն. Օրբելու բացատրիկ նույնական ընդօրինակությամբ. էլլգանին թվին : 2վ : ... եւ՝ պարոն Աղբուղայս... եւ ես պարոն Թամարս, տեաք վԱնոս արոսս եւ զիրեցանեսս, որ հարկ կեր ի վելեկնի, գոր մեք նախ... (Դ I 22): Անավարտ է. հավանաբար հետագա շարադրանքի մեջ պետք է հաջորդվեր հարկերը վերացնելու կամ իջեցնելու մասին: Թվին : 2ԻԻ : եւ՝ նուրայդին Քորիքս իմ բեկերաբս եկի վԱննի սամդիս վերայ, տեսայ վԱնոյ իրիցանոս, զի աղեկինն հումանցնի, որ ի սկզբանէ բաժն և տամզա չլին տվել, ես այլ հաստատեցի իմ

⁹⁹ Ստ. Օրբելյան, «Պատմություն...», էջ 493:

Ար իրիցանին վկայված բնագրերում Բանաններ է նշանակում և ոչ թե ծերե, ապագանի Բազաին, Հասասազում է նաև այլ հուշարձանների վիճագրության տվյալներով, որոնք չեն օգտագործվել հարցի քննության ընթացքում: Գրանցից ամենակարևորը Փարպիի Միրանավոր նկերչու արձանագրությունն է, փորագրված Ոս (1191) թ. որով Ջաբրիա ամիրայասալարը երկիրը «ի տաճկաց» առնելուց հետո «Փարպո իրիցանիս ազատում է սյամենայն հարկէ: Ահա այդ կարևոր բնագրի համապատասխան հատվածը. Ի րափս Ոս (1191) Ս» Զաֆաիա ամիրայասալար Հաոց եւ վեաց ազնութեամբ Քրիստոսի ափ գաղչխաբն ի տաճկաց եւ ազատ աբարի գժաբար իրիցանիս յամենայն հարկէ (112), հետևում է սյաների ձևակերպումը¹⁰⁴: Ակներե է, որ այստեղ խոսքը Փարպիի երեցների, Բանանաների մասին է, որոնց թիվը բաւ երևույթին այդ ժամանակներում այնքան էլ փոքր չի եղել, եթե նկատի ունենանք գյուղի մեջ ներկայումս պահպանված երեք վանական շենքերի մնացորդները: Հագիվ թե հնարավոր լինի Փարպո իրիցանին կապակցության մեջ գյուղին ինքնավարության կամ վարչական այլ մարմին ստեղծել, քանի որ Հենց վիճագրության տվյալներից պարզ է դարձել, որ բնեվող ժամանակաշրջանում (ԺԹ—ԺԳ զզ.) գյուղերը կառավարում էին տեղական իշխանների կամ պարոնների նշանակած ուսիները, գեղապագները կամ ղվեխաները: Մյուս կողմից, հայկական վիճագրական հուշարձանների բառամթերքի ուսումնասիրությունն աներկբա ցույց է ապիս, որ երկ բարձր ծեր, գլխաւոր, ապա նշանակությունը ուղիղ ձևով կամ թերթված, հնչյունափոխված (իրիցու, իրիցանի) ոչ մի վկայություն չունի, մինչդեռ նույն բառը Բանանա նշանակությունը բազմաթիվ հիշատակություններ կարելի է ցույց տալ: Այդ են վկայում Անիի ու մերձակայքի մի շարք վիճակների արձանագրությունները, որոնք թվագրվում են այրոՖ. Աստրելյանի հոդվածում:

Այս իրողությունը ևս ապացույց է, որ Աստրելյոց նկերչու վիճագրության մեջ հանդիպող իրիցանին նույնպես չէր կարող ապագանի, գլխաւոր, ծերե նշանակել:

¹⁰⁴ Փարպիի արձանագրությունը միայն վերջերս է հայտնի դարձել բանասիրությանը, շնորհիվ Ծ. Տեր-Մինասյանի վերածնության, «Նշմատիկ», 1961, № 5, էջ 55:

Մատի և Օրբելու վարկածի դեմ առաջիղ ամենազորեղ փաստարկներից մեկն էլ մինչնագրի մատենագրական ու վիճագրական աղբյուրների մեջ արձանագրված այն հանրահայտ իրողությունն է, որ օտար, հատկապես մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում ապահարություն արտոնությունից երբեմն օգտվում էին միայն եկեղեցին ու նրա սպասավորները, հոգևորականությունը, մինչդեռ այդ նույն աղբյուրներում որևէ ակնարկ չի պահպանվել վարչական, իշխանական խավը կամ բաղադրի ինքնավարության ապագանին հարկատվությունից ազատելու մասին: Հենց Աղբյուրայի վերորդայի արտոնագրում պարզ ապաված է, տեսավ զԱնա արսու եւ վերեցանիս, որ հարկ կէ ի վերէնի... այսինքն խոսքը Անիի եւ պիսկոպոսական աթոռին, նրա սպասավորներին և բնահարակապակ հոգևոր զասին է վերաբերում և ոչ թե աշխարհիկ ավազանում:

Նույն իրողությունը բաղաբար խասիւնչու (=տերունի) գառնալուց անմիջապես հետո, ԺԳ դարի սկզբներին. եւ գարոնին հարկն, որ յեւզն սս սահմանա դարձուցին (Դ I I), այսինքն Անիի եւ պիսկոպոսական աթոռը նվաճողների կողմից (=ի շարաց) հարկատու էր դարձել և այս արտոնագրով նորից ազատվում է հարկատվությունից, ինչպես էր նախկինում (և յառաջին սահմանա դարձուցին):

50. ԻԻԻՏԻ, ԹԵ ԲԻՏԻ

Այս անորոշ տառաշարը հանդիպում է Ավանի հին տաճարի արևմտյան պատին, արտաբուսա, մուսբից դեպի հարավ փորագրված արձանագրության մեջ, որտեղ Մարգիս տիրացուն հաղորդում է Կաթողիկէ եկեղեցին սալելու մասին: Բնագիրը գրվել այլընթերցումներով հրատարակված է Մ. Սմբատյանցի գրքում. ահա մեր հարցի հետ առնչվող հատվածը. Ի թոփս ՉԼԱ (1322) պարոն Բուլարխային, պարոն Արարէկ Ասրգիս, տիրացու Բեցի որդիս միաբանցայ Սուր Աստուածածնիս և սպիցի գառնարս (ՄՍՏ 254): Արձանագրության ավելի հավաստի վերածնությունը՝ լուսանկարով, գրծապատկերով ու մեկնություններով վերջերս հրատարակվեց պրոֆ. Կ. Ղաֆազարյանի «Երևան» մեկնագրության մեջ, որտեղ տվյալ

Հատվածը վերծանված է. ի րվիլս ԶԱ պառն Քոլարխային պարոնուբեմբ, ես՝ Սարգս տիրացու... բիցի որդիս միարանեցա Սարք Աստուածածինն եւ սպիցի գտաւար... (ԿԿԷ 194):

Վերծանողը Մամբալանցի անձնատուն համարած բեցի տառաշարքը դնում է փոքրատառով և այն վերապահույթյամբ համարում տիրացու Սարգսի հոր անվան անսովոր վերջավորություն: Այլ առիթով լինելով Ավանի տաճարի մոտ, մենք ստուգեցինք բնագրի բնօրինակությունը և համազօղեցինք, որ նրա առաջին տողը ավարտվում է տիրացու բառով, որից հետո այլ զրեր չկան և չեն եղել, քատալում, դրանից հետո վերծանողը դրած կետերը ավելորդ են:

Այսպիսով, տիրացու բառին անմիջապես հաջորդում են երկբորդ տողակգրի բիցի կարգացված գրերը, որոնք պետք է ինքնուրույն բառ արտահայտեն՝ Բիցի (") որդիս: Ղաֆաղարյանի գրքում գեղեղված բնագրի լուսանկարի վրա պարզ երևում են ԲՅԻ գրերը, որոնք պետք է վերծանել ոչ թե Բիցի, այլ իրիցի, քանի որ առաջին կցագրի ներքին հորիզոնական ստեղծը Բ-ի ուղիղ նշանը է, այլ թեքված է ներքև և ի է արտահայտում, մինչդեռ արձանագրության մյուս բառերում Բ-ի ներքին ստեղծը ամենուրեք ուղիղ է և չի թեքվում (հմտ. Բոլյախային, միարանեցա, սր և այլն): Մեր այս ուղղումից հետո բնագրի տվյալ հատվածը կարելի է հասկանալ՝ ես՝ Սարգս տիրացու, իրիցի որդիս... և ոչ թե՛ Բիցի որդիս: Ինչ մնում է երկչ>իրիցի անցմանը, ապա միջին դարերի վիճական բնագրերում և ձևագրերի հիշատակարաններում այդ փոփոխությունը արդեն ձևավորված օրինակաբանություն էր և բազմաթիվ վկայություններ ունի: Հենց Անիի և մերձակալքի արձանագրություններում բազմիցս հիշատակված իրիցանի, իրիցակի, իրիցի, իրիցու (<երկչ) ձևերը այդ հնչյունափոխությունն են հավաստում (Գ Ի 17, 23, 24, 25):

51. ԼՄՆԵՑԻՆ

Այս բալաձևը (անց. կատարյալ ժամ., հոգնակի թիվ, երրորդ դեմք) վկայված է Վայոց ձորի Ամաղու Նորավանքում, Տարսայիճ Օրբելյանի բնագրական կալվածագիր-նվիրագրության մեջ, որ փորագրված է Մմբառ իշխանի դամբարանի հյուսիսային պատին, հավանաբար ԶԻԻ (1275) թ.: Բնագիրը դանազան տարրնիկերումնեն-

բով հրատարակվել է մի քանի անգամ, սակայն բնութայան առարկա բալաձևը բոլոր դեպքերում բնօրինակված է ստույգ՝ լմնեցին: Համայնատարան հատվածը քաղում ենք Ս. Բարխուդարյանի վերջերս հրատարակած ժողովածուից. «...ու ինչ գեկեղեցին լմնեցին, խիլյա կուսայախ : Ե : սպիտակ, ի այն խիլյային փոխան գեկեղեցի կաչ յազգե երծեցին տվախ՝ նրալ նաչլէնի լմնի, ի նրալ գեղին կաչ յազգե յազգ... (Գ III 234—235): նախ, առաջին նախադասության լմնեցին և կուսայախ բալաձևերի կազմության կամ ձևաբանական բնութագրման մասին: Հրատարակիչներից միայն ԱԱԿ-ի հեղինակներն են պարզում նրանց նշանակությունը տվյալ հատվածը թարգմանելով՝ пока завершали постройку церкви (ինչ գեկեղեցին լմնեցին), мы платили хила 500 белых (ԱԱԿ, — 184), (խիլյա կուսայախ : Ե : սպիտակ), որ երկու դեպքում էլ զգալապես հետացած է բնագրի իրական բովանդակությունից: Ինչ գեկեղեցին լմնեցին պետք էր թարգմանել когда построили церковь (но построиле церкви), քանի որ ինչ բառը նույն ժամանակի այլ արձանագրություններում և միջին հայերենում արտահայտում է երբ, ենեց որ, երբ որ (когда, как только) ժամանակի մակարայի իմաստ:

Ինչ բառի այդ իմաստով գործածվելու հնագույն օրինակը գրտնում ենք Արուճի տաճարի 987 թ. մի արտոնագրում: Յանուն այ, ինչ քուական նմ, ես՝ Մմբառ շահեղեպեմ... և այլն: Ակներև է, որ այստեղ ինչ պետք է հասկանալ երբ, երբ որ և տվյալ հատվածը թարգմանել՝ յանուն այ, երբ թվականը նմ (եր) և այլն¹⁰⁵: նույն կիրառությունն ունի ինչ բառը նաև Բազմայրի ԶԺԱ (1262) թվականի նրվիրագրության հետևյալ հատվածում. ինչ իմ պապն մեռա, ես՝

¹⁰⁵ Բնագիրը գիտական հրատարակություն չունի. առաջին բնօրինակող Հ. Շահաբանյանից ինչ քուական նմ վերծանել է ի... քուական նմ, Ակներև գա... սողություն ուժով վերականգնել է ի (Հայոց) քուականի ԱԶ: Վերջերս Արուճի տույն բնագրին անդրադարձել է նաև Ա. Շահինյանը, ես պարզ երևացող ինչ գրեւոր կարգացել է Ի ն Զ և այստեղ գիտում է փորագրողի վրեպում, որը թվականը նմ-ի փոխարեն սխալաբար նմ է քանդակել և ապա շարունակության վրա ուղղել նր սխալը (ՏԻՄՆ 2. Տանխարունակեց, նշվ. աշխ. էջ 61, Ալիշան, Այլաբառ, էջ 144: Ա. Տանիյան, Արուճի 7-րդ դարի տաճարի շինարարական արձանագրություն վերածանակ առիթով, Վերաբեր., 1971, № 1, էջ 83):

հատագ իմ կնոջն զբաժինն ակն ու մարգարիտ իմ պարտնիս ամի: Բնվող կապակցությունը Մ. էմիլի ստույգ թարգմանել է՝ по смер- ти моего деда (НЭА 67): Արցախի Գուրչ վանքի ՈՂԵ= 1246 թ. մի արձանագրության մեջ ևս խնդրո առարկա ինչ բարձր վը- կայված է նույն՝ երբ, հենց որ, երբ որ նշանակությունը. ինչ զաագ խոսանն խմբուս, երբայ իմ առ Սարգիս ի Բն փոխեցաւ (Մ2):

Այսպես շահկելով ինչ բառի նշանակությունը սովյալ նախադա- սուցության մեջ, ավելի դյուրին է պարզել նաև լմնեցին բայածինի ստույգ բերականական իմաստը՝ ավարտեցին, վերջացրեցին, բոս ալդմ, մեջ բնված հատվածի առաջին նախադասությունը կարելի է հասկանալ՝ երբ (=հենց որ) եկեղեցին ավարտեցին (վերջացրին) (когда построили церковь): Ստույգ չի թարգմանվել և մյուս նախադասությունը՝ իսիայ կուտայախ ց սպիտակ. և զրս պատճառը կուտայախ անորոշ բայածին է, կու եղանակիչով՝ երկրորդ բայը հայ վիճակական հուշարձաններում: էմիլի թարգմանած платили хила ոչ մի չափով նույնական չէ իսիայ կուտայախ-ին: Թվում է, այս բայածինում կու մասնիկը առաջին դեմքի բայածին հետ ար- տահայտում է ոչ թե ներկայի, կատարվող գործողության իմաստ, այլ ապառնի, կատարելի, բոս ալդմ՝ սովյալ իրադրության մեջ կուտայախ (անց. անկատար՝ տայախ + կու-կուտայախ) կարող էր նը- շանակել՝ պիտի տայինք, ապու էինք:

Ասվածից հետևում է, որ Տարսային իշխանի կայվածազրի բըն- նությունն հենակա բարձր նախադասությունը պնտ է թարգմանել. նրբ (հենց որ) եկեղեցին ավարտեցին, պետք է տայինք 500 սպի- տակ պարզի (տայու էինք), այն պարզելի փոխարեն ավեցինք Աղա- զար Վրդերեցեան... և այլն:

Հին գրական հայերենում լմնեցին ձևն անծանոթ է, նրա փոխա- րեն գործուն է նույնիմաստ լնուլ=լցնել բայը (լցի, լցեր, լից), որ երկու դեպքում էլ առաջանում է միևնույն լի արմատից: Լմնեցին անցյալ կատարյալ ժամանակի բայածին անորոշ գերբայը վերա- կանգնվում է լմնել, որ նշանակում է կատարել, ավարտել, գոր- ծարկել, վերջացնել և եղակի վկայությունը՝ հշարանկում է վարդա- նի «Պատմության» ժողովրդախոսակցական լեզվի տարբերով հա- րուստ նշանավոր հատվածում՝ և հրամայեաց, քի առայի օրն զկո

խոսել լմնեցի¹⁰⁶, որտեղ լմնեցի նշանակում է կատարել: Լմնել ա- սարանում է լման=ամբողջ (լի արմատից, ման մասնիկով) բա- սից, որ գործածական է «Կ» ճյուղի մի բանի բարբառներում (Պոլիս, Սոդոսիտ, Չեյթուն, Մարաշ և այլն) և նշանակում է ամբողջացնել, լրացնել, ավարտել¹⁰⁷: նույն լման բառը ավանդիկ է նաև՝ լմնա- ծոխ կամ լմանծովս բարբոթության մեջ (տե՛ս):

52. ԽԱՄ

Այս բառը անփորձ, անվարձ իմաստով վկայված է միջին դա- րերի հայ մատենագրության երկերում և Հըր. Ահառչանի ստուգաբա- նությունը ծագում է պահ. *xam կամ պարս. xam արմատից, որ նը- շանակում է՝ հում, անաս, անգոտ, անփորձ¹⁰⁸: նույն xam արմատը թուրք. փոխառված գործածական է հայ բարբառներում խակ (բույս) իմաստով: ԺԳ դարի վիճակյան արձանագրություններում խամ բառը գտնում ենք հիշատակված ոչ այն իմաստով, որով հայտնի է գրա- կան աղբյուրներում և Ահառչանի ստուգաբանության մեջ: Ահա այդ վկայությունները. Խորանաշառի վանքում (Գ. Չինարի, Շամշադինի շք.) ՈՂԵ (1246) Թ. եւ Եայր Պաղտս եւ Վանակե վարդապետ ի խամ շինող վանից հաստատեցին մեզ : Գ : սեղան վառարոգ... : Մազեկեանք հուշարձանի վրա, ՉԳ (1284) Թ. եւ Լր մեր : Բ : ակն շղացարին՝ խամո շինած (Մ2)¹⁰⁹:

Նույն խամ (=խոտան, կորո) բառի հնչյունափոխված ձևը՝ խմ (խամ > խրմ) պահպանվել է խմհասա (=մշակված խոտան, եերկված կորո) բարբոթության մեջ, որ փորագրված է Արցախի Մ. Գը- րիգոր եկեղեցու ժԳ դ. հետևյալ նվիրագրում. Ես՝ Հասամաղին աը- վի զԿառուկայ հողին երկին հիմ հողայ ի Սարբ ոխտս եւ Գաղանց խմհասան իմ զգորդոյն (Մ4):

Իշխանի շքեանի Այդեհովիտ դյուղի հարավ-արևելյան կողմում

¹⁰⁶ Վարդան Վարդապետ, Հասարան պատմության, Վենետիկ, 1862, էջ 158:

¹⁰⁷ Լ. Ահառչան, Հայերեն արձատական բառարան, հ. Գ, Երևան, 1930, էջ 202-203, Գավառական բառարան, Թբիլիսի, 1913, էջ 429:

¹⁰⁸ Լ. Ահառչան, Հայ. արմ. բառարան, Բ, էջ 323:

¹⁰⁹ Անունը ենք մեք հավաքածուից, Խորանաշառի արձանագրությունները մեծ մասամբ հրատարակված չեն:

նի, նոր հարդարանքով շինություններ, որոնք միաժամանակ ծառայել են իբրև հյուրանոց, կարավանատուն-իշխան, վանատուն, շուկա, պանդոկ (փեղոկ) և այլն:

Այս իմաստով պատահական չի կարելի համարել խանապարատի գոյությունը հենց Անիի և մերձակայքի վիճական արձանագրություններում: Հավանաբար առևտրական տարանցիկ ճանապարհների կարավանների սպասարկող այդ նորաստեղծ շինությունը չէն համապատասխանել հյուրանուն, հագոտուն, իշխանատուն, փեղոկ բառերից ոչ մեկը և այդ պատճառով հարևան լեզուներից փոխ է առնվել նոր՝ խանապար տերմինը, որն ավելի ստույգ է արտահայտում նոր ձևակազմության նշանակությունը:

Խանապար բառի ստուգաբանության համար կարելի է նկատի ունենալ պահ. պարս. خاپ = կարավանատուն, իշխան, կալարուն բառը և հայերեն ապարուն(ի) = մեծ տուն, պալատ, որսեղից՝ խանապար (= խանարար) = մեծ իշխան, կարավանատուն և հյուրանոց:

54. ԽԱՆՈՐԿԱՆՆ, ԹԵ՛ ԽԱՆՈՐ ՈՐ ԿԱՆ

Անիում Տիգրան Հռենեցի նշանավոր շինարարական-նվիրաբերական արձանագրության մեջ (ՈԿԴ) ի թիվս մեծարանակ այլ նրվերների, հիշատակված են նաև խաչուկանն հողերն և փեղոկն (Դ I 63): Բնագրի այս հատվածը նախորդ ընթացիկակողմերի մաս զգալապես աղավաղված է և չի ամբողջանում, բանի որ խաչուկանն հողերն արտագրվել է՝ խաչուկանն ու փեղոկն, այսինքն բաց է թողնվել հողեր բառը և խաչուկանն անշատվել է կապակցությունից: Կ. Բասմաջյանի վերծանության մեջ խաչուկան տառաշարը հանված է կապակցությունից և դիտված իբրև ինքնուրույն բառ, այսինքն առանձին ունեցվածք (КВА 221):

Հռենեցի նվիրատվության՝ լուսանկարով ստուգելի հավաստի վերծանությունը, որ կատարել է ակադ. Հ. Օրբելին, վերջերս հրատարակվեց Երվանդի առաջին պրակում: Օրբելու վերծանությունը ամենակատարյալն է ու սպասելիք մինչ այդ եզրած ընթացիկակությունների շարքում, այստեղ ճշգրտված են բազմաթիվ սեղանուններ ու անձնանուններ, թվարկվող նվերների բառանշատումը հա-

վաստի է: Չնայած դրան, բնագրի որոշ կետեր մինչև օրս էլ հստակ չեն ճանկացվում և տարակարծության տեղ են թողնում: Գրանցից է և ընտելյան առարկա խաչուկանն հողերն և փեղոկն կապակցությունը:

Մտքը այդ հատվածը ինքնուրույն ունեցվածքի անվանում չի համարում, այլ ստորագասում է նախորդ՝ Յրեղոյ : բ : դանգն կապակցությունը, բառ այդմ, նրա կարծիքով երկուսը միասին պետք է կարգալ՝ Յրեղոյ : Բ : դանգն, խաչ ու կան... այսինքն՝ два данга (села) Цунда, где стоит крест: Այսպիսով, Մտքը հիմք ընդունելով Սարգիսյանի, Ալիշանի և Կոստանյանցի (ԱՄԲ 126, ՂԱԵ 75, ՂՏ 59) անստույգ հրատարակությունները, որոնցում բաց է թողնված հողեր բառը, խաչուկան հատուկ անունը բաժանում է խաչ ու կան = ու (< ուր) կան (< կալ) խաչ բառերի¹¹⁴: Մտքի այս մեկնությունը շատ անհավանական է, և նրա հերքումը մեծ շահեր չի պահանջում: Սակայն Հռենեցի արձանագրության հետազոտողները ստարքեր առիթներով քննելով բնագիրը և նույնիսկ հատուկ ցուցակներում ներկայացնելով վանքին Հռենեցի նվիրած հարստություններ, անտեսել են Մտքի բացատրությունը, իսկ խաչուկանն հողերն էլ բաց թողել նվիրած արձաններից¹¹⁵:

Հ. Օրբելու կազմած ժողովածուի մեջ խաչուկանն հողերն տեղավորված են պրակի տեղանունների ցանկում, այսինքն դառնամասի անուն է համարված, թեև այս դեպքում և խաչուկանն հատկացուցի իմաստը մնում է չլարրված (Դ I 136): Բացի դրանից չի կարելի խաչուկանն հողերն ավելի իրազորության մեջ հանդամաս համարել, բանի որ այս դեպքում ստեղծված կլինենք ընդունել, որ նվիրած փեղուկը ևս այդ հանդամասում է կառուցված, չի որ կապակցությունը վերծանված է՝ խաչուկանն հողերն և փեղոկն, այսինքն հողեր և փեղուկը պատկանում են խաչուկի անունով մեկին:

Այստեղից ակնհայտ է, որ խաչուկի ոչ թե տեղանուն է, այլ անձնանուն և ծագում է խաչաուր > խաչուր բառից՝ իկ փաղաքական կամ նվազական անանցով՝ խաչուրիկ > խաչուիկ, որի սեռական հղովածներ օրինաչափորեն կլինի խաչուրիկան > խաչուրկան:

Նույն անձնանվան անձեռնորի մեջ՝ խաչաուր վկայված է Հով-

¹¹⁴ H. Mapp, Ann. t. 34, 127:

¹¹⁵ Տճ ա շ. Մանուկյան, Քննական տեսություն..., Գ, էջ 151:

Հանձնավանքի ժՅ դարի մի եղծված նվիրագրում՝ Ես՝ Խաչատուր կր-
րաւնաւոր (ԿՂ2 78): Աւոր ածանցի հնչունափոխված ձևերը՝ վոր,
որ դիտվում են նաև հին հայերենի քաղաւոր բառում, որ Վարդաբը-
լուրի ՆՂԹ (1050) Թ. արձանագրութիւյն մեջ փորագրված է՝ Ես՝ Կո-
րիկէ քաղվորս շինեցի (ՄՎ)¹¹⁶, Արցախի Մեծարանց վանքում, Զ
(1251) Թ. քաղոր Ջալալայ Գովլին երամանով, Վ. Աղզանի մատու-
ոհ վրա Չլն (1286) Թ.՝ քաղարուրին Գնմաւորի (Գ VI 12):

Պարզվում է նաև, որ քննութիւյն աւարկա խաչորկանն հողերն
եւ փնդուկն հատվածը պիտոք է հասկանալ այն իմաստով, որ Տիգ-
րանա Նոնեները գնել է Անիում իր կառուցած Ս. Գրիգոր վանքին է
նվիրել խաչորիկի (=խաչորկանն) հողերը եւ փնդուկը (Տմմտ. նույն-
րեագրի՝ ա՛ր Սարգսի Խստան ու մարգն, զոր գնեցի, որ նույնպէս
Տիգրանը գնել է բնծայել է վանքին):

55. ԽԱՍ

Հլուսխային Հայաստանի ու Արցախի արձանագրութիւյուննե-
րում քանիցս փորագրված է խաս բառը՝ կիրառված իբրև նվիրված
հողամասերի կամ այգիների հատկանիշ: Ահա այդ բնագրերի հա-
մապատասխան կապակցութիւյունները. Ն. Գետիկի վանքում, ԺԳ
դարի կեսերին. Ետու ի հալայ աղեաւեց իմոց յիմ շահնի գեղն ի
Նախնորուն յիմ խաս այգուն : ձ : կու՛ գինի, զընձի մեծ կնով (Գ
VI 78): Խաղարի վանքի գլխավոր եկեղեցու բնի ճակատին, ԺԳ
դարի վերջերին. Ես՝ Ասփ, զուսուր աբխալաշուփ իշխանիւն Տարա-
լիւնիւն, քաղազում մաւրն իմոյ Մինախարունիւն... որ է տոյի գմեր
խաս, հողն Բլրի հանցի գնեճեկպան, : Ա : բանի շուր (ՄԲԱ
195)¹¹⁷: Այս նվիրագրերից հասկացվում է, որ Ն. Գետիկի վանքին
է բնծայվել Հահնի գյուղի նախնորուն հանգամասի խաս այգուց 100
պղնձի կու՛ գինի, իսկ Խաղարի վանքին՝ Բլրի հանց կու՛ղղոց դաշ-
տամասի խաս հողը եւ այն շրջնու համար մեկ բահի շուր:

Նույն Արցախի Գագի վանքի կաթողիկէ եկեղեցու հարավային
պատին փորագրված մի նվիրագրում խաս բառը վկայված է ինը-
նուրուշնարար, առանց որոշյալի, իբրև առանձին ունեցվածքի ան-
վանում, այն էլ զործիական հողովաձեով. Ես՝ Գոնցես ու ուղիս՝
Հասան ու Վարեամ, բուն Թաւախեց, տվափ ի Գագի վանս գմեր
հայրեկիւն գնող իւր սահմանովն, խաստովն, վերին մարգով (ՄԲ):
Մասնագրական հուշարձաններում խաս չի հանդիպում եւ այդ
պատճառով զուրս է մնացել բառարաններից: Նույն բառը խասին-
ջու փոխառյալ բարդութիւյն մեջ հայտնի է երկրի հիշատակութիւյմբ
Անիի գլխավոր դարպասի ԺԳ դարասկզբի արձանագրութիւյն մեջ.
որ եղև մայրաքաղաք Անի խասինջու (Գ I I), որ հանգամանորեն
մեկնաբանված է Ն. Մառի կողմից¹¹⁸:

Ինչպէս մեջ բերված ինքնուրուշ կիրառութիւյուններում, այնպէս
էլ խասինջու բարդութիւյն մեջ խաս բառը ձագում է արար. Խաս
արմատից եւ նշանակում է մախուր, բնտիր, իսկական, լավագոյն,
ազնիվ:

Ուրեմն մեր վիժմական բնագրերի՝ խաս այգի, խաս հող, գնող
իւր խասովն նշանակում է բնտիր, լավագոյն հող, այգի, զաշուա-
մաս: Այս իմաստով փոխառյալ խաս բառը զործածվում է նաև ար-
դի մի շարք բարբառներում ու խոսվածքներում, առավելապէս իբրև
խաղողի այգու եւ պարտեզի որոշիչ:

56. ԽԱՐԱՆ (= ԽԱՐՁ, ԽԱՐՁ, ԽԱՐՁՈՂ (*))

Այս գրութիւյմբ բառս վկայված է միևնուրոյնն եւ մտղուր-
կան շրջանի մի քանի վիժմական արձանագրութիւյուններում, որոնք
Նախկինում հրատարակվել են զգալի անճշտութիւյուններով: ՄԵ ենք
բերում այդ բնագրերի համապատասխան մասերը մեր ուղղումնե-
րով. առաջին վկայութիւյմբ արմարեկ Իվանէի եւ Խոչաքի արտոնա-
գրում է՝ փորագրված Շիրակավանի տաճարի պատին, ՈՁ (1231)
Թ. Ես՝ արարակ Բանէ եւ Խոչաքս, վերաիշխող տանս Կրաց եւ Հա-

¹¹⁶ Մ. Բովկանց, մանագրաբնորոշութիւն..., էջ 82:

¹¹⁷ Բնագիրը չի պահպանվել եւ սովորաբար մեջ է բերվում նույն կաթողիկոս-
ձեռագրի արտագրութիւյնից, որը, ցավոք, պակասավոր է: Տե՛ս Մասնագրաբն.,
ձեռ. 7821, էջ 16 ա:

¹¹⁸ H. Mapp, Архзун, монгольское название христиан, *УФР*, 1905, էջ 45-
51, Апп, էջ 77:

յոց և եզին բազմի... բողոք զխաբան շաղաք Վերի Շիրակուանի (ՍՍԲ 170—171):

Հաջորդը գտնում ենք Սմբատ Օրբելյանի նվիրագրում, որ նա թողել է Դագի վանքում, ՉԺԳ թվականին. նա՝ Սմբատ իշխանա... գնեցի գեոտաշանց այգին եւ յեղեցիս իմ գեան ձիրանանքն եւ այլ արդինքն քա կարի եւ զվանեցաւոր գեղն, որ հաստատեցի ամեն խաբնովն անչար եւ ետու Սուրբ Կարոզիկէն¹¹⁹, Բառի վերջին հիշատակությունը գտնում ենք Աշտարակի Մարինն հուշարձանի ՉԶԲ թվակիր նվիրագրության մեջ, որի բնագիրը անձանաշելի ազատագրված հրատարակվել է Շահխանդանյանցի գրքում, այնուզից անփոփոխ՝ Եկմանական տարիքում¹²⁰, ուստի տալիս ենք մեր ամելի իրական, ստուգելի ընդօրինակությունը. ետու ի Սուրբ Մարիննի փարանայտունն զԳաբաղոյ հողին կէսն, որ Այծամանց եւկիրն, որ զկէսն Ակար՝ Ապրարիփի որդին գնել եւ ի Թուրանէն ի ետաովէն ու Սուրբ Մարիննիս տվել, որ զ : Ա : էլ կէսն եւ տվի ու իյամենայն հարկէ ազատեցի: Զուրն ոչ ով դարի, ոչ շարի, ոչ շարխաթի, ոչ էլ մեծ կամ փոք խաբնի: Ով զմեր հաստատ յիշատակս խաբանել շահանա..., և հետևում է անեծքի ձևակերպման շարունակությունը: Այս և մատենագրական մի բանի այլ վկայությունների (Մխիթար Անեցի, Վարդան Վարդապետ, Սամուէլ Անեցի և այլն) հիմամբ խաբան, խաբն բար ստուգարանված է և բացատրված գրականության մեջ: Ըստ Աճառյանի, օրինակ, խաբան ծագում է արաբ. xarāz և գլխամարկ բառից:

Տարակարծություն է առաջացրել միայն խաբան հարկի բովանդակությունը, նրա ինչ հարկ իրենը, ըստ որում գլխամարկ ստուգարանական բացատրությունը ընդունելի կարելի է համարել միայն Սասանյան և արաբական տիրապետության նախնական շքրջանի համար: Հետագա դարերում, սելջուկյան և մոնղոլական տիրապետության տարիներին խաբանը արդեն գլխամարկ չէ, այլ հիմնական հողային հարկ, որ գանձվում էր կամ պետության, արքունի զինվանի, կամ տեղական կալվածատեր-իշխանի օգտին, ըստ այդմ, միայն հայկական աղբյուրներում հայտնի են այդ հարկի երկու տեսակները՝ մեծ խաբնը և փոքր խաբնը:

¹¹⁹ Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքեր..., Նրոտազն, 1938, էջ 56:

Նշելի է նաև, որ խաբան, խաբն բարը միջնադարյան մի բանի այլ հարկային տերմինների նման (քաժ, շար, տավղա և այլն) երբեմն կարող է գործածվել նաև ոչ կոնկրետ հարկի կամ տուրքի ներկատումով, այլ իբրև ընդհանուր, վերացական հարկ, հասույթ հասկացություն: Այդ նշանակությամբ է գործածված խաբանը Շիրակավանի բնագրում՝ զխաբան շաղաք (<շաղաք>), որ հավանաբար պետք է հասկանալ ջրաղացների կկամտահարկ, ամասուրք, այլ արձանագրություններում հիշատակված է նաև մանկանայ, դանկ անվանումներով:

Վերջին ժամանակների պատմագիտական մի բանի ուսումնասիրություններում առանձին, ինքնուրույն հարկային կամ տուրքային տերմին է հասկացվել նաև Աշտարակի Մարինն հուշարձանի՝ մեր հիշատակած արձանագրության մեծ կամ փոքր խաբնի առանաբարը, որ հետադուրեդները բազմել են Հ. Շահխանդանյանցի՝ մեծ կամ փոքր խաբնոյ անիրական ընդօրինակությունից: Նույն կապակցությունը Այիշանը գատուողության ուժով ուղղել է մեծ կամ փոքր խաբն, առանց, սակայն, պարզելու տերմինի բովանդակությունը (ՂԱԱ 186):

Առաջինը այս տերմինը բնում է Հ. Մանանդյանը. թվարկելով իրխանական շրջանում Հայաստանի բնակչությունից հավաքվող հարկերը, նա դրանց շարքում տեղ է տալիս նաև խաբնը մեծ և փոքր տուրքին, որ, նրա կարծիքով, հողահարկի կամ նկամտաբեր անշարժ գույքից վերցվող հարկի նշանակություն ունի տրվելով պայմաններում¹²⁰, Գրեթե նույն մեկնությունը, առանց խաբնոյ բառի քննության, տալիս է և պրոֆ. Ս. Հակոբյանը¹²¹, իսկ պրոֆ. Բ. Առաքելյանը, ընդունելով Հ. Մանանդյանի կարծիքը մեծ և փոքր խաբնոյ հարկի մասին, աշխատում է տերմինի ստուգարանությանը հաստատել այդ վարկածը, ըստ այդմ, հեղինակը Աշտարակի արձանագրության մեծ կամ փոքր խաբնոյ կարծեցյալ հարկը համեմատելի է համարում պարսկական իխրաբար վա խաբնիս ին-

¹²⁰ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Գ. Երևան, 1952, էջ 282:

¹²¹ ՏճՄ Ա. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, Կ. Գ. Երևան, 1956, էջ 382, 465:

ախտուտի հետ, որ զինվորականության ու պետական պաշտոնյաների պահպանության համար գանձվող հարկ էր¹²²։

Այսպիսի բացատրությունների համար անհրաժեշտ հիմքեր չեն տալիս ոչ օտար և ոչ էլ հայ աղբյուրները, և այն առաջանում է հիշյալ արտոնագրի ոչ իրական բնորոշնակությունից։

Աշտարակի Մարինե եկեղեցու վերորհիցյալ արձանագրության մեր վերձանությունից ակնհայտ է դառնում, որ այստեղ մեծ կամ փոքր խաբճող կարծեցյալ հարկային տերմինը չի կարգացվում և այն արդյունք է բնագրի այդ հատվածի ոչ ստույգ վերձանության և բառանջատման։ Շահյաթունյանցի գրքում և «Վիմական արքեպրոստ» բնագրի համապատասխան մասը հրատարակված է. «...ոչ շարխատ, ոչ էլ մեծ կամ փոքր խաբճող...», մինչդեռ իրականում փորագրված է. շունի ոչ ով դաի ոչ շարի, ոչ շարխատի, ոչ էլ մեծ կամ փոքր խաբճի (նկ. 18)։ Այստեղից պարզ է, որ խաբճող տառա-

..... ԻՅՄՆԿԿԵԱԶԱՏԵՅԻՉԴԻՈՂԳԵՈՂՉԲ

ՈՂՉԵԱՏԱՈՂԷԼԵՑԿՄՈՒՄԻՆԵ ԲԶԱԶԵԱՄԲԻՇՆԵԱԿԱՍԵՄԵՆԵԱԶԱ

ԻԼԵՐՁԿԼԵՏԼՍԼՍԵՅԻՆԵ

նկ. 18

շարքը ստաջացել է խաբճ բառից և հաջորդ՝ ով գմեր հաստատ յիշատակա խաբանել շանա... նախադասության ով-ի միացումից, ըստ որում՝ վերջինիս վ գիրը ղ է կարգացվել. (խաբճ-ով > խաբճող)։

Շարկ է նշել, որ վիմական արձանագրություններում միշտ չէ, որ խաբճ բառը հարկային տերմինի նշանակություն ունի։ Նույն ժամանակների մի քանի բնագրերում այն արտահայտում է նաև սովորական ծախս, ծախսում բառի իմաստը. այսպես Մրենում, Սահմադինի պալատի կառուցման արձանագրության մեջ Սամտինը, թվարկելով կատարված աշխատանքները, վերընդ նշում է ծախսը՝ ված գումարի շարի. ու խաբճ, որ եղալ դարգապասիս : և.Ռ : դուրկատ դանեկան (Գ I, VI, 9-2ևև 14)։ Կամ Հոռոմոսի վանքում, Թախկ թաղուհին վանքին է նվիրում Արելի պղբ (չբաղաց), հատուկ շնչտեղով նրա արժեքը. զոր իմ ուղին Հազարպեկն ի Գարեգոյնէն գրավ-

¹²² ՏՆՎՍՔ. Ռ. Առաքելյան, Քաղաքները..., Բ, էջ 221։

նեց; է : ձ : Սպ : Ը : ձ : սպ, ի վերա խաբճ արտ, որ եղալ : Ռ : Շ : սպ¹²³։ Հասկանալի է, որ այս օրինակներում խաբճը արդեն հողային կամ ուրիշ հարկ չէ, այլ շինարարության կամ նորոգման վրա կատարված ծախս։ Թվում է, այս իմաստն ունի խաբճը նաև Գաղի վանքի վերը նշված արձանագրության մեջ՝ որ հաստատեցի ամեն խաբճովն ածար, թեև մի շարք պատմաբաններ այստեղ ևս խաբճը հարկ են համարում¹²⁴։

57. ԽԵԶ

Հին հայերենի գրական հուշարձաններում այս արմատը հանդիպում է Մովսես Կաղանկատավացու երկում, հետևյալ կապակցություն մեջ. «Այլև ոչոր խեչ (տարբ. խիչ, խիչ) խաղողու տարյ անանեց թշուրտականացն յազալ և յուտիւն», որտեղ խեչ արտահայտում է խաղողի շոր կորիզ, կուտ իմաստը¹²⁵։ Միջին հայերենում բառս խեչ, խեչ գրությունք մի քանի իմաստներ է արտահայտում. ա) խաղողի վաղի նեցուկ, սյուն, նոր բարբառներում՝ խեչակ, խեչմայր, որ առաջանում է գրաբարի խաչ, խաչել բառերից (վիմագրերում նաև՝ խաչ > խեչ) ձայնավորների հերթագայության օրենքով. բ) խեչ լայն կիրառություն ունի իբրև անիտական կապ. մտք, բով, մեծ, կից նշանակությամբ։ Այսպես, «Վաստակոց գրքում»՝

¹²³ Ռ. Սաբոյան, նշվ. աշխ., էջ 158, վիմական արքեպր., էջ 112։ Անբրեն նվիրված շրջապի վրա կատարված ծախսերի թվաշարում, որ Թախիչ մեջ է բերում նրա արժեքը ցույց տալու նպատակով, ստույգ չի հասկացվել վերանույնների կազմից։ Պետք է հարձել, որ Հազարպեկը Գաղեքոյնից շրջապը գրավ է վերցրել 700 (է.ձ.։) արծաթ դանակաթով, վրան ծախել է 800 (։Ը։ձ) զահեկան, ուստի և շրջապի արժեքը կազմում է 1500 (։Ռ. Ե.) սպիտակ Պրոֆ. Ս. Հակոբյանը այստեղ հիշատակված խաբճը գրածական հարկ է համարում, Հոռոմոսի վանքի այս նվիրատվական բնագիրը մեջ բերելով իբրև ապացույց, որ միջնադարում «չղբողը» հարկերի մի մասը վճարել են գրամով (ՏՆՎՍՔ. Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 464-465)։

¹²⁴ ՏՆՎՍՔ. 2. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 232, Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 352, 465։

¹²⁵ Պատմութիւն Ազգանից արարեալ Մովսէսի Կաղանկատուացոյ, Ա, Փարիզ, 1860, էջ 278, Հր. Անտոնան, Հայերեն երբ բառեր Մովսէս Կաղանկատուացոյն Պատմութեան մէջ, «Բազմավկպ» 1913, էջ 250-251։

«քի կանեփի կանաչ ցախն ի խեղդ պահես (մոտոզ պահես), մեջեխ ի քեզ շմեռնեայ», կամ. «սա տխ մի, կեղևե՛ա և նեղե՛ա, և ի վերայ պարտոյն դիւ, խեղ տօշբեռանին, օգուէ»¹²⁶,

Վիճական արձանագրություններում բառս վկայված է Բագնայր տանարի ՈԶՐ (1233) թ. նվիրագրում, որ գիտությունը հայտնի է ն. Մարգիսյանի անատոգիի բնորոշնակություններ, հետևյալ կապակցության մեջ. զերդ որ Խաչեբան՝ Վարդին որդին ի Քրիստոս փոխեցաւ և զիւր գանձով շինած տներն ի Գաղա դաւեն խեղ երես ի սուրբ Մայրս լուսոյ, այս դաւն ժամանակի հանդիպեցա՞ւ սովո և սրո և զերտրեան, ծախեցաւ... (ՈԱՐ 184, ՎԱՇ 118). Առաջին հայացքից պարզ և դուրսբերելի թվացող այս հատվածը հնուպարտողների մոտ տարբեր կերպ է հասկացվել, անորոշ է համարվել մասնավոր ի Գաղա դաւեն խեղ երես կապակցությունը: Մ. էմինը բնզհանուր առմամբ ստույգ թարգմանելով հատվածը՝ խեղ բառը անհասկանալի է համարել և բաց է թողել (НЭА 61): Ն. Մառը ավիճական տարեգրին հայտնի առաջաբանում հատուկ բնութիւն են-թարկելով բնագիրը, առարկում է այս վերծանության դեմ և ցրտնում, որ խեղը նվիրատու Խաչեբանի անվան հարգվումն է, ըստ այդմ հեղինակը առաջարկում է նույն քաղվածքը վերծանել. на свои деньги купленные дома у Потайного входа Хеч (Хаче-рес) дал сей святой матери: ն. Մառը խեղ = Խեղեբեա մեկ-նությունը որոշ վերապահություն տալով՝ առդատակում հնարավոր է համարում խեղ բառը հասկանալ նաև խաչ իմաստով (բառի մեջ ա < ն, է փոփոխությունը այժմ էլ դիտվում է կոտու և նոյնմեթո-յանի խոսվածքներում. (ՆՄՄՄ. խեղ, սրվիխե < սուրբ խաչ), որը, ըստ վերծանողի, սովյալ միջավայրում կարող էր արտահայտել խաչմերուկ իմաստը՝ дома на перекрестке Потайного входа (ՎՏ X):

Թվում է, ն. Մառի այս վերծանությունը և մեկնությունը այն-բան էլ համոզիչ չեն և հավանաբար գալիս են խեղ բառի ոչ ստույգ ըմբռնումից: Վերևում նշեցինք, որ խեղ, խեղ միջին հայերենում և արդի բարբառներում շատ տարածված բառ է և արտահայտում է մի շարք իմաստներ, որոնցից ամենահիմնականը կրօն, մեռն, մոտ,

կից, լո՛վ նշանակությունն է, որով և նա հանդես է գալիս բնվող վիճադրում¹²⁷: Այստեղից, Բագնայրի արձանագրության՝ տներն... ի Գաղա դաւեն խեղ երես, նախադասությունը պետք է հասկանալ՝ Գաղա դաւն մոտի տները տվեց, կամ՝ Գաղա դաւն մոտ (գտնվող) տները տվեց:

58. ԽԵՂԱՏ

Այս առաջաբեր երկու անգամ վկայված է Տարսային Օրբելյանի ՁԻԳ (1275) թվականի նշանակող պայմանագիր-կալվածագրում, որ փորագրված է Ամաղուի նորասկանելում իր իսկ կառուցած՝ Սմբատի դամբարանի հյուսիսային պատին, արտաբառաւ: Արձանագրութ մեզ է հասել իր նախնական վիճակով, գրեթե անխաթար, ընթերցվում ու վերծանվում է սպառնչ կերպով:

Այն նախկինում ունեցել է բազմաթիւ հրատարակություններ և թարգմանվել ուսուիրեն Սախայն որանց մեջ առավել կատարյալ և գիտական ընթերցնակությունը պատկանում է Ս. Բարխուդարյանին, որը վերջերս Վայոց ձորի մնացած արձանագրությունների հետ հրատարակեց Գիվանի Տ-րո պրակում: Բնագրի մեր բառաբնու-թյան հետ աննշվող հատվածը ըստ այդ վերծանության կարգաջգում է. Այս իմ գիր է Տարսայինիս..., որ Եկեղեցի տվի շինել Սիրաճես վարդապետին... ու ինչ գեկեղեցին լմեցին, խիլայ կուտայախ: Ե: սպիտակ, ի այն խիչային փոխան ԳԱՂԱՎԱՐ ՀԱՅԵՐԵՆԵՑԻՆ տվա՞ր ևրա Խաչեղեխ լիւնի, ի նրա զեղին կալ յազգէ յազգ... Արձագրու-վում է անհեծի ձևակերպումը (Գ III 234—235):

Բոլոր ընթերցնակողները նկատել են, որ բնվող բառի առա-ջին հիշատակությունը փորագրված է խիլայ, իսկ երկրորդը խի-չային, որ փորագրողի կամ բնագիրը կազմողի սխալ պետք է հա-մարել, հավանաբար առաջացած ի և չ գրերի շղագիր տառաւեսակ-ների նմանությունից: Առաջին անգամ այս վրիպումը ցույց է տվել Թ. Ավդալբեգյանը 1927 թ., որը և ընդունվել է բոլոր ուսումնասի-

¹²⁷ Ը. Անտոյան, Գավառական բառարան, էջ 464, Ս. Ամատունի, Հայոց բառարան, էջմիածին, 1912, էջ 274:

¹²⁶ Գիրք վատակոց, էջ 105, 208:
124

քողների կողմից, ըստ այդմ, բառիս ուղիղ ձևը համարվում է խիլայ և ոչ թե խիշայ:

Խիլայ բառը մինչև վերջերս անբացատրելի էր համարվում. Տարսալիճ իշխանի այս պայմանագիր-հրամանագրի առաերևն թարգմանության մեջ, օրինակ, Միտունը և Քուշուկ Շովհաննիսյանը խիլայ անհասկանալի համարելով՝ երկու դեպքում էլ տպագրել են բառն անփոփոխ՝ хиша(?)¹²⁸, բացի դրանից, անստույգ է թարգմանված բնագրի կուտայաբ բայ ստորոցայւը (ինչ գեկեղեցին լմնեցին խիլայ կուտայաբ: Ե: սպիտակ..., թարգմանված է пока завершили постройку церкви мы платили хиша(?) в 500 белях (МАК 184), մինչդեռ պետք է թարգմանելու мы должны были платить мы обязались платить, և այլն), որով և առևերևն թարգմանություն մեջ միջոցով է արձանագրության պայմանագրալին բնույթը (տե՛ս լմնեցին բառահոգվածը):

Խիլայ > իլայ արմատի ստուգաբանության համար հիմք է բնագրումվել գրական աղբյուրներում նրա հիշատակությունները, ըստ այդմ, բառս ծագած է համարվում ասոր. xilal ձևից, որը արաբ. xilal (քրդ. xelat = վերարկու, xalat = նվեր) բառի փոխառությունն էր՝ ցարգև տրված թանկագին զգեստ նշանակությամբ: Այս մեկնությունը առաջինը տալիս է երեմիա Մեղրիցին՝ յայլ բառի տակ = բնծա կամ խալար, ապա Հ. Աճառյանը՝ խիլայ > իլայ = նվեր, պարզև, Կարսոյը և Բյուզանդացիին¹²⁸,

Չառարկելով այս ստուգաբանության զեմ՝ գտնում ենք, որ վլ-կալված իրազրություն մեջ խիլայ բառը փոքր-ինչ այլ իմաստային նորբերանգով է հանդես գալիս, քան նվեր, բնծա բառերի արտասայ-տած իմաստները: Բառիմաստի բացահայտմանը նպաստում է Տարսալիճ Թրբիչանի և Միրանես ճարտարագետի գործարքի մասին մի այլ պայմանագիր, որը Ս. Բարխուդարյանի ջանքերով վերջերս ստույգ վերծանվեց Գորհիս շրջանի Հալիձոր գյուղի ժեսպի խուլի վայրում կանգնած խաչարձանի արձանագրության մեջ: Այստեղ արտոնագրի հնդիսակ Տարսալիճ իշխանը նորից է ինչ-ինչ կալվածքներ տալիս Սիրանեսին՝ հատուկ շեշտելով. Սիրանես Կար-

գործն եկեղեցի շինեց անվարձ նարայվանս, ևս զայն նրա դասման փոխարենն արարի որ նրայ հայրենիք լինի յազգէ յազգ... և այլն (Գ 11 52):

Ուրեմն, Տարսալիճը Սիրանես քահագործին նրա դասման փոխարեն մի զեպրում տալիս է՝ զՀալիձորայ: Բ: կապարս, Վհարս Վհարս մարմանդով կամ զՀալիձորի Շենեքո, իսկ անվարձ կառուցվող եկեղեցու շինությունն ավարտելու կապակցությամբ էլ պարտավորվել էր տայ: Ե: (500) արծմթ, բայց դրա փոխարեն տալիս է իբրև պարզև, կատարված աշխատանքների դիմաց հատուցում Աղազար (<Նղիազար) Ըղաւեճեցի ճորտ գլուղացուն, իբրև հայրենիք, այն է անձնական սեփականություն՝ յազգէ յազգ:

Նույն բառը՝ բնծա, նվեր իմաստով հանդիպում է Գեղարքունիքի Հայրավանք հուշարձանախմբի ԺԳ դ. կեսերի մի նվիրատվության մեջ, խիլայս շեղացն ի վաճես ալիբ, այսինքն նվիրատուն շրաղացը բնծա է տվել վաւերին (Գ 17 71):

59. ԽՈՐԱՍՈՒՆ, ԹԵ՛ ԽՈՐԱՍՏ

Անձնանվան Խորամ ուղիղ ձևը վերծանված է Սանահնի ներքին ժամատան 2Մ (1301) Թ. ստպանագրերից մեկում. այս յուսով հանգիստ Խորամու է (ԿՂՍ 119, 198): Անձնանունների ցանկում վերծանողը Խորամ անվանը վերագրում է արտաքին ու հուղվում՝ Խորամու: Տեղում և հստակ լուսանկարի վրա ստուգելով Ղաֆազարյանի բնգործիականությունը՝ համոզվում ենք, որ անձնանունը պետք է վերականգնել Խորասու, քանի որ բնագրում փոթազրված է նրա արական հոլովածակը՝ Խորասուէ: Ահա ամբողջ տապանագիրը ճշգրտում վերծանությամբ, այս է յուսով հանգիստ Խորասուէ: ՄՍ: (նկ. 19, 19 ա): Որ անվան ուղիղ ձևը պետք է վերականգնել Խորա-

ԱՅԱՅՈՒՍՈՒՆՈՒՆ
ԻՍՏԻՆՈՒՍՈՒՆ



նկ. 19

¹²⁸ Չ. Աճառյան, Հայ. արմ. բառարան, Բ, էջ 372, Յ. Կարսի Մատենագրանում պահվող ձեռագիր:

սու, աղացուցում են այլ վիճադրերում նրա վկայությունները. օրինակ, Հազրասի վանքի ԺԳ դարի երկու բնագրերում փորագրված է մի զեպրում նույն անվան ուղղական հոլովածներ՝ Խաբասու, մյուսում՝ տրականը՝ Խաբասու: Ահա այդ արձանագրությունների հա-



Նկ. 19ա

մասպատախան հատվածները Կ. Ղաֆադրյանի վերծանումը. Լա՛ Տերտերա ե մայր իմ Խաբասու կեզզեցեցաք զեջան սուրբ խանչի... արչպի մեկ կեզզեցի եեք մեր ձեզազեցե անենն զպատարագա՞մ Մարունին, Այպերանն ես Խաբասուէ (ԿՂԶԲ 165, 240). Խաբասու իգ. անվան տրական հոլովածներ, այս անգամ օրինաչափ ի հոլովմամբ՝ Խաբասուին, վկայված է նաև Անիի ԺԳ դ. խաչարձանի հետևյալ հիշատակագրում. Սուրբ խաչս է բարեխաւս առ Քրիստոս Ազրեղանն ես Այրեքե ես Խաբասուին (Գ I 67):

Խաբասու իգ. անձնանունը Հր. Աճառյանի բառարանը չունի և ցարդ ստուգարանված չէ: Ցուտաին նրա ծագումը ենթադրում է պարս. Խոթասան, Խուրասան տեղանունից, իրրև այդանոց ծնված կամ սպրած անձ¹²⁹:

Տարակույս կարող է հարուցել Սանահնի ու Հազրասի արձանագրություններում Խաբասու անվան տրական հոլովածների վերջում

¹²⁹ F. Justi, Iranisches Namenbuch, Marburg, 1895, S. 172, 178:

փորագրված է-ն, որ նախորդ վերծանողները ստույգ չընկալելով՝ կարդացել են ի: Ըստ այսմ, սվյալ հոլովածներ Ջալալյանցը հրատարակել է Խաբասուի, Հ. Ղրիմեցին և Երզնկյանցը՝ Խաբասուի: Նույն բնագրերի զիտական հրատարակության հեղինակ Կ. Ղաֆադրյանը Սանահնի տապանագրում կարդացել է՝ Խաբասու է, այսինքն անձնանունը համարում է Խաբասու-ու, իսկ է-ն էական բայի եզ. Յ-րդ զեմբ: Հազրասի նվիրագրում անունը վերծանում է Խաբասուէ, անունից պարզելու վերջընթեր է-ի նշանակությունը:

Տվյալ իրադրության մեջ է-ն, անշուշտ, անվան սեռ-տրական հոլովակաղմիջ է, քանի որ ի, ու, հանդող անձնանունները այդ հոլովներում ունենում են է կամ ե, իրրև արդյունք այ հոլովական վերջավորության հնչյունափոխության:

Իրադրությունը միջնադարի վիճական բնագրերում նկատելի է դեռևս ն. Մառը սվիմական տարեգրիս տառաբանում: Ավելի մանրամասն հարցը բնական է մեր հատուկ ուսումնասիրության մեջ¹³⁰:

60. ԾԱԹԻՐԱՅ

Հ. Աճառյանը այս տառաչաբը բաղում է Սանահնի վանքի մի նվիրագրից, որ հրատարակված է Ս. Ջալալյանցի և Հ. Ղրիմեցու ժողովածուներում, այնտեղից էլ Կ. Կոստանյանցի սվիմական տարեգրումս. ՈՂ (1201) Թ. Լա՛ Հասան ես Վախյախ ամուսինն իմ սուսա ի Ամանեցիս ի ծաբիրայն Շաստերն քանն արալաբ հոլ¹³¹:

Աճառյանը ծաբիրայ դնում է փորքատառով և համարում նորագույն, անստույգ բառ. և արդարև, այդ բնորոշնակմամբ հաղիվ թե հնարավոր լինի գտնել բառիս արտահայտած իմաստը:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ սվյալ տառաչաբը ստույգ չի բնորոշնակվել, որը և հիմք է ծառայել Աճառյանի ստուգարանության համար: Բնագրի նորագույն, ավելի հավաստի բնորոշնակությունից երևում է, որ այստեղ գործ ունենք ոչ թե ծաբիրայ

¹³⁰ Տե՛ս «Մառը և հայագիտության հարցերը ժողովածու», 1968, էջ 129—166:

¹³¹ Ս. Ջալալյանց, Ծանաղարհորդութիւն... Ա. Տփիս, 1842, էջ 31, Խ. Կրյակսկի, Описание... СПб., 1862, էջ 57, սվիմական տարեգրը էջ 64, Հ. Աճառյան, Արժ. բառ., Գ, էջ 706:

անատույզ արմատի հետ, այլ Սանահնից ոչ հեռու գտնվող պատմական գյուղերից մեկի՝ Մաքեր (<Մաղեր) անվան բացասական հոլովածին հետ: Ահա արձանագրության համապատասխան կազակցությունը ծաղեր-ի հիշատակությամբ, որ վերջերս հրատարակվել է Գ. Ղաֆադարյանը. ես՝ Հասան եւ Վախախ ամուսին իմ, տվաք ի Սանահինս ի Մաղերոյն գնաուարեանք ամեն շահով, մին առավար հող... (ԿՂՍ 133): Ճիշտ է, Ղաֆադարյանի վերծանությունը մի կենտոմ անորոշ է և վիճելի (վանքին երկրբաժ գնաուարեանք ընկալվել է իրեն Մաղեր գյուղի հանդաման, որտեղից մի օրավար հող է նվիրվել վանքին, մինչդեռ ապելի հավանական է մտածել, որ խոսքը վերաբերում է նաուարեանք գերգաստանք իր մեկ օրավար հողով Սանահնին օտարելուն¹³², անկախ ի Մաղերոյն (Մաղեր տեղանվան բացասական հոլով), ընկերցումը հավաստի է և հերքում է ծարիրայ արմատի գոյությունը:


Մաղեր > Մաքեր գյուղի անունը կարող էր առաջանալ բազիկ-դեղին հայերի՝ ծաղերի (<ծաղ> > ծաղ > ծաք) անվանումից, որ երբեմն բնակվել են այստեղ: Մայլո > ծաղ > ծաք արմատի ստուգաբանությունը տալիս են նախ՝ ն. Աղսնցը, ն. Մարը, և ապա՝ Հր. Աճառյանը, ըստ այդմ, բառս ծաղում է ծալք = կեն, կիսատ բառից, որ նշանակում է կեն հալ, կիսատ հալ, կեն հույն, այսինքն Բաղկերեցի հայ¹³³:

61. «ՄԱՅՐ» ԲԱՂԱՎԳԻՒՉՈՎ ԱՆՃԱՆՈՒՆՆԵՐ

Միջին դարերի վիճակագրական հուշարձաններում հանդիպում են երկրորդ կարգում ծալք > ծեղ, ծեղ բազադրիչով բաղմամբիվ անձնանուններ, որոնց վերծանություններն ու ստուգաբանությունը ցարդ սպառիչ որոշված և մեկնաբանված չեն: Այդ կարգի անունները տեղ չեն գտել և ստուգաբանվել նաև Հր. Աճառյանի Անձնանունների բառարանում, հավանաբար այն պատճառով, որ միջնադարի մասնագրություն մեջ կամ ձևազերծի հիշատակարաններում դրանք

չեն վիճված: Մայր բազադրիչով կազմությունների եզրած վկայությունները ճշգրտելու և նրանց նշանակությունը որոշելու նպատակով, ստորև մեջ ենք բերում մեզ հայտնի հրատարակված կամ անտիպ հիշատակությունների ամփոփ բառակազակցությունների մեջ՝ անհրաժեշտ շահումներով ու դիտարկություններով:

Ննազույն հիշատակությունը գտնում ենք Գեղեվանքի գավթում ընկած խաչքարի բնագրում, որն ըստ ստանձանների հնագրության, Թ-ԺԱ զարերի գործ է (նկ. 20): Քրիստոս աստուած ողորմեայ զՔՅՏՐԱՅԱՅՐԻՆ, գրարի տիկեայ հողինն (Գ III 16): Հաչորդ վկայությունը ԺԲ զարի վերջերից է՝ փորագրված Արցախի Կոճղատ գյուղի Ամենափրկիչ վանքի մուտքի ճակատակալի վրա. ես՝ Յոհաննես ու Սերաբ ու Մարգիս ու Գրիգոր՝ որզիք ՉԱՐԱՅԱՅՐԱՅ շինեցաք գևառաւածածինս ի մեր հայրենեցս (ՄՎ): Մնացած վկայությունները վերաբերում են ԹԲ-ԺԳ դարերին: Այսպես, Կեշառիսի վանքի ավանդատան ճակատին. ԹՎ. ՈԿԴ (1213) Մարց Յովաննես ՅՈՒԱՆՍՄԱՅՐԻՆ է, ի տարին է: Բ: ար ծամ առնէ եմա... (ԳՂԽՊ 315): Արցախում, Բերդաձորի Ս. Գրիգորի եկեղեցու հյուսիսային պատին, արտաբառաւ. ՈՂԸ (1229) րվ. ես՝ ՏԻՐԱՅԱՅՐՍ Ապարանցի բարեկալա աբխային Ջալալին իմ ընչով գեճցի գԳոխին երկիրն և եսա ի Ս. ուխտս Բերդաձորա... (ՄՎ, ՍԲ)¹³⁴: Գորիսի շրջանի Տեղ գյուղի պատմական գերեզմանոցում կանգնած խաչքարի վրա (նկ. 21). Ի րվ. ՉԻԱ. (1272) ես՝ Շաբերե և ՇԱՆՍՄԱՅՐ կանգեցաք գՍուրք Կեդս (Գ II 71, սխալմամբ անձնանունը վերծանվել է ՇԱՆՍՄԱՅՐ, ուղղում ենք ըստ գրքում գետեղված լուսանկարի, տախտակ 63): Վայոց ձորի Հերհեր գյուղում կանգնած զեղաբանական խաչքարի վրա (նկ. 22). ես՝ Գրիգոր որզի ՎԱՐՇԱՄԱՅՐԻՆ, որ մեաց ի պատեռազմի հասմ, կանկեցիք խաչս, րվ. ՉԱԱ (1282) (Գ III 67): Նույն Վայոց ձորի Այալազ գյուղից ոչ հեռու, Գյուլումբուլազի վանքի մտո



Նկ. 20

¹³⁴ «Արարատ», 1896, էջ 81:

¹³² Տե՛ս Ս. Ավագյան, Բառարանություններ..., «Երաբեր», 1971, № 4, էջ 61-62:
¹³³ Տե՛ս Հ. Աճառյան, Արմ. բառ., Գ, էջ 706, Н. Марр, Аркагн., СГО., 1905, էջ 30-31, Цаты палеонтологическн, «Մաղը և հայագիտության հարցեր», Երևան, 1968, էջ 203-204:

ընկած խաչքարի շրջանակներին. Խաչս... Հասան, 'Իսիք' որդիք ՊԱՊԱՍՏԱՅՐԻՆ ու Անէկի՛ն (Գ III 120):

ԺԳ—ԺԴ դարերի մի քանի այլ արձանագրություններում այդ կարգի անձնանունների ՍԱՅՐ բազադրիչը վկայված է հին հայերե-

ԻՌԿ: ԷԻԹ: Ա: ԵՍՇԱ
ԱԲԵՐԵՆԱՅԵՐԱՎԿ



նի այ երրոմնի երկարադրի պարզումով՝ այ > է(ն), որ օրինաչափորեն տեղի էր ունենում ժամանակի կենդանի խոսվածքների արտասանության ազդեցությամբ: Ահա ՍԱՅՐ > ՍԷՐ (ՍԵՐ) հնչյունափոխությամբ մի քանի վկայություններ. ն. Վարազ վանքի Աստվածածին կնիզեցու հյուսիսային ավանդատան մոտ, աստիճանների վրա. Ի տունի Սուրբ Յակ: Ա: աւր ժամ ՔՈՒԲԱՅԵՐԻՆ՝ Գարսի սեուցողի (ԺԳ Գ. ՄԿ): Գանձակից ոչ հեռու, Սուլուկի վանքի մատուռի կամարակալ բարին. Քիւն ՉԻԸ (1279), Ես՝ Միխրաւ և ՏԻՐԱՅԷՐ ԷԻՆԵԳՎ զԵկեղեցիս, Ի Բայրապետութեան տէր Ըստեփանոսի Աղուանից կարգիկոսի (ՄԲԱ 270): Վարդանիկ զյուզից ոչ հեռու ԵՂարանդի խորրեք՝ հնաժամում կանգնած խաչքարի երեսին. Ես՝ ԱՐԱՄՍԵՐ, Սիսաբուն կանկեցավ զեսաչս բարեխաւ հոգոյ մեք, ԲՎՊԳ (1304) (Գ IV 164, վերածանոց անձնանունները կարդացել է՝ Ես՝ Արաման ձերունիս և Խարուն... մինչդեռ բնագրի՝ գրքում զետեղված զծագրական ընդօրինակության մեջ անունները բոտ մեր ընթերցման են): Մտթոսավանքի Ս. Գրիգոր Եկեղեցու արձնույան պատին փորագրված հիշատակագրում. Աջոտածուրի՛ն (Գ VI 14): Արդ, Ի՛նչ իմաստ կարող է արտահայտել ՍԱՅՐ = ՍԷՐ բաղա-

դրիչը Բվարկված անձնանուններում, կամ ինչպե՞ս ստուգարանի ՔՈՅՐԱՍՏԱՅՐ (ՔՈՒԲԱՅԷՐ), ՀԱՐԱՍՏԱՅՐ, ՏԻՐԱՍՏԱՅՐ (ՏԻՐԱՅԷՐ), ՎԱՐԶԱՍՏԱՅՐ և այս կարգի մյուս բազադրությունները:

Էրչայլ անձնանուններում ՍԱՅՐ բազադրիչի նշանակությունը ստացիւր փորձում է պարզել հայ վիճադրութեան հմտու վերածանոց Գ. Հովսեփյանը: Կեչառիսի վանքի ՈԿԳ (1214) Բվագիր արձանագրության մեկնությունը տալով, նա ՅՈՎԱՆԻՍԱՍՏԱՅՐԻՆ բառի մեջ ՍԱՅՐԻՆ հասկանում է ձեր, ձերունի, գառամյալ, որ նրա կարծիքով բառի հնագույն ձևն է, ճար և նման նույն ժամանակների ձևագրերի հիշատակարաններում հանդիպող տայր < տէր ձևին (ԳՆԵՊ 164, 171, 315, 352): Այսպիսով, բոտ Գ. Հովսեփյանի, ՍԱՅՐ բազադրիչով անձնանուններում արտացոլված է հին հայերենի և պարզ ձայնավորի երկարաբառային արտասանություն, կամ Ե > ԱՅ հնչյունափոխությունը Այս մեկնության հետ համեմատելի է հայ վիճագրերի մյուս գիտակ Ս. Բարխուդարյանը, որը Վայոց ձորի և Արցախի վիճագրերից բաղած ետր վկայությունների ըննության մեջ բոլոր զեկպերում հավաստում է ՍԱՅՐ = ՍԵՐ (ձերունի, գառամյալ) համապատասխանություն (Գ III 67):

Այսպիսով, Գ. Հովսեփյանի և Ս. Բարխուդարյանի բացատրությունից ստացվում է, որ, սակեք ՔՈՅՐԱՍՏԱՅՐ, ՎԱՐԶԱՍՏԱՅՐ, ՊԱՊԱՍՏԱՅՐ պետք է հասկանալ՝ Քայր ձեր կամ ձեր Բայր, Վանքում ձեր, Տէր ձեր, Պապ ձեր և այլն:

Վիճական բնագրերում պահպանված ծայր (= ձեր, ձեր) բազադրչալ անձնանունների վկայությունների ուսումնասիրությունից սկսեալու է, որ այս բացատրությունը հազիվ թէ հնարավոր լինի ընդունելի համարել: Նայս ձեր > ծայր հնչյունափոխության մասին միջին դարերի վիճական բնագրերում և ձևագրերի հիշատակարաններում ավանդված են այս երկարաբառի պարզման կամ է(ն)-ի վերածման բազմաթիվ օրինակներ, որոնք վկայում են տվյալ հնչյունափոխական երևույթի սիրբպետող օրինաչափությունը դառնալը Ժ—ԺԴ դարերում¹³⁵: Առանձին սակավաթիվ վկայություններ կան նաև հակառակ է(ն) > ԱՅ փոփոխության, այսինքն պարզ ձայնավորների երկարաբառայնացման մասին, որ կարող էր տեղի ունե-

¹³⁵ Ավելի մանրամասն տե՛ս Ս. Ավագյան, Վիճական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 164—176:

նալ ժամանակի կենդանի խոսվածքների հետևությունը. օրինակ, անալսս <անկնս, նեսայս < նեսուս, հայրայնիք < հայրենիք, երկրպագայք < երկրպագեք և այլն¹³⁶: Մական երկրորդ եզրում ՄԱՅՐ բաղադրելով անձնանուններում հաջիվ թե հետարվոր լինի դեռել ե(է) > ԱՅ հնչյունափոխություն, բանի որ ինչպես տեսանք, այդ երևույթը սոսկ հատուկեն օրինակեն ունի միջնագաբի վիմազրվորում, բոս որում, ամենուրեք ԱՅ-ի է փոխվում ոչ թե հին հայերենի Ս որպի ձայնավորը, այլ երբեմնի երկարաբառային արտասանություն ունեցող է-ն, Բացի դրանից, ուսումնասիրողները անձանիվ լինելով ՄԱՅՐ բաղադրելով բոլոր վիմայնի վկայություններին, չեն նկատել, որ այդ անձնանունները ներկայանում են ոչ թե անձնանուն + ձեռ բառակապակցություններ, այլ՝ սովորական հաղակապավոր բաղադրյուններ, բոս այդմ, դրանցում երկու բաղադրիչները միացնող Ա-ն սեռականի հոլովական վերջավորություն չէ, ինչպես ենթադրվել է, այլ միայն հոլակապ: Եվ իրոք, կթէ այդ Ա-ն հոլովի լինելը, ապա սպասուկ էր ԱՅ (Յովանիսայ) ծայր, Վարհամայ ծայր և այլն), մինչդեռ մեր մեջ բերած բոլոր օրինակներում կամ Ա է, կամ հոլակապ չկա (Շահմայր, Արամմեր): Մյուս կողմից սովյալ դերում Ա-ն չի կարող հոլովի լինել նաև այն պատճառով, որ այդ կարգի բաղադրյալ անձնանունների առաջին բաղադրիչներից մի բանից ոչ մի դեպքում էլ չեն կարող ԱՅ հոլովման ենթարկվել. օրինակ, ՔՈՅՐ(ածայր), ՏԷՐԱՄԱՅՐ, ՅՈՎԱՆԻՍ(ածայր) բարդություններում քննզգծված բառերը ԱՅ հոլովման չեն, բայց մյուսների նման դարձել են՝ ՔՈՅՐԱՄԱՅՐ, ՏԷՐԱՄԱՅՐ, ՅՈՎԱՆԻՍԱՄԱՅՐ ԱՅՐ և այլն, մինչդեռ հոլովվելու դեպքում պետք է ունենայինք՝ ՔԵՆԱՄԱՅՐ, ՏԵԱՌԵԱՄԱՅՐ, ՅՈՎԱՆԻՍՈՒՄԱՅՐ և այլն: Այսպիսով, այլևս ակներև է, որ խնդրու առարկա անձնանուն + Ա հաղակապ + ծայր կազմությունները հոլակապավոր իսկական բարդություններ են և ոչ թե անձնանվան սեռական հոլովման + ծայր բառերի կապակցություններ:

Բայց այս դեպքում ի՞նչ իմաստ է արտահայտում ՄԱՅՐ բառը այդ բարդություններում, կամ ինչպես ստուգարաննի Քոչրածայր, Վարհամածայր, Տրամայր և մնացած բոլոր անձնանունները: Հայանի է, որ հայերեն ՄԱՅՐ արմատը իր սովորական իմաստից

բացի, նաև նշանակում է՝ «նորածագ արևի առաջին ճառագայթ, մի որևէ բանի լավագույն, ազնվագույն մասը»¹³⁷: Հավանական է մտածել, որ ՄԱՅՐ-ը նշված բաղադրյալ անձնանուններում հանդես է գալիս այս վերջին իմաստով, իրեն սովյալ գերդաստանի ազնվագույն, լավագույն, բարձրագույն կամ վերջին զավակը, բոս որում բարդության առաջին բաղադրիչը կարող է արտահայտել կամ դերդաստանի նահապետին, ավագին, հորը (ՀԱՐՐ-Ա-ՄԱՅՐ, ՊԱՊ-Ա-ՄԱՅՐ, ՏԷՐ-Ա-ՄԱՅՐ), կամ՝ ընտանիքի մորը, իգական այլ անդամ (ՔՈՅՐ-Ա-ՄԱՅՐ):

ՄԱՅՐ արմատի այս նշանակությունն է ավանդված նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հետևյալ հատվածում. «Եսկ զծայր ֆաղափին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք բազմաց ի մարդկանէ ոչ հաստ լեալ, և ոչ պատմելի է կարողութիւն»¹³⁸, Այսպիսով զծայր ֆաղափին կապակցությունը բոլոր թարգմանիչները հասկացել են սովորական՝ ֆաղափ (վերի) ծայրը окранный город, оконечности города, пригород: Մինչդեռ, ինչպես հիշարենք ցույց է տալիս Գ. Տեր-Միքայլանը, վկայված պարբերության մեջ ծայր ֆաղափին պետք է հասկանալ ոչ թե բաղափ ծայրը, արվարձանը, այլ՝ բաղափ բարձր տեղը, միջնաբերդը, որի վրա, բոս Պատմահոր պատաններ, պալատներ ու զառանգաններ (ժամուկ իմնահագին) է կառուցում Շամիրամ¹³⁹: Մայր բաղադրիչը նույն իմաստով է հանդես գալիս նաև հին հայերենի՝ ծայրագույն, ծայրադիպակ, ծայրափայլ և այլ կազմություններում, ամենուրեք արտահայտելով՝ բարձրագույն, գերագույն, գերազանց, կատարյալ, ֆաշ իմաստները¹⁴⁰, եվ պատահական չէ, որ հունարեն akropolis բառը (կազմված՝ akros = բարձր և polis = բաղափ) հին հայերենում ամենուրեք թարգմանվում է՝ ծայրագույն, անշուշտ բարդությունը հասկանալով ոչ թե ֆաղափ ծայրը, արվարձանը, այլ՝ բարձրագույն մասը, միջնաբերդը, цитадель, բանի որ հունական ակրոպոլիս (ինչպես նաև հայկական բաղափի միջնաբերդը) սովորաբար տեղավորված էր լինում բաղափի կենտրոնում, որևէ բարձրության կամ

¹³⁷ Հբ. Անտոյան, Արմատական բառարան, Թ. էջ 442:

¹³⁸ Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քիշիֆ, 1913, էջ 54:

¹³⁹ Մարր և հայագիտության հարցերը, Մոզգաձու, Սրահն, 1968, էջ 220:

¹⁴⁰ ԵՃ, Ա, էջ 1095:

¹³⁶ Նույն անգում, էջ 111:

բլբի վրա: Այս առումով վրիպում են նձԲ-ի հեղինակները, ձայնաբաղակ (=ակրոսյուլ) բացատրելով՝ բերդ ի ծայր ֆաղախի¹⁴¹:

62. ԿԱՊԱԼ (=ՂԱՐԱԼ, ԽԱՊԱԼ)

Արաբերեն gabala=կապալով առնելու գործողությունն և կապալագիր նախածեր միջնադարի մատենագրության մեջ ավանդվել է կապալ, կապալառու, կապալվոր, խապալ, զապալ ձևերով, ամենուրեք արտահայտելով՝ տուրֆ, վարձ, նաև՝ կաշառֆ իմաստները¹⁴²: Բառիս հնագույն հավաստի հիշատակությունը ավանդվել է Մարենդացի վանքի պատին Սյունյաց Սուփանի իշխանի 9-րդ դարավերջին փորագրված նշանագիր արձանագրության մեջ՝ նորաշեն հողերը կենտրոնին հասկանցված արժեքների թվարկման մեջ. «Եւ ետու... 2 (700) դրամ ի Գեղձանագետոյ զապալէն, : Մ : (200) դրամ ի Կաթկայ, : ՅՄ : (350) յԱնմեռէն, որ լինի : ՌՄՄ : (1250) դրամ (Գ IV 290)¹⁴³: Ոտ ալսմ, խնդրո առարկա հատվածից հասկացվում է, որ Սուփանի իշխանը Գեղձանագետ գյուղում իր ունեցած ձկնորսարանի կապալավարձից վանքին հատկացնում է 700, Կաթկկից 200, Անմեռից 350 դրամ: Սակայն Տաթևի վանքի Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու 1532 թ. մի բնագրում նույն կապալը վկայված է այնպիսի կապակցության մեջ, որը միանգամայն անհարիր է բառի վերջ նշված իմաստին:

Ահա բնագիրը ըստ Ս. Բարխուդարյանի վերանույթյան. «Այս է գիր արձանի... որ Մարզեն մինչև Վոթ ինչ գեղ... տարին : Բ : կապալ ձէթ վախմն ալին Սուրբ Առաքելոց լուսացու, իբրևեց հոգոյն, որդոց եւ թոռեանց անշինջ յիշատակ...», այնուհետև շարադրվում է սույն պարտավորությունը ստորագրող Գեղարքունիքի իշխանների ցուցակը, արձանագրության անեծքի ձևակերպումը և

¹⁴¹ ՆձԲ, Ա, էջ 1006:

¹⁴² Ըր, Անադյան, Աբմ. բառարան, Բ, էջ 521:

¹⁴³ Մարենդացի վանքի այս կարևոր բնագրից պահպանվել են միայն մի քանի բեկորներ: Սու. Օրբելյանը իր «Պատմության» մեջ արտադրել է գրիթն ամբողջությամբ: Թեև այդ ժամանակ էլ (ժԳ դարի վերջերք) գլխան հնությունն և խաբառայն քարանդեհն հնորավոր չի եղել գրավանդակի իմաստը (Տե՛ս «Պատմությունն նահանգին Սիսական», էջ 179—180):

թվագիրը՝ ՋՁԱ (1532): Լուսանկարով ստուգվող այս հատվածից (Գ II էջ 27, նկ. 25) հասկացվում է, որ Գեղարքունիքի մի քանի գյուղեր իրենց իշխանների միջոցով պարտավորվում են Տաթևի վանքին իբրև լուսացու տարին երկու կապալ ձևի տրամադրել, ակնհերձաբար բարեգործական մղումներով:

Կապալ բառը բնագրում փորագրված է կլալ գրերով, այսինքն գեղըված ձայնավորի փոխարեն առկա է պատվի գծիկը: Բարխուդարյանը այդ պատվի տեղում իրավամբ վերականգնել է և ձայնավորը, և բառը կարգադեղ կապալ (և ու թե՛ կապալ, կուպալ, կիպալ և այլն), քանի որ նույն բնագրի մյուս բառերում ևս պատվի նշանը փոխարինում է և ձայնավորին (հմտ. խրաննի-խարաննի, իշրաննի-իշատակ և այլն):

Տաթևի վանքի այս արձանագրության եղած վերանույթյուններում բնագրի մեկնությունը չի հանդիպում, հատկապես անորոշ է : Բ : կապալ ձէթ վախմ ալին կապակցությունը նթ կապալ բառը այտուեղ գործածված է սովորական վարձ, տուրֆ, կաշառֆ, նաև կապալի գործառնությունը իմաստով, ապա ինչպես հասկանալ նրբա : Բ : = երկու որոշիչը, կամ ի՛նչ է նշանակում երկու կապալ ձեր : Այս հարցի պատասխանը փորձել է տալ պատմաբան Գր. Գրիգորյանը՝ Սյունիքի վանական կալվածատիրության մասին վերջերս հրատարակած իր աշխատության մեջ: Ահա նրա բացատրությունը. «Սյունյաց հողերը օջախները, մասնավորապես Տաթևի վանքը կապալավարձը ստանում էր նաև բնամթերքով: Այդ մասին հիշատակվում է 1532 թ. գրված արձանագրություններից մեկում», մասնացույց է արվում քննության ենթակա արձանագրությունը¹⁴⁴: Այսպիսով, Գրիգորյանը բնագրի՝ : Բ : կապալ ձէթ հասկանում է կապալավարձի դիմաց հատուցվող ձէթ՝ անտեսելով : Բ : (երկու) որոշիչը և մանավանդ նվիրատվական արձանագրություններին հատուկ շարադրանքը: Գեղարքունիքի գյուղերն իրենք են պարտավորվում վանքին երկուական կապալ ձևի նվիրելով՝ իբրև լուսացու Բացի դրանքից, հեղինակի ասածից չի խմայցվում, թե ի՛նչ կապալավարձի մասին է խոսքը, կամ Տաթևի վանքի ո՞ր հաստատությունների կապալի դիմաց են գյուղերը վճարելու ձևերով:

¹⁴⁴ Գր. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը 9—13-րդ դդ.:

Գրիգորյանի այս մեկնությունը ոչ մի ընդհանուր բան չունի Տաթևի արձանագրության իրական բունգրությունների հետ և, անշուշտ, առաջանում է բնազդի կապով և վախճ բառերը ստույգ չընկալելուց: Միջնադարի վիճաբերում ու կալվածագրերում հասանելի չանդրվող վախճ բառը (տարբերակներ՝ վագֆ, ռիվ, սիֆ, ս-խու և այլն) փոխառված է արաբ. *vagif* ձևից, որը նշանակում է կտակելի, ձոնելի, եվիլիելի, նաև՝ հոգևոր հաստատությունը իրև եվեր կտակված ունեցվածք¹⁴⁵: Այստեղից միանգամայն պինճայտ է, որ բնազդի՝ Բ: կապով ձեք վախճ ավին կապակցությունը անհնար է հասկանալ այն իմաստով, որ ձեքը սրվել է կապովավարձի դեմաց, բանի որ իրականում որո՞՞մ ունենք ոչ թե պարաավորության, այլ հոծորակամ նվիրատվության հետ: Մյուս կողմից, պետք չէ վիճաբարգիտի մեծ հատություն ունենալ կանհերու, որ: Բ: կապով ձեք վախճ ավին նախագասություն մեք կապով-ը ձեքի բանակական միավոր է և ոչ թե կապովավարձ:

Կապովը իրև հեղուկաչափի միավոր միջնադարի այլ աղբյուրներից հայտնի չէ և այդ պատճառով չի մեկնարանվել բառարաններում կամ տեղեկատու գրականության մեջ: Սակայն անցյալ դարի կենտրին Շիրակում գրատված ազգագրական նյութերում տեղեկություններ կան այն մասին, որ կապովը (= դարավ) իրև հեղուկաչափի, հատկապես ձեքի տեղական միավոր, լայն զբոսածություն է ունեցել Հայաստանի մի բանի գավառներում, ընդ որում, հեղուկների ծավալաչափի կապուն համակարգում: Ահա այդ ազգագրական նյութերի համապատասխան հատվածը. «Հեղուկների համար առանձին չափեր չկան, բայց ձեքի ծավալաչափի հատուկ միավոր է դարավը (կարավ), որը հավասար է ուսուական 20 ֆունտին: Դարավը հավասար է 6 հոլխայի, յուրաքանչյուր հոլխան հավասար է 2 եուկիի, յուրաքանչյուր եուկին՝ 8 թուլտի»¹⁴⁶:

Ուրեմն, խնդրո առարկա արձանագրությունը մեր մեկնությունից պարզվում է, որ Գեղարքունիքի դուրդերից յուրաքանչյուրը Տաթևի վանքին լուսացուի համար վախճ է տվել, այսինքն նվիրել է: Բ: կապով = 2 կապով = 40 ֆունտ = 16 կիրգրամ = մեկ փուր ձեք:

¹⁴⁵ Ստ. Մալխասյանց, Բացարձակ բառարան, Գ, 1945, էջ 285, 288:
¹⁴⁶ Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1885, т. I, вып. I, էջ 63:
138

Կապով (դարավ) բառի իբրև հեղուկաչափի միավորի ստուգաբանության համար հավանական համարում *kaabb* նախածեղ, որը Մերձավոր Արևելքում գործածական ծավալաչափի միավոր է, հավասար 19,47 կիրգրամի¹⁴⁷:

68. ԿԱՊԵՎՈՐ, ԹԵ՛ ԿԱՊԵՎՈՐ (ԿԱՊԵՎՈՐ)

Բառս հիշատակված է Անիի Առաքելից ևկեղեցու ԶԺԸ (1269) Բ. մի արտոնագրում, որով բաղաբի սաղմաչիները վերացնում են Անիի ջահանանների կամ հոգևորական դասից գանձվող հարկերից մեկը՝ բաժը: Արձանագրության վերջում, անեծքի բանակարգման մեջ պարզ կարգացվում է. շունի ով իշխանություն ձեռ ուզելու, ոչինչ ազգ ով ից էլ, որ կապվելոր լինի, ով այլ խաւով աւէ, կամ աղման աւէլ բաժ ուզելու, : ՅԺԸ : հայրապետացն ցեղով ձե՛ (Գ I 24)¹⁴⁸:

Այս ուշագրավ արձանագրությունը ունեցել է մի բանի ընդօրինակություններ, սակայն նրանցում էական այլընթացություններ չեն նկատվում, միայն կապվելոր բառը վերծանողների մեծ մասը (Սարգիսյան, Գեորգյանց, Ալիշան) ընթերցել է կապվելոր, որ կարող էր առաջանալ բնագրի լ, վ տառանների շփոթումից (կապվելոր-կապվելոր):

4. Բասմաչյանը նույն ստուգաբարը թեև կարգացել է կապվելոր, սակայն բառանշատել՝ կապ է վոր և ցանկում գետեղել կապվել, իբրև նախածեղ (KBA 84, № 68): Անիի արձանագրությունների գիտական վերծանությունների հեղինակ Հ. Օրբելին, ինչպես տեսանք, ընկժող բառը կարգացել է կապվելոր: ՎՊԵՎԱՆԻՍ առաջին պրակում գետեղված է այս արտոնագրի հետակ լուսանկարը, որը հնարավորություն է տալիս ավելի նույնական և ստույգ վերծանելու վիճելի ստուգաբարը: Պարզվում է, որ առկա է կապվելոր բառը, և տարըն-

¹⁴⁷ *Séa* В. Хими, Муеульманские меры., М., 1970, էջ 48:
¹⁴⁸ Չունի որ իշխանություն բաժ ուզելու աշխե ազգ, բաժ այլձ, ու-ն զիտված է շաղկապ, այն-ինչ առկա է ուզելու զերբայ, որը նույն ձևով կրկնված է հաջորդ նախագրության մեջ՝ սկամ աղման աւէլ բաժ ուզելու:

բերցուններն առաջացել են պարզ փորձարկած է գրի փոխարեն է ընկալելուց (Նկ. 23):

Արդ, ինչ է նշանակում տվյալ իրադրություն մեջ կապվոր բա-
որ: Բնագրի հրատարակիչները չեն ասել նրա բացատրությունը.

ՐԱՄԻԱՅԵԱՍ	ԱՄԵ ՏԱԲՉՈՒՅ
ԻՌԻՇԵԱՆՈՒ	ՌԻԲԱՆՈՒՅԵԼ
ՈՒՉՈՒՅԱՍ	ԳՈՒԿԵՆՈՒՅ
ԴԵԱՐՄԵՆՈՒ	ԱՅԱՍԿԻՍ
ԿԱՄԱՆԱՆԱՆ	ԷՐԱՅ . . .
ԱՌՅԵՆՆԵ	ՀԱՅ . . .
ՆՆՈՒՄԻՍԵ	

Նկ. 23

Իր ձևերի տակ եղած՝ ով իցե որ կապել ուզելու ազդեցված վերձանության հիմամբ Թ. Ավդալբեցյանը գեոռնա 1926 թ. աշնար-
կել է տվյալ վկայության մեջ հարկերի կապալի իրադրությունը նըշ-
մարելու մասին¹⁰²: Հիմք ընդունելով այժ բնագրի կապելվոր անիրա-
կան ընթերցումը՝ ավելի հանգամանորեն տեղմինը բնութագրում է պատ-
մարան Շ. ժամկտյանը՝ Անիի երկու արձանագրության մասին իր
հոգովում: Հեղինակն առանց ճշգրտելու ընթերցումը, կապելվորը
համարում է գրական հայերենի կապալատը (=կապալատու, կա-
զավառական ձևը և այդ բաղիմաստի առաջացումը կապում իրա-
նական շրջանի մոնղոլական հարկահավաքման կապալատուական
կարգի հետ, ըստ որի, հարկատու բնակչությունից արբունական դի-
վանի հարկերի գանձումը հաճախ կապալով էին վերցնում բառն-
ձին անհատներ¹⁰³: Մեր օրինակում Անիի հարկահավաք տարվաչի-
ները իրենց արտոնագրի վերջում եղովք են սահմանում երանց,
որքեր հարկերի կապալատու, կապալատը լինեն և նորից գանձեն
իրենց վերացրած բաժը՝ ով իցե, որ կապվոր (=կապալատու, կա-

¹⁰² Թ. Ավդալբեցյան, Հայագրական հետազոտություններ, էջ 393:

¹⁰³ Շ. ժամկտյան, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, հատ. 47, 6, 1955, էջ 110:

կապալատու) լինի և ազման անէ բաժ ուզելու : ՅԺԸ : հայագրագետացն
երված է (Դ 1 24):

Կապվոր (=կապալատը) բառի մեր վերականգնումը հավա-
նական է դարձնում Ավդալբեցյանի և ժամկտյանի կոստումը այդ
տեղմինի բովանդակության մասին:

Այժմ կապվոր տեղմինի բովանդակության մասին: Կապալա-
տու > կապվոր հնչյունափոխությունը շատ սովորական է միջին
հայերենի գրական հուշարձաններում. այսպես, նույն կապալատը
բառը Բենիպոք Անտիոքյանի մկայված է ... մի բողու, որ մեկն
վոր ձևն է կապալն համարում: Բառամիջում շեշտադրով և
ձևաչափորի թուլացումը և սղումը, որ հին գրական հայերենում ան-
սովոր էր և հազվադեպ, միջին հայերենում և վրձական բնագրերում
շատ լայն տարածում ունի և դիտվում է բոլոր դիրքերում, հաճախ
նույնիսկ անկախ շեշտափոխության գործոնից: Հենց նույն ժամա-
նակների Անիի արձանագրություններում հանդիպում են՝ զրակիլոց
(<զրակակարոց), Բագրուս (<Բագրասուս), Քարհաից (<Քար-
հասից), Աշնկի (<Աշնակի), գոշլից (<գոշլաարից), շհասնի
(<շհասանի) և այլն (Դ 1 3, 29, 37, 49, 63):

Ավելի հազվադեպ է, բայց ոչ անսովոր, սառ ամանցի ավոր
գրությունը, որ առաջանում է ւ, վ գրերի և հնչյունների նույնացու-
մից, Օձունի տաճարի ԻԻԳ (1275) թ. արտոնագրում երկիցս վկայ-
ված է վոր ամանցը՝ ձոնավորալից, ձոնավորահակ բառերում, որ
այլ առիթով արդեն նշել ենք: Կուրբանի խաչարձանի ՇԼԵ (1086) թ.
հիշատակագրության մեջ հանդիպում է. Հայոց քաղաքագրերն Կու-
րիկէի (<Կիրիկէի), Քալինի Քրիստափոր հուշարձանախմբի ՆՐ
(953) թ. նվիրագրում՝ և վասն Աշուտու Հայոց քաղաքի (ՄՎ), որ-
տեղ նույնպես արձանագրվում է սառ > ավոր փոփոխություն:

Կապալատու > կապվոր տեղմինի դուրսումը Անիի վրձական
արձանագրություններում ապացուցում է, որ քաղաքի բնակչություն-
նից մոնղոլական արբունիքի հարկերի գանձումը տրվել է կապալ-
տով, և Անիի տաղմաշինները հենց այդ կապալատուները (կապվոր)
կամ կապալատուններն էին, որոնք այն չափերով էին գանձում հար-
կեր, որ երբեմն էլ, առանց իրենց համար զգալի վնասի, կարող էին
բարեգործության անվան տակ դիչել կամ պակասեցնել որոշ տուր-
քեր, ինչպես այդ արված է քննության առարկա արտոնագրում:

Մեզ թվում է, մոնղոլական հարկահավաքման կապալատու-

կան եղանակն է վկայված նաև նույն Անիի ԺԴ դարասկզբի մի արձանագրության մեջ, փորագրված զվաճար դարպասի մուտքի կամարի վերևում. ես գարսոհն հարկն, որ յնտա ի շարաց դրած էր, զբկապալն յնպիսիպոսէն բարձին և յառաջին սահմանս դործուցին (Գ I I): Արդևն նշել ենք (տե՛ս արտահանելի բառահոգվածը), որ այստեղ խոսքը աթոռին վճարվող արտահանելի մասին չէ, ինչպես հասկացել են որոշ պատմաբաններ, այլ Անիի աթոռի վրա մոնղոլների գրած հարկի մասին, որի կապալը կայսկոպոսոց շնորհնում են Անին խասինբու (= արհուհի, տերունի, պետական) դառնալուց հետո նրան կառավարող պատրոններ Գրիգոր աղան և Յովաննէջը:

64. ԿԱՒԱՍ (= ԿԱՎԱՍ)

Այս տառաշարքը 2. Աճառչանք բաղել է Բաղք զավտաի Վահանավանք հուշարձանի վիճակն արձանագրություններից և տեղավորել «Արմատական բառարանում»՝ իբրև միայն այստեղ պահպանված նորահայտ իշխանական տիտղոս¹⁵¹: Շահանդուխտ արքայազուտն արձանագրությունը, որից առնվել է կալաս վկայությունը, փորագրված է 1036 թ. Վահանավանք հուշարձանախմբի նրկհարկ կենդեցու հյուսիսային պատին, ներքուստ, զրևիև անաղարտ է մնացել և քնիբերցվում է հայտնություններ: Սակայն քնագրի այն ընդօրինակությունը, որ հրատարակվել է Կոստանյանցի սվիճակն տարեգրում» (ՎՏ 35, ՂԱՍ 296) և որից բաղված է այս նորահայտ բառը, զգալապես անհարազատ է իրականին, ազգավաղված և անստույգ: Շահանդուխտի այս շինարարական արձանագրության նորագույն, հավաստի վերձանությունից երևում է, որ այստեղ կալաս բառ կամ տիտղոս չի կարգացվում և այն սխալ բառարամանման հետևանք է: Աճառչանքի այդ մասը Ս. Բարխուդարյանի հավաստի վերձանությունները. Ի : ԱՆ : քվալանիս, ես՝ Շահանդուխտ, զուստր Սեսաղաի Ազվանից բազաուրի և ամուսին Գրիգոր բազաուրի, որդո Աշոտկա, վասն ու գալո մեք ի միասին ժառանգ բստ մարմնո, ես և բոյրո իմ Կատայս շինեցաք զՍուրբ Աստուածածինն փոխաբեն գրոց նորա... և այլն (Գ II 138): Այսպիսով, ոչ թե ամու-

սին Գրիգոր բազաուրին, որ է որդի Աշոտի կալասն, ինչպես վկայությունը մեջ է բերված Աճառչանի բառարանում, այլ՝ ամուսին Գրիգոր բազաուրի որդո Աշոտկա, վասն ոչ գալո... և այլն, ոչ թե՛ Աշոտի կալասն, այլ՝ Աշոտկա վասն:

Կալաս բառն անիրական է և տեղ չպետք է ունենա հայերենի բառարանումների շարքում:

65. ԿՈՊԱՐ

Սատևնագրական երկերի սակավաթիվ վկայություններով որոշ է բաղին արտահայտած իմաստը՝ սահման, եզրագիծ, թեև ստուգաբանությունը տակավին անորոշ: ՆՃԲ-ն կոպար բառի ծագումը Վարդանի ռՆաաբումն պատմությունն» եզակի վկայության հիմամբ (չորհրդանիշի քարին նշանակ է կոպարսն) դնում է կոպ արմատից, որպես թե կոպը բացելու կամ աչքի տեսողության սահման, հորիզոն¹⁵²: Երևմիա Մեղրեցին՝ առանց վկայության կամ մեկնության աղբյուրը նշելու, կոպար բացատրում է՝ եզր, գրա, սահման, վերջ, իսկ կոպար = սիճոն¹⁵³:

Սակայն բառիս մեկնությունը զբաղան հայերենի ընձևում սովյաների հիմամբ հազիվ թե նարավոր լինի սպառել համարել: Ժ—ԺԴ դարերի վիճակն արձանագրություններում պահպանված մի բանի հիշատակություններ հնարավոր են դարձնում բառի ստահանման ակունքները որոնել ոչ թե հիև հայերենի բառամթերքում, այլ ժամանակի խոսակցական լեզվի, տեղական բարբառների իրողություններում: Նշելի է, որ ուսումնասիրողները կոպար բառի ստուգաբանության համար սովորաբար իբրև լեզվական ատաղձ են վերցնում նրա՝ զբաղան հուշարձաններում պահպանված վկայությունները կամ արդի խոսվածքներում ավանդվածները՝ անտեսելով վիճակագրության մեջ պահպանված ստույգ հիշատակությունները, որոնք սովյալ զբաղում զգալի հեռաբերություն են ներկայացնում մեր բառաբանության տեսակետից: Դրանցից հնագույնը զբաղանում ենք հյուսիսային Հայաստանի նոր Բերդի Կյուրիկյանների

¹⁵² ՆՃԲ, Ա, էջ 1117:

¹⁵³ Բաղդիրք հայոց արարեալ ի սք էջմածին Երեմիա վարդապետ, 1728, էջ 241, 550:

¹⁵¹ Ը. Աճառչան, Արմ. բառարան, Բ, էջ 561:

պատ, կուպուր գավառական ձևերի այս բացատրությունը, չցեխ կամ ձյունի վրա բացված էնը ճանապարհ, կամ անտառում անցու-
զարձից ամբացած առանետ, կամած¹⁵⁵:

66. ԿՈՐԿՈՏԱՐՈՑ

Կորկոտ բառը բոտ Անառայանի բնիկ հայերեն բոտ է, նշանա-
կում է թեփը հանած և կտրտած ցորեն: Կորկոտ, գարէկորկոտ,
կարկոտապուր ձևերով հնագույնս վիայված է սկաստակոց գրքին
հայերեն թարգմանություն մեջ և Մխիթար Հերացու Եջրմանց մխի-
թարութիւն» բժշկարանում: Նույն բառը զանազան հնչյունական
փոփոխություններով, ձավար նշանակությամբ գործածական է նաև
հայ բարբառների մեծ մասում: Արցախի բարբառում կորկոտ նաև
մտով և կորկոտով պատրաստած կերակուր է նշանակում: Սակայն
բոլոր դեպքերում այդ բառերի հիմքում ընկած է հացահատիկի մը-
շակումից ստացված արտադրանքը՝ կորկոտը կամ ձավարը:

Կարկոտաբոց բառը իբրև կորկոտ արտադրելու կամ ձավար
պատրաստելու ձեռնարկություն (կորկոտ արարոց) գրական ազ-
բյուրներում և արդի կենդանի բարբառներում չի հանդիպում: Այս
բառը բառի միակ հիշատակությունը գտնում ենք Ստեփանավանի
չրքանի պատմական Լոռի բերդ ամրոցի մի նորագույնտ արձանա-
դրություն մեջ, որը փորագրված է բերդի արևմտյան պարսպի հա-
րավային կլոր աշտարակի պատին ազուցված օրրատաշ քարի վրա:
Արձանագրությունը հավանաբար բավականին ընդարձակ է եղել,
սեղավորված մի քանի քարերի վրա, որոնցից մեկ է հասել միայն
մեջտեղինը, իսկ սկզբի և ավարտի քարերը շեն պահպանվել: Մեզ
հասած տառաշարերի վերծանությամբ բնագիրը չի ամբողջանում,
սակայն բառարանության առարկա կարկոտաբոց տառաշարը ըն-
թերցվում է միանգամայն հավաստի և կասկածի տեղիք չի տալիս:
Այս խաթարված արձանագիրը այլուստ հայտնի չէ, ուստի մեզ ենք
բերում պահպանված տառանքները մեր ընդօրինակությամբ. <...ու

¹⁵⁵ Ա. Ամատունի, Հայոց բառարան, էջ 358, 2. Անառայն, Գավառական բա-
ռարան, էջ 593—594:

բողի զկորկոտաբոցի... առոցի՞ն կարպն ճաւազ սարէլ... խաշա-
նանցնէ:

Մի կողմ թողնելով ամբողջ բնագրի վերականգնման խնդիրը,
որ ինքնին շատ կարևոր է Լոռի բերդի բնակիչների կենցաղն ու-
սումնասիրելու տեսակետից, այստեղ ուշադրով է բողի զկարկո-
տաբոցին կարպն կապակցությունը: Ի՞նչ ձեռնարկություն է կոր-
կոտաբոցը: Ինչպես հայտնի է պատմությունից, միջին դարերում
կորկոտ կամ ձավար էր ստացվում կամ ձևերի երկանցով և կամ ջը-
րազացով: Հասկանալի է, որ մեր օրինակում խոսքը կորկոտ ար-
տադրող ջրաղացների մասին է, որոնց կարպը (կապը=աղուե-
վարձ) վերացնում է հեղինակը: Կապալ (կարպ, խապալ, դապալ)
բառը, ինչպես նշել ենք (տե՛ս կապալ բառահոգվածը) արար. փո-
խառություն է և միջնադարում, հատկապես Կիրիկյան շրջանի մա-
տենագրության մեջ, կիրառվում է մի շարք խմատներով՝ տարբ.
վարձ, կապարավարձ, կաշտոբ, կապալով վերցնելը= подряд
(վողարք), նաև՝ հեղուկաշափի միավոր:

Մեր օրինակում՝ կարկոտաբոցի կարպն կապակցության մեջ,
անշուշտ, բառն հանդես է գալիս վարձ, ազացի, ջրաղացի վարձ, ա-
ղուեմավարձ խմատով¹⁵⁶, Իհարկե, լպետք է կարծել, թե գոյություն
են ունեցել կորկոտ կամ ձավար պատրաստող առանձին աղացներ
կամ աղորիքներ, ավելի հավանական է մտածել, թե դրան հարմա-
րացվել են սովորական այլազան-ջրաղացները, ինչպես այդ կա-
տարվում էր մինչև վերջերս:

Լոռի բերդ հրվանդանի հարավային, արևելյան և արևմտյան
կրճերով հստող Չորագետ և Մխիթարան գետակների վրա պետք է
որ հետուցված լինեն բազմաթիվ ջրաղացներ, սակայն հնավայրի
հնագիտական ուսումնասիրությունները և մատենագրական աղը-
յուրները այդ մասին տեղեկություններ չեն տալիս: Սակայն զժվար
է ենթադրել, թե Լոռի նշանավոր բերդ-քաղաքը կարող էր գոյու-
թյուն ունենալ առանց այդպիսի ջրաղացների, մանավանդ Չարար-
յանների տիրապետության շրջանում՝ ժԳ դարի սկզբներին, երբ
Լոռի բերդը հասավ իր ծաղկման ամենաբարձր աստիճանին:

¹⁵⁶ Մանրաման տե՛ս Ք. Ավդալբեյյան, Հայագիտական հետազոտություններ,
Թ, 1969, էջ 392—393:

67. ԿՈՒՆԴՌՈՒՋ ԱՂԻՆ (<ԱՂԱՅԻՆ), ԹԵ՝ ԿՈՒՆԴՌՈՒՋ ԱԶԻՆ

Այս անձանունը վերծանված է նորատուսի Մեկիբ Բարեբենց գերեզմանոցի մի տապանաքարի վրա, որի նույնական ընդօրինակումը տալիս է Ս. Բարխուդարյանը. Ի թվ : Թ : այս : Զ : (1557) ր. ձալով էպիսկոպոսն, որ է որդի Սալի Պարեգին, բա Կունդուզ ազին. այս է հանգիստ Հայնազաբեին (Գ IV 31): Լուսանկարի վրա հատակ չեն երևում Կունդուզ անվանը հետևող գրերը, հասկապես Գ-ն, նախ նոր, ազին ստույգ ընթերցում դժվար է առաջարկել Սակայն Կունտուզ (Կունդուզ, Գունդուզ) աղան բանիցս հիշատակված է նորատուսի և Գանձակի վիճազերեում, պատմական անձնավորություն է, որը կարևոր դեր է խաղացել այդ գյուղերի կյանքում: Կունտուզը հիշատակվում է նաև Ամսոյի չբշանի Բատիկյան դուռդի Ս. Գեորգ եկեղեցում բնկած տապանագրում, որտեղ նա հայտնում է ԶԳԻ (1513) թ. իր հոր՝ Գանձակի առաջնորդ Ազարիայի մահարձանը կանգնելու մասին (Գ IV 84): Արանից փոքր-ինչ անց, հոր մահից հետո Գանձակի գյուղապետ գարձած Կունտուզը նույն եկեղեցու մույթի վրա փորագրել է հազար հաստատություններ գոմ, կալիս իս խցեր բնծայելու մասին (Գ IV 85): 1555 թ. նորատուսի Աստվածածին եկեղեցու հարավային մուտքի մոտ կանգնեցված խաչքարի հիշատակագրում Գունդուզ աղայի որդի Մեկիբ Բարեբը հաջորդում է, որ իր գերդաստանը Գանձակից նորատուս է տեղափոխվել, կառուցել կամուրջը, կանգնեցրել խաչքարեր և բարեկարգել եկեղեցուն շրջակայքը: Ահա այդ բնորոշ համապատասխան հատկությ. ԵՄՄ Մեկիբ Բարեբ, եղբայր իմ Սակիաբուս Բանանէն, որդի իմ Գունդուզ բէկն. հայրն իմ Գունդուզ աղէն, եկի՞նք Գանձակիս, շինեցի՞նք կարմուսն, շինեցի՞նք շրջայպասուն, կանգնեցի զլաչաբուս (Գ IV 15): Եվ վերջապես, նորատուսի Մեկիբ Բարեբենց գերեզմանոցում գեղաքանդակ խաչքար է կանգնեցված, որի անթվական տապանագրում ասվում է. Սուրբ խաչս բարկաստ Կունտուզին (Գ IV 16), անշուշտ, սա նույն ինքը Մեկիբ Բարեբի հայր, Գանձակի առաջնորդ Կունտուզ աղան է, որ, ինչպես տեսանք, Գանձակից նորատուս էր տեղափոխվել իր գերդաստանով, վախճանվել և թաղվել այստեղ:

Կունտուզ աղայի մասին հիշյալ վկայությունները հավաստի վերծանող Ս. Բարխուդարյանն, անշուշտ, քաջատեղյակ է Գեղարքունիքի մեկիբների և հատկապես Կունտուզ աղայի և նրա հետնորդ-

ների տոհմագրությունը, սակայն մեզ անհայտ պատճառներով հրաքարվոր չի համարել այս բնագրում հիշատակված Կունդուզ ազին սրբազրել Կունդուզ ազին (<աղային) և նրան նույնացնել մեզ ծանոթ Կունտուզ աղայի հետ: Ավելին, ինչորո առարկա տապանագրի բացատրականում վերծանողն առարկում է այդ նույնացման դեմ այն պատճառաբանությամբ, որ ազին չի կարող լինել ազին, այլ իմաստ է արտահայտում, և նույն ձևով կրկնված է նաև հաջորդ տապանագրում՝ այս է հանգիստ Ազի պէկին (Գ IV 31):

Բայց այս առարկությունը չի հիմնավորված. նախ՝ Ազի պէկին և Կունտուզ ազին ձևերն ազին(ն) նույն նշանակությունը չի արտահայտում, և ինչպես ասացինք, երկու դեպքում էլ զոհացուցիչ մեկնություն չունի. ապա այս վերջին տապանագրում հանդուցյալի անունը սխալ է վերծանված (սակ ցձարի ընդօրինակությունը—Գ IV 31), այստեղ հարկ էր կարգավ ոչ թե Ազի պէկին, այլ Աջիպէկին (<Հաջիբէկ)¹⁵⁷:

Որ Կունդուզ ազին նույն Կունտուզ աղան է, Գանձակ գյուղի տառչնորդ և Տաթևի վանքի 1513 թ. հայտնի փաստաթղթի տակ, ի շարս Գեղարքունիքի մեկիբների ու տանուտերների, իր ստորագրությունը դրած Կունտուզ Գանձակեցին, անտարբիւի հաստատում է հենց ինքը՝ Ս. Բարխուդարյանը իր՝ «Գեղարքունիքի մեկիբներն ու տանուտերները բաժ Տաթևի վանքի մի փաստաթղթի» ուսումնասիրության մեջ: Այստեղ մեջ է բերված Կունտուզ Ազարեանցի տոհմածառը, բաժ որի, վերջինիս որդիներն են Ստեփանոս քահանան և հետագայում մեկիբ գարձած Բարեբը, սրա որդիները՝ Գունդուզ բեկը, Մեկուբը և Զալալը հայկակոպոսը՝ մեր բնության առարկա տապանագրի հեղինակը¹⁵⁸:

Այսպիսով, մեջ բերածներից ակներև է, որ խնդրո առարկա տապանագրում անհրաժեշտ է Կունդուզ ազին փոխարեն, որ անհամատ է, վերականգնել Կունդուզ ազին (<աղային), քանի որ վերջինս պատմական անձ է, Գանձակի (այժմյան Բատիկյան գյուղ) առաջնորդը, որի որդին է այլ բնագրերից հայտնի Մեկիբ Բարեբը (= Պարեբ), հոր մահից հետո նորատուսի առաջնորդը, իսկ թողը՝ մեր

157 ՏԿ՝ ա Շբ. Անտայան, Հայ. անձն. բառարան, Գ, էջ 605:

158 «Բաների Մասնակագրանք», 1967, N 8, էջ 223:

արձանագրության մեջ հիշատակված ճալալ (= Ջալալ) եղիսկուպուր:

68. ԿՈՒՇՏ (> ԿՇՏԻ, ԽԱՆԻԿՇՏԻ)

Գրական վկայությունների հիմամբ պարզված են բառի բուրբայությունները՝ փար, կող, հագնեցած, լավ, շատ, սաստիկ, խոսուչ և իմաստները¹⁵⁹: Հայ բարբառներում գործուն են այս իմաստներից երկուսը՝ կողը, կողքին (մտու) և հագնեցած, կշտացած¹⁶⁰: Միջին դարերի վիճական արձանագրություններում կուշտ-ը հագնեցած, կշտագրերում երկու սեռում հանդիպում է կշտի (< կուշտ) բառը, սակայն ոչ ինքնուրույն գործածությամբ, այլ բարդության երկրորդ եղբոր՝ արտահայտելով հանգամանի անուն, տեղանուն: Մեջ ենք բերում բառի հիշատակությամբ նախադասությունը ն. Սարգիսյանի վերծանությունը. Ի ՈՒԿ (1174) բուխ հայոց, ես՝ նուստու Պետուս երեց և իմ եղբարորդիս՝ Ջագատ, Յուսիկս և Սիմեոն տուտ գմբ հայրենի այգին, որ ի Փարսի, որ կուշի եանիկշտե, ի Սուրբ եկեղեցիս Հոռոմսի... (ՍԱՐ 148)¹⁶¹:

Այս իրագրության մեջ եանիկշտե, անշուշտ, այն դաշտամասն անունն է, որտեղ գտնվել է նվիրված այգին, ըստ որում, այն պետք է դիտել իբրև հարադիր բարդություն՝ կազմված խան = իշան, օրեվան (սեռ. խանի) և կուշտ = մուր, կողքին (սեռ. — կշտի) բառերից: Թվում է տվյալ օրինակում անհնար է խանիկշտե սոսկ կապակցել հարաբերություն համարել՝ խանի կշտի (խանի մտաի այգի), ինչն այդ կազմությանը տեղանույնը ևս նույն ձևով պետք է առաջնաբար: Հավանաբար վանքին նվիրվող այգին գտնվելիս է եղել խանի (իշան, օրևան, կարավանատուն) շինության կամ նրա ավել-

¹⁵⁹ 2. Անույան, Արմ. բառարան, Թ. էջ 660:

¹⁶⁰ 2. Անույան, Հայ. զավթական բառարան, էջ 464, Ս. Ամատունի, Հայոց բառարան, էջ 274:

¹⁶¹ Ս. Մխիթարեան, Փատմութիւն Հոռոմսի... Վաղդաս, 1870, էջ 41: Մխիթարյանը Սարգիսյանի վերծանած Ջագատ կորցրել է Չագար, մեզ ավելի ճակատական է թվում նմիբառուի երրորդերկրի անունների վերծանելը՝ «...և իմ եղբարորդիս՝ Ջագս և Յուսիկս և Սիմեոն...»:

րակների մերձակցում, և նրա տեղագրությունը բնութագրվել է վերջինների անունով՝ խանի մտաի, խանի կշտի այգին, որը հետագայում գիտակցվել է իբրև միասնական բարդություն՝ տեղանուն, Փարսիի գյուղի դաշտամաս:

Փարսիի նույն այգու մյուս հիշատակությունը, որ փորագրված է Հուստոսի վանքի մոտավորապես նույն ժամանակների մի այլ նվիրագրում, զայնս է հաստատելու՝ մեր առածները. ես՝ Սարգիս կրանատուր գեներգ հող ի Փարսի և հայր Մխիթար միաբանուր այգի արկին և ի եանիկշտի մեծ այգին բորեցցալ (ՍԱՐ 149, ՂԱՇ 229): Անհերև է, որ այս բնագրում արդեն եանիկշտի ինքնուրույն բառաբարդություն է՝ տեղանուն, դաշտամասի անուն և ոչ թե խանի և կշտի բառերի կապակցությունը, քանի որ կիրառված է ի նախորդում (ի եանիկշտի):

Մեր բառաբանության տեսակետից ուշագրավն այն է, որ կշտի, կշտին (կողքին, մուր) անիսկական կապը տվյալ ժամանակաշրջանի (1174 թ.) խոսակցական լեզվում արտահայտել է մտ, բով, մեծ իմաստները և հավանաբար ունեցել է կիրառության լայն շրջաններ, որի ակնառու վկայությունը հենց եանիկշտի տեղանվան դրությունն է վիճագրության մեջ, որ անշուշտ ներթափանցված է տեղական խոսվածքներից:

69. ԿՏԱՆ, ԹԵ՛ ԿԵՐՏԱՆ

Այս երկրային բայածը վերծանված է Վաղազնի վանքի Ս. Կարապետ եկեղեցու հյուսիսային պատին փորագրված 226 (1326) թ. արձանագրում. «Ես՝ տեր Սահափառու Արարչեան, որդի Ջալալին, արհեստակոպոս տանն Սիսական եկի ի մեր հայրենի տունս ի վանս Վաղազնու և տեսի զհիւրանոցն զոր կերտեալ էր հայր մեր Սարգիս...» և այլն (Դ II 101): Քարի վրա 2-րդ շարքում փորագրված է կտեալ էր, վերծանողները հետևելով Ալիշանին (ՂԱՍ 525), եղած զրեթիկ ավելացրել են եր զրեթը և վերականգնել կերտեալ էր բայածը, որը լիովին համապատասխանում է վկայված կապակցությանը՝ «տեսի զհիւրանոցն զոր կերտեալ էր հայր Սարգիս»:

Սակայն տվյալ բայածնում եր զրեթի ավելացումը ոչ մի շահով չի պատճառարանված, քանի որ այդ մասում շարգված կամ եղծված

տաւեր շինեմ, և ամբողջ արձանագրութիւնը գրեթէ անազարտ է հասել մեզ: Մնում է ենթադրել, որ գրիչը փորագրելիս մոռացել է եր գրերը և կերտելի-ի փոխարեն փորագրել կտեայ: Մեզ անհավանական է թվում այստեղ փորագրողի լրիպում գիտել, բայտ որում ամբողջ բնագիրը, չնայած կցագրերի առատութեանը, փորագրված է շատ կանոնավոր ու հստակ, համեմատյն դիպս ավելորդ կամ բաց թողնված գրեր չեն նկատվում:

Առաջարկում ենք հիմք դնելու ենլ կտեայ էր ընթերցումը, այս-սինքն տաւց եր գրերի կերակւնեւման, և այդ ղեպում կունե-նանք կտեմ բայի անցյալ դերբայը՝ կտեայ, որ նշանակում է ւղա-վորել, տեղավորել, տեղադրել¹⁶²: Ուրեմն բնագրի՝ զենութեանցն գոր-կտեայ էր հայր Սարգիս նախագաւտութիւնը պետք է հասկանայ՝ այն հյորանոցը, որ աղավորել (նախատեսել), տեղադրել էր հայր Սար-գիսը: Տվյալ կապակցութեան մեջ կտեայ էր ավելի է համապատաս-խանում բնագրի բովանդակութեանը, բան կերտել էր, բանի որ կերտեմ բայը գրաբարում ավելի հաճախ գործածվում է Քերթլ, Կերթղ, Կերթում իմաստներով, մինչդեռ կառուցել, շինել նշա-նակութեամբ հազվագիպ է կիրառվում:

70. «ՀԱԿ» ԲԱՌՈՎ ԲԱՐՈՂՈՅՈՒՆՆԵՐ (ԳԼԽԱՀԱԿ, ՀԱՐՍՆԷ-ՀԱԿ = ՀԱՐՍԱՆԷՀԱԿ, ՉԵՌՆԱՒՈՐԱՀԱԿ, ԱՄԻՐԱՀԱԿ, ԴԵՄԷ-ՔԱՐԱՀԱԿ, ՇԱՀՆԱՀԱԿ)

Հակ-ը իբրև հարկ, տուրք բանի համանիշ բազմաթիվ զվառու-թյունների ունի Ժ—ԺԳ դարերի վիճագրական հուշարձաններում, առանձին, ինքնուրույն գործածութեամբ կամ ավելի հաճախ բարդու-թյան երկրորդ եղումը՝ այս դեպքում արտահայտելով հարկերի կամ տուրքերի այլևայլ տեսակներ, նախք քն ինչ իմաստ է արտահայտ-ում առաջին բաղադրիչը: Բառիս ծագումը հայագիտները ղնում են արաբ. հաջ արմատից, որ նշանակում է իրավունք, վարձ, հետևա-բար նաև հարկ, տուրք¹⁶³: Միջին դարերի գրական հուշարձաններում՝

¹⁶² ՆԷՐ, Ա, էջ 1131:

¹⁶³ Ըր. Անտոյան, Արմ. բառարան, Ա, էջ 149, J. Karst, Sempadscher Ko-
dex, էջ 12, նույնի՝ Wörterbuch des Mittelarmenienschen, Մատենագրա-
նում պահպան ձևագիր, հատ բառի տակ:

հակ-հակ բար մի բանի հիշատակություններ ունի, սակայն ոչ հարկ, տուրք կամ իրավունք, վարձ իմաստներով, այլ՝ իբրև բնալ կապոց, ծանոց, բնոճանակ, որ առաջանում է հին հայերենի հակ= հակառակ արմատից՝ իմաստի նեղացումով, իբրև գրաստի երկու հակառակ կողմերին ուղիված բռնան կապոցների (հմտ. «Անասուն մի բռնակիր բարձեայ գրեմ յինքն մէկ հակն մահագղը, եւ մէկն՝ սու-սեր սպանման») ¹⁶⁴:

Հակ բառը իրավունք, վարձ, պահանջ իմաստով միայն մեկ անգամ հիշատակված է Լաւրճաւանքի ԺԳ դարասկզբի մի նվի-րատվական արձանագրութեան մեջ, որ, հրատարակված շինելով, անձանոթ է գրատեանք. «Ես՝ Դիզոր միաբանեսցա ի սր սվասս, ուր մեհանեմ, զիմ հակն կտարտեն անպատեա, ով յինի...ս (ՄՀ): Այստեղ հակ-ը, տուրք, հարկ չի արտահայտում, այլ՝ մատուցված նվերների դիմաց նվիրատուն խոստացած հատուցում, վարձ, պարտավորություն, որ հավանաբար առաջանում է հաջ = վարձ, իրավունք իմաստից:

Այլ վիճագրերում առանձին հիշատակված հակ-ը համանիշ է հարկ բառին և գործածվում է նրա հետ ղուգահետ, երբեմն միեմույն արձանագրութեան մեջ հանդիպում է երկու ձևն էլ, իսկ հաճախ էլ հակ-ը կիրառվում է հարկային մյուս անվանումների հետ: Այսպես, վայոց ձորի Ամաղուի նորավանքի ԶԻԳ (1275) թվականի հայտնի արտոնագիր-կալվածագրում Տարաշիք Օրբիլյանը հետևելով կերպ է սահմանում Լալիձոր գյուղի հարկային վիճակը. «ղշալիձորը իսկն սահմանէջար ի տարուն վացուն սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց...» (Դ III 235): Կամ նորատուրի Աստվածածին եկեղեցու ԺԳ դ. արձանագրութիւններից մեկում գյուղի ղեմեթա-րը (գյուղացուհե, առանպետ) սահմանում է. «Ժ վիբ կալար Եւագին արեւել համար ոչ գրքին տան հակ, ոչ շափողին (ՄՀ) ¹⁶⁵, Ակներե է:

¹⁶⁴ Ըր. Անտոյան, Արմ. բառարան, Գ, էջ 30, ՆԷՐ, Բ, էջ 4:

¹⁶⁵ Նորատուրի այս կտրետը վաղիկագիրը վերջերս ղետականորեն հրատարակ-վեց Երվանդի հեթոտիակ պրակում Ս. Բարխուդարյանի վերծանութեամբ, որը, հակառակ սպասածի, իստպականվոր ու աղավաղված է: Ոչ էական սլլընթեր-ւածները գաեց անելով, հարկ ենք համարում նշել՝ ոչ գրքին տան հակ, ոչ շափ-ողին նախադասութեան այլադիտումները՝ Բ2 (680) գրքին տան, հակ ոչ: ԳԱ: Վաղին, բայտ այստ, ոչ միտակահի փոխարեն կարգացվել է Բ2 = 680 թվել, իսկ հակ ոչ բաւերք սեշատվել են նախորդ կապակցութեանց, մի բան, որ անիմաստ է գոր-ձքել ամբողջ բնագիրը (Գ IV 12):

որ այս արտոնագրերում հակ-ը առանձին հարկի նշանակություն չունի, այլ արտահայտում է հարկի, տուրքի բնղանուր իմաստ (գՀախժորոյ հակն, ոչ գորին տան հակ):

Սակայն ժ—ժԻ դարերի վիճական արձանագրություններում ավելի մեծաթիվ են այն դեպքերը, երբ հակ բառը վկայված է իրրև որոշյալ՝ գոյականով արտահայտված որոշիչ հետ, և այս դեպքում ամբողջ կապակցությունը ցույց է տալիս տվյալ հարկի կամ տուրքի բովանդակությունը, նրա տեսակը կամ ում օգտին գանձվելը: Այդպիսի կապակցություններից նշելի են.

Ա. Բամբակի (բնագրում՝ բարակի) հակ—Գարգացվում է Հոփի-սիմնի տանարի հարավային ավանդատան պատին փորագրված Չեծ (1296) թվականի արտոնագրում, որով տեղի իշխանավորները վերացնում են վանքից տանվող բամբակի հարկը. «...բողոք գՀը-սիփսիմոց գրարակին շարխան և զաճնախն բարակի հակն», այսինքն վերացվել է վանքից գանձվող հողային արդյունավճար՝ բամբակի շարխաթը. ինչպես նաև հարկահավաք պաշտոնյայի՝ շահնայի օգտին հավաքվող բամբակի լրացուցիչ հարկը, հասույ-թը:

Այս վերջին կապակցությունը՝ զաճնախն բարակի հակն, տարակարծությունների տեղիք է տվել որոշ ուսումնասիրողներին մոտ. պրոֆ. Ս. Պողոսյանը և Խ. Ավետիսյանը, օրինակ, տվյալ կապակցության մեջ հակ-ը հասկանում են ոչ թե հարկի կամ տուրքի իմաստով, այլ՝ իբրև բամբակի հակ, կապոց, փաթեթ, որոչ կշտային միավոր, այսինքն բամբակի բանակություն, որ մասհանվում էր շահնային, բայտ որում վերբերին Խ. Ավետիսյանը առանց որևէ հիմ-քի բողոքապետ և համարում: Պրոֆ. Ս. Պողոսյանը հենց այդպես էլ գրում է. «Հակը մի որոշ շափ է եղել, բայց թե ինչքան քաշ է ունեցել, հայտնի չէ»¹⁶⁶, Մենք շինք տալիս այս վարկածի հերքումը, քանի որ հետագա շարադրանքը, որտեղ հակը հիշատակվում է այնպիսի վճարումների հետ, որոնք կշռով կամ փաթեթով չեն արտահայտվում (գլխաճակ, հառաճնճակ, բալախաճակ և այլն), լավագույնս սպացուցում է այդ մեկնաբանության անիրական լինելը:

¹⁶⁶ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը..., էջ 22, և Ավետիսյան, Բամբակագրության զարգացումը Հայաստանում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին, սելյուկեր Հայաստանի գյուղատնտ. և գյուղացիության պատմության, Երևան, 1964, էջ 194.

Բ. Ջրի հակ—Գանձվում էր ձիթատու բույսերի ցանրերի տե-րրից: Ջրի հակ հարկային տերմինի առաջին վկայությունը գրա-նում ենք Մրենի տաճարի հարավային պատին 24Թ (1320) թ. փո-րագրված մի արտոնագրում, որով հարկահան պաշտոնյաներ Խա-նիկ ամիրան և Ատաշ ձեռնադրը նրի հակը (ձնրի հարկ) նվիրում են եկեղեցուն: Արձանագրությունը մինչև վերջերս գիտությունը հայտնի էր Ն. Մառի եղպի ընդօրինակությամբ, որ մանրամասն մեկնություններով հրատարակվել է 1893 թ. Ենր նյութեր Հայ վի-ճառության շարքում. «Ե պարտնութեն Սարգսի և էվանիստունին ևսն Ակոբայ և ի հայրապետութեան ի տէր Վարդանայ, ևս՝ Խա-նիկս իմ ամիրութեան և Ատաշին ձեռնադրութեան զայս արձան հաստատեցաք ու զձթիհանն եկեղեցոյս ընծայ տվար մեր հողոյս համար...»¹⁶⁷:

Բնագրի հնչյունական ու լեզվական անհետևողականություննե-րի շարքում Մառը մատնացույց է անում նաև զձթիհանն բառը, որը նրա կարծիքով արտացոլում է զձիթախանն գրական ձևի օղողվողա-կան արտասանությունը, ըստ որում հեղինակի վերծանությունից ստացվում է, որ Մրենի վարչական և հարկային պաշտոնյաները վանական կենտրոնին ընծայել են մի ձիթահանք: Նկատի ունենա-լով միջին դարերի նվիրատվական վիճաքերի և արտոնագրերի համեմատն զեպքեր՝ հարկագրված ենք որոշ վերապահումով ըն-դունել Մառի զձիթիհանն բնթիբցումը, քանի որ բնագրում իբրև նը-վիրատուների հանդես են գալիս վարչական կամ հարկահան պաշ-տոնյաներ (Խան, ամիրա, ձեռնադր), որոնք հազրվ թե որևէ ու-նեցվածք ընծային վանքին, ավելի հավանական է և սովորական, որ նվիրատվության նպատակով նրանք զիջեին կամ թեթևացնեին հոգևոր կենտրոնի հարկերը, տուրքերը կամ վանքերին ընծայեին բնակչությանից հավաքվող որոշ հարկեր, որոչ ժամանակաշրջա-նում Բարբեբախտաբար, Հայաստանի պատմության թանգարանում պահպանվում է Մրենի այս արձանագրության սեպագիրին, որ հնարավոր է դարձնում ավելի հավաստի վերծանել բնութանի ևն-թախա տառաշարքը: Այստեղ պարզ կարոցցվում է. «...ու զձրի հակն եկեղեցոյս ընծայ տվար...», բայտ այդմ, վերականգնվում է

¹⁶⁷ Տե՛ս Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893, էջ 88—89.

ձրի հակ (=ձերքի հարկ) տերմինի միակ վկայությունը: Բացի դե-
րանից, Մատի զձերհանն ընթերցումը անհավանական է նաև բա-
ռակազմական առումով: ձիրքանե՛ք, ձեր հանելու հաստատություն
նշանակելու դեպքում պետք է ունենալինք բառաբարդություն ա հո-
ղակապով՝ ձերք>ձիրք+ա+հանք, կամ՝ ձերք՝ձերք+հանք, մինչ-
դեռ իրականում, բարի վրա առկա է որոշչի և որոշչալի կապակցու-
թյուն՝ ձրի հակն =ձերքի հարկն¹⁶⁵:

Միջին դարերում ձիրքատու բուշաների ցանքերի տերերից առ-
նըվող ձերքի հատուկ հարկի՝ ձիրքահարկի գոյությունը հաստատվում է
նաև Մարմնախի մատուռի հյուսիսային պատին փորագրված Բե-
ստառ իշխանի հետևյալ արտահայտությամբ՝ «Չեմ կամալն աստուռոյ,
Բեստալն հրամանան արձանագիր եղի, որ զՁիրքին հարկն ի
Սուրբ Աստուածածինն տան անբարե...»¹⁶⁹:

Գ. Ձիրքահանաց հակ (ձիրքահանքի հարկ)—Միայն մեկ անգամ
հիշատակվում է Հովհաննիսյանքի ՊԱ (1352) ք. արձանագրության
մեջ. «Մեր՝ Յոհաննայվանից միայրանք տվքք ձիրքայհանաց հակ է
կէս լիտր ձէթ Սուրբ Կարապետի» (ԿՂՀ 81):

Դ. Աշխարի հակ (ոշխարի հարկ)—Միայն մեկ անգամ հանդի-
պում է Մրինի տաճարի հնագույն, անթվակիր արտոնագրերից մե-
կում: Համապատասխան հատվածը մեջ ենք բերում Հ. Օրբելու
«Մրենի արձանագրությունները» ժողովածուից. «Եւ ես Յովանէս
շահանշահ հաստատեալ եմ զիմ հարանցն հրամանքս որ չկարէ որ ի
Մրենոյ ոշխարէ ոչինչ հակ առու...» (ՀՀ 41): Արձանագրության ժա-
մանակագրական սահմանները որոշվում են Հովհաննես-Սմբատ թա-
ղապարի դահակալության տարիներով՝ 1020—1042 թթ. քառ յոգ՝,
այստեղ գործ ունենք հակ տերմինի նախնադույն վկայության հետ:

¹⁶⁵ Կորիս Երևանի պետական համալսարանի լույս բնծայած «Հայագիտական հետազոտություններ» ժողովածուում հրատարակվեց Հ. Օրբելու «Մրենի արձանագրությունները» շարքը, որտեղ Մրենի այս արտոնագիրը բնիվող տերմինի մասում ալեկի առաջ է ներկայացված, քառ այսմ, զձիրքահանն բառի փոխարեն Օրբելին ունի գծիրակել: Արձանագրության մյուս տերմինների ու անձնանունների վերաբերությունը, հատկապես բառաշարումը զգալի շարժով չեղված է Մառի վե-
րականգնած բնագրից և առարկությունների տեղիք է տալիս (անհայտաբանական հետազոտություններ, Ե, 1974, էջ 32—38, այստեղ՝ նաև բառաևորգծում):

¹⁶⁹ Ավրյան, Այբարատ, էջ 61, գլխիքին հարկն սխումամբ պիտված է իբրև հա-
տուկ անուն:

որ կողմնակից ապացույց է, թե բառս չի կարող ուշգրտորենից կամ
չազգայնալիքներից փոխառված լինել, ինչպես կարծում են տմարք:

Կարևոր է նշել, որ Մրենի տաճարի նույն ժամանակների այլ
արտոնագրերում ոշխարի հակ հարկային տերմինի փոխարեն նույն
իրարաբխան մեջ հիշատակվում են ոշխարի հաս կամ ոշխարի հաս
ևս չափ կապակցությունները, որոնք հավանաբար նույնական են
իրենց բովանդակությամբ: Ահա այդ հատվածները Հ. Օրբելու հիշ-
գույնով եմ զՄրենոյ զոշխարի հասն», կամ՝ «Այս իմ հրամանք են
Յովանէսի շահանշահի, ազատել եմ զՄրենոյ զոշխարի հասն եւ
չափն...» (ՀՀ 41):

Հակ բառը հարկ, հատույք, տուրք ընդհանուր նշանակությամբ
հանդես է գալիս մի շարք հարկային տերմինների մեջ ոչ թե առան-
ձին, ինքուրույն կիրառությամբ, այլ իբրև բաղադրյալ երկրորդ
բաղադրիչ: Այդպիսի բաղադրյալ հարկային բառերի վկայություն-
ները վիճակն արձանագրություններում նախկինում բեղորինակ-
վել ու հրատարակվել են զգալի անճշտություններով, հաճախ էլ ան-
վերծանելի համարվելով, չեն բեղորինակվել և մնացել են անհայ-
տության մեջ: Այստեղ ներկայացնում ենք այդ տերմինների հի-
շատակությունները՝ անհրաժեշտ շտուկներով և մեկնաբանու-
թյուններով:

1. Հակ բառով բաղադրություններ, որոնց առաջին բաղադրիչը
հայերեն բառ է:

Ա. Գլխահակ — Կաղված է գլուխ և հակ բառերից, գլխահարկ
(գլխի հարկ) իմաստով: Օձուռի տաճարի ՉԻԿ (1275) թվականի մի
արտոնագրում երկու անգամ նույն գրությունը վկայված է այս բա-
ռով՝ իբրև խոշոր եղջերավոր անասունների գլխահարկի համեմատ
զանձվող հարկ, որ ինչպես հայտնի է, արևմտյան Շիրակի վիճա-
կան արձանագրություններում վկայված է զեգին ևս զվզիմ համը-
բել կամ համարել անվան տակ (Անի, Շիրակական), իսկ Բշեիքի
ԺԳ զարի մի արձանագրության մեջ՝ իբրև կոպլախամար: Օձուռի
տաճարի շատ կողմերով ուշադրով այս արձանագրությունը զգալի
շափով եղծված է, դժվար է վերծանվում, և այդ պատճառով Ս. Զա-
լալյանցի միակ բնագրից վերծանվում ենք իբրև կոպլախամար: Զա-
վաղված (ՄՋձԱ 91), ուստի մեջ ենք բերում բնագրի հիմնական մա-
սը մեր վերծանությունը, որ ստուգվում է լուսանկարով. «ԹՎին ՉԻԿ,

պեմք է վճարելին տեղական վարչական իշխանություններին, ամուսնության իրավունք ստանալու համար: Մատենագրական աղբյուրներում հարսնամաքի մասին հիշատակություններ չեն սփռվել¹⁷²:

Վիճադրական հուշարձաններում այս հարկը մինչև վերջերս հայտնի էր Բջնիի 1325 թ. մի արձանագրությունից, որով Սահիբ Կիվանի և Խոշարի որդի, ավարիկ Ավագի թոռ Զարթրիան, այլ հարկերի ու պարտությունների թվում, գրեում է՝ զհարսնակալը: Ահա այդ արտոնագրի համապատասխան հատվածը. «Ե վեր կայս, որ ի Բջնի այլ մարդոյ տիրութիւն չէլնի. և թողի դամեն հարկ. դամիրահակն, զհարսնակալ, զկովայհամարն, զկալայթաղարն, զսայլին սպիտակն, զմահկանէն...»:

Մի քանի տարի առաջ Գև Շնագրատության և ազգագրության ինստիտուտի վիճադրական արշավախումբը հայտնաբերեց և վերծանեց այդ հարկի մի նոր վկայություն, որը փորագրված է Անիի շրջանի Բարձրաշեն գյուղում կանգնած հին եկեղեցու հյուսիսային պատին: Բնագիրը մասամբ եղծված, խաթարված է և սպառիչ վերականգնման չի ենթարկվում, սակայն զհարսնակալ տերմինը ընթերցվում է հավաստի կերպով և կասկածի տեղիք չի տալիս: Ահա այդ կարևոր բնագրի մեջ հետաքրքրող հատվածը մեր վերծանությունը. «Եւ ամիրայասարար Զարթրիան... թողի զհարսնակալ ին զշարիատ վանն յերկար կենդանութեան պատրուսաց մերոց...» (նկ. 26):

Մեկնարանելով Բջնիի հարսնակալ և Բարձրաշենի հարսնակալ տերմինները, Ս. Բարխուդարյանը վերջերս հրատարակած մեղծանոթ հոդվածում այն համոզմանն է հանգում, որ դրանցից առաջինը՝ հարսնակալ-ը հարսանյաց, հարսանիքի, պսակի թույլաբ-

վություն հարկն է, որ վճարվում էր տեղական վարչական իշխանությունը, մինչդեռ Բարձրաշենի հարսնակալ-ը հարսանիքի հարկ չէ, այլ «եշանակում է հարսի հարկ»: Ավելի առաջ տանելով այս միտքը, Հեղինակը հարսնակալը կամ հարսի հարկը համարում է «հայոց

ԵԱՄՍԴԱՄԱՄԻ
ԵՁԱՂԻԶԻՄԱՐԴՈՂԿ ԽԼ Խ ՍԱԳԻ
ԽԱՆԶԵՄԲԱՆՈՐ ՀԱՌՄՈՒՄ ԶԻԿ
ԱԿԶՆՐԱՆԵՍԿԵԿԻ ԻՆՍՍՏԱՆ ԶԵՄԻՆՍ
ՅԵՐԱԿԱՆԵՄԻՆՈՒԴԱՄԱՐՈՒՄ ՏԱՆԵՐՅԵԿ
ԻՅ ԵՆԵՍԱԿԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍՆԱԿ ՅՅՈՒՂԻԵԿԱՆԵՆԵՂՈՎՅԱԿԻ
ՅՆ ԵՌՄԲ ՍԱՄԱՄՈՂԻՄԱՆԵՐՅԱՅԵՅ

Ա. 26

մեջ երբեմն գոյություն ունեցած առաջին գիշերվա իրավունքը, որ հետագայում փոխարինվել է նյութական այլ բարեբերով կամ զբրտած է հաստատուն տուրքի բնույթ ստացել»¹⁷³:

Հարսնակալ, հարսնակալ տերմինների այս մեկնարանությունը այնքան էլ համոզիչ չէ: Նախ բարդության բառակազմության մասին. հարսն բառը բաղադրյալ կազմությունների մեջ կարող է ձևանգն գալ երկու ձևով՝ հարսն ու հարսան, ըստ այդմ, հանախ արտահայտելով երկու իմաստ՝ Կ՝ հարսին վերաբերող՝ հարսակալ, և՛ հարսանիքին վերաբերող՝ հարսանկալ: Այսպես, հարսն, հարս, հարսներով ունենք՝ հարսնուրիւն, հարսնուրիւ, հարսան, քայց նաև՝ հարսնիւ, հարսնավիւ, հարսնալօջ, հարսնետուն, հարսնատուն (= տուն հարսանեաց), որանդ հարս, հարսն արտահայտում են ոչ թե հարսին վերաբերող, հարսնակալ, այլ հարսանիքին վերաբերող՝ հարսանկալ¹⁷⁴: Նույն ձևով էլ հարսնակալ-ը կարող էր ունենալ թե՛ հարսի հարկի և թե՛ հարսանիքի հարկի իմաստ, այսինքն նույնանալ հարսանկալի հետ: Մյուս կողմից, հարսանկալ > հարսնակալ կարող էր առաջանալ առանց իմաստային տարբերակման,

¹⁷² Հավանաբար նույն հարսնամաքի (հարսնակալ, հարսանկալ) տարածապահ է վկայված ժն գրքի ձեռագրում հիշատակված «զազգչեան յազգեան որ գիշել է Մոթի գյուղի սես Ստեփանոսը: Ահա տվյալ վավերագրի համապատասխան հատվածը. «ՏԵՐԽՈՒՍՈՍ ՍԱՍՏՈՒԾ ԱՐՇՆԷՂ ԳՐՈՍԵ ՍՏԵՓԱՆՈՍԵ ԵՎ ԳԻՐ ՈՐԳԻՔԵ, ՈՐ ՉՈՐԻՐԻՏԵՑԱՅ ԳԵՂԻՍ ՍԹՅԱՆ, ԵՆ ԵՐՈՎ ԳԱՅՐԿԱՆ յազգիս: Իրողությունը գիտող սկզբ. Է. Ս. Խաչիկյանն այն կարծիքն է հայտնում, որ «ազգչեան յազգեան (=ազգչա հարկ) տերմինի տակ պետք է հասկանալ գյուղաց առջին ամուսնացնելու ժամանակ սեպի տրվող տուրքը» (ՏԵՄ Լ Խաչիկյան, XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին, ՊԲԶ, 1958, № 1, էջ 125, 132):

¹⁷³ ՏԵՄ Ս. Բարխուդարյան, նշվ. հոդվածը, էջ 90—91.
¹⁷⁴ ՏԵՄ Շ. Անադյան, Արմ. բառարան, Գ, 1930, էջ 193—195. Ստ. Մալխասյան, Բացատրական բառարան, Գ, էջ 44, 72:

սուկ հնչյունափոխությանը, այն է՝ ա ձայնավորի սղումով կամ ք-ի վերածվելով նախաշարս դիրքում, որ բարբառային արասանու-
թյան ազդեցությամբ օրինաչափորեն դիտվում է միջին դարերի Հի-
մալական բնագրերի և ձևագրերի հիշատակարաններում (համա-
նպարսան՝ Ապրեույ, տեսակ՝ տեղիով, Բաբեա՛ւ > Բաբեա՛րն, Բազա՛րդաշտ > Փաղճոզաշի և այլն (Գ 1 58, 63), բա տայճ, հաբսե՛նհա-կ-ը կարող էր առաջանալ հաբսան՛հա-կ-ից և ինքնու-
րույն, նախնական տերմին (Խաբսի հարկ) չլինել, ինչպես ենթադր-
ում է Ս. Բարթոլոմայանը¹⁷⁵։

Անկիչ բնական է մտածել, որ հաբսե՛նհա-կը առաջանում է հաբ-
սան՛հա-կ-ից հնչյունափոխությամբ, և երկուսն էլ արտահայտում
են միևնույն՝ հաբսանի՛ր, ամուսնուրյան հասուլի՛ր, որ միջին դա-
րերում ամուսնացողների պետք է վճարելի տեղական աշխարհիկ
իշխանավորներին։ Բնիկի արձանագրության հաբսան՛հա-կ վկայու-
թյան հիմամբ պրոֆ. Բ. Առաքելյանը ենթադրում է, թե միջին դա-
րերում հաբսան՛հա-կը հոգեք որտրի էր և վճարվում էր եկեղեց-
ցուն¹⁷⁶։ Սակայն այդ հարկի երկու վկայությունները հաստատում
են, որ հարսանե՛հարկը տեղական վարչական իշխանությանը վճար-

վող աշխարհիկ հարկ էր, և այդ պատճառով էլ այն երկու դեպքերում
էլ թողնում կամ վերացնում են ոչ թե հոգեք հայրերը, այլ աշխար-
հիկ իշխանավորները, ալլալ դեպքում Զաբաթյան իշխանները։ Այլ
է պատկի կամ հարսանիքի արարողությունների սպասարկման հա-
մար եկեղեցուն վճարվող հասուլը, որ հաբսան՛հա-կ չի կոչվում,
այլ պատկազրում, կամ՝ ի պատկի։ Վահրամ Պատյավունու՝ Ամրե-
րի եկեղեցու բարավորին փորագրված 1026 թ. նշանավոր օրինակա-
նացման մեջ հակամե անվանն թվարկվում են նոր տեղիվիք հասուլների
չափերը (պտուղ), սահմանվում են եկեղեցական արարողություննե-
րի դրամաց բնակչությունից անվիվիք դրամաները։ Հիշատակվում
են հողազրամի, կնքազրամի, տնաբ՛նէկի, ձեռնադրելի, ի պատկի
չափերը¹⁷⁷։ Ինչպես տեսնում ենք, կան բոլոր հասուլները և արա-
րողությունները, սակայն հաբսան՛հա-կի մասին չի հիշատակվում։
Կա ի պատկի՝ 4. դանհկան, որ անշուշտ, ոչ թե հաբսան՛հա-կ է,
այլ հարսանիքի ծիսակատարությունների վճարվող վարձ, հասուցում։
Եկեղեցուն կամ նրա սպասավորներին վճարվող վարձ, հասուցում։

Գ. Ձեռնադրամակ — Բարդուղյունյան առաջանում է ձեռնատր =
պտուղական շրջաններում հարկահավաք պաշտոնչա, հարկահաշ-
գործակատար և հակ = հարկ բաղադրիչներից և նշանակում է ձեռ-
նադրի, հարկահան պաշտոնչալի օգտին հավաքվող հարկ, տուրք։
Բառիս նախնազույն հիշատակությունը պաշտպանվել է Հաբատից
5 կմ հարավ-արևելք, Բերդիկ հնավայրում կանգնած իսրայել Ուլի
(1212) թ. հիշատակագրության մեջ. «ես՝ Գրիգոր, որդի Յաէի, թո-
ղի զձեռնատրահակա Բերդիկա, վասն Շահնշահի արևշատութեան
և ինձ մեղաց թողութեան» (ԿՂԸԲ 252)։ Մյուս վկայությունը փո-
բագրված է Օձունի տաճարի հարավային մույթի մոտ, ԺԳ դարի
վերջին, գիտությունը հայտնի է Ս. Ջալալյանցի դրակ, շատ պարզ-
վազը բնորոշնակությամբ, որի մեջ ի շարս այլ տարրնթերցումնե-
րի, բնվող ձեռնատրամակ բարդ չի կարգացվել։ Համապատասխան
հատվածը բերում ենք մեր վերծանությունը. «ես՝ Սմբատ, ծառա
մեծին Իվանէի և Մխարթձէլին, որդի ձուղնցի Պողոտ, որ արժա-
նի էյա Ուձնա ձեռնորութեան, պարտեացն արվվաշատութեան համար

¹⁷⁵ Ինչ մեծ է այն ազդեցին, որ հեղինակը նկատում է առաջին գիշերվա
իրավունքի և հաբսե՛նհա-կ պարտավորության միջև, ապա հարցի մեկնությունը այս
բնույթիան շրջանակներից դուր համարելով՝ հարկ ենք համարում միայն երկ, որ
առաջին գիշերվա իրավունքը հայտ մեջ ոչ հնում և ոչ էլ նոր ժամանակներում չի
դիտվում, և այս կապակցությամբ Անիի ԺԳ դարի արձանագրությունը հեղինակի
կողմից այժմեի էլ առույ չի մեկնարանված։ Այդ արձանագրության մեջ Անիի
հոգեք առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը սահմանում է պատկի թույլտվությունն
առանձուլա պարտավորությունը հարսի հարապատկերից վերջնելու և փեսայի հարս-
զատների վրա զնելու մասին և, բնականարար, ոչ մի բնջհանուր բան չունի հաբս-
ե՛նհա-կի կամ ստակի ևս առաջին գիշերվա իրավունքի թեկուղ և հետագայ արձա-
գանքի հետ (տճ Գժվան, 1, էջ VII, 19)։ Անիի հիշյալ իրավական վավերագրի
մեկնաբանությունը անդրադարձել է նաև զրոգ, պատմարան Վ. Խելումյանը։ Նրա
կարծիքով այս արձանագրությունը արտացոլում է սղղնայտեա հաստատված հար-
սի ապա սիրո իրավունքի վերացումը Սարգիս եպիսկոպոսի սույն օրինականցու-
մով, որը, ըստ հեղինակի արդյունք էր մեծղական բարբրի ազդեցության։ Անիերն է,
որ այս բացատրությունը ևս բնջհանուր շատ քիչ բան ունի Անիի Առաքելյան
վանի արձանագրության իրական բովանդակության հետ (տճ Կ. Խելումյան, Ջա-
լոց զրուարթը՝ հիշման արժանի, ԵՂայաստանի աշխատավորուհի, 1968, № 3,
էջ 22)։

¹⁷⁶ Տե՛ս Բ. Առաքելյան, Փաղաքներ..., Բ, էջ 222։

¹⁷⁷ Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Ամրեղծաբերի հնությունները և արձանագրություն-
ները, ԵՂբմբձիկն, 1961, Ծ, էջ 50—51։

զձեռնվորահակի զինին անշահ ու զին վեր կալա... Ով խափանել նրզոված է...» և այլն (ՄՀ):

Քառս մի վերջին հիշատակությունը հանդիպում է Օշականի եկեղեցու ներսի արձանագրություններից մեկում, որ այժմ ծածկըված է ձեխով և գիտությունը հայտնի է անցյալ դարի կեսերին Հ. Շահաբունյանցի կատարած հետևյալ ընդօրինակությունից. «Եթ թուականին ՉԱ, ես՝ Գեղմարզս էի ամիրայ եւ Հարիսս ձեռնաւոր թողար զոր Կարապետին սպահանց զԱշխահանու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն, զինչ որ կարյու...» (ՇՄ 79, ՎՏ 130):

Գիտական գրականության մեջ ձեռնաւոր, ձեռնաւորանակ տերմինների իմաստը ստույգ չի հասկացվել, որի հետեանքով երկար ժամանակ անհայտ էր մնում նրանց իրական բովանդակությունը։ Մ. էմինն, օրինակ, ձեռնաւոր հասկանում է ճարտիկ, ձեռնահաս մարդ և բառ թարգմանում исправный сын (НЭА 51), МАК-ի հեղինակներ Միտոնը և Քուչուկ-Հովհաննիսյանը նույն բառը հասկանում են՝ իշխող (властвующий 171)։ Մառը Մրենի արձանագրության մեկնության մեջ ձեռնաւոր պայմանական կերպով թարգմանում է բարձրատիճան իշխանավորի օժանդակող, օգնական (подручный 178)։ Ըստ այս մեկնությունների էլ հասկացվում էր այդ պաշտոնյաների օգտին գանձվող տուրքը՝ ձեռնաւորանակը, ձեռնաւորի հարկը։

Գիակի է, որ մեջ բերված օրինակներում ձեռնաւորանակը վերացնում են հենց նրանք, ում օգտին գանձվում էր այդ հարկը՝ ձեռնավորները կամ հարկահաշնները։ Սակայն, չպետք է հարկի զիջումը ձեռնավորների բարեգրությունամբ բացատրել, պարզապես, ներքանք նախապես այն բանակություններ են գանձել իրենց հասանելիք տուրքերը, որ երբեմն առանց զգալի վնաս կրելու կարող էին հրամարդել մեկ տարվա հարկից։

2. Հակ բառով քաղաքություններ, որոնց առաջին բաղադրիչը այլ լեզուներից փոխառյալ բառ է։

Ա. Աղլնակ, աղլնակ։ Բառս եզակի հիշատակություններ արձանագրված է Անիի Առաքելոց եկեղեցու 1301 թ. արտոնագրում, որով Ջաքարյան Աղբուղան վերացնում է քաղաքի բնակիչներին գանձվող

մի քանի հարկեր, որոնց թվում և աղլնակը։ Արձանագրության այդ մասը Հ. Օրբելու հավաստի վերծանությամբ կարգացվում է. «Ես՝ Աղբուղայս... թողը զնոյնն հարկն, զկոթին համբրելն, զոչխարին աղլնակն» (Գ 1 28)։ Աղլնակ բարբոթյան ստուգաբանությունն ու մեկնությունը տալիս ենք առանձին բառահոգվածում (տե՛ս)։

Բ. Ամիրանակ — Բաղադրված է արաբ. amir, amira = պետ, հրամանատար, կուսակալ, իսկ վկայված ժամանակաշրջանի համար միայն՝ Բաղաբի կառավարիչ, Բաղաբապետ, և հակ = հարկ բառերից՝ ամիր-ա-հակ՝ ամիրայի, Բաղաբապետի օգտին բնակչությունից հավաքվող վարչական հարկ, հատույթ։ Բառս հայտնի է եզակի վկայությամբ Բջնիի ՉԳ (1325) թ. մեկ ծանոթ արտոնագրում, որով Ջաքարիան, այլ հարկերի ու պարտականքների թվում, իր տիրույթների բնակիչներին աջատում է նաև ամիրահակ-ից. «Ես՝ Ջաքարէ, որդի Սահիպ Գիվանին եւ պարոն Խաչարին, թոռն ավարակ Աւագին ու վեր կալայ, որ Բջնի այլ մարդոչ տիրութիւն չլինի. եթողի զամէն հարկ. զամիրայահակն, զհարսանէհակ, զկովայահամարն, զկալայթաղարն, զայլլին սպիտակն, զմահահանէն...» (ՇՄ 183, ՂԱՍ 273, ՎՏ 227)։

Գ. Բալայխանակ — Վկայությունը հանդիպում է Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի պարսկալին 1291 թ. փորագրված մի ընդարձակ արտոնագրում, որով Ջաքարիան Խոչարը և իր որդի ամիր Ջաքարիան վերացնում են իրենց տիրույթների բնակիչներին ամովող մի շարք հարկեր։ Այս հարկի մեկնությունը արվում է առանձին (տե՛ս)։

Դ. Գեւորաբանակ — Այս հարկային տերմինը վկայված է Մարտունու շրջանի Ն. Գեուռնյան գյուղում (պատմական կոթ՝ ավան) գտնվող Կոթվանք հնագույն տաճարի 1275 թ. մի արձանագրության մեջ, որի առաջին վերծանությունը և մեկնությունը տալիս է Մ. Բարխուդարյանը իր վերոհիշյալ հոդվածում։

Արձանագրությունը փորագրված է տաճարի արևելյան որմնախորշի մեջ հետագայում գորցված մի կարմրավուն քարի վրա, անկանոն շղագրով և խիստ հողմահարված է, այդ է պատճառը, որ նույնիսկ Մ. Բարխուդարյանի վերծանությունը ընդհանուր առմամբ չի ամբողջանում և ունի մի քանի մութ կետեր։ Այլ աղիթով լինելով հուշարձանի մոտ՝ մենք նորից ընդօրինակեցինք բոլոր կողմերով շատ կարեւոր այս բնագիրը, աշխատելով հնարավորին չափ ստույգ

178 Н. Марр, Новые материалы..., т. 89:

արտագրել քարի վրա պահպանված տառաշարքերը և պարզել Բարխուդարյանի վերծանության մեջ բաց կամ անորոշ մնացած հատվածները: Ահա ամբողջ արձանագիրը մեր ընդօրինակությանը և վերծանությանը (նկ. 27):

Ք. ՉԻԴ. յաշխարհ

ալիկուռին Ասյ
ազանին և ևար
նոխին պարոն Տար
այրին: ևս Ջուրէկ
զայս թողի դէմէն
արայհակն: զգողն զ
մշակն գործին: Ժ:
գրի հաց ի զեղս: Ա: և զ
Ա: կով իմ զուխս ալլ ի զ
զս: Ով զ
այս խափ
անէ 3 : Ժ : Ը
նորովս է

Բնագրի ոչ էական տարբերությունները դանց ստնելով՝ կարելի է նշել միայն մեր ընդօրինակության երկու կարևոր տարբերությունը Բարխուդարյանի հրատարակածին.

թ չխրյ առա առն
այ պա ռ-բն աչ
այ պա ռն է-խ առ
ևոտ ԻԼ զարոնտար
այտ ԻԿ Եսըռ ԼԲԷԿ
զայս թողի շտս էթ
ար այշակն Երդու
դա ԿԼ ԳրԵԻԻԻԻ
գրի հաց ի զեղս: Ա: Է Զ
Ա: կով իմ զուխս ալլ ի զ

դս ո չԸ
լուս : խ ԿԺ
Ա զ Ե յ Զ Ը
Ա զ Ը Ե

նկ. 27

Քուրն: ՉԻԴ. (1275) յաշխարհակ-
ուրեան Ապաղա (դա)նին և ևարնո-
խին, պարոն Տարայինին, ևս՝
Ջուրէկ զայս թողի դէմէն արա(յ) —
հակն զգողն, զմշակն, գործին,
• Ժ : գրի հաց ի զեղս, • Ա : և զ,
• Ա : կով, իմ զուխս Ալլ ի զեղս...
Ով զայս խափանէ, • 3 : Ժ : Ը նորովս է:

ա) Ս. Բարխուդարյանի ընդօրինակու-
թյունը թիրի է և ավարտվում է արձանագրե-
րության 10-րդ շարքով, բոս հեղինակի այն
անավարտ է մնացել՝ «եռույն քարի վրա այլևս
ստղ չլինելու պատճառով»: Մենք ընթերցել
մենք ևս շարս տող՝ անեծքի ձևակերպումը, ու-
րով և ամբողջանում է արտոնագիրը:

բ) 7-րդ շարքում, դեմէնարայնակն բա-
ռից հետո Բարխուդարյանը կարգացել է ՉԸ-
դրոն անորոշ բառը, մենք նույն տառաշարքը
վերծանել ենք՝ զորոն: Շորոն անստույգ բա-
ռը Բարխուդարյանը ենթադրաբար համազը-
րում է Անիի Մալը տաճարի պատին փորա-

զրված՝ Բագրատ մագիստրոսի արտոնագրում հիշատակված նստո
(= ի նստո ինկարեն, կամ՝ ինստոն կարեն) հարկային տերմինի
հետ, որը նույնպես ճայված ստուգարանված չէ:

Սակայն կոթմանքի քննվող արձանագրության մեկնաբա-
նության դժվարությունները միայն այս տարբերությունները մեզ
չեն, ևս Ս. Բարխուդարյանի վերծանությունից ստացվում է, որ ոմն
Ջուրէկ, որ հավանաբար կոթմանի կառավարիչը կամ դեմեմարն
է, այս արտոնագրով իր նախածնունդում (... իմ զուխս) վերաց-
րել է ոչ միայն գյուղապետի կամ ավանապետի օգտին զանձնող
հատուկ հարկը՝ դեմէնարայնակը, այլև մի քանի ուրիշ տուրքեր ու
պարահաններ, այն է՝ շորոն, մշակ, գործիք, 10 գրի հաց, մեկ եզ, մեկ
կով¹⁷⁹: Այսպես կարելի էր հասկանալ, եթե բնագրում սովորականին
նման ասված լիներ. «ես՝ Ջուրէկ թողի դեմէնարայնակն, շորոն, զմշակն,
գործին...», և այլն: Մինչդեռ քարի վրա պարզ փորագրե-
լված է. «ես՝ Ջուրէկ զայս քողի դեմէնարայնակն շորոն, զմշակն»
և այլն:

Այստեղից ահնեթև է, որ Ջուրէկը ինքնակամ սահմանում է դե-
մեմբերաբարի այն շափը, որ զուրի համայնքը պարտավոր էր վը-
ճարել գյուղապետին: Ըստ այդմ, զայս քողի դեմէնարայնակն կա-
պիցույթունից հետո թվարկվող արժեքները՝ շորոն (= զորոն), զը-
մրչակն, գործիք, • Ժ : գրի հաց, • Ա : եզը, • Ա : կով գյուղապետի
պահպանության համար համայնքից հավաքվելիք հատույթն է և ոչ
թե առանձին տուրքեր, ինչպես ենթադրել է վերծանողը:

Հավանական է մտածել, որ միջնադարում վերադաս վարչա-
կան իշխանությունների կողմից հասնանված է եղել գյուղապետի,
ավանապետի, կամ սովյա դեպքում դեմեմարի օգտին գյուղական
համայնքից զանձնող հարկ-հատույթի որոշակի քանակություն, և
այս դեպքում դեմեմար Ջուրիկը ինքնակամ (... իմ զուխս) որոշել է
զեղոն, նվազեցնել այդ հարկը՝ հասնանված է եղել գյուղապետի ամ-
բողջ հատույթի իջեցումից հետո մնացած, զանձման ենթակա աբ-
ժեքները: Մյուս կողմից, անհնար է բնագրի՝ շորոն (= զորոն), զը-
մրչակն, գործիք, 10 գրի հաց, մեկ եզ, մեկ կով առանձին, ինք-
նուրույն հարկեր կամ պարահաններ համարել, քանի որ միջնադար-
յան Հայաստանի մոնղոլական ժամանակաշրջանի հարկայանակում
աչդարձիները չեն վկայված, և միանգամայն ահնեթև է, որ թվարկ-

¹⁷⁹ ՏՃՊՎ. Ս. Բարխուդարյան, նվ. հոդվածը, էջ 80—81.

ված արժեքները որոշակի առնչություն պետք է ունենային նախորդ գայա բողի ղեմէրարայական նախադասությունն հետ, այլապես անբացատրելի կմնա, թե ո՞ւմ օգտին էին գանձվում այդ սուրբերը, և Ջորբեկի հրամանագրով սահմանվո՞ւմ, թե՞ զեզվում են դրանք:

Գանանք վիճելի շրջնէ տառաշարքին: Ինչպես տեսանք, Բարխուդարյանը այստեղ ենթադրաբար վերականգնում է եղջ առաջը (կարող էր առաջանալ շ, և շղագիր տառերի շփոթումից) և այն նույնացնում Անիի Փկ դարի արձանագրության նստո- (=նստոին) Շարկայլի տերմինի հետ, առանց մեկնաբանելու նրանց բովանդակությունը¹⁸⁰: Այս համագրությունը անհամոզել է ոչ միայն այն պատճառով, որ հնչյունական օրինաչափություններով նստո-ն (կամ նրստոին) ոչ մի կերպ չէր կարող հնչյունափոխվել շղջ-ի կամ եղջ-ի, այլև նրանով, որ Անիի բյուզանդական ժամանակաշրջանի հարկային տերմինը հազիվ թե կիրառվելու ունենար ավելի քանի երկու դար անց՝ մոնղոլական տիրապետության տարիներին:

Մեր վերծանություն մեզ տվյալ տառաշարքը կարգացվում է զղռն, որտեղից բառիս ուղիղ ձևը՝ զռչ (զ-զռչ-ն, հմմտ. շարունակության մեջ՝ զմշակ-ն, զործիլ-ն, ղեմէրարայական): Արդ ի՞նչ է նըշանակում զ-զռչ-ն: Այս բարբառային բառի դիմաց բառարանները դնում են՝ կուրծք, կրծիկ միս, կրծամիս¹⁸¹, բայտ յայտ, կարիկ է մա-կարելու, որ վկայված ժամանակաշրջանում (1275 թ.) զուրություն է ունեցել դյուղապետի օգտին սահմանված, ի թիվս այլ նստայլ-ների, նաև մորթվող անասունների (խոշո՞ք, թե՞՞ մանր, անորոշ է) կծոթի մտից որոշ քանակություն հատկացնելու պարտավորություն: Այս հասույթը հիշեցնում է նույն ժամանակներում եկեղեցու սպա-սավորների պահպանության համար հավատացյալներից հողի բերքերից զատ, նաև մորթված կենդանիների այլևայլ մասերը առնելու պարտավորությունը, որը հակասն անվանն սահմանվում էր կանոնագրերում կամ եկեղեցական ժողովների որոշումներում: Ահա դրանցից մեկը. «Եւ դուք առնիչք յամենայն ժողովրդենէ՛ հասրն ձեր և եղիցին՝ ի պատարագաց կաշի, և աջու էրի, անգամ և ճրագո՛՛ դմակ, և սիրտ, և լեզրաբոյթ, և երկիւմունքն ճարտովն, և ի կողից և ի խոտացած մասն, լեզուն և աջու ունկն, շրթունքն հոտառ-

լիօք, աջու ակն և ամենայն խորհրդական մասունքն»: Անիի 1217 թ. մի արտոնագրից տեղեկանում ենք, որ՝ «Սահման էր ի սկզբանէ յամենայն զեղէ երկու դրի: Հաց յաթոտ տալ, և քաղաքիս ամենայն եկեղեցիս մորթի մին զատկին տաին»¹⁸², այսինքն վանքերն ու եկեղեցիները, բացի սահմանված պտղից կամ աթոռահարկից, վերցըրնում էին նաև իրենց համայնքների մորթած անասունների մորթիներն որոշ մասը՝ մագաղաթ և այլ առարկաներ պատրաստելու համար:

Միջին դարերի ժամանագրական զարչուրներում վարչական իշխանություն օգտին սահմանված այսպիսի պարտավորության մասին վկայություններ չեն պահպանվել, և մեր կուսումը զըշ-ի (կըրծամիս) մասնանման առթիվ կարող է թեևսևս համարվել: Բարբառաբար, Գոթավանքի մերձակայքի մեկ այլ վիճակական արձանագրություն մեջ միանգամայն որոշակի հիշատակություն կա նույն պարտավորությունը վերացնելու մասին, որը և հավանական է դարձրնում զըշ-կրծամիս պարտավորության գոյությունը միջնադարյան Հայաստանում: Այդ ընդարձակ արձանագրությունը փորագրված է եղել Մարտունու շրջանի Աստղածոր գյուղի կենտրոնում կանդեած խաչքարի հյուսիսային կողմն ու պատվանդանին և անցյալ դարի վերջերին վերանվել, հրատարակվել է Մ. Ամբասյանցի կողմից՝ ներկայումս տեղում պահպանվել է բուն խաչքարը իր բընագրով, իսկ նրա արձանագրված պատվանդանը, ցավոք, անհետացել է: Խաչքարի բնագիրը բայտ մեր վերծանության հետևյալն է՝ «Ի թիվ. հայոց: ԶԹԹ: (1270) ես՝ Շահանշահ՝ որդի Ջոհէ՛ է կաղնիցի զիսաչ իշատակ հողոյ իմոյ: Ով կարդէր, յաղաթս յիշեցէրք» (ՄՇ): Սակայն արձանագրության էական մասը եղել է պատվանդանի վրա, որը և մեջ ենք բերում Ամբասյանցի ոչ այնքան հաջող ընդգրինակությունը. «Եւ Շահնշահ և ի իմ որդի Անագ զՍրբուծն թողաք...» շարունակությունը մի քանի անկապ բառեր¹⁸³: Արքունի բառը վերծանողը դնում է մեծատառով, այսինքն նրանում տեղանուն է տես-

¹⁸² Տե՛ս Գանոնգիրք Հայոց, Թ, 1971, էջ 224—225, Հ, Օրելի, Գիվան, 1, էջ 167:

¹⁸³ Մ. Ամբասյանց, Տեղագիր Գեղարքունի ժողովարք ցավաթի, էջ 544: Բնագիրը նորիս հրատարակվեց «Գիվանի» IV պրակում, սակայն այստեղ վերծանող Մ. Բարխուդարյանը անփոփոխ մեջ բերելով Ամբասյանցի բնագրից հետևյալը՝ բնագրի պարագաներին չի անգրագառնում, իսկ Արքուն բառն էլ Ամբասյանցի հետևյալում տեղանուն է համարում («Գիվան» IV, էջ 169):

¹⁸⁰ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Էջվ. հոգվածք, էջ 79—80, Գիվան, 1, էջ 37:

¹⁸¹ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, Ա., 1944, էջ 547:

նում: Սակայն այս դեպքում անհատականի կրօնա գերբունը քաղված կապակցությունը, որ այլ արտահայտի համանմանությամբ պետք է արտահայտեր ինչ-որ պարտավորություն կամ հարկ, տուրք, որ թողնում են արձանագրողները: Մեզ հավանական է թվում մշտաձեռն, որ նահնգաճր և իր որդի Ավագը թողնում են ոչ թե ինչ-որ տեղանուն կամ հանդամա, այլ որքան, որա պարտավորությունը: Իսկ ի՞նչ է արտահայտում որքան-ը: Թվում է, որքան-ը կամ հին հայերենի երբում բառի ճշտությունով, բարբառային տարբերակն է, կամ բարի վրա փորձարկում է հեղի գերունը քաղա... և վերձանողն է սխալմամբ այն կարգացել կերբունը քաղա, շփոթելով բառակերի և, և գրեթե: Հին հայերենի գրական հուշարձաններիում երբումը համարել է դր թափն և նշանակում է նույնպես՝ կումով, կրճի միս, կրճամ¹⁸⁴: երում < որքում փոփոխությունը օրինակափ երևույթ է խոսակցական լեզվում, և այդ պատճառով բառս բարբառներում ավանդված է հենց այդ փոփոխված՝ որքոց, որքուց ձևերով, բայց նույն նշանակությամբ: Այսպես, բառ Հր. Անասույանի Զեյթունի բաղբառում որքոց < որքում < երում > նշանակում է՝ «Հարսանիքի համար մտրված տավարէն քահանային հանված բաժինը, այն է գույրը և կուրծքէն լիտրի մը շափ միս»¹⁸⁵:

Այստեղից ակնհեր է, որ իրենիցս Կոթմալանքի, այնպես էլ Աստղաձողի արձանագրության մեջ հուղորդում է նույն պարտավորության՝ մտրված անասունի կրճքամիսը հատկացնելու մասին, այն տարբերությամբ միայն, որ Աստղաձողի արտահայտում այն վկայված է որքում (< երում) գրաբարյան ձևով, իսկ Կոթմալանքի բնագրում՝ նույն բառի բարբառային համարելով՝ դր-ուլ: Եվ դա միանգամայն օրինակափ է. ինչպես նկատվում է, Կոթմալանքի արձանագրությունը շարադրված է ժամանակի գրաբարից զգալի շեղումներով և բարբառային ներթափանցումներով՝ յաշխարհակալուրն < յաշխարհակալուրն, դէմէրաւնակն < դէմէրաւնակն, ի գեգու < ի գեղը, իմ զուլս = ինքնազուլս, ինքնակամ (հմմտ. Մրենի

1276 թ. բնագրում «Յիմ մտաց դուս՝ առանց վարպպանի ձևեցի ու հինն ձեղցի դարապարս ու գրախոս»), առտի և քնական է այստեղ գրաբարյան երբում-ի փոխարեն դաշ անվանումը:

Վերջ շարադրված դիտողություններից հետո Կոթմալանքի արտահայտը կարելի է մեկնաբանել այն իմաստով, որ Կոթմալանքի կամ ավանի դեմեթար (= պողպատ, զեղջուր, ափս, առանուպետ) Զուրեկը իր նախածնունդով, ինքնակամ, բարեգործական նկատառումներով վերադառ իշխանությունների սահմանած դեմեթարահալը պակասեցնում, շեղում, դարձնում է հեռուլուր. երբումի պարտավորություն (զգուլն), դեմեթարի հողերը մշակելու համար մշակեն և գործիներ արամադրել, 10 գրի հաց հավանաբար սերմացուի համար, մեկ եզ, մեկ կով: Մրանց հետո նեղնակր փոքրել է՝ այլ ի գեղս, ըստ երևույթին նպատակ ունենալով սահմանել՝ այլ ի գեղս հարկս ոչ առնուն. բայց անհայտ պատճառներով խոսքը կիսատ է թողել և շարունակության մեջ շարադրել անձքն ձևակերպումը:

Գնեթար, դեմեթարահակ բառերի ստուգաբանությունը տալիս է Ս. Թարխուզարյանը, ըստ այդմ, բառս կազմված է պարս. deh (dih) = գյուղ, երկիր, կողմ և mehtar = մեծ, ավագ արձանների և վկայված ժամանակաշրջանում կարող էր նշանակել՝ գյուղի ավագ, գյուղապետ, ափս, անասպետ: Այստեղից դեմեթարահակը այն հասույթն է, տուրքը, որ գյուղի համայնքը պետք է վճարեր դեմեթարին, գյուղապետին, իրեն առնելի¹⁸⁶:

Պատմագիտական գրականության մեջ գյուղի առաջնորդների օգտին հավաքվող առանձին հարկի, տվյալ դեպքում դեմեթարահարկի մասին կոնկրետ հիշատակություններ չկան, և հետազոտողները այդպիսի հարկի գոյությունը ընդունում են ըսկ սեականներեն, ենթադրաբար: Մեր մեջ բերած օրինականացման արժեքը մեծնում է նաև նրանով, որ այլտեղ ոչ միայն առաջին անգամ վկայվում է գյուղավազի, ափսի օգտին գյուղի քնակությունից զանվող հատուկ հարկը, այլևս մտաավոր ճշտությամբ ներկայացվում է այդ հասույթի շափը, քանակությունը, որ կարևոր նշանակություն է ստանում մոնղոլական տիրապետության շրջանում հայ գյուղի

¹⁸⁴ ՆՃ, Ա. էջ 672, Սա. Մախաչյանց, Բացարտական բառարան, Ա, էջ 574:

¹⁸⁵ Հր. Անասյան, Գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 863, Սա. Մախաչյանց, Բացարտական բառարան, Գ, էջ 581, Թվում է՝ Սա. Մախաչյանցի սխալված է որքոց (< որքում < երում) բառը որքան հոգնակի սեռակերպ հարկավածը համարելով: Ավելի հավանական է ն> և անցումը համարել ու ճշտելի եղանակը անձքնության արդյունք:

¹⁸⁶ Տե՛ս Ս. Թարխուզարյան, ԵՎ, Հողվածք, էջ 79—80:

հարկային վիճակի մասին մեր պատկերացումների ընդլայնման համար:

Ե. Շահնահակ — Բարդուիւնը բազազրվում է պարս. *Ṣ ahna* = աստիական, վկայված ժամանակաշրջանում՝ հարկերի ու սուրբերի գահնման և պարհակների կատարման հսկող ոստիկանական պաշտոնյա և նախ բառերից, որ նշանակում է՝ շահնայի՝ հարկահամար պաշտոնյայի օգտին գանձվող վարչական հարկ: Շահնահակ հարկահանն պաշտոնյայի և նրա օգտին սահմանված հատուկ հարկի՝ շահնակի գոյությունը հաստատվում է Քանաքեռի խաչարձանի ԶԺԵ (1266) Բ. և Հոփսիմի տաճարի ՉԽԵ (1296) Բ. արձանագրություններով, որ այլ առիթով արդեն հիշատակել ենք: Օրինակ, Հոփսիմի տաճարի արտոնագրում սոված է. «Քողաք զՀոփսիմիցս գրարակի շարիատն և զշահնայից բարակի հակ...»: Ահե՛րե՛կ է, որ վանքը վճարել է ոչ միայն բամբակի շարիատ, այլև շահնայի, հարկահանի օգտին հավաքվող բամբակի հարկ, որը վերացրել են գավառի տերերը:

Փանաքեռի խաչարձանի արձանագրության մեջ խոսքը ոչ թե շահնայի օգտին հավաքվող հարկի մասին է, այլ սեփականության փոխանակային կամ վաճառքի գործառնություններից շահնայի և մեղունայի(°) օգտին կատարված որոշ մասահանման մասին: Ըստ այդմ, 3200 սպիտակի վճանարի ընդհանուր արժեքից տեղի պարունին մասահանվել է այդ գումարի տասանորդի (դահակ) չափով՝ 320 սպիտակ, իսկ շահնային և մեղունային՝ միայն 50 սպիտակ...¹⁸⁷:

Սակայն տվյալ դեպքում մեր քննության նյութը ոչ թե շահնայի հարկի է ընդհանրապես, որի գոյությունը հաստատվում է հենց Հոփսիմի տաճարի արձանագրությամբ, այլ շահնահակ տերմինը, որ գրական աղբյուրներում չի ավանդված և հանդիպում է նորագաղթի եկեղեցուց Երևանի պատմության Թանգարանը տեղափոխված սրբատն բարաբեկորի անվճարական արձանագրության մեջ: Ե՛ն՝

¹⁸⁷ Բնագիրը նական այլեթերցումներով հրատարակվել է քանիցս, առանձն ենք մեր հավաքածուից: Հմմտ. Հ. Տեմիաշովենաց, Սուրբազրույթուն..., Բ, էջ 159, Ալիշան, Արարատ, էջ 298, Մ. Սմբատևանց, Տեղագիր..., էջ 208, Ք. Ավգյուրլյան, Հայաստանի հետազոտություններ, էջ 315: Վերջերս այն հրատարակվեց պրոֆ. Կ. Առաքելյանի էմբանե ցրում, այս վերածանության քննությունը տալիս ենք զանախ բառաճորդածում (ան՝):

Շահնահակ թողի զշահնայահակ զեղիս...»¹⁸⁸: Նույն գրությունը տերմինը վկայված է նաև Ուրծի եկեղեցու պատին փորագրված մի խափարված արձանագրության մեջ. «Յուսուզն անմահին աջ ևս՝ Արգանս պարուն Այլակումին որդմութնըն զձեռնաուրութի և զշահնայահակ...»¹⁸⁹, շարունակությունը չի պահպանվել:

Այստեղ հիշատակված Այլիկումը (<Ալիկում, էլիկում) Օրբիլյան Զալայի որդի և Տարսային իշխանաց իշխանի Թոռ էլիկումն է, որի ժառանգական տիրույթները տարածվում էին Վեդի գետակի միջին հոսանքում, Ուրծ և Արած գավառակներում, որտեղ Զալայ Օրբիլյանը գեներալ ՉՄ (1301) Բ. կառուցել էր որ սահմի հոգևոր կենտրոնը և ստպանատունը՝ Սպիտակավոր Կարապետի վանքը: Ըստ այդմ, շահնայիկ-ի մասին ոմն Արդոնի այս արձանագրությունն էլ ԺԴ դարի կեսերին է վերաբերում, երբ շար արդեն Զալայը, և նրան փոխարինում էր որդին՝ էլիկումը, որի ընդարձակ նսիլրագիրը՝ փորագրված նույն Սպիտակավոր վանքի հյուսիսային պատին, ունի ՉՂԵ (1346) թվագիրը¹⁹⁰:

Հակ բազազրիլով հարկային տերմինների վերը հիշատակված վկայությունները միջնադարի մատենագրական աղբյուրներում չեն հիշատակվում և այդ պատճառով տեղ չեն գտել հայագիտական գրականության մեջ: Այս տերմինների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն է ստանում միջնադարյան Հայաստանի օտարալատեստեանական վիճակի, հարկային համակարգերի մասին մեր պատկերացումները ընդարձակելու գործում:

71. ՀԱՄԱՐՈՒՆ > ՀԱՄԱՐՈՒՆ

Անիի և մերձակալքի հուշարձանների վիմագրերում մի քանի անգամ հիշատակվում է այս բառը՝ խոշոր անասունների զխահարկի նշանակությամբ: Ըստ ժամանակի առաջին վկայությունը փորագրված է Անիի Առաքելոց եկեղեցու պատին, ՉՄ (1301) թվական:

¹⁸⁸ Կ. Ասատրյան, ՄԵ էջ նորագաղթի պատմությունից, ՊՔԶ, 1968, 4, էջ 250—251:

¹⁸⁹ Գ. Հովսեփյան, Տարսային Օրբիլյանի և Միհա խաթունի սերունդը, Անթիլոս, 1947, էջ 22—23:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 24, Հ. Անապան, Անեն. բառարան, Բ, էջ 101:

նին. Ես՝ Ազրադէս, որդի Իսնէի... եկի յԱնի համանա, Շահնշահի... ես: Գ: հարկ ի վեր կալա, բողի զհերն հագրն, զկալին համարելէն, զաշխրին ալիակն... (Գ I 28): Եւսին Առաքելոց եկեղեցու պատին, պատրան հուանգրչի թղաճ արձանագրում ևս վկայված է այս հարկը. Թվին 94թ (1320) Ես՝ հուանգրչէս և որդիս իմ Զաբարիս ի մեր հայրենիք քաղաքս ի յԱնի բողաք զկալերոյն և զհշանուն զհամարելէն, և զորձալիւն մեծի և զփոխու... (Գ I 27): Համարելէ զլիսահարկի մի հշանակութեան էլ զտնում ենք Շիրակահանի տաճարի ժԳ որստակցի մի արձանագրութեան մեջ. ով որ եկեղեցոյս դրան կա և սպասուաւէ սմա, քէ արեղա երէ միակն. քէ շատ տասար ունեան, երէ էիչ, քն շատ վատակ ցանեն և քն էիչ, ոչ շարիսա, ոչ համարել, ոչ ստուներ, ոչ եզին բաղաք, ոչ մեծ շար, ոչ փոքր հնա եկեղեցոյս սպասուաւոցն ոչ ում խաւսք չիիւր... (ՍԱԲ 171, ՂԱՇ 10, ՎՏ 247): Զողի (Սողո) եկեղեցու արձանագրու պատին փորագրված մի եզոված արձանագրութեան մեջ ևս կարդացվում է միայն ավելի հարկի ուղիղ ձևը՝ համարելըն, հավանարք բնագրում հայնձվել է այդ հարկը վերացնելու կամ զեղչելու մասին (Գ IV 329):

Համարելէ > համարելէ անասնահարկի բովանդակութեանը բավականաչափ յուսաբանված է պատմագիտական գրականության մեջ. զա խոշոր անասունների զլիսարանակի համեմատ գանձվող հարկն էր, որ Օձունի տաճարի ԶԳԳ (1275) Թվականի արձանագրութեան մեջ հենց այսպես էլ անվանվում է՝ զլիսանակ (< զլիսահարկ): Ես՝ Գեղս, ծառա մեծին Խվանէի... իմ ձեռնատրոսրեանքս զեզին ու կովի զլիսանակ վեր կիալաւ... (ՄՇ)՝¹⁰¹:

Համարելէ > համարելէ (զլիսահարկ) տերմինը ծագում է հայ. համար = բիվ, հաշիվ, համբանք կամ համարի, համբել = հաշվել բայից, նրա աննախդիր բացասական հոլովածներից՝ (ի) համարելէ, որ բառացի նշանակում է համբելուց, հաշվելուց: Բյնիի ԶԳԳ (1325) թ. արձանագրության մեջ անասունների զլիսահարկի անվանումը կազմվում է համար = բիվ, հաշիվ բառից՝ կովահամար (> կովայ-համար), որ նույնպես բառացի նշանակում է կովահաշիվ, կովահանակ. բողի գամեն հարկ՝ գամիսահանակ, զհասունեակ, զկովայ-

¹⁰¹ Առևտու ենք մեր հավաքածուից, զպիս տարբերություններով ճրատարակված է՝ Ս. Ասլախանց, Ճանապարհորդութիւն..., Ա, էջ 91:

համարն, զկալարաղարն, զտալի սպիտակն, զմանկանէն... (ՂԱՇ 273, ՎՏ 226—227):

Մտնողական տիրապետության ժամանակաշրջանում բնակչությանից գանձվելիք հարկերի շափերը որոշելու նպատակով պարբերաբար կատարվում էին մարդկանց, ընտանի կենդանիների, հաստիքարք հաստատությունների և ցանքերի հաշվառման աշխարհագրեր: Հայկական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել այդ հաշվառման անցկացնողներին՝ իրենանական դիվանի պաշտենչաների կամ հարկահանների մասին, իսկ մեր լեզվում մնացել է այդ հաշվառումների անվանումը՝ համարաղ(ք), որ նույնպես առաջանում է համար, համարել բառիմաստից: Այսպես, ԶԳԳ (1314) թ. մի ձեռագրի հիշատակարանում վկայված է. «Համարողքն ի վայոս ձորս եկին, ու մինչև ի յամասնա արյան համարելին...»¹⁰²: Մարդկանց զլիսահամարի (= զլիսաբիւ) համեմատ մտնողական դիվանի օգտին գանձվող հարկի մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս Գրիգոր Ակնաբեցի պատմիչը. Առևտուս այնուհետև զհարկն ի զլիսարայ մարդկանն, քանի որ գեալ լինէր ի զարարն, զի մի փոքր գեղն Մ մարդ համարելին կամ երեսուն, ի տասն և հինգ տարևանէն ի վերն գամեն համարելին մինչ ի վացսուն տարևանէն և յամէն զլիսոյ որ համարելին, վացսուն սպիտակ առևտիւն¹⁰³:

Համարելէ > համարելէ հարկային տերմինի կազմությունը ցույց է տալիս, որ անվանումը չի համապատասխանում հին գրական հայերենի օրինաչափություններին և, անշուշտ, զախի է ժամանակի խոսակցական լեզվից: Արդեն նշել ենք, որ համարելէ > համարելէ համարվում (= համարել) անորոշ զերբայի աննախդիր բացասական հոլովածն է, որը հետագայում գիտակցվել է իբրև բառի ուղիղ ձևը՝ խոշոր անասունների զլիսարանակի հարկի անվանում՝ արձանագրություններում վկայված զ նախորդվ հայցականով բողաք զհամարելի-ն Գրաբարում համարվմ բայի անորոշ զերբայի բացասական հոլովածը օրինաչափ կերպով սղասելի էր՝ ի համարելոյ, այսինքն ի-ով անական հոլովը, ասանք է հոլովակազմիչի (հմմտ. ի գետոյ, լիբկուանալոյ): Աննախդիր բացասական հոլովածը համարելի անսովոր է նույնիսկ ժամանակի (ԺԳ—ԺԴ դդ.) գրական հա-

¹⁰² Մանր ժամանակագրություններ, Բ, 1956, էջ 487:

¹⁰³ Գրիգոր Ակնեցույ Փատմութիւն ազգին նեառաջ, Քրիստի, 1961, էջ 32:

յերենում և նույնպես մատնացույց է անում տերմինի ծագումը տեղական խոսվածքներից: Մյուս կողմից, բնական պայթյալականի ներմուծումը համբրելի ձևում կարող է արդարացվել միայն խոսակցական լեզվի հնչյունափոխական օրենքներով, ըստ որոնց մր, նր, սր հնչյունակապակցություններում մտար են գործում բ, դ, տ և այլ պայթյալականներ (հմմտ. բմբել>բմբրել, սաներ>սանդր, ծանր>ծանդր, խոստով>խոստովով և այլն): Համբրելի բառամիջում տեղի է ունեցել երկրորդ և ձայնափոխի անկում (համարելի>համբրելի>համբրելի), հնչյունական փոփոխություն, որ անսպասելի է գրասական լեզվում և նույնպես հատուկ է միայն տեղական բարբառներին կամ միջին հայերենին:

Այսպիսով, համարելի>համբրելի հարկային տերմինի բառակազմությունից պարզվում է, որ այդ հարկի (քրք) անվանումը զուտ տեղական ծագում ունի, առնված ժողովրդական, խոսակցական լեզվից, թեև բուն հարկը՝ խոջոր անասունների գլխահարկը, իրանական պետության եկամտաբե հիմնական աղբյուրներից մեկն էր, որ նվաճված երկրներում լայն կիրառություններ ուներ և հայտնի էր տարբեր անուններով:

72. ՀԱՅՄ ԱՅԼ

Այս բառակապակցությունը հիշատակվում է Մրենում պարոն Սենոպ Սահմադինի թողած ՁԼ (1288) թ. արձանագրությունից մեջ, որով հեղինակը զիջում է Մրենի բնակիչներից զանձվող մի քանի հարկեր: Բնագրի համապատասխան հատվածը մեջ ենք բերում մեր ընդօրինակությանը, որ կատարել ենք պատմության թանգարանում պահվող սնապակու վճարից. նա՝ պարոն Սենոպ Սահմադին և ամուսին իմ Ասուրտա վաճն փրկութեան մեղաց մեր... Մրէնոյ հացին շաբիտոն բաղել էաք և հայլ այլ բոզաք՝ զեղեցն զին և խաղղղի լալլէն: Որ այլ ոչ ի մեռոց եւ ոչ յաւտարաց, ոչ ով շխտնէլ¹⁹⁴:

¹⁹⁴ Հրատարակությունը ան՝ Ն. Ստրգոյան, Նյվ. աշխ., էջ 199, Ի. Օրբել, Надписи Мрена, Հայագրական հետազոտություններ, Ա, 1974, էջ 38: Ն. Ստրգոյանի գրքում ի շարք այլ տարբերակներին, հայլ այլ տառաշարք վերծանված է հայլ մալ կամ հայլալ, առանց մեկնելու հշանակությունը: Հ. Օրբելու վերծանությունը սույն է՝ հայլ այլ:

Ինչպես հասկանալ այս արտոնագրում հատակ կարգացվող հայլ այլ (հայլմալլ) բառը, որ նախորդ ընդօրինակողների մոտ վերծանված է հայլմալ: Բառս գրական հայերենում չի հանդիպում և տեղ չի գտել հայերենի բառարաններում: Նրա արտահայտած իմաստը կարելի է մակարեթել մեջ բերված բարդ նախադասության վերլուծությունից. հացի շաբիտոն բաղել էինք և հայլ այլ բոզեցինք այլ զինների զինու և խաղղղի խալլան, այսինքն՝ շաբիտոն թողնելուց հետո նաև, նույն ձևով, նույնպես, նմանապես թողնվում է խալլան, որտեղ հայլ այլ կարող էր նշանակել՝ նույնպես, նույն ձևով, նմանապես, միաժամանակ և այլն:

Հայլ այլ կապակցության օտարաբանությունը եւ հաստատում է այս կոստումը, ըստ այդմ, հայլ այլ հարադրություն է, առաջացած պարս ham (քրք, hem) = նույն, նման, ամբողջ, միասին, միատեղ և հայլ. այլ (բարբառներում և միջին հայերենում՝ ալ = ես, ուրիշ, մեղացած) բառերից¹⁹⁵. համալլ, հայլմալլ = նույնպես, միաժամանակ (հմմտ. բարբառներում հայլ մալ > համվ = նույնպես, նաև, նմանապես):

73. ՀԱՅՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ ՎԿԱՅՎԱՍ ԱՆՈՐՈՇ ՏԵՂԱՆՈՒՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐ

Ա. ԽՈՒՄԻ ԶԱԳ, ԲԵՐԳ, ԿԱՏԱ, ՎԱՆԱԿԱՆ — Եկեղեցու ՈՎ (1211) թ. շինարարական-նվիրատվական քնազրում վերծանված է. ՏԵՂ վանական եւ զժածիլ ձագը, որ բերդաժողովուրդ վանիցս. կարգեցաք զյայտնութեան քեզալլոյցն և բզգառի ժամն կատան տան... հետևում է անեծքի ձևակերպումը (Գ IV 69): Այստեղ բերում է իրեն հասարակ անուն) ինչ է տվել վանքին, այսինքն անորոշ են զժածիլ ձագը որ բերդաժողովուրդ արժեքները և կատան տան կապակցությունը: Բնագրի բոլոր վերծանողները ոչ մի չափով չեն անհրադարձել նրա բովանդակությանը, և այդ պատճառով շատ կողմերով կարևոր վավերագիրը մնացել է անօրոշ ու շրջադարձ: Սկսենք մեջ բերված հատվածի վերջից. կատան տան կապակցու-

¹⁹⁵ Հ. Անադյան, Հայերեն արձատական բառարան, Երևան, 1930, հ. 9, էջ 52:

Քյունը պետք է արտահայտեր այն մարդու անունը, որի հիշատակին վանքը պատարագներ է կարգել, այստեղ, անտարակույս, առկա է տպագրական վրիպում՝ փոխանակ կատախին (<Կատա Իգ. անուն) տպագրվել է կատաւն, որի հետեւանքով Կատա անձնանունը մնացել է միայնամեկ և չի արտացոլվել ցանկում:

Հատվածի առաջին մասը՝ տեղ Կանական եւ գեաժի ձագն, որ բերդաժողովուրդ վանիցս, պարզ կարդացվող տառաշարքը ստույգ չի բառաբանում, որով ամբողջ նախադասութիւնը մնացել է անհասկանալի:

Արդարեւ, Հայրավանքի այս կարևոր վավերագիրը բառ էութեան մեծ սպառապետ, տեղ երբևէր Բարաչի Եպիսկոպոսն է, որով նա վանքին է տալիս իր՝ Առինչբում զտնվող Ռեկերակ այցին և նորաշինի (= նորաշինիկ) երկրբարանի (= Բ՝ ակն) ջրապատը: Մասն անմիջական հաջորդում է տեղ Կանականի տվածը՝ գեաժի ձագն, որ բերդաժողովուրդ վանիցս, որը մեկնութիւն կարիք է գրում: «Գի-վան IV-իս բացատրականում և ցանկերում Կանականի նվիրերը չեն բացատրվում, ո՛չ հատի ձագն, ո՛չ էլ բերդաժողովուրդը, ո՛չ էլ ինքը՝ Կանականը արտացոլում չեն գտել ցանկերում, այսինքն գրանք անձնանուն և տեղանուններ չեն գիտված: Բացի գրանից, չի պարզվում, թե ո՞վ է տեղ Կանականը (կամ վանականը)» և ի՞նչ անունովուն ունի այս հոգևոր կենտրոնի հետ: Ակնկրել է միայն, որ նա չի կարող վանահայրը կամ առաջնորդը լինել, քանի որ հենց բնագրի նախաբանում իբրև Հայրավանքի առաջնորդներ են հիշված կեկիզցին այդ թվին (ՈԿ—1211) նորոգողներ Յովսէփս ու Ներսէսը:


Ակնհայտ է, որ տվյալ կապակցութեան մեջ վանական պետք է գնել գլխադրով և համարել տեղ Կանական, քանի որ հասարակ, շարքային վանական, վարդապետ կամ մխարանութեան տեսական անդամ լինելու զեպրում տվյալ անձը չէր կարող միաժամանակ կրել նաև տեղ տիրադար, որը պետք է արտահայտեր՝ հոգևոր առաջնորդ, վանական կենտրոնի տնօրեն, վանահայր իմաստները: Քանի որ այս բնագրում արդեն նշված են Հայրավանքի առաջնորդներ Յովսէփս ու Ներսէսը, ուրեմն տեղ Կանականը, կարող էր լինել ավելի զերադաս վանական կենտրոնի առաջնորդը, զուցի և եպիսկոպոսական աստիճանը հոգևոր տնօրենը: Մյուս կողմից, թեև բնագրում սպված է՝ տեղ Կանական եւ... իրականում խոսքը ոչ թե սովորական նվի-

բառովութեան մասին է, այլ վանական կենտրոններին ենթակա համայնքների, ծխերի վերաբաշխման, այդ բնակավայրերի հոտերը մի վանքի ենթակայութեանից վերցնելու և մյուսին ենթարկելու, տալու մասին:

Ուրեմն քննվող հատվածը պետք է բառաբանակ՝ տեղ Կանական եւ գեաժի ձագն, որ Բերդա ժողովուրդ, վանիցս... (նկ. 28), և ընկալի այն իմաստով, որ Հայրավանքի վերադաս հոգևոր առաջնորդ տեղ Կանականը հատի ձագ դուրի համայնքը, հոտը, որ մինչ այդ Բերդա ժողովուրդ էր, տալիս է Հայրավանքին, ենթակա է դարձնում վերջինիս: Այսպիսով, տեղ Կանականը հատի ձագ դուրը չէ, որ իբրև սեփականություն տալիս է Հայրավանքին, այլ այդ դուրդի հատը, ծովսը: Հոգևոր բարձրաստիճան հայրերի՝ այլ՝ կարգի հրամանագրեր համայնքների վերաբաշխման մասին:

Հայտնի են նաև ուրիշ վանքերի վիճակագրից (Շատի վանք, Հերհեր, Վաղարշի վանք և այլն), որոնց մասին ավելի մանրամասն պատմել ենք ՈՒ ԵՂՆԻՔ բառահոգվածի տակ (տե՛ս): Իբրև այդ կարգի հրամանագրի ցայտուն օրինակ կարելի է մասնացույց անել Մաթթազանքի (Գիլիբան) Աստվածածին եկեղեցու ԺԳ դարի հետևյալ արձանագիրը. «Ես՝ Պետրէ եւ Համազասպ հաստատեցաք զՍոժքն և Դարասանաք (Դարասանաք)՝ ժողովուրդ Աստուածածնիս (Գ VI 16): Ակնկրել է, որ զերադաս հոգևոր հայրեր Պետրէն ու Համազասպը հիշյալ գյուղերի ժողովուրդը (համայնք, հոտ, ծուխ) ամբացնում են նոր կառուցված (1247 թ.) Մաթթազանքին: Այսպես նաև Գանգի Քառասուն մանկանց վանքի արձանագրում մտքերի ճակատագրի 25 (1256) թ. արձանագրում. «Ես՝ Համազասպ, առաջնորդ Սուրբ ուխտին Հաղրատա արհեստի զէկեղեցիս եւ տվի զԳանգ ժողովուրդը, կամակցութեամբ Հաղրատա մխարանացնս (ԱՋՃ 118): Այսինքն Հաղրատի գերադաս վանքի առաջնորդը նորաշին Բառասուն ման-

Նկ. 28



կանց վանքին է ամբարշտում մինչ այդ Հաղարտին ենթակա 'սանդ զյուղի ժողովուրդը, համայնքը:

Ասածներից ակնհայտ է, որ Հայրավանքի խնդրո առարկա արձանագրության մեջ հարկ է վերականգնել՝ խավի ձագ, Քերզ տեղանունները, Կատա, Վանեական անձանանունները, որոնք միապես են են նախորդ վերձանություններում:

Բ. ԱՅՏԱՍՏԻԿԻՆ (>ՕՏԱՍՏԻԿԻՆ) — Հայրավանքի դավթի ԺԳ դարի մի հիշատակագրության մեջ հստակ փորագրված այս անձնանունը ճիշտ չի կարդացվել և այդ պատճառով դուրս է մնացել անձանունների ցանկից: Ահա համապատասխան հատվածը. ի տաւի սրբոյն Յակոբա : Ա: ժամ առնեն աւտարաիկոն ե: Ա: Յանանիսի (Գ IV 73): Այստեղ չի իմացվում, թե ում համար է կատարվելու առաջին պատարագը, բանի որ աւտարաիկոն տառաշարքը անուն չի համարված, անտեսված է և տեղ չի գտնի ցանկերում: Իրականում բարի վրա փորագրված և գծագրում հստակ երեւիացող գրերը պետք է վերձանել Աւտարաիկին, որը սեռ. տրական հոլովվածն է Աւտարաիկին իգ. անվան (նկ. 29):

ԻՒՍԱԲԵՆՍԻՐԲՈՅՆՆԱՅ
ՎՈՐԱ:ԱՅԽԱՌՆԵՆԱՅ
ԱՐՄԻԿ ԼԵՆ ՈՒՋԵՐԷԿ:ԷԻ
ԵՄ ԱՅՈՂԱՆԵՍԻՄԻԱՐՔԻՆԱՅ
Ի յ ԱՅ

նկ. 29

Բնիկ հայ. աւտար բառը առանձին կամ բարդություններում ար. իգ. անձանուններ է կազմում, որոնք վկայված են ԺԳ—ԺԻ դարերի վիձագրերում և ձեռագրերում: Այսպէս, նորավանքում ունենք ամ ողորմի Վանեականի եւ Աւտարին (ԺԳ դ. Գ III 227): Օձուռի խաշարձանի պատմանդանին փորագրված է. ի ՈՄԳ (1204) րափս ես՝ Աւտարս կանգնեցի զիսա (ՄՎ): Բաղնայրի նույն ժամանակներին մի քնագրում՝ Աւտար Կողբացի: նույն անունը ա>ու անցումով հանդիպում է Քանատի վանքի ԺԳ դարի մի նվիրագրում. ես՝ Ուտար եւ ամուսին իմ Գուտրիկ (Գ III 86): Աւտարիկ փառաբարական ձևը գտնում ենք Վ. Ուրդուր գլուղատեղի եկեղեցու ՉեԱ (1292) Բ. արձանագրում. մե՛ք Աւտարկա որդիս՝ Հասան եւ խոցաղի (Գ III 37):

Բուն Աւտարիկին իգ. բաղադրյալ անունը բանիցս հիշատակված է ԺԳ—ԺԻ դարերի ձեռագրերում, ամենուրեք միայն ուղիղ ձևով: Տիկին բառը հին հայերենում ոչ հոլովման է, և թեք հոլովմանում սպասելի էր տիկնոջ, Աւտարիկնոջ. սակայն Հայրավանքի բնագրում փորագրված է Աւտարիկին(յ), այսինքն այ հոլովվածքը: Ինչպես նշել ենք Ախրեւանուն (<Նղրայրանուն) բառահոլովածում, Աւտարիկին տրական հոլովվածքը արդյունք է հին հայերենի այն օրինակափոխության ազդեցության, բայտ որի բարգրությունը երբեմն չի պահպանում երկրորդ բաղադրիչի հոլովվածքը, այլ կարող է ենթակայան ներ հոլովման: Տվյալ դեպքում Աւտարիկին Ո հոլովման է, իսկ Հովհաննավանքի ԺԲ դարի մի վիձագրում Մայրաիկին ենթարկվել է ա հոլովման՝ Մայրաիկնա, փոխ. Մայրաիկնոջ կամ Մայրաիկին(յ) (ԿԿԶ 77):

Գ. ՉԱՆԿԱԳ, ՏՂԱ — Գավթի ԺԳ դարի հաջորդ արձանագրության մեջ հստակ կարդացվող անձանունները միապես, չեն վերականգնվել, որի հետևանքով ամբողջ քնադիրը մնացել է անորոշ ու տարտամ: Ահա տվյալ հատվածը. նոր կիրակիէն : Բ: պատարագ արենե խոցաղեղին, որչափ կենդանի է զանկազին եւ տղաին, եւ յետ ժանու՝ խոցաղեղին (Գ IV 75): Այստեղ վերձանող անձանունն է համարել միայն խոցաղեղին, իսկ զանկազին և տղաին դիտված են իբրև հասարակ անուններ և ցանկերում են արտացոլվել: Եթև արվյալ հատուցման բանաձևում տղաին (<տղայ) դեռ կարելի է նաև հասարակ անուն բնկալել (թեև սովորականը պետք է լիներ՝ որդայն) և կապակցությունը հասկանալ՝ Զանգակին և տղային, այսպէս կենրեկ է, որ Զանգակ (նու, գ հնչյունների դրափոխությամբ՝ Զանկազ) չէր կարող հասարակ զոյական լինել և պետք է համարել անձնանուն, որի հիշատակին պատարագ է տրվելու: Ավելի հավանական է մտածել, որ տվյալ իրադրության մեջ անձանունն են թե՛ Տղա-ն, թե՛ Զանգակը: Զանգ. Զանգակ բառից ար. անձանուն հայոց մեջ թեև սակավ, հայտնի է ն դարից: Տղա(յ) անունը առանձին չի վերկայված աղբյուրներում, զործածական է եղել հարազդի բարդություններում. Իրիգոր Տղայ, Տղապարուն, Տղաիկին (= երիտասարդ տիկին իմաստով)¹⁹⁶:

Դ. ԹՈՒԻԿ(Ս), ԹԵ ԹՈՒԻԿ — Փորագրված է զավթի ավանդատան պատի հիշատակագրում, որի միակ վերձանությունը տալիս է

¹⁹⁶ Չբ. Անտոյան, Հայ. անձն. բառարան, Բ, էջ 166, Ե, էջ 170:

Ս. Բարխուղարյանը, զՔովսա՝ տեղ խորանիս յիշեցնեցիք յաղարթ
ձեռ, ով եզրաբ (Պ IV 75): Բնագրի հասակ լուսանկարով հնարա-
վոր է ճշգրտել այս ընթերցանությունը, բայց այս, զՔովսա ուղ-
ղելի է՝ զՔովսա (զ-Քովսա), յիշեցնեցիք-ը՝ յիշեցնեցիք (նկ. 30):

† ԶԹՈՒՒՄՍՆԵՐԻՈՂՆԻ
Ս ՅԻ ԸԵԱՅՁԻԿ ԶԱ
ՈՒՐԱ ՉԵՐՈՒՆԵՐԱՔ

Անձնանուն, այսպեսով, Քովսա (զՔովսա) և ոչ թե Քովսա, բայց ուր, Քովսա ձեռ այլուր չի վկայ-
ված և զվար է ստուգաբանվում,

Ա. 30

այնինչ Քովսա-ը հայ. սե, գորշավուն բառն է, որ թեև առանձին իբրև
անձնանուն չի հիշատակված, սակայն գործածական է բարդություն-
ներով՝ Քովսայր, Քովսամ, Քովսանուկ, Քովսիկ, Քովսամ,
Քովսբանկ և այլն¹⁹⁷: Մյուս կողմից, մեք բնիմով նախադասության
բայ-ստորոգյալը փորագրված է ոչ թե յիշեցնեցիք, այլ յիշեցցիք,
այսինքն բնագրի հեղինակը հետևել է բայածին ստուգաբանական
գրությունը, որ հորդորական հրամայական հոգնակիում կունենար՝
յիշեցց+չիք = յիշեցցիք և ց = ք + ս, եաց > ք քրինաչափ անցում-
ներով՝ յիշեցիք: Ուրեմն յիշեցնեցիք ձեռ բարի վրա չի կարգացվում
և փրականորեն արհեստական է, անբացատրելի:

Ե. ԱՉԱՏՆԿԱ (< ԱՉԱՏԿՆԿԻ) — Շրջրտելի ստուգաբար վեր-
ծանվել է զավթի ավանդատան պատին փորագրված ԺԳ դարի մի
բնագրի հատուցման բանձնում, Ահա ավյալ հատվածը Ս. Բար-
խուղարյանի բնօրրոգումով. ի տանի արդյն Խարզի: Ա: ժամ առ-
նեն Խարունիս ե: Ա: ազա կնկա (Պ IV 72): Այստեղ ժամը է մը-
նում, թե որն է Երկրորդ անձնանունը, որի հիշատակին արվելու է
պատարագներից մեկը: Վերձևստոր առյախ է միայն պահպանված
զբերը, սակայն երանցում անձնանուն չի անկում և ցանկում չի
արտացոլում: Անորոշ անձնանունը պետք է վերականգնել Ազատկը-
նիկ (> Ազատկենկա), որ վկայված է
կենիկ միջին հայերեն ձևի և նրանով
կազմված բարդության հավանաբար
ամենավաղ և միակ հմուրը միջնա-
դարի վիճական բնագրերում (նկ.

Ա. 31

ԻՄԱՒԵՆՄԻՐՐՈՅՆԱՐԳԻՒՄ
ԱՄՆԵՆԻԱՌՈՒՆԵՒԱՆ
ՉԱՏԿՆԿԱ: ԿՄԱՆԵՑԱԼԵԻ
ՏԻՆՉԻՐԵՆՏՈՂՈ ԱՌՆԵԿ
ԻՍՈՎԻՄԱՆԵ ԴԵՑԱՅ

¹⁹⁷ ՏԵ՝ Ա. Մեցապալեյան ռՔովս մական հուշարձանների մասին, ՊՅԶ,
1976, № 2, էջ 196,
182

31): Առաջին եղբուն ազատ բառով բարդ անձնանուններ հայտ մեք
գործածական են եղել միջին դարերում՝ Ազատյան, Ազատյան, Ա-
զատակիկ, վերջինս ավելի մոտ է մեր վերականգնած Ազատկիկ
ձևի հետ:

Զ. ՄՐՈՒՄ, ԹԵ՝ ՄՈՒՄԱ — Անձնանունը կարգացվել է Հայ-
բավաքի գրեթե Եկեղեցու հարավային բարավորի վրա փորա-
գրված նվիրատվական արձանագրության մեջ. ես՝ Վարհամ, Սոն-
կանու, Միուն, Խաչատուր, Մխիթարի ավաք յԱնն զպատվի
տեղին յԱննավոս ի վանես (Պ IV 69): Սույն բնագիրը հրատարակել
են նաև Զայալյանցը, Ալիշանը, Մարտալյանցը, Լալայանը, սակայն
սրանց մոտ խնորր ապրկա անձնանունը չի կարգացվել, միայն է: Զր-
Միուն անսովոր անուն է, մասնաբաժանության մեջ չի վկայված, էր:
Անձնանունի բառարանը ղուկի: Ս. Բարխուղարյանը կառկածելի հա-
մարելով անձնանվան Միունն ձեռ՝ այն փորագրողի վրիպում է դի-
տում, որ կարող էր առաջնայլ ամուսին կամ Սիմեոն բառերի շփո-
թումից (Պ IV 70):

Տեղում և լուսանկարի վրա ստուգելով ավյալ տառաշարքի բնո-
թրինակությունը՝ համոզվեցինք, որ Բարխուղարյանը ստույգ չի բա-
ցել կցագիրը, բայց այս, նույնը կարելի է կարգալ նաև Մրուան
(Մ-ի վրա կցագրված է ոչ թե ի, այլ ր, և-ի և ա-ի կցագիրը պետք է
կարգալ ոչ թե ես, այլ ան), այսինքն Ժ-ԺԳ դարերում հայտց մեք
լայն տարածում ստացած արական անձնանուն, որը Զր. Անձնանի
ստուգաբանությամբ ծագում է արար. Marvan անունից¹⁹⁸: Այսպես,
Անիկ Ժ Գ. մի նվիրագրում վկայված է կամ եղի իմ՝ Շուշան,
տիկնայ տիկնոջ, որ ետո՝ Արուան կուզակն ի Պ Գրիգոր (Պ I
31, 32): Ավելի ուշ, ԺԳ դ. Մանուսակների արձանագրության մեջ ես
հիշատակվում է Մրուան, իբրև նվիրատուի անվան ուղիղ ձեռ, ես՝
Մրուան միարանեցա ի սր՝ Ամածինս ես էտու բնա (Պ VI 17):

74. ՀԱՍԱՐԱ...

Ձագավանքի ԶԳ (1325) թվակիր տաճանագրության մեջ հան-
դիպող այս խաթարված տառաշարքը արձանի անգամ դիտել և ար-
ժեքավորել է ակադ. Լ. Մանանդյանը: Բվարկելով Հայաստանի բը-

¹⁹⁸ Զր. Անայան, Հայտց անձն. բառարան, Գ, էջ 427:

նակությունից մտնողական շրջանում գանձվող հարկերը՝ նա հասարակ համարում է այդ հարկերից մեկը՝ անասնահարկ, եղնատերերից գանձվող սուրբ, որ Անիի ՉՄ (1301) թվականի արձանագրությունյան մեջ հիշատակված է եղին հազար անվան տակ: Այս առթիվ Մանանդյանը համամիտ է հասարակ հազար բառի այն ստուգաբանությունը, որ տալիս են Յ. Կարսը և Ն. Աճառյանը, ըստ որի բառը ծագում է արաբ. hizira = փարսի, մակադասեղ, ցանկապատ արձանից և վկայված ժամանակաշրջանում նշանակել է այն հարկը, որ եղնատերերը վճարել են կալվածատիրոջը կամ իշխանին՝ նրա փարսիներից ու զոմերից օգտվելու համար: Նույն հասարակ տառաշարքը վերջերս քննության է առնել նաև պրոֆ. Բ. Առաքելյանը և հանդիման այն համոզման, որ այդ տարբային տերմինը անասնահարկ չէ, այլ բաղաբնիկ կամ ամբողջների պարսպաները կառուցելու կամ վերականգնելու պարտավորություն, որն իր իմաստով հիշեցնում է Անիում Բյուզանդիայի կատեպան Բաբրատ Վիկացու արձանագրությունյան մեջ հիշատակված անգարիտեր (1056 թ. Գ I 37): Գրոթ. Առաքելյանի հիշյալ մեկնությունից երևում է, որ նա բառիս ծագումը դնում է արաբ. hisar = բերդ, պարիսպ, ցանկապատ արձանից¹⁰⁹: Հասարակ տառաշարքի հիշյալ բացատրությունների համար հիմք է ծառայել Ջազգվանի արձանագրության այն ընդօրինակությունը, որ Շահաբաթյանյանցից սանելով 4. Կոստանյանցը հրատարակել է «Վիմական տարեգրի» ժողովածուում: Իրականին ավելի հարազատ է լրիվ է Մ. Սմբատյանցի վերծանությունը, որ հրատարակված է ավելի ուշ՝ 1895 թ., սակայն այստեղ ու բարի այդ մասը չարդված լինելու հետևանքով բնագրի սողահզրները տեղ-տեղ խաթարակել են և սպառիչ լին կարգազրվում, ուստի անհնար է ստուգել հասարակ ընթացից հավաստիությունը (ՄՍՏ 241):

Հասարակ տառաշարքի ընթերցումը և վերծանությունը պարզելու նպատակով մեջ ենք բերում նույն արձանագրության մեր ընդօրինակությունը, որ ստուգվում է լուսանկարով. «թվ. : 224 : ի պարսիսթևան Ջաբարիա, թոն Աւազին, մեթ՝ Գուրիթ և Վասնայ պ Բաթա և որդիք մեր՝ Սատրիկ և Բաճահզին և Աւազալ և Կանն յուսոյն որ առ աստուած և մեր արևուս համար թողաք զվանաց կոստ

զմարդո, եզին, իշո և զամենայն ցեղ կոո և զՀասարա...» և 4—5 տառատեղ ընդհատումից հետո կարդացվում է. «քս միացուցաբ...» Այստեղ ավարտվում է արտոնագրի հիմնական բովանդակությունը և շարագրվում անեծքի ձևակերպումը: Հարց է առաջանում, ի՞նչ գրեթե են եղել զհասարակ տառաշարքից հետո և ևս միացուցակից առաջ, կամ ինչպես ամբողջացնել այս խաթարված նախադասությունը: Մեր հավանական է թվում զհասարակ շարքի վերջում վերակցել կ զիրը և կարգալ զհասարակ, որ համանիշ է հասարակաց բառին և նշանակում է միայն, անխոր, անհասարակ, ամբողջովին, բոլորակաճ և այլն¹¹⁰: Այս իմաստով է գործածված զհասարակ (= հասարակաց) բառը Հովհաննիսյանի ԺԳ դարի մի արձանագրության մեջ. «մեք էլ զՀասարակ ի Սուրբ Կարապետս ազուպանցաք (ԿՂ 100), կամ Գառնիում, նույն ժամանակների մի արտոնագրում. «զվերուցաք զՄունպենց վանի զհասարակաց զգիհո և զամենայն ցեղ վաճառի սամղա...» (ՄՀ):

Ինչ մնում է «ես միացուցակ» հատվածին, սպա նրանից առաջ կարելի է վերականգնել (ի տուր) ևս միացուցակ, որով և կամբողջաբան խաթարված նախադասությունը: Մեր այս մասնակի վերականգնումներից հետո բնագրի վերծանությունը կհասկացվի այն իմաստով, որ պարտ՝ Ջաբարիային ենթակա իշխանները վանքի կոնքը վերացնելով՝ զրանք միացրել են սուրբերին, այսինքն աշխատապարհակները փոխարինել են բնամիջերով տրվող հարկերով: Հետևաբար, հասարակ(ի) տառաշարքում առանձին տարբային կամ պարհակային անվանում տեսնելու վարկածը հիմնված է Ջազգվանի արձանագրության խաթարված հատվածի ոչ ստույգ վերականգնումն իրա և իբրև այդպիսին այնքան էլ համոզիչ չէ: Արձանագրության կողմված մասերի մեր լրացումներն ու վերականգնումները պայմանական են, սակայն բոլոր դեպքերում այդպիսի վերծանությունը, մասնավոր զհասարակ բառի վերականգնումն ավելի հավանական է, քան այն մեկնությունը, որ առաջարկում են հիշյալ մասնագետները:

¹⁰⁹ Տե՛ս Ն. Մանանդյան, Փնեական տեսություն, 1, Գ, էջ 288, 2. Աճառյան, Արմ. բառարան, Գ, էջ 19, էջ 12, Բ. Առաքելյան, Քաղաքներ..., Բ, էջ 232:

¹¹⁰ ՆՁԲ, Բ, էջ 61:

75. ՀԱՍԱՆ ՏԱՒՂԱՆ, ՅՈՐԳՈՐ, ԹԵ՛ ՀԱՍԱՆ ՏԱՒՂԱՇԻՆ, ՈՐԳՈՐ

Այս անորոշ անձանությունները վերծանվել են Զուլաբարի «Ջուլա-խաշ» հուշարձանի մոտ ընկած տապանաբարի վրա, որի գիտական հրատարակությունը տվել է Ս. Բարխուդարյանը. «Այս է շիրիմ հանգրստան խոյ, Հասան Տաղաշինիս, թոռն Իւանոյ ևւ որդոյ Որդորին, թերակատար ի Քրիստոս փոխեցայ... ի թվին : ՉԾԳ :» (Գ IV 189) :

Անձանությունների ցանկում իբրև ուղիղ ձևեր գրված են՝ Հասան Տաղաշի (ըստ Մմբատյանցի՝ Տաղաշի), Որդոր, Իւանո, որ առարկելի են, քանի որ այլուր վկայված չեն և այս ընթերցմամբ անմեկ-նեկի են :

Քաղաքը գրեթե անեղծ է մնացել, միայն Հասան տալ գրեթե հետո մոտ 3—4 տառատեղ շարված է, և հնարավոր չէ հավաստի վերականգնել այդ բառի նրկորոշ նշքը, սակայն Տաղաշի կամ Տաղաշի վերականգնումը հնուտ է բարի վրա պահպանված գրերից : Այլ առիթով լինելով հուշարձանի մոտ, նորից ստուգեցինք քննչերի ընդօրինակությունը և գտնում ենք, որ եղծված մասում ստույ գրե-րերից հետո եղել են անխ տառերը, ուստի և իսթարված բառը պետք է վերականգնել Տաղաշին, որից ամբողջ անձանությունը՝ Հասան Տաղաշիս (նկ. 32) : Տողան, Տաղան ժԴ—ԺԵ դարերում

• • • ԱՅՍԵՒՆԻՄՄՆՄՆՄ
ՍՆԵՆԻՄՈՅՅԱՆՄԱԻ ԱԼԵԻ...
ԹԵՐԻՆԻՒԿԱՆՈՅԵՆՈՐՄՈՅՈՐՄՈՐԻՆ
ԹԵՐԱԿԱՍՐԻՔՄՈՒՄԵՅԱԵԻ
ԱՅԳԻՒՐՈՂՄՈՒՄԵՍ
ԼՈՅՍՆՆԻՄՄՄՄՄՄՄ
ԺԱԿԵԱՅ ՈՎԱՄԴԵՔ

ՈՂՈ
ՐՄՆԱԿ
ԻՆԵՔ
ԻՌԿԵԹԳ

նկ. 32

գործածական ար. անունը ըստ Հր. Աճառյանի ծագում է թրք. Խօրան = «բաղձ» բառից, ուրիճն Հասան Տաղան հարադրական ար. անունը կարող էր նշանակել գեղեցիկ բաղձ²⁰¹,

²⁰¹ Հ. Աճառյան, Հայ. անձն. բառարան, Ե, էջ 171 :

ինչ մնում է Որդորին, ապա այստեղ էլ բառանշատուն է սխալ կատարվել. հարկ էր եղած տառաբարերը վերծանել ոչ թե որդոյ Որդորին, այլ ժամանակի վիմագրերում սովորական որդա Յորդօրին, այդ ղեպքում կունենայինք հայ. յորդօր = մեղմ, հանդարտ բառից առաջացած ար. Յորդօր անունը, որ քանիցս վկայված է ԺԴ—ԺԵ ղղ. վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում²⁰² :

76. ՀԱՍ

Վառց ձորի ԺԴ—ԺԶ դարերի մի քանի արձանագրություններում հիշատակվում է բառիս որոշյալ գործիական հոլովածներ՝ հաստվի, իբրև հողեւոր կենտրոններին նվիրված հողամասերի կամ այլ-վիճերի ամբողջությունը բնութագրող հատկանիշ : Տվյալ նշանակու-թյամբ բառն գրական հուշարձաններում կամ արդի հայ խոսվածք-ներում չի հանդիպում և այդ պատճառով չի բացատրվում գրականու-թյան մեջ : Հաստվի պարունակող վիմագրերի հրատարակողները առավել կամ պակաս նույնակառուցվածք ընդօրինակելով բառն, չեն անդադարձնել նրա մեկնությունը : Միայն МАК-ի հեղինակները հաստվի հասկացել են հողամաս, տեղամաս, հանդավայր և Քանատ վանքի քնադրում վկայված գեղախին ըզգլախին հողերն իր : Գ : հատուկ կապակցությունը թարգմանել земли Халин-Ганин с 4 участками (МАК 132), որ անհարի է քնադրին և անմիաստ :

Հաստվի բառի նշանակությունը ստույգ մեկնելու նպատա-կով, մեջ ենք բերում նրա վկայություններով նախադասություննե-րը Ս. Բարխուդարյանի հավաստի վերծանությունը : Հերհերի Աստ-վածածին Եկեղեցու հարավային պատին, ՉԱԱ (1283) Թ. ԵՍ Ե-տուն... նուէր ի Ս. ուխտս զՔարաթաղին այդին վներին հատովն...» (Գ III 51) : Վերնաշենի Սպիտակավոր Եկեղեցու հյուսիսային պա-տին, ՉԱԱ (1322) Թ. ԵՍ Եայ... տուի ղՏանծի հող իր : Գ : հա-տուին, վներ ու ներքի ճանապարհովն, Բ : ձորմիջով ու Քարաթաղ ձորն՝ Գանձանին ստովն ու չրախառովն, Բերդի ձորովն...» (Գ III 96) : Նույն վանքում ՉԱԸ (1339) Թ. ԵՍ Մմբատ... տվի ղՎախիսան-

²⁰² Հ. Աճառյան, Հայ. անձն. բառարան, Գ, էջ 730 :

կենց աշխին իր ամէն հատանն» (Գ III 98): Թանաթի վաւեր՝ Ս. Ստեփանոս Եկեղեցու արեւմտյան պատին, 226 (1336) թ. «եւ՝ Ուրան, որդի Վահրամ Շահունեցի տէր ներքանա ետու զեալին Ըզալանին հողերն իր • Գ • հատովն եւ թմբերովն...» (Գ III 80):

Այս օրինակներում հատ բառը կիրառված է այդ արձատի բաղձաթիվ իմաստներից մեկով՝ ծայր, վերջ, հատած, լայնարար եւն՝ սահման²⁰³ նշանակութեամբ, որ ծագում է հատանել (կտրել, կրճատել, սահմանացնել, որոշել, սահմանել) բայի անցյալ կատարչային կզ. 3-րդ դեմքից²⁰⁴: Ըստ այդմ, վիճակոն արձանագրութիւնների : Գ : հատովն պետք է հասկանալ ավյալ այդին կամ հողամասը իր : Գ : սահմաններով, շրտ բոլորովն Մեր այս բացատրութեան համար լավագոյն ասացույց կարող է ծառայել էսալիի նվիրագիրը, որտեղ նվիրված զՏանծի հող իւր : Գ : հատովն նշելուց հետո մասնաբաժան թվարկում են այդ հողամասի սահմաններում գտնվող և Տանծի հողի մէջ մտնող երկու ձորամեջը, ներքի ջրախառը, Բերդի ձորը և այլն: Եթէ հատը հողամաս, հանդամաս նշանակեր, ինչպես կարծում են MAK-ի հեղինակները, ապա էսալիի արձանագրութեան մէջ հարկ չէր լինի նորից հականն անվանն թվարկել այդ հողամասերը Խր ամէն հատան (= հատովն) պետք է հասկանալ իր բոլոր սահմաններով (ամէն < ամենայն) : Իսկ շերտերի բնագրում կարգացվող՝ այդին վերին հատովն՝ այդին վերին սահմանով, այսինքն նշվել է միայն նվիրված այգու վերին սահմանը, մյուսները կամ ակնհայտ են եղել կամ ավելորդ է համարել հատովն շերտել:

77. ՀՈՎԱՏՈՒՆ, ԽՈՑՏԱՔԱՏՈՒՆ

Այս տառաշարերը կարգացվում են վայոց ձորի Ամուզու նորավանքի Ս. Կարապետ Եկեղեցու դավթի մի նվիրատուական արձանագրութեան մէջ, որ փորագրված է արեւմտյան պատին, ներքուստ, 9ի (1271) թվականին: Նվիրագիրը մեզ է հասել զգալի չափով խաթարված վիճակում, որի լրակատար վերծանութիւնը որոշ

զովագրութիւններ է հարուցում, այդ պատճառով էլ նա նախկինում հրատարակվել է նկատելի տարբերբերցումներով և թերի:

Վերջերս «Դիվանի» հերթական պրակում, որ նվիրված է վայոց ձորի արձանագրութիւններին, այս բնագիրը լույս տեսավ ստավի կատարչալ և հնարավորին չափ ամբողջացած ընդօրինակութեամբ, որ կատարել է Ս. Բարխուդարյանը: Ահա արձանագրութեան մեր բնառքնութեան հետ անշվող հատվածը նրա վերծանութեամբ. «Ես՝ Սարգստազ երեց, որդի Մկրտչին, Էկի ք նորավանս... իմ սրտի յաւարտութեամբ զիմ գնած հայրենիքն... որդեց իդին ու զիմ հովատունն իր սահմանովն ու : Գ : խոցարատունն ու : Գ : սենեակն՝ յեղեգնաձոր իմ գնած՝ Եկեղեցոյս ավի...» (Գ III 218—219, սխալմամբ տպագրված է : Գ : խոցարատուն), հետում են հատուցման և անկծքի ձևակերպումները (նկ. 33):

ՅԵՆՈՒԱՅԵՍԱՄԿԱԷ ԴԵՐԵՅՈՐ ԴՈՒՅՈՒ... ՉԻԵԿԻՐԱՐՈՎԱԿ... ԻՆՆԵՍԱ.
ԱՐԻՆՏԵՐԻՅԱՎԱՐՈՒԹ ԲԵՆԳՆԱՅԿԱՅՐ. ԻԲԻՆՆ... ԶԻԱՉ... ԲԴԵՆԻ
ԱՉՈՐԳՆԵԿԵԼԵՆՉՈՅ ԵՎԻՐԵՆԻՐՆ... ՍԵՐԱՄԱՐԵ ԱՅՍՈՒԲՍՈՆՉԻԿԱ
ԻՄԵՐԵՆԵԱՆՉԻՍԵՐԱՅԵՆՆԻՐԱԿԵՐԱԿ... Ի ԱՆՍՈՒՅԵՆՈՎՉԻ

նկ. 33

Այսպիսով, Սարգստազ երեցը վանքին նվիրել է. ա. ինչ-որ գերդաստանի պատկանող կամ ինչ-որ հանդամասում գտնվող այգին (... րդեց իդին < այգին) բ. եղեգնաձորում իր գնած 4 սենյակները, գ. մեկ հովատուն, դ. երեք խոցարատուն:

Այս նվիրներից այդին և սենյակները հաճախ նվիրաբերվող ունեցվածք են, հանդիպում են նաև այլ հուշարձանների նվիրաբերում և որևէ տարակույս չեն առաջացնում: Շալտիի է նաև, որ տրեները կամ սենյակները իբրև անտերի և արհեստագործութեան հետ անշվող ունեցվածք, ամբողջաբար նվիրաբերվում են բազմներում, զուղաբաղաբներում կամ ավաններում և իբրև այդ իրողութեան հաստատում կարող է ծառայել նաև այս արձանագրութիւնը:

Եղեգնաձորը կամ Եղեգիւր վայոց ձորի ստավի բարգավաճ ավաններից էր, Օրբելյանների վարչական և տնտեսական կենտրոններից մեկը, որ բարձր զարգացման հասավ հատկապես ԺԳ դարի

189

²⁰³ Տե՛ս է. Անուշան, Արմ. բառարան, Գ. էջ 157

²⁰⁴ Է. Աղայան, Բառարանական և ստուգաբանական հետազոտութիւններ, Ե. 1974, էջ 95—96:

էրկրորդ կենսերին: Մինչև որս էլ Շատինի և Եղեղիսի միջև ընկած ընդարձակ տարածքի վրա պահպանվել են այդ վանառարհ՝ ավանի բազմաթիվ ավերակները:

Սարկավազի երրորդ նվերը հովատունն է. ի՞նչ հասկանալ այս անվան տակ: Չնայած բառիս ակնհեր կազմությանը՝ հով + ավ + տուն, հայերեննադիտության մեջ նրա արտահայտած իմաստը լիովին չի բացահայտված, և հայագետները տարբեր ձևով են մեկնաբանում նրա նշանակությունը: Սարկավազի արձանագրությունն ընդօրինակողները չեն բացատրում բառն (Քարբիտունի, Ալիշան, Հայտյան): Հայագետ Կարսայ Մխիթար Հերացու «Ձերմանց մխիթարություն» գրքում բանիցս հիշատակվող հովատունը (ս...պատնէ է զայն հիւանդն ի հովատուն պահելո) հասկանում է լազանէի սենյակ, լազարան (KWM): Սա. Մալխասյանցի բառարանում հովատուն բացատրվում է. «բաղնիքներում լողարանին կից սենյակը, որտեղ լողանալուց նետո հովանում էին և զգեստները հացնում»: Ը. Անատյանը Աթմ. բառարանում հով բառաճորդամի տակ նորակազմ գովառական ձևերի մեջ է բերում հովտուն բառը, սակայն առանց բացատրելու դրա արտահայտած իմաստը²⁰⁵: Որքան էլ բառակազմորեն ստույգ լինեն Կարսայի և Մալխասյանցի մեկնությունները, ակնհեր է, որ նրանք նկատի ունեն հովտուն կամ հովատուն բառի կամ կազմությունը (հով-տուն, հով-ա-տուն), կամ նրա նշանակությունը միայն վկայված իրադրության մեջ (Մալխասյանցի բառարանում առանց աչդպիսի վկայության): ՄԱԿ-ի հիշխանկերը հովատունն թարգմանել են ՁՅԳՅ, առանց պարզելու վերջինիս բովանդակությունը (ՄԱԿ 172):

Ինչպես նկատվում է, մեր օրինակում հովատունը հաշիվ չի հանդես գար լազատուն կամ նրան կից մի այլ սենյակ նշանակությանը, քանի որ բնագրում պարզ շեղված է զիմ հովատունն իր սանձանովն, որ նույն ժամանակների այլ արձանագրությունների համանմանությամբ պետք է հասկանալ՝ հովատունը իր մերձակա հողամասով կամ տնամերձ տարածությունով: Այս դեպքում արդեն հովատունը չէր կարող մեկ սենյակ կամ լազարան լինել, քանի որ բնագրում հատուկ չի նշվում լազարանի կամ բաղնիքի մասին և բա-

ցի դրանից հատուկ շեղում է հովատունն իր սանձանովն, որ չէր կարելի սակ մեկ սենյակի համար: Թվում է, այստեղ հովատուն պետք է հասկանալ՝ ամառանոց, ամառանոցի շենք, տուն՝ ամառանոցային վայրում: Որ հովատուն բառն այս իմաստն ունի, հաստատում է բնագրում հիշվող հաջորդ նվերը՝ Գ: խոցառապատունը, որը նույնպես ամառանոցային կամ հովանոցային շինության իմաստ է արտահայտում: Բառն անծանոթ է հայագետությանը և վկայված է միայն այս արձանագրության մեջ, բայց այդ բնագրի հրատարակչինը և ուսումնասիրողները չեն անդրադարձել նրա մեկնությանը: Ալիշանի գրքում, օրինակ, բառն սպառված է մեծատառով՝ Խոցառապատուն, և կանխածանցով անդանուն է դրավում (ՂԱՍ 190): Միտեր և Փուշկե-Ղովհաննիսյանը նույն բառը ընթերցել են Խոցառապատուն և այդ ստույգով անդանուն են տեսնում նրանում՝ ХОЦ-ТАКАТУИ (ՄԱԿ 172): Ստույգ է ընդօրինակությունը Ս. Բարխուդարյանի ժողովածուում, սակայն առանց խոցառապատուն բառի բացատրության (Գ III 220, 425):

Խոցառապատուն բառի ստուգաբանության համար կարելի է նրկատի ունենալ նրա ակնհայտ կազմությունը՝ խոց-տախ-ա-տուն, այսինքն՝ տուն, սենյակ, որտեղ տաք ջրերով ապաքինում են խոցերը, հանքային տաք ջրերով և նրանց ցեխով բուժման լազարանի սենյակ կամ տուն, առողջարանում հատուկ սենյակ՝ հանքային տաք ջրերի և ցեխի լազանքներ ընդունելու համար: Այս ստուգաբանությունն առաջարկել էինք 1971 թ հրատարակած հողածում: Սակայն նույնիսկ բարդության առաջացումն անհավանական համարելով՝ հակված ենք կարծելու, որ խոցառապատուն կարող է կազմված լինել երկու բաղադրիչից՝ խոց-տուկ (խոստուկ, խոստուխ) և տուն: Խոստուկ, խոստուկ, խոցտուխ բառ միջին հարիսնում և արդի մի շարք բարբառներում նշանակում է՝ ցավ, վարացավ, նիվադադրյուն, այստ, նաև՝ հավի ֆարանիկ, կույր աղիքի բուրբոսում և այլն²⁰⁶, Մազնիզով խոցտուկ և տուն բառերից՝ խոցտուկատուն, բարդությունը կարող էր նշանակել նիվադադատուն, բուժման սենյակ, բուժարան և այլն: Ինչ մեռում է խոց-

²⁰⁵ Սա. Մալխասյանց, Բացատրական բառարան, 3-րդ. էջ 134: Ը. Անատյան, Աթմ. բառարան, Գ, էջ 376:

²⁰⁶ Ըր. Անատյան, Գավառական բառարան, էջ 484, Համշենի բարբոսը, Ն., 1947, էջ 261, Արմատական բառարան, Բ, էջ 412-413, Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Բ, 1972, էջ 557-580:

տովառուն (խոստովառուն, խոցտովառուն) > խոցտախառուն
անցմանը, այսպեւ այստեղ հավանաբար զգալի դեր է խաղացել ժո-
ղովրդական ստուգաբանությունը, բայց որի իբրև բարդության բա-
զադրիչներ են դիտվել խոց, տավ և տուն բառերը: Խոցտախառուն
ստուգախոյառոջ շինություն և ընդհանրապես հանրային շքերի շրջա-
նում շրջարժեքական կառույցների գոյությունը հաստատում են միջին
դարերի մասնաճյուղական աղբյուրները և նյութական մշակույթի
հուշարձանները: Մեր օրինակում նվիրատուն հովառունը և խոց-
տառաունը նվիրել է Ամառոթի վանքին, որ մտածել է տալիս, թե
այդ ամառանոցային կամ առողջարանային շինքերը գանձելիս
ենդեղ վանական կենտրոնից ոչ հեռու, հանրային տար շքերի շրջա-
նում և նվ հերթի, միջնադարյան Հայաստանի գործնական բժշ-
կության պատմությունից հայտնի է, որ Վայոց ձորի այս շրջանում,
Օրբելյանների և Պաշլյանների տիրույթներում բխող հանքային տաք
կամ սոժորական բուժիչ ջրերը լայնորեն օգտագործվել են շրջակա
բնակչության կողմից բուժիչ և կազդուրիչ նպատակներով: Այդ հան-
քային ջրերից առանձնապես մեծ ամբողջ են ունեցել Տաթևի վան-
քի մոտի ջերմային աղբյուրները, Ոսկեպարի, Զերմուկի և հենց Ա-
մազոտի նորավանքի հանքային ջրերը: Հանքային աղբյուրների շրջ-
վանում հաճախ կատարվում էին նրանց բուժիչ նպատակներով օգ-
տագործման համար բարեկարգման աշխատանքներ և կառուցվում
որոշ հարմարանքներ՝ արհեստական քարի ավազաններ, լողանքի
համար մեկուսացված բաժանմունքներ, ճրքման ամբողջական քա-
ղապակ պենյակներ՝ բուժիչ ջրերի շրջատար խողովակներով և այլ
հարմարանքներով, որոնց մասնագիտիկները կապահովել են մինչև վեր
օրերը²⁰⁷: Ահմերե է, որ այդ բնույթի առողջարանային շինություն-
ներ էին և Սարկավազ երեքի գնած («այս տարս ոչ լիմ հար հայ-
րենեցիս եւ ոչ իմ աղբարսցի, իմ որամագին է...») և Ամազուի վան-
քին նվիրած եովառունը և խոցտախառունը²⁰⁸:

²⁰⁷ Տե՛ս Յ. Ս. Оганесян, История медицины в Армении, Е., 1946, т. I, էջ 241, т. III, էջ 260:

²⁰⁸ Պատմարան Գր. Գրիգորյան 1973 թ. Հրատարակած մեկադրության մեջ աշխատում է վիճարկել եովառուն, խոցտախառուն բառերի մեկնաբանության առաջ-
նությունը՝ գտնելով, որ մեր 1971 թ. հրատարակվածից առաջ իր անտիպ գրքերում
ցիայում տվել է այդ տերմինների բացատրությունը: Սակայն ընթերցողը հեռու-
թյան կարող է համոզվել, որ այդ բառերի մասին Գրիգորյանի ընդամենը առաջ ու

Քննվող տերմինը փոքրզրված է պատմական Վայոց ձորի Զա-
ղազ բար վանքի ԺԲ դարի մի նվիրագրում, հետևյալ կարգակցու-
թյան մեջ. «ես՝ Մարտիրոս զիմ նղեզեց հայրէնի հոգն գժորա-
տասն ինչ կա ու մեռանէի, Զաղազ քարի Սուրբ Յովանէս սուրբ, իմ
հարկենադարձանց էր, որ իմ մահուն լիս եւ Զաղազ քարս եղներ...»,
հետևում է անեծիք մեակերպումը (Գ III 152): Ընդհանուր ստամբ
գոյությունների այս բնագրում անորոշ են՝ հարկենադարձանց և Զա-
ղազ քարս ելներ տառաշարքերը, որոնց վերծանությունն ասար-
կելի է, իսկ մեկնությունն էլ չեն տալիս նվիրագրերը՝ հրատարակող
ները (ՍՀՃԲ 160, ՂԱՍ 155):

Մեր գաղտային գրառումները և Պի՛րվան III-ում զետեղված
արձանագրության լուսանկարը հնարավորություն են տալիս ճշգր-
տելու կասկածելի ընթերցումները, բայց այսմ, բնագրի 3—4-րդ
շարքում իմ բառից հետո փոքրզրված է ոչ թե հարկենադարձանց եր
(կամ հարկենադարձանց), այլ հարկե անդարձանց եր, այսինքն վեր-
ծանոցը հարկ բառում ւ-ի փոխարեն կարգացել է է(=ե), իսկ ան-
դարձանց-ում զանց է անել ե-ն՝ աղարձանց, ամբողջ տառաշարքը
բնկալելով իբրև մեկ լեզվական միավոր՝ հարկենադարձանց: Մյուս
նյութն տառաշարքի ընթերցումը կարելի է ուղղել հենց լուսանկարի
միջոցով, որտեղ համապատասխան մատամ պարզ երևում է ելներ,
այսինքն ե-ի փոխարեն պետք է կարգալ է, և նույնպես մեկ լեզվա-
կան միավոր գիտված ամբողջ տառաշարքը բառանշանել՝ ելն եր
(նկ. 34):

Այժմ քննվող բառերի մեկնության մասին. անդարձ, անդարձա-
գիր հայերենի բառարաններում բացատրվում է կասկ, կոսպագիր,
սակայն որոշ զիմարություն է հարուցում Զաղազ քարի բնագրում
վկայված բառիս հոգնակի սեռական՝ հոյովանքը՝ անդարձանց, քա-
նի որ անդարձ բառը բայտ մատենագրական վկայությունների ի հո-
յովան է ենթարկվում, և այս պարագայի սպասելի էր օրինակաբ
անդարձից (<անդարձի): Մինչդեռ անդարձանց հոգն. սեռ. տր.

կես մեկնությունը (եշտառուն բառը նշանակում է ամառանոց, օրոց, յալլազ, իսկ
խոցտախառունը, մեր կարծիքով, պետք է հասկանալ հանքարձուրով բուժման սե-
լանք) ոչ մի չափով պարզել չի և մեր բառարանության ու ստուգաբանության հա-
մար չի կարող աղբյուր հառաչել (Տե՛ս Գր. Գրիգորյան, Սուրբի վանական կա-
վածատրությունը, էջ 117):

ատրերը վճարելուց և պարճանկերը կատարելուց բացի, պարտավոր էր նաև ապահովել բազմաթիվ երթևեկներին պարենամթիբերով, օթևանով և ճանապարհի գաշարով: Բացի դրանից, ինչպես վկայում են պատմագրական աղբյուրները, հարկատու բնակչության ուտարին էր ընկած նաև փոստային կայանների (յամ) շինարարության և երթևեկներին ձիերով ու պարենով ապահովելու ծախսերի ծանրությունը: Եկատի ունենալով իրանական պետության մեջ երթևեկներին, հասկացես էլլիներին (տորճանդակ), հարկահավաքների և արբունական այլ պաշտոնյաների արտակարգ մեծ քանակությունը, պետք է կարծել, որ նրանց՝ ձիերով, պարենով ու անասնակերով ապահովելը ամենածանր պարտավորություններից մեկն է եղել բնակչության համար:

Ինչպես երևում է բնագրից, Ամբեդդ գաւաի աէր Վաշուտյան Չրբինը (Քէդոս) սույն արձանագրով սահմանում է, որ այլևս կարրի գյուղաբաղաբում ճանպարհի ձի ալախ շտան, ալախն վերացնում է իլխանության հաստատած փոխադրամիջոցի՝ ալախ, ձի ալախ պարտավորությունը (նկ. 35 ա):



Նկ. 35 ա

Այսպիսով, բննարկվող արձանագրության մեջ հիշատակված ձի ալախը կամ ձիալախը մոնղոլական սևաց պարտույթի առաջին և միակ վկայությունն է մեր աղբյուրներում:

Ալախ բառի ծագումը դեռևս չէր մոտրվ. շաղայաթ. ուղղուր. սւաչա, սևաչ արձամայց, որ բառացի նշանակում է Բաշոկ կենդանի, գրասա, բեճանիք անասուն²¹⁰, Փոխաշալա արձամախ ու > ալ փոխխություն համար համեմատելի են՝ դուկատ > ցավատ, ուղղուր > աղբոց, կամ անմիջականորեն կամ ու > ճանամով. բագունի > բագոնի, Սաղուն > Սաղոն, Արգոլխարուն > Աբղխարուն, Մուշեղ > Մոշեղ, կուղպակ > կողպակ և այլն (ՍՄՐ 158, 170, 208, Գ 1 12, 56, Գ III 51, KHG 57—60):

80. ՃԱՂԱԳ

Այս բառը եղակի հիշատակությամբ ավանդված է Ստեփաննոս Այւնեցու «Մեկնութիւն բերականին» աշխատության մեջ, այսպես կոչված պարունակ (որ երեւեցուցանէ ինչ յինքնան պարփակեալ) գոյականների հետևելու շարքում՝ «այգի, պարաէդ, ծագկոց, դրախտ, անտառ, մորի, Եաղագ, արտ, մարգ եւ այսպիսիքս»²¹¹: Հաժնանարար այս վկայության հիմամբ երևեմա Մեդրեցին իր բառարանում ճագագը բացատրում է՝ անտառ կամ մարգ, իսկ նույն բառի ճագագ հնչյունափոխված ձևը (գ, գ բաղաձայնների դրափոխություն) մեկնում է եղեգառ կամ ճագագ²¹²: Հետագայում նույն վկայության մեկնությունը նճբ ալախ է՝ հետևելով Մեդրեցուն: Ըստ այդմ, Եագագ բացատրվում է՝ անտառ կամ մազառ ճիւղով լի, այսինքն աշխատում է Եագագ-ին վերագրել վերը հիշված պարունակ գոյականների ընդհանուր իմաստը՝ անտառի և մարգի ինչ-որ միջինը²¹³:

²¹⁰ Տե՛ս Միգրско-русский словарь, под ред. Ш. Кибирова и Ю. Цунвазо, Алма-Ата, 1961, էջ 202; Տերմինի մասին ազդեի մանրամասն տե՛ս Н. Петрушевский, Очерки по истории..., 1949, էջ 275, նույնի Земледелие, էջ 298:

²¹¹ Տե՛ս Н. Алош. Дионисий Фракийский и арм. толкователи, Петроград, էջ 210:

²¹² Բագագը հայոց արարեալ ի Ս. էջմիածին երևմտ վարդապետէ, 1720, էջ 279:

²¹³ Նճբ, Բ, էջ 167:

Աշտարակի շրջանի Սաղմոսավանքի հուշարձանախմբի արձանագրություններից մեկում գտնում ենք նույն ճարգ բառը, այնպիսի կապակցությամբ մեջ, որ հնարավորություն է տալիս ավելի որոշակի հասկանալ նրա նշանակությունը: Ահա քնադրի համապատասխան հատվածը. «ե՛ս՝ Սասնէս եւ եղբարք իմ Վաչէ եւ Գրիգոր միաբանեացք Սուրբ ուխտին Սաղմոսավանաց եւ առաք ի մեր հայրենի գիղէս Ազրնագնդո հանդէն զՓնտիկ տափն, որչաք ջուրին ի դու գա, ՝ Ա: զուրանի հող ճաղազովն, ջրովի...», այդ հետևում է հատուցման բանաձևը (ՄՀ)²¹⁴: Արդ, ի՛նչ կարող է նշանակել ճաղագ այս բնագրում: Ակնհերև է, որ նվիրատուները վանքին են տվել իրենց հայրենի գյուղի Ազրնագնդո հանդամատում գտնվող Փնտիկ տափից մի զուրանի (մի զուրանի օրավար) հող իր ճաղագով և ջրովի: Այստեղ սրչախ (= որչախ) ջուրնց ի դու գա պետք է հասկանալ Փնտիկ տափի (տափարակ) մի զուրանի հողի այն սահմանը, մինչև որտեղ կարող է հասնել ջուրը և ոտոզել իր բնական հասանելով նախադասության վերջում հիշատակված ջրովի կարող է թվալ, թե վերաբերում է միայն ճաղագով բառին, սակայն նախորդ բառերը (որչախ ջուրին ի դու գա) հաստատում են, որ ջրովի են ոչ միայն ճաղագովն, այլև՝ Ա: զուրանի հողը: Մյուս կողմից, Փնտիկ տափի մի զուրանի հողը նվիրվել է (իր) ճաղագովն, որ հավանաբար նույնպես հողակտոր է, նվիրված վարելահողին կից կամ նրա սահմանում, բայց այնպիսի հողամաս, որ ի՛նչ մշակվում և այդ պատճառով առանձին է նշված՝ իբրև զուրանի հողին կից տարածություն:

Ճաղագ-ի ստուգաբանության համար պետք է նկատի ունենալ նրա հնչյունափոխված տարբերակի գոյությունը արդի մի քանի խոսվածքներում՝ ճալա, որ նշանակում է գետնոգրյա կամ արտեղըրչա հարթ, սովորաբար շմշակվող տարածություն, թփեր ու ծառեր բուսած ապխտակ, գետափ, գետուռ²¹⁵:

Ճալա բառի ծագումը Աճառյանը հանում է վրաց ճալալի == գետափնյա մացառուտներ արմատից²¹⁶, որի սկզբնական փոխառված ձևը հայերենում, ինչպես պարզվում է Սաղմոսավանքի բրնձնուրվյան ենթարկվող վիճարդից, վկայված է ճաղագ (<ճալալի):

²¹⁴ Այլընթացումներով հրատարակված է՝ 2. Աղիազարյան, Սաղմոսավանք, սելժմանին, 1961, 2, էջ 44:

²¹⁵ Սո. Մալխոսյանց, Բազատրական բառարան, Գ, էջ 190:

²¹⁶ 2. Աճառյան, Արմ. բառարան, Գ, էջ 576:

Այսպիսով, ճաղագ մեր օրինակում նշանակում է արտեղըրչա անմըշակ տարածություն, որ պատած է մացառուտով, կամ մարգագետին:

81. ՄԱՍԱՂԻՍ (<ՄԱՍԱՂԻՔ)

Արցախի վանական կենտրոնների ԺԳ դարակղզի վիճական արձանագրություններում քանիցս փորագրված է մատաղիս բառը, իբրև առանձին ունեցվածք՝ վանքերին նվիրված այլ կալվածքների շարքում: Այդ քնադրից հնազույնը Վաղուհատում է, Խալաբի վանքում, ուր մեր բառաբանության հետ առնչվող հատվածը կարդացվում է. «Ե: ՌԴԳ: (1204) թուխ, ես՝ ջուր Յոհաննոս շինեցի գեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ, եւ զղիբը, որ ի սմա, եւ արկի զՋոթացն այգին եւ զվատաղիսն բաղում աշխատութեամբ: Եւ ետու զվանքս իւր ամէն սահմանա իմ աւագ պղարաւ՝ Հաստան եւ իւր որդեացն, Հաթիբրտ տեսուն միջնորդութեամբ» (ՄՀ): Այս վավերագրի նախորդ քնդրիկներին հղումը Ջալալյանցը արկի զՋոթացն այգին եւ զվատաղիսն կապակցությունը վերծանել է՝ արկի զայգին եւ զվատահարս, այսինքն բաց է թողել զՋոթացն հատկացուցիչը, իսկ զվատաղիսն դարձրել զվատահարս (ՄՋՃԲ 230): Ավելի հարազատ է մնացել քնադրին Մ. Բարխուդարյանցը, սակայն այստեղ էլ զվատաղիսն մեծատառով է տպագրվել, այսինքն դիտված է տեղանուն, որ անհարթ է վկայված կապակցությանը՝ արկի զվատաղիսն ("): Բարխուդարյանցը սույն մատաղիսը նույնացնում է Վաղուհատից դեպի արևելք գտնվող նույնանուն Մատաղիս գյուղատեղի հետ (ՄԲԱ 194):

Մատաղիս բառի մյուս երկու հիշատակությունները նս Վաղուհատում են. Ա. Սաղո իշխանի կանգնեցրած զեղբայրեղակ խաչարձանի (Երկան խաչ) ճակատին, «Թին: Ովն: (1216), ես՝ Սաղո, որդի Վախանեղա կանգնեցի զխաչս բարեխառս առ ամ հոգո իմն եւ ետու զՓղեկեա այգին իւր հողով եւ կատապանաւ եւ Եղեանտօրին երկիրն ի Սուրբ Գրիգոր Բերրածորո եւ զԲայերին մատաղիսն եւ ճաղեցոնց երկիրն եւ: Ա: շաղաչ ի ժամատունս»²¹⁷:

²¹⁷ Գիտական հրատարակություն չունի, առում ենք ե. Գաղանի վերծանությունից, «Երաբառ», 1936, էջ 81:

Բ. Երկրորդ հիշատակությունը գտնում ենք հաճախվածների մատուցի պատին Գոփ Զաքարյանի թողած նշանավոր շինարարական արձանագրության մեջ. «Քու : ՈՉԿ : (1225) ես՝ Գոփս, զուտը Սարգսի, բոյր Զաքարի եւ Իւանէի շինեցի զգալիս կեղեցոյց եւ զմատուռ եւ տփի զանտարանս եւ Յանկարակոյց երկիրն եւ զիմ Լաւորենայ մատաղիս յեկեղեցոս» (ՄԲ)։

Բանասիրությանը ցայտմ անհայտ է եղի մատաղիս բառի մի վկայությունն եւ, որ մեզ է բերված նայել Լուսան Զաւայանցի արտագրած վիճական պատրի ժողովածուում։ Ահա այդ արձանագիրն ամբողջությամբ. «ես՝ Խորիշահ, զուտը Վասակայ, ամուսին Զաքարիի, որդի Վախտանկայ, մխարանեցայ Սուրբ ուխտս ՈՂԳ թուին, զնեցի զմատաղիս եւ ընկերցուած եւ տուի Սուրբ Գանձատարու։ Եւ մխարանս տուար : Բ : Ժամ, ի փոխմանն Աստուածածնի»²¹⁸։

Մատաղիս բառի նշված վկայություններից բանասիրությանը հայտնի է եղել միայն առաջինը, Յոհանէտի ՈՄԳ թ. նվիրագրի՝ առկի զՋորացն այգին եւ զմատաղիս կապակցությունը, որի հիման վրա էլ բառիս մեկնությունը անդրադարձել է Ք. Ավգայրեզյանը՝ դեռևս 1927 թ. սպայգրած «Մի գաղտնիք հայ վիճական արձանագրության մեջ» արժեքավոր հոգիվածում։ Ըստ նրա, տվյալ իրագրությունն մեջ մատաղիս պետք է հասկանալ՝ նորատունկ այգի, նորԲ, մատաղիկ²¹⁹։ Այս բացատրությունը, անշուշտ, բխում է մատաղ բառիմաստից, ինչպես նաև՝ առկի գայգին եւ զմատաղիս կապակցությունն հավանական բովանդակությունից եւ, հիմնականում ստույգ լինելով, չի պարզում, մատաղիս բառի ստուգաբանությունը։ Մատաղիս ձևի բառաբանության համար պետք է նկատի ունենալ մատաղ արմատը, որ արտահայտում է մտաղը, փափուկ, դեղատի, մտաղիմաստ իմաստները, առավելապես ամականական կիրառությանը։ Ի (կամ իԲ) վերջածանցի հավելումով, որ գոյականներից, ամականներից ու բայաբաններից զանազան նշանակություններ

բով գոյականներ է կազմում (հմմտ. բնտան-ի—բնտան-իԲ, մատան-ի, ազորի—ազորիԲ, արժան-ի—արժան-իԲ, հավաստ-ի—հավաստ-իԲ, նահ՝ հարսան-իԲ, բեր-իԲ, տան-իԲ եւ այլն), կունենանք մատաղ-ի եւ Բ հոգնակերտով կամ իԲ ածանցով՝ մատաղ-իԲ, որ կարող է նշանակել մտաղաչ, նորատունկ շիկեր, որբեր, վափեր²²⁰։ Մատաղ-ի-Բ բառի կազմությունը հիշեցնում է զալար, զալար-ի ձևը, որ սկզբնապես արտահայտելով խոտ, բույս, կանաչի, բանջար, Բ հոգնակերտի հավելումով՝ զալարԲ, զալար-իԲ, ստացել է նոր բուսած մարգարտնի, կանաչ ստրանուցիան իմաստ եւ հայկական հոլովածնով պահպանվել մի շարք տեղանուններում՝ Գալարս (<ԳալարԲ), Գալարիս (<ԳալարիԲ), Գալարիւն (<ԳալարիւնԲ)²²¹։ Ինչ մնում է մատաղիս ձևին, ապա վերջ մեջ բերված վկայություններում այն ամենուրեք հայցական հոլովով է գրվում՝ առկի զմատաղիսն, զԲալարիսն մատաղիսն, զիմ մատաղիսն, զնեցի զմատաղիս, որի ուղղակիոր վերականգնվում է մատաղիԲ։ Մատաղիս հայցական հոլովածնի սովորականի նման հետադառնում կարող էր դիտակցվել իբրև եզակի ուղղական եւ այդ ձևով նույնիսկ գտնուել հատուկ անուն, սեղանուն։ Այդ պատճառով էլ Արցախի Լավերք գավառում գոյություն ունի Մատաղիս անունով գյուղը եւ բավականին ընդարձակ նույնանուն գյուղատեղ Քերդանում։

82. ՄԱՏՆԱՐԿ

Մատենագրական աղբյուրներում բառս հիշատակություններ չունի եւ այդ պատճառով չի բացատրվում հայերենի բառարաններում։ ԺԲ—ԺԳ գրքերի վիճագրական հուշարձաններում մի քանի անգամ հանդիպում է այդ բառը՝ հոգևոր կենտրոններին արված կալվածքների շարքում։ Ըստ ժամանակի, ստացին վկայությունը գտնում ենք Հոռոմայր հուշարձանախմբի ներքին եկեղեցիների բակում կանգնեցված Տերունական խաչարձանի ընդարձակ հիշատակագրությունն մեջ, որ փորագրել է տվել հուշարձանը կանգնեցնող Ասաթիլը (բնագրում՝ Ասաթիլ) ՈՄ (1201) թ.։ Այդ երկարաչունը ար-

²¹⁸ Մատենագրան, ձևագիր N 7521, էջ 18 ր. նույն Լուսան Զաւայանցը այս քննարկ մասին եղում է. «Սևտարանոր Բաղձմանց անտարանի գիրն էս, որից երևում է, որ այն արտագրվել է հիշյալ ավետարանի հիշատակարանից։ Լավանական է կարծել, որ նվիրագրեր պիտոտարանի մեջ արտագրվել է վիճական արձանագրությունից, որի առջև անհայտ է։

²¹⁹ Ք. Ավգայրեզյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 317.

²²⁰ Մ. Արեղյան, Հայոց լեզվի ստույգներ, Ե, 1931, էջ 263.

²²¹ Մ. Էփրիմյան, Բնաշխարհի բառարան, Վենետիկ, 1902, էջ 545.

ձանագրությունը բառ էր լուծվան մի պայմանագիր է, որով նրա հեղինակները՝ Եվրատու Առաքելը և Հոռոմայրի նշանավոր առաջնորդ Սամուէլը (բնագրում՝ Մանուէլ) համաձայնության են գալիս այն բանում, որ Եվրատուն գավիթը կառուցելուց և այնտեղ Տերունական խաչարար կանգնեցնելուց հետո, վանքին է Եվրում իր գանձագին այգին և երբ զցած մատնաղիը, որոնց դիմաց վանքի առաջնորդը բոլոր միաբաններով խոստանում են նրա բարխոսություն համար պատարագներ կատարել բոլոր շորս եկեղեցիներում: Այս կարևոր րնագիրը բանասիրությանը ծանոթ է Մ. Ջալալյանի «Բնատուույզ և շատ ազավող բնորոհակություններից, որ նույնությամբ արտաբերված է նաև «Էլիմական տարեգրում», ուստի մեջ ենք բերում մտրոջը արձանագրությունը մեր վերծանությունը. «Ես՝ Առաքելու, որդի Գրիգորի, բնակեալ ընդ հովանեև Սուրբ Նշանիս հուռ ի հայրենի գանձագին այգոյն, որ է Գունդանց զիմ բաժինն, ի Սուրբ Նշանս: Երևեցի զգավթիս, կանգնեցի զՏրունականս և ի ժամանակի ծերութեան իմոյ հուռ յիշատակ հոգո իմ և զբաական փրկութեն անձին իմս յաւուրն այցելութեն: Արկի և զմատնարկն, շինեցի տակերպետոց և իտու յառաջնորդութեան Սամուէլի: Եւ իտու զմատնարկն ի զբառունս յետ անցման իմո՝ Ես՝ Մանուէլ առաջնորդ Ս. ուխտիս, ամենայն միաբանուրս րրեցար գասր տանի սրբոյն Յոհանու և Յակոբու Գ: Եկեղեցիքս ՚Ի՝ ար Խազդէ, ՚Ա՝ ար Առաքելային, ՚Ա՝ ար Գրիգորու արենն: Կամ ի մեծաց, կամ ի փոքունց որ զայգին խլէ, կամ զժամն խափանէ, նզոված է յատուծոյ: Ամեն: (ՍՃՁԱ 93, ՎՏ, 45):

Մատնաղի բառի մյուս հիշատակությունը պահպանվել է Սանահնի վանքի ՈՁԳ (1234) թ. Եվրատուության մեջ. «Ես՝ Աբրահամ վարդապետ, հուռ յԱստուածածինս... զիմ մատնարկն, որ բազում աշխատութեամբ շինեցի՝ ի զբառունս...» (ԿՂՄ 161):

Բառիս վերջին վկայությունը կարողացվում է իզնակի շրջանի Վ. Աղզյան գյուղի Ս. Կիրակի մատուռի Եվրատուական արձանագրության մեջ. «Աստուծով ևս՝ Ալափէս հուռ զմատնարկս Մխիթար բանահային, և նա հոս ՚Ա՝ պատարաջ աղջալ, ի տանի սուրբ խաչին (Կ VI 128): Այս Եվրատուրը անթվակիր է, սակայն նրա ժամանակը կարելի է որոշել մատուռի շինությանը, որ բառ բարավորի վիժագրի, տեղի է ունեցել ՉԼԵ (1286) թ.:

Արդ, ի՞նչ է նշանակում մատնաղի բառը հիշյալ հատվածներում, կամ ի՞նչ են Եվրիկ վանքերին Եվրատուները: Հարցին պատասխանում են արձանագրությունների վերծանողները կամ թարգմանիչները. Բրտոնն, օրինակ, Մանահնի արձանագրության մատնաղիը հարցականում թարգմանում է ՇԱԾ—այգի²², որո՞՞ք. Կ. Ղաֆաշյանը նույն օրինակում մատնաղիը նորատունի այգի է համարում, վկայակոչելով բնագրի հաջորդ տողերը, որտեղ նույն մատնաղիը այգի է կոչված՝ «ով զայգին ի զբառունէս հանէ...» (ԿՂՄ 162):

Առաջարկում ենք մատնաղի բառի հետևյալ ստուգաբանությունը. մատնարկ բարդ բառ է, կազմված հայ. մատն բառի երկրորդ իմաստից=խաղողի որթի էջուղ, շիվ և արկ (<արկանել) արմատի=շինել, հորինել, հաստանել, կառուցել, գցել բառերից, բնիհանուր նշանակությամբ՝ նոր հորինված, շինված, հաստատված մատներ կամ խաղողի վագեր, շիվեր, խաղողի նորատունի այգի, նոր:

83. ՄԻԼ

Բառս հիշատակվում է Անիի վիժական արձանագրություններում երկու անգամ. նախ՝ Աբլղարիք Պաշլավունու ՆՁԵ (1036) թ. շինարարական արձանագրության մեջ՝ փորագրված Փրկիչ հուշարձանի պատին. «Եւ կանցնեցի միլ առ Սուրբ Փրկիչս...», և ապա, ավելի ուշ, ՈԿԳ (1215) թ. Տիգրան Հոնեցի հայանի Եվրատուության մեջ. «Եւ իտու... ի բաղաբիս հայրենիք բաղինես ու միլն ի մտառնիս խանսպարն կուղպականովն ու կամարակազ փեղովն» (Գ I 45, 63): Հիշյալ բնագրերն ընդօրինակվել, հրատարակվել են բազմիցս առավել կամ պակաս հարազատությամբ, և քննության առարկա միլ բառի ընթերցումը կարելի է հավաստի համարել: Բառիս բացատրությունը, սակայն, տարակարծիքներ է առաջացրել և մինչև օրս էլ սպասիչ չէ: Հայրենիք բառարաններում այս բառի մեկնությունը՝ բառ վիժագրական հուշարձաններում պլանդված վկայությունների, անբավարար է և հետո համոզիչ լինելուց:

Արդ, ի՞նչ է նշանակում միլ, կամ ի՞նչ են կառուցել Աբլղարիքը

²² И. Крамыский, Описание..., էջ 56:

և Հոնենցը Անհրում՝ Փրկիչ տաճարի մոտ և քաղաքի բազմաթիվ համալիրում:

Առաջինը Աեխի այս արձանագրությունների բացատրությունը փորձում է տալ Բրոսեն իր «Աեխի ավերակները ֆրանսերեն զբրբում: Հիմք ընդունելով Մ. Ջալալյանցի վերձանությունը և Կեստաների զմագրական ընդօրինակությունները, որոնք զգայապես հնուս էին իրականից, Բրոսեն իր զբրբում արձանագրությունների ֆրանսերեն թարգմանության մեջ հետաքրքրող մի բառը բաց է թողել՝ հավանաբար անհասկանալի համարելով²²³ Մ. էմինը Արչադրիի արձանագրի՝ կանգնեցի մի առ ար Փրկչիս թարգմանել է՝ ВОЗДВИГ ПАМЯТИК ПРИ ЭТОЙ ЦЕРКВИ (НЭА 16), այսինքն միլ հասկանում է աճան, նույնաճան, իսկ Հոնենցի՝ բաղնիսն ու միլն զանն է առն: Կ. Բամաշչյանը միլ բառի երկու վկայությունն էլ ֆրանսերեն թարգմանել է stèle=կարդ, վկայակոչելով ն. Ակիչյանին, որը բարոս փազումը դնում է արաբ. mil=կոթող արմատից (КВА 14, 140, էջ 226): Մարք միլ բառը վրացերեն milli բառի փոխառությունն է համարում, որ նշանակում է ջրուղի, ջրատարի կառուցվածք, ըստ այդմ անտրոշ է մնում, թե որ կառուցվածքի մասին է խոսքը՝ ստորգետնյա խողովակաշարի, թե վերգետնյա աղբյուր-ծորակի²²⁴:

Այս հարցին ավելի որոշակի պատասխանում է պրոֆ. Բ. Առաքելյանը. նրա կարծիքով միլ-ը դեռևս վրա կառուցված ավազան-արջուրի շինքն է, որ Աեխում տալալ մամանակներում հատկաբար հարստություն էր, եկամտաի աղբյուր և ոչ թե սոսկ բարեգործական շինվածք, ինչպես կարծել են ունանք²²⁵:

Նշելի է, որ հայերենի բառարանները տալիս են միլ բառի այնպիսի իմաստներ, որոնք ոչինչ ընդհանուր չունեն վիժագրության միջ այդ բառի արտահայտածի հետ: 2. Աճառյանը, օրինակ, հետևելով ն. Բյուզանդյանին, միլ բացատրում է երկանաբար, իսկ արձանագրությունների մեջ վկայվածները համարում անհասկանալի: Ստ. Մայիսայանցի բառարանում միլ նշանակում է՝ եմբնուտ, ապառ զեման, գործելու եաղ, երկանաբար, մզոն և այլն²²⁶:

²²³ M. Brosset, Les ruines d'Ani, st. Petersb. 1860, էջ 29—30.

²²⁴ H. Mapp, Ани, М.—Л., էջ 34, 110:

²²⁵ Բ. Առաքելյան, Փաղաքներ... Բ, էջ 211:

²²⁶ 2. Աճառյան, Արժ. բառարան, Գ, էջ 1036, Ստ. Մալխոտյանց, Բաց. բառ. էջ 329:

Հայագետ Կարսը միջին հայերենի անտիպ բառարանում Հոնենցի արձանագրության՝ բաղնիսն ու միլ(ն) բացատրում է Multenkanal=ջրաղացի առու, իսկ Արչադրիի՝ կանգնեցի մի լառ (<կանգնեցի միլ առ...> աղավաղված վկայությունը՝ մյաղաց, կաղմված mil, mal և աղաց բառերից (հմմտ. հուն. Mulos=երկանաբար)²²⁷:

Վիժագրերում վկայված միլ բառի մեր թվարկած մեկնությունները հիմնված են բառիս հիշյալ երկու վկայության՝ տարբեր ստուգաբանությունների վրա և, ինչպես համոզվում ենք, մեծ մասամբ ենթադրական են, քանի որ այն կառուցվածքը, որի մասին հաղորդում են Արչադրի ու Հոնենցը, չի պահպանվել կամ որոշվել ոչ Աեխում և ոչ էլ այլ հուշարձաններում:

Միլ բառի ստուգաբանությունը ճշգրտելուն մեր կարծիքով մեծապես կարող են նպաստել երկու իրողություն, որ դիտել ենք հարցի հետազոտության ընթացքում: Գրանցից առաջինը միլ բառի մի նոր, հետազոտողներին անհայտ մնացած վկայությունն է, որ զրտնում ենք թումանյանի շրջանի Օձուս գյուղում կանգնած խաչքարի արձանագրության մեջ՝ փորագրված ոմն Գունդիսի կողմից ՈՂԷ (1228) թ.: Ահա այդ շինարարական վիժագրի համապատասխան հատվածը՝ մեր ընդօրինակությամբ. «Ես՝ Գունդիսիս իմ որաէքն (ի Մորաէքն՝) բերի զմիլս, շինեցի հողետունս, կանգնեցի զխաչս վասն յիկար կենդանութեն մարտապատար Ծահնահ՛ի ե յշատակս որդի իմո Կանանիւն...»²²⁸, հետևում է անձնի ձևակերպումը: Այստեղ կարեւոր միլ բառի հիշատակությունը չէ միայն, այլ այն, որ այս խաչքարի արձանագրությամբ որոշվում է, թե ինչ շինություն է արտահայտում միլ բառը, քանի որ խաչարձանը կանգնեցված է դյուղի կենտրոնում, Օձուսի VI—VII դդ. տաճարից փոքր-ինչ հյուսիս, ներկայումս գործող, զուցե և պատմական աղբյուրի ծորակի մոտ: Ինչպես կարելի է նկատել, Գունդիսիս արձանագրության մեջ բերի զմիլս և շինեցի հողետունս փորագրված են սցուցական հողով, կողմնակի ապացույց. դր միլ-ն ու հողետուն-ը զանվելիս են եղել խաչքարից ոչ այնքան հնուս, այլայսիս այդ հատվածը բնագրում

²²⁷ Հայագետ 3. Կարսի արևիկ, Մասնագրարանի Անտոգր, միլ բառի տակ:

²²⁸ Գրալի տարեթիվերումներով հրատարակված է՝ Մ. Թձկեանց, Ծանագր-հորդութիւն ի Ահաստան, Վենետիկ, 1830, էջ 82:

կուննար այսպիսի ձևակերպում՝ բերի զվիլ և շինեցի հոգեառու
(= գեղեցտուն)։

Բացի դրանից, Գունդիսի արձանագրության մեջ սաժած է բե-
րի զվիլս, որ, ահշուշա, պետք է հասկանալ ինչ-որ տեղից խորշվա-
կաշարով շոր բերելը, ինչպես ունենք այլ հուշարձաններում՝ բե-
րա՛մ գաղբիւրանիս (Քալին ՄԼԹ—783 Բ.), բերա՛մ զշուրս (Մշարթ
ԺԿ դ.) (ՄԸ) և այլն։

Մյուս գիտողությունը վերաբերում է միլ-ի բառաքնությունը։
Ռատմաախրողները սովորաբար հայ նոր բարբառներում կամ խո-
սակցական լեզվում դիտել են միլ բառի՝ գեթան, շլուզ, մազ, մղոն,
Երկանաբար իմաստներ Սակայն Քումանյանի և Նոյեմբերյանի մի
բանի խոսվածքներում նկատում ենք միլ բառի այնպիսի նշանա-
կություն, որով նա հանդես է գալիս մեր մեջ բերած երեք արձանա-
գրություններում՝ աղբյուրի խողովակաշար, ջրուղի, ջրատար, նաև
աղբյուրի վերջնանյա կառուցվածք։ Իրեն օրինակ կարելի է բերել
Սանահին գյուղի խոսվածքը. այստեղ վանքի պատմական աղբյու-
րը, որ գտնվում է գյուղի արևմտյան ծայրին, տեղացիների կողմից
անվանվում է վերի միլ, իսկ վանքի պարսպին կից նորակառուց
աղբյուրը՝ ներքի միլ։

Մեր մեջ բերած նոր փաստերը հնարավորություն են տալիս
ստուգապես որոշելու, թե վիճագրերում վկայված միլ բառը (կանգ-
նեցի միլ, ետու բաղնիսն ու միլն, բերի զվիլս) ինչ շինվածք է արտա-
հայտում՝ այն է աղբյուր-ջրուղու ամբողջ կառուցվածքը, այսինքն
ջրատարը, ավազանը և վերջնանյա մյուս կառուցումները։

Ինչ մետում է միլ բառի ստուգաբանությունը, այդ ամենահա-
վանական պետք է համարել դեռևս ահեցյալ դարի վերջերին Լ. Մանր-
յանցի առաջարկածը, որը անհասկանալի պատճառով անհայտ է
մնացել այդ բառի մեկնությունը զբաղվողներին։ Լ. Մանրյանցը հայ.
միլ, վրաց მილი բառերի համար իբրև նախաձև է համարում ուրար-
տական սեպագրերում pili = ջրանցք, ջրուղի ձևը, բառակազմի ք = մ
համապատասխանության հիմնավորմամբ։ Այսպիսով, Լ. Մանր-
յանցի կարծիքով միլ բառը հայերին նախորդած ժողովրդի լեզվից
կատարված մշակության փոխառություն է²²⁹։ Ուրարտերեն pili =

ջրանցք բառը հայերենում իմաստային լայնացումով հետադարձ
կարող էր ստանալ ոչ միայն ջրանցքի, ջրուղու, այլ նաև՝ ամբողջ
ջրատարի, վերջնանյա կառուցվածքի նշանակություն, որը և արտա-
ցույված է Ժ—ԺԿ դդ. հիշյալ վիճագրերում ու միջին դարերի խոս-
վածքներում։

84. ՄԻՒՍԱԼՈՒՄ, ՉԱՓՈՂ, ՉԱՓՈՂԻ ԼՅԿ, ԳՋԻՐ ԼՅԿ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Վարչական, տուրքային այս տերմինները վկայված են պատ-
մական նորատուսի Աստվածածին եկեղեցու հարավային որմին փո-
րազված մի արտոնագրում, որի գիտական վերածնությունը արված է
Մ. Բարխուդարյանի կազմած «Իմպերիա IV պարկուն» Արձանա-
գրված սրբատաշ քարը չի պահպանվել և առկա ընդօրինակությու-
նը կատարված է Հայաստանի պատմության թանգարանում պահ-
վող սեպագիտի վրայից, Գեղարքունիքի անցյալ դարի տեղագրող-
ներ Մ. Սմբատյանցը և Ն. Լալայանը տեսել և ընդօրինակել են ար-
ձանագրությունը, սակայն նրանց վերածնությունը խիստ հեռու է
իրականից և ոչ մի պատկերացում չի տալիս արտոնագրի բովանդա-
կության մասին։ Հանդուցյալ վիճագրագետ Ս. Բարխուդարյանը
չանացել է հնարավորին չափ նույնպե՛ս ընթերցել պահպանված
տառաշարքերը, հասնել նրանց ավելի ստույգ բառանշատման ու
բառիմաստների ճշգրիտ բացատրաման, սակայն, հակառակ սպա-
սածի, նրան ևս այդ չի հաջողվել, և արտոնագիրը մնացել է նույն-
քան անհասկանալի ու առեղծվածային, որքան նախկին հրատարա-
կություններում։

Սույն բառաքնության նպատակով մեջ ենք բերում ամբողջ ար-
ձանագրությունը Բարխուդարյանի վերածնությամբ. «Ցանուռն աս-
տուճո այս իմ գիր և նորատուց... հնայսինայ ևս ղեմիմար...
այժմայս ի վեր կալար Աւագին արևին համար. : ՈՉ : (630) գրին
տան, հակուշ : ՉԱ : (81) փոդին : Ա : եղն, մեսալում գրին լծն : Ա :

(Труды Восточ. ком. Моск. арх. об-ва, т. II, вып. I, էջ 111—112),
սպա տարվեցին Ն. Մանրի գրած նամակում (22 342)։ Արձանագրությունները՝
H. Март, АИИ, Л.-М., 1934, էջ 122, 22 314)։

²²⁹ Լ. Մանրյանցը միլ բառի ստուգաբանությունը առաջարկել է նախ 1893 թ.
կեսերին Մոսկվայի հնագիտական ընկերության նրստում կարգացած զեկուցման մեջ
208

եզն. մեսալում : Մ : (50) փողն, վկա գրիս աստուած. Արտախորհր. որ խափան է նայ. աստուծոյ խփել. ևս Քունիս... (Դ IV 13):

Վերծանողները ոչ մի բացատրություն չեն տալիս ընագրի բովանդակության մասին, միայն Բարխուղարյանը նշում է, որ արտա-նագրի երրորդ մասեր մեում են անհասկանալի՝ կիսազրգանտ գրել և անձանոթ տերմինների պատճառով (Դ IV 14): Սակայն, ինչպես ասինքն է, մոլթ ու անհասկանալի են ոչ թե վիճագրերի որոշ մասերը, այլ ամբողջ արձանագրությունը, որ ներկայացվել է իբրև անորոշ բաների ու թվերի էությունում: Արդարեւ, ի վեր կալաք Ասզին արեվին համար նախադասությանը պետք է հարցրեր հարկեր ու պարճակներ սահմանելու կամ գիշելու մասին բուն արտոնագրեր, սակայն շարունակության անկապ բաները ոչ մի շափով չեն պարզում, թե ի՞նչ հարկեր ու պարտույթներ և ի՞նչ ձևով են վերացնում նորատուսի իշխանավորները: Ինչպես հասկանալ, օրինակ, : ՈՉ : (680) զգրին տան նախադասությունը, 680 ի՞նչ տան զգրին և ինչ՞ համար, կամ ի՞նչ է նշանակում՝ հակ ոչ, : ՉԱ : (81) փողին, կամ՝ : Ա : եզն, մեսալում զգրին լծն. : Ա : եզն, մեսալում : Մ : (50) փողն, և այլն:

Ակնհայտ է, որ սույն բառանջատումով նորատուսի արժեքավոր հարկային վավերագիրը ներկայացվել է խիստ ազավազված, ներբանում վկայված տերմինները մնացել են մթաղանած և բոտ էություն չըացահայտված:

Նախքան ընագրի մեր նոր վերծանությանն անցնելը, հարկ ենք համարում նշել, որ արձանագրության նախաբանը, որտեղ եղել են նորատուսի պաշտոնյաների անունները, քարն այդ մասում շարդրված լինելու պատճառով, մենք ևս չենք կարողացել վերականգնել, սակայն արտոնագրի հիմնական բովանդակությունը՝ հարկերը, պարճակները սահմանելու կամ գիշելու մասին, որոշված է հաստատու:

Ահա ամբողջ արձանագրության մեր ընդօրինակությունը՝ կատարված լուսանկարի վրայից (նկ. 36 ա).

- 1 Յանուն աստուծոյ ալլա իմ գիր և նորատուսոց
- 2 Ղալհնայի Սինայիս, զեմեթարն... լն
- 3 ... արմալս ի վեր կալաք Ասզին արեւ
- 4 ին համար՝ ոչ պրին տան հակ, ոչ շափո

208

5 գին. Ա. եզն մի լւալում զգրին լծն, Ա. եզն
6 մի լւալում շլալիտղն Վլալ գրիս աստուած ու Սան
7 խորհն: Ար խ ա փանէ, նայ աստուծոյ խփել: Ես՝ Քունիս
գրեցի ի:



նկ. 36 ա

Չանց աննկով ընագրի՝ մեր և Բարխուղարյանի վերծանությունների ոչ նախնա տարբերությունները, կարելի է նկատել, որ ընթերցումների հիմնական տարբերություններն առաջացել են արձանագրության Ձ, Չ տառաձևերի ընկալումից, Չ գիրը ամենուրեք թվանիշ համարելուց և առկա տառաշարքերի ոչ ստույգ բառանջատումից, ըստ այսմ, Բարխուղարյանը 3—4-րդ տողերում կարդացել է՝ ՈՉ : (680) զգրին տան, հակ ոչ, : ՉԱ : (81) փողին. նույն հատվածը մեր ընթերցմամբ կլինի՝ ՈՉ ԳՁԲԻՆ ՏԱՆ ՉԱԿ, ՈՉ ՉԱՓՈՂԻՆ, այսինքն վերծանողի վերականգնած թվերից ոչ մեկը իրական չէ, և նրանց փոխարին երկու զնցրում էլ հարկ էր վերծանել ՈՉ ժխտական մասնիկը:

Արդարեւ, ինչպես այս արձանագրում, այնպես էլ Վալոց ձորի և Գեղարբունիքի այլ վիճագրերում երբեմն Չ գլխադիր է փորագրված Գ-ի փոխարեն: Օրինակ, նույն նորատուսի ՈՉն (1226) թ. խաչքարի պատվանդանի վրա հոտակ կարդացվում է. եռԱՉ ԱԱԳնՅԻ, իսկ շարունակության վրա էլ՝ Ի ՓՐԿՈՒԹԻՆ ԻնՁ (Դ IV 23), որտեղ

209

հԱԶՍ, ԻնՁ բառերում Ձ գիրը փոքրագրված է նույն ձևով, մինչդեռ ակներև է, որ հԱԶՍ բառի մեջ այն փոխարինել է Ձ-ին (նկ. 36):

ՅԱՆՐՆ ԱՅՎԱԻ ԿԳԻՐ ԵՆ ՈՐՍՄ ԴՊՅ
ԸՆ ԱՅԻՍԻՆ ԱՅԻՍԴԵՏԵԹԱՐԱՆ ՆԵ
ԱՃԱՅՍԻԿԵՐԿԱԼԱԿԱԳԱԳԻՆ ԱՐԹ
ԻՆ ՏԱՄԱԸՁԳՊԻՆՍԱՆ ՆԱԿՆԸԱԿ Ո
ՂԻՆ-Ա-ԵՆՆՄԱԼՈՒԿԳԻՐՆԼՏԵԱ ԵՆՆ
ՄԻԱԼՈՒՄԸԿ ՈՂՆԿՎԱՅԳՐԻՍԿԻ ՄԻՍԱՆ
ԽՈՂՆՈՒԿ ԱՆԵՆ ՎԱՅԳՐԻՍԿԻ ԳՐԵԿ

նկ. 36

Ուշ միջնադարի տապանագրերում Ձ, 2 տառաձևերի շփոթությունը միայն խաչ բառում առաջինը դիտել է Ս. Բարխուդարյանը՝ միջին դարերի բարձրորձ վարպետների մասին իր ուսումնասիրության մեջ: Այստեղ նա այն համոզման է հանգում, որ Ձ, 2 գրերի շփոթությանը չպետք է վերագրել արտասանական հիմք՝ ենթադրելով, թե հիշյալ զավառների խոսվածքներում վկայված ժամանակաշրջանում խաչ հաճախ զործածվող բառը արտասանվել է խաձ: Հեղինակի կարծիքով ավելի հավանական է երևույթը համարել Ձ, 2 գլխագրերի նմանության հետևանքով առաջացած փոքրադրման շփոթության արդյունք²³⁰:

Մյուս կողմից, բնագրում եղած տառաձևերով ու կետագրությանը նա չին արդարացված Բարխուդարյանի վերականգնած ՈԶ (680), ՉԱ (81), Մ (50) թվագրերը, ըստ այսմ, բավարար հիմքեր չկան այդ գրերը թվեր համարելու, քանի որ արձանագրության լուսանկարում և հենց դժագիր ընդօրինակության մեջ պարզ երևում է, որ դրանք քարի վրա չեն անված կետերի մեջ, վերևում շունչն պատիվ-գծիկ, որն սպասելի էր այդ գրերին թվային արժեք վերապահելու դեպքում: Ուրեմն դրանք թվեր չեն նշանակում և պետք է բնկայվեն իբրև հնչյուններ արտահայտող սովորական տառեր:

²³⁰ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Ե., 1963, էջ 193, Ս. Ավալյան, Վրինական արձանագրությունների հնչյունաբանություն, Ե., 1973, էջ 276—277:

Հիմք ընդունելով նորատուրի խնդրը առարկա արտոնագրի մեկ առաջարկած նոր վերծանությունը՝ աշխատենք պարզել նրանում վկայված հարկային, պարհակային անձանոթ տերմինների նշանակությունը:

1. ՄԻՍԱԼՈՒՄ—Այս տերմինը երկիցս նույն գրությունում վկայված է՝ . Ա . եզն միաշարժ գրիւն լծն, . Ա . եզն միաշարժ շափոզն կապակցութեան մեջ: Բարխուդարյանը այս տառաշարքը կարգացրել է մնայլում, այսինքն մ-ին հաջորդող Ի գիրը համարել է Ե, տանց պարզելու իր վերականգնած բառի նշանակությունը: Մնայլում քննարկումն առարկայի է, քանի որ քարի վրա պարզ երևում է Ի, և նրա փոխարեն Ե վերականգնելը չի արդարացված: Ուրեմն, երկրային տառաշարքը պետք է վերծանել այնպես, ինչպես փոքրագրված է՝ ՄԻՍԱԼՈՒՄ:

Քայց այս դեպքում կարող է հարց ծագել, թե ի՞նչ հնչյունային արժեք ունի տվյալ՝ միջբաղաձայնային, այն էլ բացառված դիրքում է գիրը, կամ ի՞նչպես արտասանել ՄԻՍԱԼՈՒՄ բառը: Հայերենի ուղղագրության պատմությունից հայտնի է, որ միջին դարերի գրական ու վիճակագրական հուշարձաններում Ի-ի երբեմնի երկբարբառ արտահայտող տառակապակցությունը փոխարեն հաճախ հանդիպում է միայն նրա երկբորդ բաղադրիչը՝ Ի-ը, ըստ որում հաճախ տանց հայտնված որևէ նշանի: Այսպիսի գրությունը չի պայմանավորված հնչյունական փոփոխությամբ և բացառվում է ստիկ գրության դյուրացման ձգտումով, մազաղաթի, թղթի, քարի վրա տեղ շահելու, նաև արագ գրելու պահանջով: Այսպես, Ժ—ԺԻ գր, ձևագրերում ու վիճակագրում հանդիպում են Ի-ի փոխարեն Ի-ի գրությունը մե շարք բառեր՝ նրաց (= նիւրաց), երկզ (= երկիւզ), արւն (= արին), գաւ. (= գիւա), հուտի (= հիւտիսի), սուրիսն (= սուրիսն) և այլն²³¹, Այս օրինակաբանությունը նկատի ունենալով մեր բնագրի մտալում տառաշարքում անհրաժեշտ է վերականգնել Ի գիրը և ամբողջ բառը կարգավ՝ ՄԻՍԱԼՈՒՄ:

Իսկ ի՞նչ է նշանակում միաշարժ կապակցություն մեջ: Musellem = միալլեմ, միաալլամ, միաալլիմ արաբ. բառերի համար բառարանները տալիս են երկու հիմնական նշանակություն.

²³¹ Ս. Գյուլբուղալյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Ե., 1973, էջ 158:

ա) հարկից ազատված, ապահարկ, իբրև համանիշ հայկական աղբյուրներում հանդիպող մյուս փոխառյալ՝ բարխան, մուռափ տերմինների, բ) որևէ բարձրաստիճան պաշտոնյայի տեղակալ, փոխանոց, փոխկառավարիչ²³², Այս վերջին իմաստով մուսալիմ տաղադարձությունը բառա հիշատակված է հնագույն ԺԸ դարի մի ժամանակագրության մեջ, «Վանայ մուսալիմ Այի աղան իմացաւ, կամ՝ «Ցետու Մուրթագայ փաշայն եկաւ մուսալիմ Սարիսոշ Այի փաշին»²³³,

Սակայն մեր բնագրի միասլիմ-ով կապակցությունը այս բառի՝ փոխկառավարիչ, տեղակալ իմաստն անհարկ է. ավելի հարմար է տվյալ զեպրում նկատել ունեւալ մյուս՝ ապահարկ, տուրքից, պարտուլքից ազատված նշանակությունը, որ, ինչպես կերևա ստորև, լիովին արդարացիում է ամբողջ արտոնագրի բովանդակությամբ.

2. ՉԱՓՈՂ—Այս տառաշարը Բարխուդարյանի վերձանություն մեջ ներկայացվել է 4—5-րդ տողերում՝ : 2 : (81) փողին, 6-րդ տողում՝ : Մ : (50) փողն, որ, ինչպես տեսանք, ոչ մի չափով չի հեռանալորված, քանի որ իրականում, քարի վրա 2 և Մ թվանիշներ չեն փորագրված: Մեր բնիքցմամբ առաջին զեպրում 2-ն 2 ընկալելով, աներկրա տեսնում ենք չափողին տրական հոլովածներ, մյուս զեպրում՝ չափողն քառի ուղիղ ձևը, ուրեմն երկիցս վկայված է նույն չափողն, չափողին տերմինը: Արդ, ի՞նչ է արտահայտում չափող քառ տվյալ իրագրության մեջ՝ ոչ զգրին տան հակ, ոչ չափողին, և՛ : Ա : Եզն միասլում գզին լծն, : Ա : Եզն միասլում չափողն: Ակներև է, որ երկու զեպրում էլ չափող հիշատակված է զգրի հետ, որ մտածել է տալիս, թե այն ևս պետք է վարչական, հարկային պաշտոնյա լինի: Սակայն վկայված ժամանակաշրջանում (ԺԳ դ.) մոնղոլական վարչահարկային պաշտոնացանկը զոնե հայկական աղբյուրներում այդպիսի պաշտոնյա չի ճանաչում: Մեջուղների ու մոնղոլների տիրապետության շրջանում նվաճված երկրներում պարբերաբար անցկացվող աշխարհազորների ժամանակ գործում էին մարդկանց, անասունների գլխաքանակը և ընակչության կկամուտ-

ներ հաշվառող հատուկ պաշտոնյաներ, որոնք, ինչպես նշել ենք, միջին դարերի ձեռագրերի հիշատակարաններում ու մանր ժամանակագրություններում սովորաբար անվանվում են համարող: Լամարել, համարող տերմինների բազմաթիվ վկայություններից մեջ ենք բերում երկուսը. ԺԳ դ. մի ժամանակագիր 1254 թ. զեպրերի մասին պատմում է. «Եւ Մանկու զանն հրամայեալ համարել զՏնագանեալ աշխարհս, և էր համարող Արզուն, զինչ հարկա ի գլխոյ արեց, բայց ի կանանց ի ծերոց և ի բոյն տղայոց»²³⁴: Մյուս վկայությունը 1314 թ. ձեռագրի հիշատակարանում է. «Ի թուականս Հայոց ի ԶԿԳ համարողքն ի վայու ձորս եկին, ու մինչև ի յամական տղայն համարէին»²³⁵:

Չափող բառի իմաստից և վկայված կապակցությունից երևում է, որ այս տերմինը ևս պետք է արտահայտեր մոնղոլների աշխարհազոր-մարդահամարներն անցկացնող, ընդհանրապես հարկահան պաշտոնյա, որը ի տարբերություն համարողների, հավանաբար զբաղվում էր ոչ թե մարդկանց ու անասունների գլխաքանակի հաշվառումով, այլ հողատարածությունների, նրանց բերքերի չափումներով և շահութարի հաստատությունների եկամուտների հաշվառման, հարկման ու մոնղոլական դիվանին հասանելիք տուրքերի գանձման գործերով:

3. ՉԱՓՈՂԻ ՀԱԿ—Հայտնի է, որ մոնղոլական տիրապետության շրջանում հարկատու բնակչությունից հայաբնիկ են, ի թիվս այլ լանձուսների, նաև զանազան վարչա-հարկային պաշտոնյաների պաշկանություն համար հատուկ հարկեր, որոնք ավանդված են հայկական աղբյուրներում՝ զեմբերեանակ, շանեանակ, ամիրանակ, ձեռնավորանակ, զգրի հակ և այլն: Նորատուր բնիվող բնազորի վկայված կապակցությունից՝ ՈՉ ԳՉԲԻՆ ՏԱՆ ՀԱԿ, ՈՉ ՉԱՓՈՂԻՆ, ակներև է, որ գոյություն է ունեցել մոնղոլական չափող պաշտոնյայի օգտին գանձվող առանձին հատույթ, որ Զարարյան Ավագի արևատության համար, սակ է նրա հրամանով, զեզել են նորատուրի իշխանավորները:

4. ԳՉԲԻ ՀԱԿ—Միջնագրայն Հայաստանի վարչական աստիճանավորության ստորին պաշտոնյայի՝ ԳՉԲԻ և նրա օգտին բնակ-

²³² «Մեն բառարան օսմաներեն Հայերեն Կ. Կարապետյան, Պոլիս, 1912, էջ 800, «Մասնագրանի պարսկերեն վավերագրերը կազմեց Հ. Փափաջյան, Ե., 1956, էջ 114—116:

²³³ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. էջ 487—488:

²³⁴ Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ. էջ 141:

²³⁵ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 104:

չություննոր համարվող առանձին հասույթի մասին աղբյուրներում որոշակի տվյալներ կան, որոնք արժարժիլ են պատմագրութեան մեջ: Յատուտ օրինակ է Աշտարակի Մարինե կեղեղնու ԺԳ դ. մի արձանագրութիւնը, որտեղ մեր հարցի հետ առնչվող հաս.վածք կարգացելով է. սեւ պարտնայքն դայն տներոյն զամէն հարկ թողին՝ ոչ բարաթ, ոչ պարոն, ոչ ամիրաւ, ոչ ձեռնաւոր, ոչ ԳՁԻԻ, ոչ ուր հետ տներոյս բան չունիս²⁵⁰. Այս արտոնագիրը համարուում է պարտեթի, ձեռնավարի, ամիրայի հետ նաև ԳՁԻԻ առնչութիւնը, արվյալ գեպքում Աշտարակի Մարինեի վանական չորստան 30 սենյակների շահագործումից ստացված եկամտոսից մասհանվող հարկի հետ: Նորատուսի բնեւոյնը արձանագիրը գալիս է նորից հաստատելու, որ միջնադարում գոյութիւն է ունեցել ԳՁԻԻ հատուկ հարկ, որ տվյալ գեպքում թողել են տեղի իշխանաւորները, անշուշտ, պարոն Ավագ Զարարյանի հրամանով (Աւագին արեւին համար):

Նորատուսի բնեւոյնյան առարկա արտոնագրի մեր առաջարկած նոր վերձանութիւնը, նրանում վկայված՝ շափող, շափողի հակ, զգրի հակ, միապում նոր տեղիներների բառաբնութիւնն ու ստուգաբանութիւնը հնարավորութիւն են տալիս համարտորեն վերականգնելու նրա բովանդակութիւնը, բոտ այցմ, արտոնագրի հեղինակները՝ նորատուսի շահնա (հարկահամար պաշտոնյա) Մինային և զեմեթարը (ավանապետ, զեղշափայ) սահմանում են, որ՝ Աւագին արեւին համար ի վեր կալաւ, այսինքն Զարարյան Ավագի (Իվանեի որդու) արեւատութեան համար թողել, վերացրել, գիշել են (= ի վեր կալաւ) զգրին և շափողին արվելիք հարկը՝ ՈՁ ԳՁԻԻԻ ՏԱՆ ԶԱԿ, ՈՁ ԶԱՓՈՂԻՆ:

Միտձամանակ շարունակութեան մեջ սահմանվում է. . Ա. եզն միապում զգրե լծն. . Ա. եզն միապում շափողն, այսինքն նորատուսի զգրին ու շափողը տեղի իշխանաւորներից իրավունք են բաժանում իրենց տնտեսական կարիքների համար բանեցնելու համայնքի կողմից կոտին հատկացվող լծկան անասունը, յուրաքանչյուրը մեկ լուծ եզ (. Ա. եզն պետք է հակահնալ մեկ լուծ, մեկ զուլց),

²⁵⁰ Աշտարակի այս կարտը բնագիրը գիտականորեն հրատարակված չէ, բայց տեղիների բառաբնութեան առիթով մասամբ մեջբերված է՝ Երարեր, 1969, № 6, էջ 42.

բոտ այցմ, հատուկ շեշտվում է, որ լծկանը բանեցվում է միապում անվեար, անհարկ՝ Ա : եզն միապում զգրե լծն... և այլն:

Նորատուսի վարչահարկային պաշտոնյաներ զգրին և շափողին այս արտոնութիւնը արվում է մասամբ հատուցելու հարկատու բնակչութեանը նրանց համար համարվող հատուկ հարկ-հասույթի գիշումից առաջացած վնասը, որ ինչպես տեսանք, սահմանված էր արտոնագրի առաջին մասում՝ ՈՁ ԳՁԻԻԻ ՏԱՆ ԶԱԿ, ՈՁ ԶԱՓՈՂԻՆ:

85. ՄՈԿԱՆԻՍ

Այս գրութիւնը բոտ հիշատակվում է Անիում, Տիգրան Լեոնեցի ՈԿՆ (1215) թ. երկարատունը արձանագրութեան մեջ, Ս. Գրիգոր վանքին եմիրած բազմաթիվ կալվածքների շարքում:

Համապատասխան կապակցութիւնն առնելով ենք Զ. Օրբելու վերջերս հրատարակված վերձանութիւնից. եւ ետու բնձայս ի վանես Սրբոյ Գրիգորոյ... Խաչարհանն հողերն ու փնդուկն, ի քաղաքիս հայրենեիք բաղնիսն ու միլն, ի մոզանիս խանապարն կուղպակեղովն ու կամարակապ փնդուկն (Գ Ի 63): Նայս այս հատվածի բառակապակցութեան մասին. ուսումնասիրողներ Սարգիսյանը, Բրոսսեն, Ալիշանը բենվող բառը դիտում են՝ հայրենեիք բաղնիսն ու միլն ի մոզանիս շարակցութեան մեջ, այսինքն բաղնիսն ու միլն տեղադրում են ի մոզանիս, որ մատնանշում է նրանց գտնված տեղը (ՍԱԿ 126, ԳԱՏ 145)²⁵¹: Ման այս մասում վերձանում է՝ մի բաղնիք (բաղնիքը) և մի միլ ի մոզանիս (ОДНУ БАНЮ И ОДИН МИЛ НА ПЛОШАДИ)²⁵², էմինի ուսերեն թարգմանութեան մեջ բնագրի այդ մասը մեջ է բերված՝ միլն ի մոզանի սխալապարն կուղպակեղովն ազգավող բառանշատումով, բոտ այցմ, միլ և խանապար բառերը սահմանակալի համարելով՝ բաց են թողնվել (НЭА 21, 22): Մեղ ավելի համարական է թվում Զ. Օրբելու վերձանութիւնն ու բառանշատումը, որ մեջ բերեցիք վերեում՝ ի քաղաքիս հայրենեիք բաղնիսն ու միլն, ի մոզանիս խանապարն կուղպակեղովն ու կամարակապ փնդուկն, այսինքն խանապարը կրպակներով ու կամարակապ վեր-

²⁵¹ M. Brosset, Les ruines d'Ani, Spb., 1852, էջ 146.
²⁵² H. Mapp, Anu, M.—Jl., 1934, էջ 34:

դուրս գտնվում են ի մոզանիս, բառ այդձ, նախորդ՝ հայրենի բազմաճյուղն ու միլն առանձին, ինքնուրույն կապակցություն է և չի աղբյուրվում ի մոզանիս-ի նախ:

Տիրան Նոնենցի շինարարական-եմիրատովական այս նշանավոր արձանագրության մեջ հանդիպող բազմաթիվ տեմոնիները և կավածրեների անվանումները դեռևս սպասելի չեն բացահայտված, գրեթե թվին է պատկանում մոզանիս բառը, որ բնագրի հրատարակչները և ուսումնասիրողները թողել են անբացատրելի: Նույնն է վիճակը նաև վերջին հրատարակված «Դիվանի» I պրակտի, որի տեղանունների ցանկում մոզանիս գիտված է տեղանուն և բացատրված՝ որտեղ կար խաճապար և փնջուկ (Գ I 137): Ի մոզանիս հուլիոսանի ուղղականը պետք է վերականգնել մոզան (ի մոզանիս), որի նշանի ներգոյականը կամ ի նախընթաց արականը կլինի ի մոզանի և ս ցուցական հոգի հավելումով՝ ի մոզանիս. բառս ծագում է արաբ. maydan արմատից և նշանակում է հրապարակ, հազարամեջ, պողոտա, դաշտ, սապարեզ: Միջնագրի գրական երկերում բառս հանդիպում է տարբեր հեյուսուական փոփոխություններով՝ մոյտան, մայտան, մէյտան, մտան, մէլդան²⁴⁹: Այ կրեմնի երկրաբանի պարզումը կամ նրա վերածվելը ո-ի (մոլդան > մոդան) օրինակ է այս շրջանի վիճագրության մեջ և ձեռագրերի հիշատակարաններում (Նմմտ. հաւաքաբ Քամարի, վան իմ հոգաւ եւ աւելու եւ Շանկաճի հոգաւ և այլն—ԿՂՄ 115, ՂԱԵ 125):

Նույն բառը մեղան-իս փորագրումով կարգացվում է նորաստու գյուղում կանգնեցված «Շառփառաշ» զենարանդակ խաչակրանի ՈՆԵ (1226) թ. հետևյալ հիշատակագրում. «ՄԷփորբաշու շինիս... խաչու կանգնեցի ի փրկութիւն ինձ, ձեռաց իմոց, յեզր մեղանիս» (Գ IV 23): Այստեղ ակնհեր է, որ հուշարձանը կանգնեցվել է յեզր մեղանիս, այսինքն պատմական նորաստուի գյուղամիջի հրապարակի եզրին:

Անիի արձանագրության մեջ ի մոզանիս նշանակում է կազափ հրապարակ, առևտրական կենտրոն և շուկա. որտեղ գտնվելիս է եզրի Տիրան Նոնենցի խաճապարը կրպակներով (իջևանատուն-հյուրանոց-կարավանատուն) և կամարակապ պանդոկը, որոնք սույն նվիրագրով քննվել են նորակառույց Ս. Գրիգոր վանքին:

²⁴⁹ Տե՛ս Կ. երկնայից, Տաղր, Ե, 1962, էջ 156, «Պատմութիւն Շապուղի Բազմաճյուղ», էջ 140, 45, Սու. Օրբիլեան, Պատմութիւն..., էջ 248:

Ջաբրայան Շահնաշի որդի ամիրսպասալար Մյաբրգրծելը Սահանջի վանքում թողել է մի երկարաշունչ արձանագրություն, որի մեջ երկու անգամ հիշատակված է մուհասիլ բառը, նախ հոգնակի բացասական հուլիոսանով՝ ի մուհասիլաց և ապա՝ ուղիղ ձևը, անփոփոխ՝ մուհասիլ: Անս բնագրի մեջ հետաքրքրող հատվածը արտօք. Կ. Ղաֆագրայանի հավաստի վերածանությունը. «էկի վանքու ու գոտիս անմարդ գտար, որ ի մուհասիլ և և առաջնորդ է այլ հարկէ ավերած էր և էկեղեցիքս փակած..., այսմ հետէ ոչ մուհասիլ եւ ոչ այլ հարկահան Սահանջիս շմտանե...» (ԿՂՄ 125):

Բառս մատենագրական աղբյուրներում չի վկայված և այդ պատճառով տեղ չի գտել նախնի բարբառներում: Արձանագրության նախկին հրատարակիչները տարբեր ձևով վերծանելով մուհասիլ տառաշարքը (մահասիլաց, մուհասիլ), նրա մեկնությունը չեն անդրադարձել՝ հավանաբար վկայված իրադրության մեջ գտնուած բրոնզե համարելով Սակայն, ինչ ակնհայտ է եղել ընդօրինակողների համար, յուրջ տարակարծություն է առաջացնում բնագրի այս կամ այն առումով ուսումնասիրողների շրջանում. արդարև, ինչպե՞ս մեկնաբանել մուհասիլ-ը: Առաջինը այս տեմոնը քննում է ակադ. Ն. Մանանդյանը, մոնղոլական շրջանում Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերի և տուրքերի ցուցակում տեղ հատկացնելով նաև մուհասիլ կամ մահասիլ հարկին՝ նա գտնում է, որ այն վճարվել են Սահանջի եկեղեցիները²⁴⁰: Հեղինակը չի գրավորում մուհասիլ (մահասիլ) բառի ստուգաբանության կամ այն անունով հարկի բովանդակության քննությունը և իր տեսությունը կառուցում է արձանագրության՝ իր ձեռքի տակ եղած ընդօրինակության հիման վրա, որն բոս ամենայնի ազավաղված է, պակասավոր: Չնայած դրան, Մանանդյանի այս մեկնությունը հետագայում անառարկելի քաղաքացիություն ստացավ հայ պատմագիտական գրականության մեջ:

Մուհասիլ բառի հիշյալ մեկնության համար հիմք է ծառայել քննվող արձանագրության այն ընդօրինակությունը, որը հրատարակված է Ս. Զալայանցի գրքում, իսկ այնտեղից էլ անփոփոխ՝ Կ. Կոստանյանցի «Վիճական նախորդում», որտեղ, էջ 141, կարգաց-

²⁴⁰ Ն. Մանանդյան, Քննական տեսություն, Գ, էջ 282:

վում է. «Եւ ամենայն եկեղեցիքս ամէն հարկէ պատեցաք, որ յամհետէ ոչ մտահայի եւ ոչ այլ հարկ Սանահնէս կաան...» (ՍՋՃԱ 22, ՎՏ 141): Մինչդեռ, ինչպես վերևում տեսանք, իրականը պետք է լինի՝ ոչ մտամասիլ եւ ոչ այլ հարկաման Սանահնիս շմտանէ: Մեկ մնում է հավաստել մտամասիլ բառի այն մեկնութիւնը, որ տրված է հենց վկայված արձանագրութիւնն՝ ոչ մտամասիլ եւ ոչ այլ հարկաման կապակցութիւն մեջ: Ըստ այդմ, մտամասիլ ոչ թէ եկեղեցուց կամ բնակչութիւնից հավաքող հարկ է, այլ այդ հարկերը նշանակող ու հավորող պաշտոնյա, հարկահավաք: Բառիս ստուգաբանութիւնը նա հաստատում է այս իրողութիւնը. արաբ. hassala նշանակում է հավաքել, գանձել (տուրքը), իսկ muhassil՝ այն անձը, որ գրադ-վում է հարկ հավաքելով, հարկահան պաշտոնյա, տուրքերը գան-ձող²⁴¹:

87. ՄՈՒՏԷՐԻԿ (ՄՈՒՏԷՐՈՒԿ(?))

Բառիս հոգնակի թվի տրական հոլովածներ՝ մուտերիբուն (մուտերիկ + ե հոգնակերտըր + ու սեռ. տրականի հոլովակազմիչը և ե ցուցական հոգը) միայն մեկ անգամ հիշատակված է Անիի Առաքել-յոց եկեղեցու ՉԻԵ (1276) վկայականի մի անվարտ արտոնագրում, որով քաղաքի տաղմայիները թեթևացնում են բնակչութիւնից գանձվող որոշ հարկեր: Բնագիրը լայվ է պահպանվել, և նրա ընթո-րինակութիւնը դժվարութիւններ չի հարուցում: Մուտերիբուն ձևի վկայութիւնը մեջ ենք բերում Հ. Օրբելու՝ վերջերս հրատարակված վերծանութիւնից. «ԹՎին : ՉԻԵ : էլլականին: Մեթ՝ Անս դադմաչիրս... դայս զիր ավաք Անս մուտերիբուն, տեսար որ ուժ էր արած անի-րաւ դադմահից ունի (ու մի՞) դարտակ դրատաէն կէս սպիտակ առ-նուին: Մեթ՝ վերագրեալ դադմահիրս... թողար...», բնագիրն այս-տեղ ընդհատվում է (Գ 1 22):

Նույն արձանագրութիւնը հրատարակել է նաև Կ. Բասմաշյանը՝ Անիի, Բագնայրի և Մարմաշենի վիճագրութիւն ֆրանսերեն ժո-

²⁴¹ Sd՝ X. Баранов, Арабско-русский словарь, М., 1962, էջ 222—223: Մուհասիլ տերմինի մասին ավելի մանրամասն տե՛ս Ի. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV вв., М.—Л., 1960, էջ 353, 385:

գրվածում: Բնագրի երկու վերծանութիւնն էլ նույնական են իրա-կանի հետ և էական տարբերութիւններ չունեն իրարից: Միայն Բաս-մաշյանի գրքում քննութիւնն առարկա մուտերիբունն տառադարձը հրատարակվել է մուտերիբուն, որը և նյութ է տվել բառիս թուր-մեկնութիւններին (KBA 72): Հ. Օրբելու «Գիվանում» տեղագրո-ված է արձանագրութիւնն ոչ այնքան հաջող լուսանկարը, որի վրա, համադրատախտան մատում պարզ երևում է ոչ թէ Ք գիտագիրը, այլ Տ.ն., ըստ այդմ, մուտերիբունը ընթերցումը ավելի հավաստի է, քան մուտերիբուն (նկ. 37):

ՉԱՅՍԳԻՐ
ԷՐԿԵՐՈՒՆԵՍԱՔ
ՆԻՆԱԻ ԴԱՂԱՃԻՅ
ՍՏԷՆԿԵՍՊԱՌՆՈՒ
ՏՎԱԲԱՆՈՒՄԻՏ
ՈՐՈՒԹԷԼԱՐԱԾԱ
ՈՒԵ ԴԱՐՄԱԿԱՆ
ԽԼ

նկ. 37

Սակայն բանասիրական գրականութիւնն մեջ իբրև հետազո-տութիւնն առաջն է ընդունվել Բասմաշյանի մուտերիբունը ընթերցու-մը, այստեղից էլ բառի ուղիղ ձևը՝ մուտերիկ: Բառիս առաջին մեկ-նութիւնը գտնում ենք հենց վերծանողի՝ Բասմաշյանի մոտ. առանց ստուգաբանութիւնն որևէ փորձի, հեղինակը մուտերիկ բացատրում է՝ հակիչ, վերակացու. հավանաբար նկատի տանելալով վկայված ի-րազրութիւնն մեջ նրա ենթազգրվող նշանակութիւնը (KBA 90, 227): Հ. Անառայանը և Ստ. Մայիսայանցը ծանոթ չեն եղել Անիի արձա-նագրութիւնն մուտերիկ-ին և Յայսմատուրքի մի վկայութիւնն առթիվ (լուսնայն գրաստի մի վարձ է և զկտորն (հացի) մուտերիկն ուսէ) մուտերիկ բացատրում են՝ «խոհարարի օգնական, որ է մոխիր թա-փող, թուրք մարքող ու վառող, ջուր բերող անձը»: Այս մեկնութիւնն համար հիմք է ծառայել մուտերիկ > մտուկ բառի (ծագում է մու-տերիկ ձևից ու հնչյունի անմանումով) այն նշանակութիւնը, որ գիտվում է Երևանի բարբառում: Նույնը կրկնված է հայագետ Կարստի միջին հայերենի անհիպ բառարանում²⁴²:

²⁴² Հ. Անառայան, Արմ. բարբառն, Գ, էջ 1182, Գալատական բարբառն, էջ 803, Ստ. Մայիսայանց, Բացարական բարբառն, 3-րդ, էջ 367, Ս. Անատունի, Հայոց բառ ու բան, էջ 491, KWM, մուտերիկ բառի սակ:

2. Աճառչանք և Ստ. Մալխասյանցը անհրաժեշտ են համարում հատուկ մատնագրույց անել այս բառի սխալ մեկնությունը Քաջուհու բառարանում, որտեղ մուսուլմանի կամ մաքսուկի բացատրվում է՝ իշապան:

Այլ կարծիքի է պատմաբան, ղոցենն 2. Ժամկոչյանը: 1955 թ. նա հանդես եկավ Երևանի պետական համալսարանի գիտական աշխատությունների ժողովածուում՝ Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին բնագրական վերլուծականով, որտեղ ալը բնագրերի բնութագրումը աշխատում է պարզել Անիի պատմության և ժամանակագրության այլևայլ հարցեր:

Այստեղ հեղինակը հերքում է Աճառչանի և Մալխասյանցի բացատրությունը և անվերապահորեն հաստատում Քաջուհու ստուգաբանությունը մուսուլման = արաբերենից փոխառված բառ է և նշանակում է իշապան, բռնպղան, իր գրաստը վարձով տվող՝ քառ ուրում ու մի բառով շհիշիով մեծ հայազեանների փոստական կարծիքը Քաջուհու այս մեկնության մասին²⁴³: Մուսուլմանը հասկանալով չորսիպան, իր գրաստը վարձով տվող, 2. Ժամկոչյանը տաղմաշիների հիշյալ արտոնագրի՝ գալստ գիր ավախ Անն մուսուլմանն նախադասությունը մեկնաբանում է այն իմաստով, որ հարկահանները գիրարտոնագրի՝ գատարի գրաստից կես սպիտակ հարկը գրելու մասին ավել են Անիի չորսիպաններին կամ գրաստը վարձով տվողներին: Իհարկե, հնարավոր էր բնութագրել առարկա արձանագրության նաև այսպիսի մեկնաբանությունը, եթե ստույգ լիներ մուսուլմանը բնութագրումը և ստուգաբանությունը, սակայն, ինչպես նշել ենք, իրականում, Անիի Առաքելից եկեղեցու պատին փորագրված է ոչ թե մուսուլման, այլ մուսուլման և այլ կապակցությունը 2. Ժամկոչյանի անբնականից ստուգաբանությունը առանց մեր հերքման էլ կարելի է իր նշանակությունը, մինչդեռ Աճառչանի և Մալխասյանցի բացատրությունը Ցալամազուրի մուսուլմանի վկայության մասին պահպանում է իր արժեքը:

Իսկ ի՞նչ է նշանակում մուսուլման տվյալ կապակցության մեջ: Պարզվում է, որ բառն արաբ. mudarrak = մանդարմ, դիտակալ, հսկող (daraka = հսկել) բառի փոխառությունն է (d > a խալաթու-


²⁴³ 2. Ժամկոչյան, Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրության մասին, Գրատական աշխատություններ Երևանի պետական համալսարանի, Ե., 1955, հատ. 47, էջ 113—114:

մով), բառ ալղմ, մուսուլմանի պետք է հասկանալ քաղաքի կամ շուկայի հսկիչ պաշտոնյա, ժանդարմ, ոստիկան²⁴⁴:

Արեմն, տաղմաշիները գրաստի տարբեր իջեցնելու կամ վերացնելու մասին արտոնագիրը ավել են ոչ թե գրաստատերերին, չորսիպաններին, ինչպես ստացվում է 2. Ժամկոչյանի ստուգաբանությունից, այլ Անի քաղաքի հսկիչներին, հարկահավաք պաշտոնյաներին, որոնք հավանաբար զբաղվում էին քաղաքի բնակչությունից հարկերի գանձումով և պարտանների կատարման հսկողությամբ:

88. ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԹԵ՛ ԼԱՆԱՅ

Այս անորոշ տառաշարը հրատարակված է Եղեգնաձորի շրջ-Քարազուխ գյուղում կանգնած խաչարձանի ՉՍԲ (1203) թ. հիշատակագրում. սեյա իմ գիր է Ովանիսի, ես երկու որդի ունի Քրիստոս փոխկցար, մեր յիշատակ աստուած. Հանաց. թվ : ՉՍԲ : Ե (Դ III 176): Բնագիրը անեղծ է պահպանվել, նրա վերծանությունը դժվարություններ չի հարուցում, սակայն հաճախ զրբեր չեն կապվում արձանագրության բովանդակությանը, ամիմաստ են և ցայսօր չբացահայտված: Ինչպես երևում է բնագրի զբ-ձագրի բնագրից, հաճախ ընդգծված զրբեր ոչ թե հիշատակագրի շրջ-Քարազանի մեջ են, այլ նախաբանում, այս իմ գիր է բառերից առաջ, մինչդեռ վերծանողը զրբեր տեղավորել է վերջում, որանով իսկ դժվարացնելով մեկնաբանությունը: Բացի դրանից, նիշտ չեն կարացվել, անորոշ զբ-րբերը, բառ այսմ, առաջին գիրը ոչ թե և է, այլ չ, վերջին գիրն էլ պարզ երևում է ոչ թե ց, այլ չ, իսկ վերջին վանկի (այ) վրա զոհկ-պատելով է փորագրված, որը չի նկատվել (նկ. 88): Այս շտկումներից հետո վիճելի զրբեր կարելի է վերծանել չան այ, կամ ուն համարողոված վանկի վերականգնումով՝ յանուն այ, որ հիշատակագրություն սկսելու սովորական բանաձև է, բազմիցս վկայված այլ վիճագրերում:



²⁴⁴ S. X. Баранов, Арабско-русский словарь, 1962, էջ 318:

Այսպիսով, մեր ճշգրտումով քննության առարկա խաչարարի բարեխոսությունը կարելի է կարգալ. Յանուն ալ, այս իմ գիր է Ալանիսի... և այլն, այսինքն Հանաք-ի փոխարեն պետք է վերծանել յանուն ալ:

89. ՅԱՆՈՒՆ ԱՅ, ԹԵ՛ ՅԱՍՈՒՆԱՅ (ԱՅՆԱՍՈՒՆԱՅ)

Այս անորոշ տառաչարքերը փորագրված են Վալոց ձորի Քանառ վանքի Ստեփանոս եկեղեցու Հարապալայն պատին և շնայած անեղծ իրձակին, բոլոր վերծանողների մոտ էլ մնացել են առեղծվածային: Բնագիրը բոտ Ս. Բարխուդարյանի առավել ամբողջական վերծանության կարգացվում է. «Յանուն աստուծոյ, ես՝ Բուբայիս թոռն Սամաղային, որդիս Յասունայ, ես՝ Սարգիս որ սոյի Քանառի վանից Սուրբ Ստեփանոսի զՋատիեայ վարին հողն նացան հայրենիք, նաբան տվին ինձ զայսունութան : Ե : աբ : Թ : խոբան...», հետևում է անեղծի ձևակերպումը (Գ III 82):

Այս վերծանությունից բնավ չի հասկացվում, թե ով է նվիրատուն կամ նվիրագորհ հեղինակը՝ ՍԱՄԱՆԱԻԻ ՔՈՌ, ՅԱՍՈՒՆԻ ՈՐԳԻ ԲՈՒԲԱՅԻՆ, թե ՍԱՐԳԻՍ: Նույն անձնանունները Ս. Ջալալյանցը հրատարակել է. «Ես՝ Բուբայիս թոռնս Սամաղային որդիս Յանուն աստուծոյ, ես՝ Սարգիս, իսկ Ալիշանը՝ «Ես՝ Բուբայիս թոռն Սամաղային որդին յանուն աստուծոյ, ես՝ Սարգիս» (ՍՋԲ 209, ՂԱՍ 123): Ս. Բարխուդարյանի բնթերթմանն ավելի մոտ է Գ. Հովսեփյանի բնդորինակությունը. «Ես՝ Բուբայիս թոռնս Սամաղային որդի Այնասունայ (Այնասունայ), ես՝ Սարգիս» (ԳՉԽՊ 339): ՄԱԿ-ի հեղինակները այդ մասում ունեն՝ «Ես՝ Բուբայիս թոռնս Սակառային, որդիս Յասուկայ, ես Սարգիս» (ՄԱԿ 131):

Բնագրի բոլոր հրատարակիչները այսպես անորոշ վերծանելով անձնանունները, նրանց մեկնությունն ու վերլուծությունը չեն անդրադարձել, մինչդեռ ամբողջ նվիրագրից դրա հետևանքով մնացել է անորոշ ու անհասկանալի: Բնագրի առավել զիտական հրատարակության հեղինակ Ս. Բարխուդարյանը հավանաբար չի նկատել նրա անորոշությունը, չի պարզել, թե ով է հեղինակը (Բուբայիս՝ս, թե՞ Սարգիսը) և անունների ցանկում դրանք զեանեղել է հետևյալ ուղիք

ձևերով. Բուբայիս, Սամաղայի, Յասուն, Սարգիս: Ավելի հիմնավոր արձանագրության անձնանունների շփոթությանը անդրադարձել է Ն. Աղոնցը՝ «Նաղարկայնքի» մասին իր կարծիք-գրախոսականում. «Տարօրինակ է,— գրում է նա,— որ արձանագրությունը սկսում է Բուբայիս, բայց շարունակում է Սարգիսը, խոսելով միայն իր անունով: Սակայն, իր ձևերի տակ շունենալով բնագրի լուսանկարը կամ գծագիր արտապատկերը, Աղոնցը զգուշանում է որեւէ ձևով չափելու հակասությունը և միայն առաջադրում է Բուբայիս կարգով Բուբայիս, քանի որ այլ աղբյուրներից հայտնի է անվան ուղիղ ձևը՝ Բուբայ (ԳՉԽՊ 465):

Տեղում Քանառի վանքի Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատին և «Իրվան» III պրակի № 80 լուսանկարի վրա նորից տառագելով բնագրի վերծանությունը, համոզվեցինք, որ ընդորինակողները այստեղ երկու առանձին բնագրեր արհեստականորեն միացրել են իրար և ներկայացրել իբրև մի ամբողջական նվիրագրի, որից և առաջացել են բնագրի երկու տարբեր հեղինակները և մյուս անհամաձայնությունները: Իրականում բնագրի առաջին տառաչարքը՝ Յանուն ալ, ես՝ Բուբայիս, բոռնս Սամաղային, որդի Ա... ինչուսուրույն, անավարտ արձանագրության սկիզբն է, որը ինչ-ինչ պատճառով չի շարունակվել: Իսկ հաջորդ տողը բուն՝ ավարտված երկիրագրի սկիզբն է, որը կանոնավոր կերպով սկսվում է Յանուն ալ ես՝ Սարգիս... քաներով: Լուսանկարի վրա պարզ երևում են յանուն ալ գրերը և վերջին հայտվածն իրա փորագրված պատվի զբծիկը, մինչդեռ բնդորինակողները ամբողջ տառաչարքը վերծանել են առանց այդ գծիկի՝ յասունայ (ե-ի տեղում Ա կարգավով), այն համարելով Յասուն անձնանվան սեռական հորովանք (Նկ. 39):

ՅԱՍՈՒՆԱՅԻ ԲՈՒԲԱՅԻՆԻ ՍԱՄԱՂԱՅԻ ՆՎԻՐԱԳՐԻ Ա
ՅԱՍՈՒՆԱՅԻ ՍԱՐԳԻՍԻ ՆՎԻՐԱԳՐԻ ԱՎԵՐՄԱՆ ԵՎ ՆՎԻՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆԻ ԿԱՆՈՆԱԿՈՒՄԻ ԿԱՆՈՆԱԿՈՒՄԻ ԿԱՆՈՆԱԿՈՒՄԻ
ԲԵ՛:Ե:ԼԵ:Ո:Թ:Ն:ԲԱԿԱՆԵ:ՅԳ Ը:ՎԱՅՈՒՆԱՅԻ
ՉԲԱԿԱՆԵՑԻ

ծակամտին, այլ յիսնակամտին (< յիսնակամտ), որը ծննդյան տոներին նախորդող հիանօրյա պահի սկիզբն է, սկիզբն պահուց յիսնակաց²⁶⁶, Այստեղից, բայտ մեր ճշգրտված վերծանության, նը- վիրատուին հասանելի 10 պատարագածաները պետք է կատար- վին ոչ թե ինչ-որ ծակամտին կամ Գրիգոր լուսավորչի հոր վիրապ մանկու տոնի Բ կիրակէին, այլ ծննդյան տոներին նախորդող յի- սուն օրցակի՝ յիսնակամտի կրկնորդ (Բ) կիրակի օրը:

Պատճառը ծակամտու տառաշարքի մյուս վկայությունը՝ Սուրբ Գրիգորի ծակամտի շարքը արևն է զշարքն և զվիրակէն զամեն եկեղեցեացն պատարագն մեզ առնեն, այստեղ, վերծանողի կար- ծիբով, բոլոր պատարագները պետք է կատարվին ծակամտի (Գրի- գոր լուսավորչի հոր վիրապ մանկու օր) շարքի և կիրակի օրերը բոլոր եկեղեցիներում, այդ պատճառով էլ նա փորագրողի սխալ կրկնությունն է համարում և զշարքն բառերը՝ ծակամտի շարքը արևն և զշարքն: Վերծանողի այս մեկնությունը ևս անիրական է հետևյալ պատճառներով. ա. Բնագրի 10-րդ տողում ծակամտին կարդացված տառաշարքը իրականում, քարի վրա փորագրված է ճիշտ այնպես, ինչպես նախորդ արձանագրում՝: Ծ: ակամտին, որը նշված հիմունքով հարկ է վերծանել՝ յիսնակամտին, բ. Սուրբ Գրի- գորին ծակամտին շարքը արևն շարքն է հասկանալ Գրիգոր լուսա- վորչի հոր վիրապ մանկու օրվա, այն էլ սանպայման շարքի օր- վա իմաստով, ինչպես Չալսյանցյին հեանելով, կարծում է Լա- ֆաղարյանը, այլ խոսքն այստեղ Հաղբատավանքի Սուրբ Գրիգոր եկեղեցու մասին է (կառուցված նՉԳ=1025 թ. մեծ ժամատան հա- րավային կողմում), որի յիսնակամտի շարքի օրվա պատարագը հատկացվում է նվիրատուներ Պածածին և նրա ամուսին Պուգային, գ. տվյալ հատվածում փորագրողի սխալ չի դիտվում, ինչպես կար- ծում է վերծանողը. և զշարքն բառերը ավելորդ չեն, չեն կրկնված, այլ վերաբերում են ոչ թե Սուրբ Գրիգորի շարքը արևն կապակցու- թյանը, որտեղ նրանք իրօր ավելորդ կիսեցին, այլ հաջորդ նախա- դասության՝ և զշարքն և զվիրակէն զամեն եկեղեցեացն պատա- րագն մեզ առնեն:

Այսպիսով, խնդրո առարկա հատվածը մեր վերծանությունը կլինի. արևն ծովանեն և միարժեք սանձանեցին տան Սուրբ Գրի-

գորի յիսնակամտին շարքը արևն և զշարքն և զվիրակէն զամեն եկեղեցեացն պատարագն մեզ առնեն, բայտ այդ, նվիրատուներին պատարագածանը պետք է արվեն Հաղբատի Սուրբ Գրիգոր եկեղե- ցում յիսնակամտի շարքը օրը, իսկ մյուս եկեղեցիներում՝ շարքը և կիրակի օրերին (նկ. 41):

Հաղբատի վանքի միմագրի- րում ծակամտու ընկերցման սույն ճշգրտումը յիսնակամտի բնավ էլ չի նշանակում, որ հայերին բա- տազանձում այդ բարո գոյությունն չունի Հայերենի դրական հուշար- ձաններում՝ ծակամտու քանիցս վկայված է՝ ծակ մտնելը, ծերպում թափվելը իմաստով, իսկ ծակամտում՝ նաև իբրև նգնակյաց աղան- քավարներ: Մեզ հայտնի չէ որե՛ն աղբուր, որտեղ լուսավորչի հոր վիրապ մանկը կոչվեր ծակամտու:

Այս բոլորից բացի, ծակամտու ընկերցումը և այդ անունով հատուկ եկեղեցական տոներ անիրական է նաև նրանով, որ հայ ե- կեղեցու արարողություններում Գրիգոր լուսավորչի հոր վիրապ մանկու օրը տոնացանկում արտացոլված է մատն ի վիրապ ան- վանումով, մինչդեռ լուսավորչի էլ ի վիրապէն հատուկ ծիսակար- գով նշվում է հոգեգալստյանը հաջորդող շարքի օրը:

91. ՆԱՍԻՃ, ԹԵ՝ ՆԱՍԻ Ծ (100)

Երևանի Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վրա փո- րագրված ԺԳ դարի նվիրատվական արձանագրության բեկորը ա- ռաջին անգամ հրատարակել է Կ. Լաֆաղարյանը, հետևյալ վեր- ձանությունը. «...նախ ճ (100) վս... : Գ: (4) ար ժամ ի տանի ձնողաց իւրոց, կատարիչքն արճնին յաստուծոյ» (ԿԳԼ 157): Այս խաթարված տառաշարքերի մասին որոշակի թիչ բան կարելի էր ասել, այսուհանդերձ վերծանողն աշխատել է ինչ-որ շափով վերա- կանգնել բնագրի հիմնական բովանդակությունը: Ահա նրա մեկ- նությունը. «նվիրատվական բովանակինքն քնդարձակ այս արձանա- գրության մնացորդից հասկացվում է, որ եկեղեցուն տրված նվե-

ՄԻՆՈՎ Ե՛-ՄԵՆԵՍՍԱ ՆԵՃԻՆ
ՈՒՆԵՐԳԳՈՒՑԱՆ ԱՐՃԵՆ ԱՅՍԻՆ
ԵՅՇԵԼԵՍՈՐԻՑԿԱՆ ԴՆԵՆԵՐԵՆ
ԳՅԵՍՍԱՆԵՆԿԱԼԵՕՐԴՈՒՄԸ

նկ. 41.

²⁶⁶ նՉԲ, Բ, էջ 330.

րի համար, որի շափը կամ քանակը 100 է կզկ, ստացել են աճին տարի շրտ օր ծամ»: Այս բացատրությունը ստացվում է, որ նախ որբեր եկեղեցուն նվիրված արծեք են արտահայտում:

Չառարկելով բնագրի բնզհանուր իմաստի մասին հեղինակի այս կոսհամանը՝ չենք կարող համաձայնել եկեղեցուն արված նվիրի մասին նրա ենթադրության հետ, բառ որի, արվել է 100 շափ կամ հատ ունեցվածք (...նախ): նախ բեկորի վերծանություն մասին, ոչ մի հիմք չկա ձ գիրք տանձնացնելու և թվանիշ գիտելու համար, բանի որ այն ոչնչով և արտերկրում հարևան գրերից, վերևում չունի գծիկ-պատիվ, երկու կողմերից չի անված կետերի մեջ, որ սպասելի էր նրան թվային արծեք վերապահելու զեպրում: Ուրեմն ձ-ն պետք է միացնել հարևան տաների հետ, կատարել համար բառանշարուն, այդ զեպրում կունենանք ոչ թե նախ 6 (100), այլ նախնի տառաշարքը, որն ինքնուրույն բառ է, արարական փոխառություն: նախինքն հին հայերենի գրական հուշարձաններում չի հանդիպում: ԺԳ դարի մի քանի վիճազերմում բառս կիրառված է իբրև եկեղեցական հանդերձանքը բնորոշող հատկանիշ, վանքերին ընծայված նախորտի, վառի կամ շուրջառի որոշիչ: Ահա այդ վկայություններից մի քանիսը. Հաղաթուրի մեծ գավթի ԶԺ (1261) թ. նվիրագրում. «ե՛ս՝ նուստս ծառս Քրիստոսի Սարկուազ վաճառական ապականեցա ի Սուրբ նշանս Հաղաթուսայ ե կազմեցի խաչ մի արծաթի ոսկեզած և Բ նափորտ նասիճ և առլառս վառ, վասն փրկութեան հոգր իմո, եւ էտու ի Սուրբ ուխտս» (ԿՂԸԲ 167): Հոռոմոսի վանքի ԶԼ (1286) թ. մի խաթարված բնագրում. «...իշատակին եղարևն Գրիգորի, որ միջարևուս ի Քրիստոս փոխեցա չի՛մ առլա ընչից ետու խաչվառ ու նասիճ շուրջառ եւ տուն...» (ՍԱԲ 162): նախնի վրկված է նաև միջին հայերենով հորինված տաղերում, հնարույնս Ֆրեկի բերթվածներում, որտեղ այն արտահայտում է կանացի ասեղնագործված ու բանված հանդերձաների իմաստ. «է՛ր ես հազել զու նասիճ, նաս ու նասիճ ի՛մ ճօխարուս, ջուհար շարեմ թագ ի՛մ գրկս»²⁴⁷:

նախնի նորագյուտ բառի ստուգաբանությունը միայն վիճական բնագրերում ավանդված վկայությունների հիմամբ առաջինը տալիս է Հր. Աճառյանը, ըստ այդմ, բառս ծագում է արար. nasij =


գործված, հյուսված արժատից²⁴⁸: Այստեղից, նափորտ նասիճ, շուրջառ նասիճ նշանակում է հյուսկեն, հյուսված, գործված շուրջառ, նափորտ, ինչպես Հաղաթուրի հիշյալ արձանագրության՝ առլառս վառ արտահայտում է առլառից շուրջառ, նափորտ:

Ինչ մնում է երևանի Աստվածածին եկեղեցու խաթարված բրնազրին, ապա այստեղ նախնի բառից առաջ հավանաբար փորագրված է կզկ բուն նվիրը՝ նափորտ, վառ կամ շուրջառ, ուստի հոգևոր կենտրոնին նվիրված այլ արձանների շարքում հարկ է վերականգնել նաև՝ նափորտ նասիճ կամ շուրջառ նասիճ, որին հաջորդում են նվիրատվության բարեխոսությունը և անձեքի ձևակերպումը:

92. ՆԱՅԱՆ (ՍԱՅՍ, ՆԱՐԱ)

Արատեսի հուշարձանախմբի նշանավոր գավթի հյուսիսային որմնամույթի վրա փորագրված համառոտ հիշատակագրության մեջ հասակ կարգացվում է այս տառաշարքը. «ԹՎ. : Զ : (1251) ամ ոգորմի նացան, ամէն» (Գ III 123):

Բնագրի առաջին և միակ վերծանող Ս. Բարխուդարյանը ընդգրծված բառը վերապահություններ անձնանուն է համարում՝ ենթադրելով, որ բարեխոսական ոգորմությունը վերաբերում է ՆԱՅԱՆ անունով մեկին (նկ. 42): Այս ենթադրությունը անհավանական է, քանի որ միջնադարի ձևագրերի հիշատակարաններում և հատկապես վիճական արձանագրություններում բազմիցս ավանդած են՝ ՆԱՔԱ, ՆԱՅԱ, ՆԱՅԱՆ, ՍԱՅԱ, Ի ՍԱՅԱ. նկ. ԳԱՅԱ, ԳԱՅԱՄԷ և այլ ձևեր, որոնք, անշուշտ, ներկայացնում են հին հայերենի նուրա, նոցա, զոցա կանոնավոր դերանունների հնչյունափոխված տարրերակները: Հիշյալ ձևերում արտացոլված հնչյունափոխությունը՝ Ո > Ա, որ առաջանում է զերբանունների վերջնահանգ ա ձայնավորի հորեթաց, իրականորտ անմանությունավոր՝ նուրա > նաբա, սո-



Նկ. 42.

²⁴⁷ Յրիկ, Գիվան, Նյու-Յորք, 1952, էջ 329, 430:

²⁴⁸ Հր. Աճառյան, Հայ. արձառ. բառարան, Ե, 1931, էջ 48:

ցա > սացա և այլն, գրաբարի բոլոր շրջանների հուշարձաններում չի ավանդված և, անշուշտ, կարող էր տեղի ունենալ վկայված ժամանակաշրջանի բարբառային արտասանության ազդեցությամբ:

Գերանունների ուղիղ կամ թեթևած ձևերում $\alpha > \text{ա}$ հնչյունափոխության օրինակներ կան հնագույնս Վարչան Վարդապետի «Պատմության» մեջ. «Սախա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նացա տանն» (էջ 158): Ավելի ուշ այդպիսի ձևեր են վկայված նաև 1464 թ. մի ձեռագրի հիշատակարանում, որ նկատելի է դեռ Այ-տընյանի՝ իրավամբ դրանք համարելով լեհահայերի բարբառի հնագույն նմուշներ: Ահա այդ ձևերը. «Սացայ հարա շինեմ ու զը-նարայ կերակրեմ...», ես կուզեմ դան : Խ : սո՛մ սպ նացայ տամ»²⁴⁹: Նույն իրողությունը հուշարձանների և մուղազահայերի խոսվածք-ներում դիտում է նաև հայագետ, պրոֆ. Մ. Բիտնեբը՝ այդ հարցին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ՝ առ, սորա (սորա), սո-ֆա-սախա, սոցա-սացա և այլն²⁵⁰, Կիլիկյան միջին դրական հայե-րենի գրական հուշարձաններում նա-նարայ, նարամէն, նախ, նա-ցա, նագմէ (նացամէն), առ, սորա, տախա, տացա դերանվանա-կան ուրույն հոլովումը ներկայացնում է Յ. Կարստը՝ դասական հայերենից շեղվող հիշյալ ձևերը նկատելով իբրև $\alpha > \text{ա}$ հնչյունափո-խության արդյունք, որ նույնությամբ պահպանվել է նաև Ղրթիմ և Ն. Նախիջևանի հայերի խոսակցական լեզվում²⁵¹, Հր. Աճառյանը Առախլեի բարբառում նշված հնչյունափոխված դերանուններից դի-տել է միայն՝ դարա (դորա), դարամէ, դացա, դագամէ, նարա, նա-ցա, նացամէ ձևերը²⁵²:

Սակայն բնիկող $\alpha > \text{ա}$ փոփոխության հնագույն և հավաստի վկայություններ գտնում ենք ԺԲ—ԺԳ դարերի վիժական քնարե-րում, որոնք փորագրված են միջնադարյան Հայաստանի բացառա-պես արևելյան ու հյուսիսային զավանների հուշարձանների որմե-րին, բոտ այսմ, արտացոլում են այդ շրջանների խոսվածքների հըն-չյունական օրինակավիությունները: Ստորև ներկայացնում ենք $\alpha >$

ա անձանությունների վկայությունների վիժական բը-նագրերում:

ՆՈՑԱ > ՆԱՑԱ — Չնագույն հիշատակությունը կարգացվում է Սանահեի վանքի նիս (1191) թ. մի նվիրագրում. «Թրնցար դհամբարձումն արս դամէն եկեղեցիք նացա ժամն... և դաուրս հացն ի նացա անուն զսեղանիս» (ԿՂՍ 106): Մղաբթի խաչարձանի հիշատակագրում, 1201 թ. «Ի նացա սրահասմանն տուրք ի Սանա-հինն նացա հոգոյն դերասագանց» (ՄՎ): Ն. Վարազ վանքում, 1198 թ. «Ով խափանէ, նացան մեղացն տէր է» (նվ. 43): Վայոց ձորի



Նվ. 43

Թանատի վանքում, ԺԳ դ. «ՏՃի Թանատի վանից զՆատիևայվարին հողն նացան հայրենից» (Գ 111 82): Կաշինո գավառի Հաղարծնի վանքում, ԺԳ դ. «Նացան մեղացն տր է» (ՄՎ): Պատմական Սողք գավառի Տաշքենցի եկեղեցու ԺԳ դ. մի արտոնագրում. «Ով իցէ չետ առու կամ ի նացանէ ալզան առու : ՏժԸ : հայրապետացն կապած է» (Գ IV 318, սխալմամբ վերծանվել է ի նՈՑԱնե, մինչդեռ զբում դիտողված լուսանկարում և զծագիր քնդորինակության մեջ բոտ մեր բնիկըցման է՝ ի ՆԱՑԱնէ): Գիտելի է, որ նացա դերանունը Հաղարծնի Ն. Վարազի, Թանատի և Արատեի խնդրո տարեկա (ԱՄ ողորմի նՈՑԱն) արձանագրություններում կիրառված է ն որոշիչ հոգով՝ ՆԱՑԱն, հավանաբար Ժ—ԺԳ դարերի վիժագրության մեջ

²⁴⁹ Ա. Այաբյան, Փնեական քերականություն..., Վիեննա, 1866, էջ 192—193.

²⁵⁰ «Հուշարձանն գրական մտղածածն, Վիեննա, 1911, էջ 265:

²⁵¹ J. Karst, Historische Grammatik, Strassburg, 1901, էջ 233—235.

²⁵² Հր. Աճառյան, Առախլեի բարբառը, Ե, 1953, էջ 155:

բով չի իմացվում, թե խաչաճանբ (= խաճ) կանգնեցնելուց բացի, ինչի մասին է հայտնվում ավյալ հասվածում (Նկ. 44 ա):



Նկ. 44 ա

Նախքան անորոշ տերմինների քննությանն անցնելը, ներկայացնում ենք բնագրի այս երկրորդ հատվածի՝ Բարխուդարյանի կատարած բառաբանման մեր ճշգրտումը. «մեփորեալս շինիս խաղակս հանի, փասիլս շինեցի, խաճս կազնեցի... յեզր մեղանիս...» (Նկ. 45, 45 ա), բոտ այսմ, ավյալ կարճատես համադասական նախադասությունը կարելի է հասկանալ այն իմաստով, որ շինի, գյուղի մեփորեալը հանել է այս խաղակը (= խաղակա հանի), շինել է այս փասիլը, կանգնեցրել խաչը, այն էլ գյուղի հրապարակի ծայրին (յեզր մեղանիս):

Այստեղից հարկ է պարզել հավաստիորեն քննարկված մեփորեալ (= մեփորել), խաղակ, փասիլ տերմինների իմաստը, որով և հնարավոր կզատնա ամբողջ բնագրի սպառել մեկնությունը:

Ա. Մեփորեալ = մեփորել տերմինի ստույգ քննարկումը տրված է միայն Ս. Բարխուդարյանի վերծանություններում, նախորդ տեղադրողները, ինչպես տեսանք, բնագրի այդ մասը շին վերծանելը Բացի «Հաղախաչի» երկու վկայությունից, մեփորեալ բառի հոգնակի սեռական հոլովածներ՝ մեփորելաց, կարդացվում է նաև Ակունջի (Վարդենիսի շրջ.) «Գոմեր» պատմական գյուղատեղում կանգ-

նած խաչքարի հետևյալ հիշատակագրում. «ի Բվին : Չեզ : (1297) Ես՝ Տաշուրակս, որդի Բազումշաի, աէր մփորելաց կազնեցի զխաչ ինձ և ամուսին իմոյ Թամթույ, ի փրկութեան հոգոյ մերոյ...» (Գ IV 355), Այստեղ մփորելաց հնարավոր է կարդալ նաև՝ մեփորելաց, բոտ որում, մ-ին հաջորդող դիրք փոքր-ինչ եղծված է և ավելի

ՄԵՒՈՐԵԱԼԱՇԼԻՍՈՒՄԱՄԱԿՍ
ԱՆԻՒԱՍԻՍՆԻՆԵՅԻՍԱՁՍԿԱԿ
ՆԵՏԻԿՈՒԹԻՆ ԻՆ ՉԺՆՈՂԱ
ԵՄԻՆՅԵՉՆԵՐ ԵՄ ԵՄ
ՈՐԲԵՆԿՆԱԿԵ

Նկ. 45

նման է-ին, սակայն երկու դեպքում էլ ավյալ հոգնակի սեռ. հոլովածներից բառի ուղիղ ձևը պետք է հանել՝ մեփորեալ > մեփորել, ճիշտ այնպես, ինչպես փորագրված է Նորատուսի «Հաղախաչի» պատվանդանին:



Նկ. 45 ա

Մեփորեալ = մեփորել բառը ստույգ վերծանող Բարխուղարյանը նրա ստուգաբանությանը չի անդրադարձել, և այդ պատճառով նորատուսի և Ակունքի բնագրերի հիմնական բովանդակությունը մնացել է շրջադասակաված: Ակունքի արձանագրության միփորելից վկայությունը Բարխուղարյանը տեղավաչր է համարում Հին Ղըրխրությունում (Գ IV 519), իսկ նորատուսի մեփորեալ > մեփորելի՝ համարժեքը առաջնորդ = դեմքաբ տերմիններին (Գ IV 522): Քեն մեզ ևս չի հաջողվել պարզել այս տերմինի ծագումը, սակայն երած վկայությունների հիմամբ հնարավոր է որոշ կոահուտներ անել նրա արտահայտած իմաստի մասին: Վկայված կապակցությունների ակնհեր է, որ մեփորեալը Հայաստանի վաղ Զարարյան շրջանի վարչական կամ հարկահավաք պաշտոնյա պետք է արտահայտեր, ամենայն հավանականությամբ գյուղի կամ ավանի առաջնորդ, տանտուս, ղեհմեմար: Նվն «Հաղապաշխ» առաջին վկայությունն մե՛ղ՝ Ես՝ մեփորելս, Խոշախն սնուցածս, ղեռ անորոշ է տերմինի իմաստը և կարող է դեռվել նաև երբև հատուկ անուն, անձնանուն, այսպես նույն բնագրի երկրորդ հատվածից երևում է, որ այն միայն գյուղի կատավարիչ պաշտոնյայի անվանում է, թանի որ ասվում է՝ մեփորեալս շինիս (= գյուղի առաջնորդս, տանտուսերս), ինչպես նորատուսի նույն ժամանակների այլ վավերագրերում ունենք՝ Ես՝ Խոշասան ղվմերարս Խոտավագ, Ես՝ Մխիթար, Խոտավագ ղվմերարս (Գ IV 20):

Որ մեփորեալ-ը չի կարող տեղանուն կամ անձնանուն լինել, հաստատում է նույն բառի մեջ բերված մյուս վկայությունը Ակունքի ավելի ուշ շրջանի հիշատակագրում: Ես՝ Տաշուրակս, տե՛ մեփորելս, որ պետք է հասկանալ՝ մեփորելների տե՛ր, մեփորելների աագ, այսինքն մեփորեալ = մեփորել վարչական իշխանությունների գերադաս մարմինը, թաղարական հիերարխիայի հաջորդ, ավելի բարձր աստիճանը²⁵⁴:

²⁵⁴ Նորատուսի և Ակունքի այս գիծագրերի վերծանությունն ու մեփորեալ > մեփորել տերմինի ստուգաբանությանը վերերև առանձին հոդվածով անդրադարձել է բանասեր Պ. Մուրադյանը («Մեփորեալ լեզուների միփորել վարչական տերմինը», «Երանք», 1977, № 7, էջ 50—61): Հարկ ենք համարում նշել, որ հեղինակն իր ուսումնասիրությունը հրատարակելուց շատ անց ծանոթ է եղել սույն աշխատությանը, որի մասին նա գրավոր կարծիք է հայտնել, որնեն նաև՝ «Հայաստանի» ու Ակունքի բնագրերում փորագրված մեփորել և այլ տերմինների վկայությունների մասին մեր արտահայտած նկատառումներին:

Բ. Խաղակ—վկայված կապակցության մե՛ղ՝ խաղակս հանի, պետք է նշանակեր որևէ բան հանել, փորել, անց կացնել, ըստ այսմ, տառաշարքի մեջ հարկ է վերականգնել և գիրք և բառս ընթերցել խաղակ(ս): Տվյալ վերականգնումը արդարացվում է ներստեղ, որ բնագրի մի ջանի բառերում ևս չեն փորագրված այլևայլ տաներ՝ կազնցի, փկուրիք, մեղախի, երկպագի և այլն: Խանգակ բառը Հ. Աճառյանի ստուգաբանությամբ նշանակում է խաւմ, փոս, հատկապես պարիսպների առաջ փորված փոս, բնդհանրապես փորված, արճեստական ջրանցի, ջրուի, առու: Այստեղից, բնվող բնագրի՝ խաղակս = խանգակս հանի պետք է հասկանալ այն իմաստով, որ նորատուսի մեփորեալը ջրանցք, առու է անցկացրել, հավանաբար Գավառագետից դեպի գյուղի դաշտերը:

Գ. Փասիլ տերմինը ստույգ է բնթերցված և այստեղ նրա հնագույն վկայությունն է: Նույն փասիլ բառը իբրև հարագրված տեղանվան երկրորդ բաղադրիչ հիշատակված է Ալեիք Մեծի «Համատուս հուարումն աստուածաբանական նշմարտութեան» աշխատությունում 1401 թ. հետևյալ շափան աստիճանով:

Յաղազս դառն ժամանակիս,
Որ էր ի ճահկո փազրլես,
Յորժամ ՊՄ էր Հայոց թվիս,
ի յօգոստոս՝ փոխման աստիճան²⁵⁵:

Ճանկո փազրլիս արական հուղվածից տեղանվան ուղիղ ձևը կլինի՝ ճանկո (<<Ջանուկ) փասիլ, այսինքն պատմական Սյունիքի Ջահուկ գավառի կամ նույն անունով այլ բնակավայրի փասիլ:

Փասիլս շինցի նախադասությունը պետք է արտահայտեր ջրբամասակարարման հետ անվրդ որևէ կառուցվածք, շինություն, որ իրականացրել է նորատուսի մեփորեալը: Փասիլ բառը բառի ստուգաբանության համար պետք է նկատի ունենալ նրա բաղադրիչների իմաստները. պրս. փա (բա) նշանակում է ուսի, ստառո, կիսի, հենաբան, արգելի, պատվար և այլն: Իսկ պրս. սել, սիլ (seil) = հորդացում, վարարում, հեղել, ողողում, մի խոսքով՝ ջրերի հոսի²⁵⁶, Այստեղից ամբողջ բաղադրությունը՝ փասիլ, կարող էր

²⁵⁵ Տե՛ս փ գ. հայերեն ձևագրերի հիշատակարաններ, կազմեց և. Խաչիկյան, Ե., 1955, էջ 16, Մանուկյանի, ձևագիր № 69, էջ 45 ր:

²⁵⁶ Персидско-русский словарь под ред. Ю. Рубинчика, М., 1970, т. I, էջ 253, т. II, էջ 80:

Քշանակել մի կառույց, որը կանգնեցնում է ջրերի հոսքը, պատվար է ծառայում նրանց համար, ջրամբար, ջրամբարակ և այլն: Փասիկ—ջրամբարակ բարդությունը, ինչպես հաճախ է պատահում, չի ավանդված փոխատու պարսկերենում, սակայն մեր առաջարկած ստուգաբանությունը լիովին ծածկում է «Հաղախաշի» քննվող բրնձգրի վկայված իրադրությունը, բայտ այսմ, ավյալ շինարարական արձանագրության անորոշ հատվածը պետք է հասկանալ այն իմաստով, որ նորատուսի սառչնորդը, զեղջալագը կամ սրանց զերազաս մարմինը (մեփորեալ շինի) առու, ջրանցք է անցկացրել (=խաղպկա մանի), կառուցել է ջրանցքի ջրամբարը կամ ամբարակը (=փասիկ շինեցի) և այդ առիթվ գյուղի հրատարակում կանգնեցրել սույն խաչարձանը (=խաճա կացնեցի... յեզր մեղանիս): Միաժամանակ արձանագրությունն առաջին մասում նշվում է, որ հիշյալ գործերը կատարվել են ՈՒՆ—1226 թ., այսինքն այն դաժն ժամանակներում, երբ սուլտանն իսրայալում կատարած բազում աբար, և Ջաբալյանների կամբով նորատուսի կառավարումը հանձնվել է վավերագրի հեղինակ և խոչարի սնուցած մեփորեալին (ե՛ս մեփորեյլ՝ խոչարին սնուցածս, նորատու կացուց գիս—7 IV 23):

94. ՆՈՐՔ

ԺՐ—ԺԳ դարերի վիճագրական հուշարձաններում բազմիցս հիշատակվում է այս բառը՝ իբրև նվիրատուների կողմից վանական հաստատություններին ընծայված ունեցիվների անվանում: Սակայն այդ բնագրերի վերծանություններում միշտ չէ, որ նախ գիտակցվել է իբրև ինքնուրույն բայտ կամ հասկացություն, հաճախ բառարժաման ժամանակ տառաչաբբը արտհվել է մասերի, կամ բուրբուժակի անտեսվել, մթազնել: Որոշ հանդիսակներ էլ ստույգ ընդգրչնակելով պահպանված գրերը, չեն գիտել նա իբրև հանդամափ կամ բնակավայրի անուն, ուստի և չեն զբաղվել նրա ստուգաբանությամբ:

Անվանի բանասեր Թ. Ավգյարեզյանը 1927 թ. հրատարակած «Մի զոլունիք հայ վիճական արձանագրությունների մեջ» արժեքավոր հոդվածում վերականգնեց նախ բայտի գիտությունը հայասի աղավաղված կամ անորոշ բուրբ վկայությունները և առաջարկեց՝

նրա սպառիչ մեկնությունը, բայտ որի, նախ—նորատունկ ալգի, մասնաբալ, խաղողի մատղաչ վագեր, որ կարող էր առաջանալ նոր սակիներ, նոր շիվեր, մատղաչիք, մի խոսքով նախ—նախ, նախ—իմաստից²⁵⁷, նախ բայտի այս բացատրությունն այնքան համոզել էր, որ նույնությունը տեղ գտավ Հր. Անատյանի Արմ. բառարանում, նախ արմատի նորագրանությունն առախ, իբրև այդ բայտի իմաստային տարբերակ, կազմված նրա հոգնակիից՝ նախ—: «Կարևոր բայտ է նորք—նորատունկ ալգի, որ հետո դառնել է հատուկ անուն,— եղում է Անատյանը՝ վկայակոչելով Ավգյարեզյանի վերահիշյալ ուսումնասիրությունը: Նույն բացատրությունը գտնում ենք Ստ. Մալխասյանցի բառարանում²⁵⁸:

Ավգյարեզյանի հետազոտությունից հետո հրատարակվեցին վիճական բնագրերում նախ—ի նոր վկայություններ, որոնց վերծանողները կամ՝ այդ բայտը մեծատառով դնելով, տեղանուն են համարում այն, կամ՝ անհամաձայն լինելով Ավգյարեզյանի ստուգաբանությանը՝ անորոշ են թողնում նախ—ի նշանակությունը: Հարկ ենք համարում ստորև ներկայացնել այդ անորոշ վկայություններից մի բանիսը, անհրաժեշտ մեկնաբանություններով, որոնք կարող են նպաստել ավելի ստույգ ըմբռնելու վիճական բնագրերը:

1. Հովհաննիսյանի ԺԳ դարի նվիրագրում նախ փորագրված է հետևյալ կապակցության մեջ. «Ես՝ Ջաբարիս, որի վագիթանկա, ևղարք Ջալալին և սուրանին իմ նորիսհ, դուստր Վասակա, միաբանեցաք Սուրբ ուխտիս և զնեցաք զԱշտարակի նորքն և տվաք ի Սուրբքս» (ԿՂՀ 105): Հետևելով նախորդ հրատարակողներին, վերծանողն այստեղ նախ է մեծատառ է դնում, այսինքն այն դիտում է հատուկ անուն, տեղանուն և զբքի վերջում զնեցված տեղանունների ցանկում Աշտարակի նախ է համարում է Աշտարակի բազմատարեց մեկը, որ նվիրատուները ավյալ արձանագրով դնել և ընծայել են վանքին: Հեղինակի կարծիքով այս բնագրում նախ—ը չի կարող ալգի լինել, բանի որ ասված է զԱշտարակի նախ է, մինչդեռ ալգի նշանակելու դիտումը պետք է լիներ կամ նրա ախորջ՝ հասկացուցչի, կամ ալգին բնութագրող, մասնանշող որոշի անունը,

²⁵⁷ Թ. Ավգյարեզյան, Հայագիտական հետազոտություններ, 1927, էջ 317:

²⁵⁸ Հր. Անատյան, Հայ. արմ. բառարան, Ե, էջ 168, Ստ. Մալխասյանց, Հայ. բացատրական բառարան, Գ, էջ 481:

բայց ոչ Աշտարակ բնակավայրը: Այս առարկությունը այնքան էլ հիմնավոր չէ: Միջնադարի նվիրագրերում սովորաբար հոգևոր կենտրոններին բնծավող այգիները (մատանակ, մատաղիք, նոր) բնութագրվում են որևէ հատկացուցիչով, որ կարող է լինել կամ անձնանուն (որին պատկանել է այգին՝ ավաք զՎարդենաց նորեն, զԳնցաք զՆորայեթին այգին, ավաք զՎազմանենց եւ զԿանանցն է-զին և այլն), կամ տեղանուն (որտեղ գտնվում է այգին՝ ավաք զՅարթա այգին, ավաք զՎայրայ այգին և այլն): Այստեղից պակներն է, որ մեր օրինակում Աշտարակ նորեն կարող էր արտահայտել Աշտարակի այգին, այսինքն նվիրատուների ունեցած մի քանի այգիներինց Աշտարակում գտնվողը: Որ այս այսպես է, հաստատում է նաև Չինչիրուի Ս. Կարապետ վանքի ՉԳԵ (1346) թ. նվիրագրերը, որտեղ ևս նորք բար զվազման է նույնպիսի կապակցությունում, այսինքն իբրև տեղանուն որոշյալ: Ահա այդ բնագրի համապատասխան հատվածը. «Են՝ էլիկումս, որդի Զայգին, թուն մեծի Տարսահինն տվար զմեր Տալա հայրենեաց զԵղջրիկ մեր զերեզմանատանս իւր: Դ: կարպուրն, ստին եւ չրրին հողով ու զինն յվար այգի կա Տարին հողոն, Գոնցին, մեծ արտ Ջարտուն, Ուրունպուր-զին նորեն» (ԳՆՏՄ 448): Վերծանող Գ. Նովոսիլյանը իրավամբ Ուրունպուրին տեղանուն է համարում, իսկ նորեն հասարակ անուն, այլգի, տվյալ նվիրված ունեցվածքը հասկանալով՝ Ուրունպուրում գտնվող այգի:

2. Նորք բարի մի վկայություն էլ կարողացվում է Կեչուսիսի վանքում, իստարակյան Պապարի ԺԳ դարավերջի հետևյալ նվիրագրում. «Են՝ Պապար, որդի Պառաշա, թուն Զաղրակենց էտու զիմ Կաանոցի նորքն ու: Մ: սպիտակ Ս. Գրիգորիս և կաթուղիկէիս յուսո յիշատակուն բնդ ընկեր ազգականի իմոյ Գրիգորոյ» (ԳՆԽՊ 308): Այս բնագիրը մեկնաբանողները տարբեր կերպ են հասկացել Պապարի բնծայած արժեքները: Գ. Նովոսիլյանը Կաանոց և նորք դրանում է մեծատառով, այսինքն երկուսն էլ տեղանուն է համարում, առանց հստակ որոշելու նրանց նշանակությունը: Նրա վերծանությունից ստացվում է, որ վանքին են արվել Կաանոցի նորք հանդամար կամ դուրը և 200 սպիտակ դրամ: Ա. Աղոնցը Գ. Նովոսիլյանի «Տեսադրակյան» աշխատության մասին կարծիք-զատեստականում առարկում է այս վերծանությունն զիմ և առաջարկում զիմ Կաանոցի նորեն կապակցությունը կարգա՛վ զԿաանոց ի նորեն,

հավանաբար նվիրված կալվածքը հասկանալով՝ կավանոց, կավի նախավայր, որ գտնվում է նորք կողմած տեղահամասում (ԳՆԽՊ 465): Պրոֆ. Բ. Առաքելյանը հիմնովին շակելով հիշյալ ընթերցումները՝ քննվող հատվածը հասկանում է այն իմաստով, որ Պառշի որդի Պապարը Կեչուսյանի նվիրել է միայն 200 սպիտակ իր կաանոցի կիսմասինց, ըստ որում, կաանոց դիտվում է հաստիքներ ձեռնարկություն, կավի արդյունահանման կամ մշակման հանրավայր, իսկ նորք բուն էլ դուրս է մնում մեկնաբանությունից²⁵⁹:

Հիշյալ բացատրությունների անհամադրելի համարելով, առաջարկում ենք Պապարի նվիրագրի տվյալ կապակցությունը վերծանել՝ էտու զիմ Կաանոցի նորեն ու: Մ: սպիտակ Ս. Գրիգորիս..., և նվիրված արժեքները հասկանալ՝ Կաանոց զաշտատասում, հանդավայրում գտնվող նորքը, նորատունի այգին և 200 սպիտակ կանխիկ դրամ: Ուրեմն Կեչուսիսի բնութային անարկա արժանագրություն մեջ ևս նորք չպետք է տեղանուն համարել, այլ միայն հասարակ անուն, որ նշանակում է նոր տեղած այգի, մատանակ, մատաղիք:

3. Նորք բարի և նրա հայցական հոլովածներ՝ նորս = նոր այգի, այգիներ իմաստով երկար զործածվելով, կարող էր սովորականի նման զանալ հատուկ անուն, տեղանուն, նշանակելով այն վայրը, որտեղ երբեմն եղել են նորատունի այգիներ: Այդ ճանապարհով են առաջացել նորք, նորս դուրանունները երկրասկզբում և Արևմտյան Շիրակում, նորք թաղամասի անունը երևանում (ԳՆԽՊ 27, 29, 30): Վիճական բնագրերում ևս բոլոր զիսկերում չէ, որ նորք-նորս արտահայտում են այգի, այգիներ: Արևմտյան Շիրակի Բազանյա Նուշարձանի ԶԺԻԱ (1262) թ. նվիրագրում նորս հիշատակված է տեղանուն, դուրզի կամ հանդամասի իմաստով: Ահա այդ բնագրի տրվյալ հատվածը. «Են՝ Թարկս, զուտար Շարապչանի, էտու զիմ զանձազան հայրենիքն զնորքն ի մեր սուրբ ուխտս ի Բզնայրս... Զաստատ է ամենայն անդատանարեն, հողոյն և ջրովն» (KBA 178): Իր վերահիշյալ հոդվածում Ավդալբեգյանը նախորդ վերծանողների ընթերցումները շտկելով, Թարկի նվերը վերականգնում է ինչպես մյուս զիսկերում՝ զնորսն = նորատունի այգիներ: Մեզ թվում է, այս զիսկերում նորսն չպետք է համարել այգիներ, այլ տեղանուն,

²⁵⁹ Բ. Առաքելյան, Քաղաքներ... Բ. էջ 59:

հանդամաս կամ նույնիսկ գյուղանուն, բանի որ այդ կալվածքի մասին բնագրի վերջում, անեծքի ձևակերպումից հետո հաստիկ նշված է՝ հաստատ է ամենայն անդատաւեալքն, եղովն եւ չբովն... որ հարելի էր սսել միայն գյուղի կամ նաեղավայրի մասին²⁰⁰։

95. ՇԱՆԱԿԱՒՈՐ Ի ԲԱԺԷ, ԹԵ՛ ՇԱՆԱԿԱՒՈՐԻ ԲԱԺԷ


Այս հարկային տերմինը վկայված է Արուճի տաճարի հարավային պատին ՆԼԶ (987) թ. փորագրված Մմբատ շահնշահի արտոնագրում, որտեղ հաղորդվում է Արուճ ալանի ու մերձակայքի բրնակիչներին այդ տարբից ազատելու մասին։ Անաղարտ պահպանված այս կարևոր բնագիրը բանիցս զգալի տարբնիթրցումներով է հրատարակվել, ուստի հարկ ենք համարում սույն բառարանության համար ներկայացնել լուսանկարով ստուգվող մեր նույնական ընդօրինակությունը. «Ճանուն այ, ինչ թուական : ՆԼԶ : Ես՝ Մմ(բ)ատ շահանշահ, որդի Աշոտո շահանշահի ազատեցի վասն իմ հարն հաւոյն եւ իմ արեւատութեան եւ մեղաց թողութեան զշալակաւոր ի բաժէ շնորհին աստուծոյ» (նկ. 46)։



Նկ. 46

Միջնադարյան Հայաստանի հարկային-պարհակային համակարգն ուսումնասիրողները, հիմք ընդունելով Արուճի տաճարի այս արտոնագրի ազավազված ընթերցումները՝ ազատեցի զշալակաւորի բաժէ կամ զշալակաւոր բաժէ, Մմբատ թագավորի վերացրած տար-

բը հասկացել են շալակավորներից անձնոց առանձին, ինճուռույն նասույր՝ շալակաւորի բաժ²⁰¹։ Արձանագրության վերը մեջբերված ճշգրիտ բառանշատումից երևում է, որ Արուճ գյուղաքաղաքը կամ ալանը շալակով վաճառքի բերված աղարանների տերերը՝ շալակավորներն են ազատվում բաժից, անցահարկից, ըստ այսմ, շալակավորի առանձին հարկ գոյություն չունի։ Որ Մմբատ շահնշահի սույն հրամանագրում շալակավորի առանձին բաժ չպետ է դիտել, լավագույնն ապացույց է գրեթե նույն ժամանակների (ԺԱ գ. կեսերը) մի այլ արտոնագիր՝ փորագրված Անիի մայր տաճարի պատին, որտեղ քաղաքի տանտերներն ու բյուզանդական պաշտոնյաները ազատում կամ զեղչում են ոչ միայն շալակավորի, այլև մյուս վա-



Նկ. 46 ա

ճառոց-գնդներից անձնոց բաժ-անցահարկը։ Ահա Անիի արձանագրության այդ հատվածը. «Եւ զինեւոր անեցի եթէ սայրով, եթէ որաստով բամն ազատ է, եւ անեցի, որ իւրենն մորթելիք զնէ, բամն ազատ է, եւ շալակաւոր անեցի ամեն ցաղ բաժին կէսն ազատ է» (Ի I 37)։ Ակնհեր է, որ ինչպես Արուճի, այնպես էլ Անիի Մայր տաճարի արտոնագրերում բաժը իբրև անցահարկ, աւետրական գործարքներից զիվանի օգտին անձնոց տուրք, հասույթ, վերաբերում է մոճառքի հանձնող և զնվող արժեքների բոլոր տերերին (զինեւոր, մորթելիք զնոց, զրատաւոր, շալակաւոր և այլն) և շալակաւորի առանձին հարկ-հասույթ վերականգնելը Արուճի բնագրում ոչ մի շալակով չի հիմնավորվում։

96. ՇԱՆ ՈՒ ԶԵՆ

Պատմական Հայաստանի հյուսիսային գավառների, հատկապես Լոռու մի շարք հուշարձանների վիճակն արձանագրություն-

²⁰¹ С. Егизаров. Исследование по истории арм. права. Киев, 1919, էջ 39:

²⁰⁰ Ս. Ավագյան, Վիճակն արձ. հելոստարանություն, էջ 275, ԳՅԸ, 1968, Մ 4, էջ 216:

ներում բանիցս կարգացվում է այս կապակցությունը՝ հոգևոր կենտրոնների նվիրաբերված հոգաժամատերի կամ ճարտ-շինականների հետ՝ իբրև նվիրատվությունը բնութագրող հատկանիշ:

Նախկինում այդ հիշատակությունները վերծանվել ու հրատարակվել են զգալի անձնություններով, որ զովարացրել է նրանց մեկնությունը և անդիք ավել տարբեր բմբռնումների, ուստի պատեհ ենք համարում մեջ բերել շահ՝ ու զեն(ով) վկայությունները՝ ավելի հավաստի բնորոշիակություններով: Սանահնի վանքում, ՈԿԳ (1214) Թ. «ես՝ Վասակ ետու... Գորոնոնք շինական յազատ ի զերևոյսմանց հառչ ամէն շահ՝ ու զենով...»: Նույն վանքում, ՈԿԳ (1215) Թ. «...և որդի նորա Սմբատ և ամուսինն Աղուտ ետուն ի Մզարին զԱրլասազանց հայրենիքն ամենայն շահ՝ ու զենով, Աստածակինս եւ: և: արաբար հող...» (ԿՂՍ 122, 174): Այստեղ հիշատակված նվիրատու Աղուտը զրախից 14 տարի ստաց (ՈՄ 1201) Թ. Լոսու Մզարթ գյուղում իր կանգնեցրած խաչարձանի հիշատակագրության մեջ արդեն կատարել էր համարյա նույն նվիրաբերությունը՝ իր ամուսին Սարգսի և հոր՝ Նաչմաղինի բարեխոսության համար: «ես՝ Աղուտս, զուսար Նաչմաղինին, ամուսին Սարգսի եւ մայր Մամնային ի նացա պակասմանն տուար ի Սանահնին նացա հողոյն զԱրլասազանց ամեն շահ՝ ու զենով եւ: Ին: արաբար հող...» (ՄՀ)²⁶², Ինչպես ակնհայտ է, երկու նվիրաբերի տարբերությունը սուկ նվիրված հողի քանակությունն է, որ մի զեպում է: և: (40) օրավար է, իսկ վերջին բնագրում՝ Ին: (25): Նույն Սանահնի վանքի 1210-ական թվականների մի բնծայագրում՝ «ես Վասակ և ամուսինս իմ ետմուն տուար յԱստուածածինս... զՄուսէ՛ն Մարգարէին որդին իւր շահ՝ ու զենով...»: Սանահնի վանքում, ՈՂ (1221) Թ. «ես՝ Հասան և Վախախ ամուսինն իմ տվար ի Սանահնինս ի Մարտոյն զԵտարեանք ամեն շահով, մին արաբար հող...»: Սանահնի վանքում, ՈԿԳ (1217) Թ. «ես՝ Գարգիբ, որդի Աշոտոյն ետու իմ որդոյնս զիմ բուն հայրենիքս զԱրտն՝ իւր ամէն շահ՝ ու զենով...» (ԿՂԱ 125, 128, 133): Մի վերջին վկայություն էլ, փոքր-ինչ այլ կազմութեամբ հանդիպում է Օձունի տաճարի հարավային մույթին փորագրված՝ ձեռնաւոր Սմբատի արձանագրության մեջ. «ես՝ Սմբատ,

ձառս մեծին Իվանէի եւ Մխարթրեմի, որդի Էտուինց Պաղատ, որ արծառի էլս Ուննա ձեռնորութեան, պարտնացն արեվաշատութեան համար զձեռնորահակ... անշահ ու զեն ի վեր կայա...» (ՄՀ):

Արդ, ինչպես հասկանալ այս բնագրերում հստակ կարգացվող շահն ու զեն(ով), (ա՛ն) շահն ու զեն բարդությունը: Բրտսեն Սանահնի և Հաղբատի արձանագրությունների՝ Հովհաննէս Արիստեմոսի կազմած ժողովածուում՝ Սանահնի հիշյալ նվիրագրերի շահն ու զենով կապակցությունը բոլոր երեք դեպքերում էլ փարզմանում է ՎՍ ВСЕМИ УГОДЬМИ И ИНСТРУМЕНТАМИ²⁶³, որ չի հաստատվում բառաբանորեն և ընդհանուր բիշ բան ունի բնագրի հետ: Հեղինակի վրիպումը հավանաբար գալիս է զեն(ով) ձեռն ոչ ստույգ մեկնությունից, բայ որի բառս զիտվում է իբրև զԷն = զԷ՛ն, զրան արձատի գործիական հոլովածն, Թեև այս դեպքում զգործիական հոլովում սպասելի էր օրինակա՛ր՝ զԷն > զԷնու և ոչ զենով:

Իհնակի է, որ շահն ու զեն(ով) բազմաբանական հարադրությունը զրվում է կամ նվիրաբերված հոգաժամատերի, հայրենիքի վրա, ցույց տալու համար այդ ունեցվածքի օգուտներն և ծախսումների վիճակը նվիրելու միջոցին, կամ նրանով բնութագրվում է հոգևոր կանտրոնի բնծայվող աշխատավոր շինականը՝ նպատակ ունենալով ենթակայանցին նրա պարտքն ու պահանջը, օգուտն ու վնասը, և վերջապես, Օձունի բնագրում ձեռնավորահարկը՝ հարկահան պաշտոնչայի օգտին դանձձող հասույթը, վերացվում է (ա՛ն) շահն ու զեն, այսինքն, ձեռնաւոր Սմբատը զրանով ցանկանում է շեղուել, որ հարկը վերացնում է առանց որևէ վերապահության կամ պարտավորության, սուկ բարեգործական մղումով:

Շահն ու զեն հարաբարական բարդության իմաստը վկայված իրարորության մեջ, ճիշտ է, առանց ստուգաբանության, բայց հավաստի է մեկնում արո՞ք. Կ. Պաշադարչյանը, զՄուսէ՛ն՝ Մարգարէին որդին իւր շահն ու զենով օրինակում տվյալ կապակցությունը բացատրելով՝ Մուսէ՛ն իւր օգուտովն ու վնասովը, որ միանգամայն նույնական է բնագրին:

Շահն ու զեն բարդության զեն բազադրիչի ստուգաբանության համար պետք է նկատի ունենալ ոչ թե զԷն = զԷ՛ն, զրան արձատր, այլ զԷն = զոն բառը, որ մատենագրության մեջ առանձին կիրառու-

²⁶² Ա. Մանինյան, Մամիկոնյան-Համազասպան տաճար հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում (Վերաբեր., 1968, № 3, էջ 83):

թյամբ վկայված չէ և դորձածվում է միայն զԵՆ(ուլ) = մորքել, զո-
հել, զԵՆ(ուսն), զԵՆ(լի) և մի բանի այլ կազմություններում: ԶԵՆ =
զոհ արմատի ծագումը, առանց որևէ վկայության, Հ. Անադյանը
դնում է պահ. շիպոն = զնգ. շիպոն ձևից, որ հայերենում առա-
ջորձվում է զեան, իսկ բարբոթյան մեջ՝ զեն (զեան > զեն) և նշա-
նակում է վնաս²⁶⁴: Այսպիսով, միայն վիժական բնագրերում ա-
վանդվել է զԵՆ = վնաս, զոհ արմատը կամ նրա գործիական հուղվա-
նակ՝ շան ու զեհով, անշան ու զեն բարբոթյան մեջ:

Ահա այս իմաստով էլ զԵՆ բառը հանդիս է գալիս շան ու զԵՆ
(ոս), (ան) շան ու զԵՆ հարադրական բարբոթյան մեջ՝ նշանակե-
լով որևէ ունեցվածք՝ իր օգտտով և վնասով կամ առանց օգուտի և
վնասի:

97. ԵՆՆԱԿՆՍՏՈՒՆ, ԼՄՆՄՍՈՒՆ, ՈՂՉԱՏՈՒՆ

Միջին դարերի գրական աղբյուրներում այս բարբոթյուննե-
րը (շինական-ա-տուն, լմն-ա-ծուխ, ողջ-ա-տուն) չեն հանդիպում:
Նայա շինակնատուն կազմության մասին. ԺԳ դարի վիժագրական
նուշարձաններում միայն երկու անգամ հիշատակվում է տարբեր
բանակի շինակնատուն՝ իրրև վանական հաստատությունների բն-
ծայված սեփականություն: Առաջին արձանագրությունը փորագրե-
ված է Կեչառիսի հուշարձանախմբի Կաթողիկեի արևմտյան մուտ-
քի ճակատակալի և կամարների վրա, ԺԳ դարի առաջին տասնամ-
յակներում, Խաղրակյան վասակի շինարարական վիժագրի վեր-
ջում՝ ԵՆՆ՝ վասակ, որդի Խաղրակա շինեցի զսուրը կաթողիկե
յազնականություն և յերկարություն կենաց իմ պատրոնին Բանկ
աթարեկի և արեան հարազատի իբրդ Շահանշահի... Գրիտ բնծա
: Ա : լա : շինականատուն ի նորաշենքն ևրեա և : Ա : ի Կարենիսն
(ԳՀԿՊ III 9):

Բնագրի վերջին երկու տողերը Ծ. Լալայանը կարդացել է. Գրիտ
բնծա լա շինական, իսկ Հ. Շեղազարյանը՝ Գրիտ բնծա կալալ շի-

նակնատուն, որ երկու դեպքում էլ հետո է իրականաց²⁶⁵: Վերձա-
նայան սովորությունները միայն այս տարբերությունների մեջ
չեն: Առավել տարակուսելի է այն, որ ամբողջ կառուցողական ար-
ձանագրությունը, ինչպես և սպասելի էր, շարադրված է Կաթողի-
կե եկեղեցու շինարար Խաղրակյան վասակի անունից, առաջին
գեներով (ես՝ Վասակ, որդի Խաղրակա շինեցի...) և միայն վերջա-
բանը՝ 11—12-րդ տողերը կամ նվիրատվական մասը՝ երրորդ գե-
ներով, այն էլ երես (<ես = ավելց) միջին հայերենի բայ-ստորոգ-
յալով : Ա : լա շինակնատուն երես: Մյուս կողմից, անսովոր է
ևսև նվիրագրի նախադասության ստորոգյալի շարադրությունը.
Երես ստորոգյալը գրված է երկու ուղիղ խնդիրների միջև : Ա : լա
շինակնատուն ի նորաշենքն երես, : Ա : ի Կարենիսն: Ուսումնասիր-
վող ժամանակաշրջանի արձանագրություններում օրինաչափ կլինեի
նախադաս ստորոգյալը և որա ուղիղ խնդիրների թվաթիվում Խուս-
դաս, ավյալ դեպքում սպասելի էր. երես : Ա : լա շինակնատուն ի
նորաշենքն ե : Ա : ի Կարենիսն: Կասկած է հարուցում և այն պա-
րզան, որ բնագրի հիմնական շինարարական բովանդակությունը,
համապատասխան բարխոսության բանաձևով, սովորականի նը-
ման ավարտվում է 10-րդ տողով՝ ԵՐ Երկրագլխ յիբեսչի ի Քրիս-
տոս աղալան, ուստի վերջին 11—12-րդ տողերի նվիրատվական նա-
խադասությունը սերտորեն չի կապվում բնագրին և հավելվածի
սպավորություն է թողնում:

Գ. Հոփսեփյանը դիտականորեն ստույգ հրատարակելով վասա-
կի արձանագրությունը՝ մեր հիշյալ կասկածները չի հայտնում և
վերջաբանը՝ շինակնատուն բարբոթյամբ, բնագրի անբաժանելի
մասն է համարում: Այնինչ, միանգամայն պակեթն է, որ վերջին տո-
ղերը սերտորեն չեն անդձվում վասակի կառուցողական արձանա-
գրության հիմնական բովանդակության հետ և ամենայն հավա-
նականությամբ ավելացվել են բնագիրը կազմելուց և փորագրուց
ինչ-որ ժամանակ հետո: Հնարավոր է ենթադրել, որ կառուցողը
Նորաշենքի և Կարենիսի շինակնատուները Կաթողիկեին է նվիրել նը-
րա շինարարությունն ավարտելուց որոշ ժամանակ անց և որոշել է
այդ մասին արձանագրել ոչ թե առանձին, այլ ավելացնելով արդեն

²⁶⁴ Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, էջ 933, Վ. Վարդան-
յան, Բառաբանական նոր գիտաբարբոթյուններ, ԷԱ, 1914, Բ, էջ 124:

²⁶⁵ Տե՛ս «Աղբյուրական հանդես», գիրք 23, էջ 130, Է. Կիսաբաբյան, 46 տարեի
գծերը և նրա արձանագրությունները, «Էջմիածին», 1955, էջ 45:

փորագրված շինարարական արձանագրության վերջում՝ երկու բը-
նագրերի մեջ կապ հաստատելով՝ գրիս բնձա բառերով:

Շինակնատուն քառի մյուս վկայությունը պահպանվել է Ար-
ցախի Գաղի վանք հուշարձանի մի նվիրագրության մեջ. «և առ իմ
հայրենիքն, որ իմ եղբարքն ետուն ինձ եւ ես կամաւք ստի ի Սուրբ
կաթուղիկէս : Ա : շարքահաճող : Ի : շինակնատուն : Ա : զազաջ, ար-
ծաթի տսփ եւ տառաշորջառ պատուական յառաջնորդութի տէր
Գրիգորիսի...»²⁶⁶:

Գաղի վանքի այս կարեւոր բնագիրը մինչև վերջերս անձանոթ
էր բանասիրությանը, իսկ Կեչառիսի արձանագրության շինակնա-
տուն բարդությունը հայտնի էր շինակնա ընթերցումով ուսուի
բնվող բարը եւ նրա մեկնությունը շինք գտնում հայերենի բառա-
բաններում կամ գիտական գրականության մեջ: Գ. Հովսեփյանը՝
վերձանության մեջ շղկելով Է. կալանյանի շինակնա ընթերցումը՝
անբացատրելի է թողնում իր իսկ վերակազմած շինակնատուն բա-
ռը: Ն. Աղոնցը Գ. Հովսեփյանի «հազրակայնք...» եռահատոր աշ-
խատության մասին գրած կարծիք-գրախոսականում շինակնատուն
բարդությունը ստույգ վերլուծելով՝ շինակնա-ա-տուն, իրական ի-
մաստը մուր է համարում (ԳՀՈՊ ԻԲ):

Կարելի էր ենթադրել, թե շինակնատուն-ը շինականի, գյու-
ղացու հետ աննշվող որեէ շինություն, սուն կամ հաստատություն
է, բայց այս դեպքում անբացատրելի կմնա նրա բանակի մասին
ցուցումը, որ Գաղի վանքում 20 է (Ի), ուրեմն և անհարկ այդ են-
թադրությունը:

Արդ, ի՞նչ է նշանակում շինակնատուն բարդությունը: Հայտնի
իրողություն է, որ Ժ—ԺԳ դարերի վիճաբանական հուշարձաններում
պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ հոգեւոր կենտրոն-
ների գյուղերի, հողամասերի և այգիների հետ նաև նրանց վրա
սպորող կամ առանձին մարդկանց՝ շինականների նվիրագրության
մասին: Արձանագրություններում մարդկանց՝ իրրև սեփականու-
թյան նվիրատվությունը սովորաբար ձևակերպում է՝ կամ հատուկ
նշելով նվիրվողի անձնատունը (Սանահուն, ԺԳ Գ. սկզբին-
ստուար... զՄուսէս՝ Մարգարէին որդին», Բագնայրում, ԶԺԱ (1262)

թ. «տվի : Բ : շինական՝ զՄեհրեան ու զհաշատուր՝ Գույուսին փե-
սայն», կամ՝ Զինչիրլու Սպիտակավոր վանքի նվիրագրում...
«...զՄարտիրոս եւ զվարդիոս ընծա եկեղեցոյս» և այլն (ԿՂՄ 123,
ՍԱԲ 188, ՎՏ 104), կամ ընդհանուր ձևով ցույց տալով նվիրվող
նորա շինականների բանակը, առանց կոնկրետ անունները նշելու
(Նովնորում, ՈԿ (1211) Թ. «եւ ետու... շինական մի», Հաղբատում,
ՈՆԹ (1200) Թ. «էտու յԱյգճատիս գճորա շինական», նույն վան-
քում, ՈՂԲ (1243) Թ. «հաստատեցի Գ շինական...» և այլն (ԿՂՀԲ
176, 297, ԳՀՏՄ 18, ՂԱԵ 127, ՎՏ 53): Բացի այս դեպքերից, վիճա-
բերում որոշակի ցուցումներ կան վանքների ոչ թե առանձին շի-
նականների, այլ երբեմն նրանց՝ մամրոջ ընտանիքներով կամ գեր-
դաստանով նվիրաբերելու մասին: Այս իրողությունը նվիրագրու-
թյան մեջ արտահայտվում է կամ տվյալ գերդաստանի հավաքա-
կան ազգանվամբ՝ Գորտոնցնէ, Աբլասաղանէ, Շատարևանէ (Սա-
նահուն, ՈԿԳ (1214) Թ. «ետու... զԳորտոնց շինական», Սղար-
թում, ՈՄ (1201) Թ. «ստուար ի Սանահին... զԱբլասաղանց ամեն
շահ ու զենվը, Սանահուն, ՈՀ (1221) Թ. «տվար ի Սանահինս ի
Սաղբոյն զՇատարևանք ամեն շահով...» և այլն (ԿՂՄ 122, 133),
կամ հատուկ նշելով նվիրված տների կամ ընտանիքների բանակը:
Այսպես, Գաղի վանքի ՈՀԳ (1224) Թվականի նվիրագրում Հասանի
որդի Գրեգոր վանական կենտրոնին նվիրում է, «ստի ի Գաղի գե-
րեզման : Գ : տուն շինական»²⁶⁷, Հովհաննավանքի նվիրագրերից
մեկում շինականների օտարումը ձևակերպված է բնորդի մարդկալ
ընդհանուր կապակցությամբ. «Տվար ի Սուրբ Կարապետս եւ եւ եղ-
բայր իմ Դաւիթ զմեր զանձագին զեղն զվարճամագեղ եւ զԴամա-
ղանցն իրենց ամէն հողով ու քրով ու բնորդի մարդկալ (ԿՂՀ 90—
91):

Մեզ թվում է, Կեչառիսի և Գաղի վանքերի արձանագրություն-
ներում հիշատակված շինակնատուն բարդությունը հենց ցույց է
տալիս, որ նվիրատուները վանքերին օտարել են ոչ թե առանձին
շինականների կամ ճորտերի, այլ նրանց ամբողջ ընտանիքը, գեր-
դաստանը, երբը: Կեչառիսի բնագրում հաղբակյան վասակը վան-
քին երկու շինակնատուն է տվել, մեկը նորաշէնք գյուղից, իսկ
մյուսը՝ Կարելիսից, բոս որում նորաշէնքի գերդաստանը (գուցե

²⁶⁶ Մ. Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղբոսի և Կաղի եկեղեցիները և վանական շինությունները, Նորասողմ, 1938, էջ 95:

²⁶⁷ Մ. Տեր-Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 95:

նակ կարենիսիեր, պարզ շէ) բնութագրում է լաւ որոշելով, որ, մեր կարծիքով, ակնարկ է այլալ գերդաստանի բազմանդամության և բարձր աշխատունակության մասին: Դազի վանքի բնագրում նվիրատուն վանքին բան տուն, երգ է նվիրել, բատ էութան մի ամբողջ գյուղ՝ իր հողատարածություններով (: Ա: շարեցաճող), ջրազացով (: Ա: ջրազաց) և այլ արժեքներով:

Ժ—ԺԳ դարերի այլ արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում է սենակ > սենակ բառը՝ առև, բնակարան իմաստով, որով նվիրատուները բաղաբներում կամ ավաններում գտնվող իրենց սենյակները բնծայում են հոգևոր կենտրոններին՝ իբրև արհեստանոց, կրթակ կամ կացարան օգտագործելու համար: Այսպես, Ամաղուի նորավանքի գավթի նվիրագրերից մեկում (ՉԹԲ—1273 թ.) ան Սարկաազ երէջ այլ ունեցվածքի հետ վանքին է տալիս նաև Եղեզնաձորում իր զնած 4 սենյակը (Դ 111 220):

Սակայն Աբղղաբիրի արձանագրության մեջ սենյակը այս իմաստը չունի. բնագրի հետագա շարադրանքից պարզվում է, որ այդ սենյակները միջնադարյան վանական հուշարձանախմբերում կառուցվող փոքր շափերի եկեղեցիները կամ մատուռներն են, քանի որ Աբղղաբիրը վանքի սպասավորների վրա լուծ, պայման է դրնում՝ իր հարազատների հիշատակի պատարագները հենց այդտեղ, նորակառույց շինքերում կատարել, բայտ որում ձեռողների ժամը պետք է կատարվեր Ս. Ստեփաննոս եկեղեցի-մատուռում, իսկ եղբոր և քրոջ պատարագը՝ Ս. Քրիստափորում (սենակ : Բ:):

Այստեղից, սենակ (<սենակ) ավելի իրադրության մեջ կիրառված է մատուռ, փոքրիկ եկեղեցի նշանակություններ, որ կարող էր առաջանալ սենյակ բառի խոց և հարակից շինություն կամ տնակացություն իմաստներից, բարձրմաստի նեղացման օրինակաբանություններ:

109. ՍԱԼՈՒՔ

Այս նորագույն բառը միայն մեկ անգամ վկայված է հայոց խոսրովանուշ թագուհու նժ (959) թվականի մի արձանագրության մեջ, որով վերացվում է բնակությունից գանձվող հարկերից մեկը՝ զմանկանց շարիյատա: Խոսրովանուշ թագուհու այս արտոնագիրը գիտագրված է մի երեսպատման սրբատաշ քարի վրա, որը հայտնաբերվել է 1912 թ. հնագիտական արշավախմբի քանդակով Միլի ձորում, Աղատ գետի հոսանքներից ոչ հեռու, Քրոփրիկույան գյուղատեղի բաղիլիկ եկեղեցու մոտ:

Արձանագրությունը, վանատան հուշարձանախմբի մնացած

վիճազորի հետ, ժամանակին հավաքել, ընդօրինակել և տպագրության էր պատրաստել հայ վիճագրագիտության երախտավոր Աշխ. Քալանթարը, սակայն ղեկավարի բերումով այդ հրատարակությունը չիրականացավ, և վանատանի նորահայտ, հայագիտության համար շատ կարևոր նշանակություն ունեցող վերծանությունները մնացին հնագիտի արխիվում, որը պահպանվում է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

Սակայն այս դիտողության նպատակը Խոսրովանուջ թագուհու նորագյուտ արտոնագրի գիտական հրատարակությունը կամ առավել ևս նրա մանրամասն վերլուծությունը չէ, որ բնագիրը հայտնաբերողի և առաջին վերծանողի անկապուելի իրավունքն է, այլ նրանում հիշատակված ապուլ բառ-տերմինի պարզարևումը, որ չի հանդիպում Քալանթարի ծանոթագրություններում և անծանոթ է հայագիտությանը: Ընդ սմին, մեր բառարանության համար հիմք է ծառայել բնագրի այն ընդօրինակությունն ու վերծանությունը, որ առաջին է Քալանթարը, թեև մեզ հետաքրքրող տառաչարքերի ընթերցումը, այսուհանդերձ, ստուգել ենք արձանագրության լուսանկարի հետ:

Ապուլ բառը կարգացվում է արձանագրության անձձքի ձևակերպման մեջ, սակայն նկատի ունենալով բնագրի անծանոթ լինելը հայագիտությանը, այսանզ ներկայացնում ենք ամբողջությամբ, առնելով Քալանթարի վերծանությունից. «նձ և Ը Թուրն, յանուն աստուծոյ, ես՝ Խոսրովանուջ թագուհի՜ ազատէջի զմանկանց շարիխասս վանս Աշոտոյ արեւշատութեան և մեր որդիացս՝ Գագ (կ՝) ա և Սմբատա և Կէտային և իմ մեղաց թողութեան և իմ ծնողացն: Արդ, որ հակառակ կա այս գրոս՝ կամ Բագրատունի, կամ ազատ, կամ սայրո, նորվեալ էղիցի յամենակալէն աստուծոյ և ի սուրբ իրր՝ որդութենէլ: : ՅժԸ: հարապետացն կայսեալ էղիցի հողով և մարմնով և Բագրատունի ազգէս ձեղաքն տէր էղիցի տաաքի աստուծոյ: Իսկ կատարէլքն հրամանաց իմոց արհնէալ էլ՝ իցին Դեսն զորցի Մաթէոս միայնկաեացո Տարանեցիս» (նկ. 56): Նախ արձանագրության ժամանակի մասին. Քալանթարի ընդօրինակության մեջ և լուսանկարի վրա տողակազրին հստակ կարդացվում է՝ նձնիԸ ԹՈՒ, որ պետք է վերծանել՝ նձԼ Թուականին, այսինքն 1029 թ. (478+551): Սակայն այդ թվականին արգիս Ղկային ոչ Խոսրովանուջ թագուհին (մեռ. 980 թ.), ոչ էլ արտոնագրի մեջ հիշատակ-

ված նրա հարազատները՝ ամուսին Աշոտ Գ Ողորմած թագավորը (Իշխել է 954—977 թթ.), օրդինեթ Գագիթը (959—1020), Սմբատը (979—989) և զուտար Կէտան: Պատմությունից հայտնի է, որ Խոսրովանուջ թագուհին կառուցել է Լաղրատի և Սանահնի վանքեր-

նչէԲԸՐՈՒ ԵԱՆՈՒՄԱՅ ԵՍԽՈՍՐՈՒԿԱՆՈՅՅ ԸԱԿՈՒՀ
ԻԱԶԱԲԵՑԻՋԵԼՄԱՆԿԱՆՅՅԼԻՅԱՄՎԱՍՄԱՆ ԿԱՆՈՒՅՅ ԿՐԵՆ
ՎՈՒՌԵԱՆԵԼԵՐՈՒԿԵԱՅ ՍԶԱԵԼԵՍԿԱՅ = ԵԿԵՐԱՅԻ
ՆԻԵԼԵԴԱՅԱՌՈՒԵԵԻՄ ԶՆՈՂԱՅՍ ԸԴՈՒՄԿԱՎԱԿԱՅ
ՍԳՐՈՍԱԲԵՐԵԼՄԱՆԿԱՆԿԱՅԿԱՍԱՆՔՆԵՂՎԵԼԻՅՅԱՅ
ԼԵՆԿԱԿԵՆԱՅԵԵԵՐՄԵՅ: ՀԱՄԱՊԵՍԹՅԱՆ ԿԱՊԵԼԵ
ՆԵՅԳՈՒԿԵԼԵՄԿՄՈՎԵԼԵԿԳՐԱՄՈՒԵԶՅՄԵՆԱՅ ՆԱՅՆՈՒ
ՆԳՏԿԱՎԷՒՄԱՅ ԵԿԱԿԵԼԵԿՔԻՐԱԿԱՆՈՒՅՅԵՎՆԵԼԵՆ
ԵՍԳԵՑԻՄԱՌՈՍԿԱՅՎԱՅԱՅՍԿԱՐ
ԱԵՆԵՑՈՍ

նկ. 56

րը (957—967 թթ.) և թողել էրկու արձանագրություն՝ Տնկորում նժ (971 թ.), որով սահմանել է շարիատ հարկի շափը և Թալինում, բնագիրը խաթարված, անհասկանալի, բայց թվագիրը նձ (981 թ.), որ Աճառյանը իրավամբ ուղղում է նժ (959)³⁰¹:

Կարծում ենք, մեր քննության առարկա արձանագրության թրվագիրը՝ նձ և Ը պետք է վերծանել ն հայոց և Ը թու ականին և այդ զեպով կատարվի նձ (959) թվականը, որ համապատասխանում է բնագրում հիշատակված անձերի ժամանակագրությանը³⁰²:

Տառակցումների լայն կիրառությունը կարծես թե առարկում է արձանագրության այս թվագրման դեմ, սակայն լուրջ հիմքեր չի առաջին նրա իսկությունը կասկածի տակ առնելու համար, քանի որ արձանագրության հնագրական կերպարը լիովին հաստատում է, որ նրա փորագրումը ժամանակակից է նրանում հիշատակված անձերին ու ղեկավարին:

Արդ, ինչպե՞ս բացատրել ապուլ բառը: Ինչպես տեսանք, այս

³⁰¹ Լ. Աճառյան, Հայ. անն. բառարան, Բ, էջ 538:

³⁰² Աշխ. Քալանթարը առաջարկում է թվագիրը կարգով նձԼ (969 թ.). սակայն բացի նրա տառանկարը պարզ երևում է ոչ թե ժ, այլ Լ, ուստի վերծանողի այս վերականգնումը աչքքան էլ հիմնավոր չէ:

բար հիշատակված է անէծքի բանձնում, այնպիսի կապակեցութեան մեջ, որտեղ Բվարկիում են Բագրատունյաց Հայաստանի հասարակութեան սոցիալական շերտերը՝ սկսած ազնվականութեան ամենաբարձր դասից՝ Բագրատունիներից կամ Բագրատունի ազգից և վերջացրած սալուխներով, որ ամենայն հավանականությամբ բրնաչուութեան ամենաստորին շերտն էր, բայտ Մանանդյանի բնորոշման՝ աշխատող, արտադրող և շահագործող շերտը:

Այս երկու բեռների արանքում հիշատակված է ավատական Հայաստանի հասարակութեան միջին դասը՝ ազատները:

Այստեղից մեզ թվում է, որ Խոսրովանոյ թագուհու արտոնագրում ընդհանուր զոհերով հանուն է մասնակի հասարակութեան սոցիալական հիերարխիայի պատկերը՝ Բագրատունի, ազատ, սալուխ, բայտ որում, վերջինս իր բովանդակությամբ հավանաբար համապատասխանում է հայկական աղբյուրներում հայտնի ուսմիկ կամ շինական հասկացութեանը:

Սալուխ բառի ստուգաբանությունը հաստատում է այս կոնստուկցիան, արաբ. saluk բառի դիմաց բառարանները տալիս են աղբառ, շունեռ, բնագուրիկ, քափառաշրջիկ և այլն³⁰³, որ լիովին ծածկում է բնավող արձանագրութեան մեջ սալուքի արտահայտած իմաստը:

Այս բառը մատենագրական աղբյուրներում չի ավանդված, չի հանդիպում նաև արդի հայ բարբառներում, միայն Կարոն բարբառի և Աշտարակի շրջանի Բլուրականի խոսվածքում պահպանվել է նույն բառը՝ սալուխ, սալուլի, սալիլի արտասանությամբ, որ նույնպես նշանակում է խեղճ, աղքատ, շունեռ, արհամարհված մարդ: Մնում է ավելյաննի, որ Սալուխն ($<$ Սալուխ) հավաքական անունը վկայված է Անիում, Արզաղբեր Պահլավունու եկեղեցու Չն (1291 թ.) մի արձանագրում. «Թ թուին : Չն : Ես՝ Մխիթար Երեսնացի, որդի Զուսիմի Սալուխնեց... բերի դանդականիս և շինեցի վանդակատունս» (Գ 1 43): Սալուխ անձնանունը այլուստ հայտնի է և չի ստուգաբանված, ուստի կարելի է կարծել, որ այստեղ հիշատակված Սալուխն հավաքականը ծագում է բնութեան առարկա սալուխ բառից առաջացած անձնանունից:

Նշելի է, որ Մխիթար Երեսնացու հիշյալ նվիրագրության՝ նախկինում կատարված բնորոշնակություններում ի թիվս այլ վրիպում-

ների բառանշատումք սխալ է կատարվել, որի հետևանքով ստացվել է ոչ թե Զուսիմի Սալուխնեց (անձնանվան ուղիղ ձևը՝ Զուսիմ $<$ Զուսիմոս), այլ՝ Զուսի ($<$ Զոսա) Մխալուխնեց, որը և այդ ձևով տեղ է գտել Աճառյանի բառարանում իբրև անհայտ ծագումով անուն³⁰⁴:

Անիի արձանագրությունների վերջերս հրատարակած ժողովածուում Զուսի Մխալուխնեց ընթերցումը շուկվել է Զուսիմի Սալուխնեց, սակայն այստեղ էլ թույլ է տրված մի այլ անձնություն, արձանագրության լուսանկարում և զձգրական բնորոշնակության մեջ հաստի երևացող Զուսիմ տպագրվել և անձնանունների ցանկի է մտել իբրև Զուսիմ (Գ 1 43, 134):

110. (ՍԱՐԿՍՈՒՔ), ՍԱՐԿԱՒԱՔ, ԹԵ՛ ՍՈ, ԿՈ, ԱՔ(՛)

Այս անորոշ գրերը վերծանված են վաղամեծիկ Վասակի փորրիկ, անգարդ տապանաքարի վրա (80×38 սմ), որը գտնվում է Սանահնի վանքի Ամենափրկիչ եկեղեցու զավթի հատակին, հարավ-արևմտյան սյան մոտ: Տապանաքարի համառոտ նկարագիրը, նրա երեսին քանդակված մարդապատկերն ու կարճառոտ արձանագրությունները՝ զձգրական պատշաճ ընդօրինակությամբ, առաջին անգամ հրատարակել է Կ. Վաֆադարյանը: Տապանաքարի լուսանկարը չի զետեղված գրքում, սակայն կան հուշարձանի զձգրական պատճենումն ու համառոտ նկարագրությունը, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս իրականի մասին: Սակայն այդ նկարագրության մեջ հանդիպում է մի էական անճշտություն, որի պարզաբանումը կարևոր է Վասակի ով լինելը որոշելու և եղած արձանագրությունները մեկնաբանելու տեսանկյանից:

Նկարագրելով մարդապատկերի հանդերձանը՝ վերծանողը գրում է. «Զղեստը երկար, ծնկներից ներքև է հասնում, մեջքին՝ դոսի, իսկ գոտուց կախված է մի բանալի, որը հավանաբար պաշտոնի է մասանանշում» (ԿՂՍ 119): Եվ իբրև, տապանաքարի զձգրում աչքի է զարնում իշխանի ձախ կողմում, գոտուց կախ տված մեծ

³⁰³ Sd' X. Баранов, Арабско-русский словарь, էջ 563:

³⁰⁴ Կ. Աճառյան, Հայ. անձն. բառարան, Բ, էջ 219, K. Basmadjian, նշվ. աշխ., էջ 553:

լափերի, խիտ արդիական մի բանալի: Մեզ թվում է, տապանաբարի վրա և նրա լուսանկարում երևում է ոչ թե պաշտոն կամ այլ բան մատաննշող բանալի, այլ՝ երաժշտական գործիք, բամանչա հիշեցնող մի նվագարան, որ կախված չէ պատանու գոտուց, այլ իբրև նրան պատկանող առարկա, դրված է պատկերի աջ կողմում բանգակված պնակիտի կողքին: Նվագարանը վարպետությունը է քանդակված և իրական աշակերտություն է առաջացնում: Երազ երևում են ոչ միայն գործիքի փոքր-ինչ ձևաձև մասը՝ բարակ հենակով, այլև լարերը կոթին ամրացնելու հարմարանքները՝ ակոսեֆելները, որոնք սեղավորված են կոթի երկու կողմերին:

Տապանաբարի վրա փորագրված տուները եւ վերծանողի կողմից լրիվ շեն արտագրվել, այսպես, մարդապատկերի գլխի աջ ու ձախ կողմերում, ՎԱ և ՄԿ զրեքից վերև կարդացվում են համապատասխանաբար՝ ՊՐ և ՈՆ զրեքը, որոնք շեն նկատվել և անշուշտ կաղնում են պարուն բառի հայտնվում:



Կճ. 57

Պնակիտ հիշեցնող քառանկյունու վերևում, ձախից փորագրված Ք զիրը նույնպես աննկատ է մնացել և հավանաբար հուշարձանի անավարտ թվագրերի սկիզբն է: Մեջ բերելով պնակիտի վրա փորագրված ՍՈ, ՎՕ, ԱՔ եռատող զրեքը, հնգիսակը զրանց մասին նշում է. «Թվում է որստանական գրեր են և որևէ իմաստ չունենա: Իրականում, քարի վրա առաջին տողի զրեքը կարդացվում են ոչ թե ՍՈ, այլ ՍԱՐ, ուստի և ամբողջ եռատողը պետք է վերծանել՝ ՍԱՐԿՕՒՔ = ՍԱՐԿԱԻՍԿ (Կճ. 57):

Բառի սարկոսի գրությունը, այսինքն՝ ձայնավորից առաջ կամ բաց վանկում ա հնչյունակապակցությունից փոխարեն Օ զիրը, սովորական է նույն ժամանակների հայկական ձևագրերում ու վիմագրության մեջ և առաջանում է նորամուտ օ զրի ոչ հիշտ կիրա-

ռությունից, որը հաճախ էր դիտվում սկզբնական շրջանում: Հենց նույն Սանահնի վանքի № 43 արձանագրության մեջ Բաարան բառը փորագրված է Բաարան ձևով (ԿՂՄ 120)³⁰⁵: Օրինալափ է նաև բառի վերջնականը Ը-ի գրությունը, որ արտացոլում է գ ձայնից պայթական հնչյունի խլացման ու շնչեղացման պատմական հնչյունափոխությունը:

Այսպիսով, քննության ենթակա տառաշարը մեր շուկուններից և լրացումներից հետո վերծանվում է. ՊԱՐՈՆ ՎԱՍԱԿ Թ... ՍԱՐԿՕՒՔ (ՍԱՐԿԱԻՍԿ):

Այսանդից ակնհայտ է դառնում, որ Սանահնի գաղթի հասակին թաղված պարոն Վասակը հողեր կամ աշխարհիկ պաշտոնյա չէ, ինչպես ենթադրել է վերծանողը: Վասակի տապանաբարի վրա փորագրված անձնական առարկաները՝ պնակիտը սարկոսի (=սարկաուզ) մակագրությամբ և նվագարանը շեն մատաննշում նրա պաշտույնը, այլ վկայում են իշխանազն պատանու աշխարհիկ հետաքրքրությունների, ուսումնասնելուության և երաժշտական հակումների մասին:

111. ՍԵՌ

Վայոց ձորի հուշարձանների ԺԴ դարի վիմագրության մեջ քանից հիշատակվում է այս բառը՝ իբրև հողեր կենտրոնների նրբորված հողատանրի սահմանաբանան հատկանիշ: Առաջին արձանագրությունը փորագրված է Աղալիանորի Աստվածածին եկեղեցու հարավային պատին, ՉՀԱ (1322) թ. «ԵՄ՝ Տախրա, Սարգսի որդի զԿտէփոստը հողն ու գձանծին սեան, մին կով ալի ի Սուրբ Աս-

³⁰⁵ Հեթմոնկո բաշտանյից առաջ առ երկարաբառի փոխարեն Օ փոխառյալ զրի կիրառության հնարուն վկայությունը համարում է 1520 թ. մի արձանագրության մեջ Սոյալա անձնանունը (նույն տեղում, էջ 101), գտնելով, որ Օ զիրը զործափություն չունի նույնիսկ XIV—XV դդ. արձանագրություններում (էջ 76): Այս կարծիքի հետ չի կարելի համաձայնել, քանի որ հայտնի են ավելի զիրում առ երեքների կիրառաբար փոխարեն Օ-ի գրության ավելի հին վկայություններ: Հենց նույն Սանահնի վանք ՊԾ (1356) թվակիր քնագիրը ենթադրաբար պատկանում է Եղատարից անհիշյալ (նույն տեղում, էջ 152): Օ զրի մեզ հայտնի հնագույն վերաբերյալից գտնում ենք Հայկաթի խաչքարի արձանագրության մեջ՝ հօճե, մօճե ձևերում, որ փոխադրվել է 1260 թ. (Գ 11 52):

տուածածնիս» (Գ 111 36), շարադրվում են հատուցման և անձրի ձևակերպումները: Մյուս փորագրված է նույն թվին, Սոլիտակա՝ վոր վանքի Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին. «Ս»: էա- չի... սոլի Սուրբ Աստուածածնիս ևս Սուրբ Կարապետիս... զՏանձի հող իւր : Գ : հատովն, վերի ու ներքի ճանապարհովն, : Բ : ձորմի- ռով ու Քարաբխոտ ձորն՝ Գանձհանի ստովն ու ներքի շրխատովն, Բերդի ձորովն... հետևում է անձրքի բանաձևը (Գ 111 36):

Այս վիճազրեում վկայված սեռ, ստովն (<Աստովն) բառը ան- ծանոթ է դասական մատենագրության նրկերին և հանրապետ է միայն նույն պատմական վայրջ ձորի լեզվական միջավայրից ելած Մյուսյաց մետրոպոլիտ Ստ. Օրբելյանի «Պատմություն» մեջ, այն էլ չէ առանձին կիրառություն, այլ բառարարություն մեջ, կրկնորդ եզրում՝ բնասեռ ձևով՝ եւ ի հիսիսոյ զինցս բնասեռովն ի վայր ի զեռնե..., մեծ բնասեռովն ի սարն... և այլն³⁰⁶:

Արդ, ի՞նչ է նշանակում սեռ, բնասեռ այս օրինակներում: Բա- ռիս իմաստը պարզելու համար պետք է դիմել այն բարբառների բա- ռամթերքին, որոնցում պահպանվել է սեռ-ը՝ հնչյունական զանա- զան փոփոխություններով: Գարաբաղի բարբառում ունենք սեռ (=ողնշար), իսկ Շամշազինի, Նոյնմերքյանի և Իջևանի մի բանի խոսվածքներում՝ սրո, որ կրկու ղեպքում էլ նշանակում է կրկու տարրեր մակարդակների միացման գիծը, կամ սահմանը³⁰⁷: Օրի- նակ, ասվում է մեջբի սեռը, սիտք է հասկանալ՝ մեջբի օղնշարի ուղիղ գիծը, կամ լեռան սեռը նշանակում է լեռան՝ հորիզոնի հեռ միացման գիծը և այլն:


Բարբառներում պահպանված սեռ>սրո բառի ծագումը Աճառ- յանը հանում է հին հայերենի սայր=բրի բերան արմատի սայռ = լեռան գլուխ տարբերակից³⁰⁸, այլ>ե օրինաչափ փոփոխությունը՝ սայր||սայռ>սեռ||սեռ>սրո ընթացքով:

Այստեղից, մեր հիշյալ վիճազրեում զՏանձին սեռն, Գանձհա- նի ստովն (<սեռ) պետք է հասկանալ Տանձի հողամասի կամ լեռ- նաբաղիի սահմանը, ծայրը, իսկ Գանձհանի ստովն՝ Գանձհանի

սահմանով, որ կրկու ղեպքում էլ մասնանշում է նվիրված հողա- մասերի սահմանափակ գծերը:

112. ՍԻՓԻ (>ՍՓԷ), ՔԵ՝ ՍՓԵՐ, ՍՏԷ

Երկբայնի իրական անձնանունը վերծանվել է Սանահնի վան- քի մեծ դավթի թաղին փորագրված նվիրագրում, որի գիտական հը- բատարությունը տալիս է Կ. Զաֆադարյանը: Այստեղ բնագրի մեջ հետաքրքրող հատվածը կարդացվում է. «էտու Սանահնիս Սըբ- րս Աստուածածնիս մարն ՍՓԷ հողոյն դիմ զՓուէրն լիմ հայրե- նացին, և գրեցին ինձ Քէղորտսի զարավարի տանն ամէն կեկ- ղցիցս զկէսն Սիբրն և կէսն Խաթունիքն (ԿԳՍ 128)»: Անձնանունն- րի ցանկում նվիրատուի մոր անունը վերականգնվում է Ստէ (հս 200): Թեև թաղի արձանագրված քարերից կրկուսը շկան, սակայն բնագրի վերականգնումն այդ մասում զժամարություն չի հարուցում: Տեղում և յուսանկարի վրա նորից ընթերցելով եղած գրերը, զըտ- նում ենք, որ 4-րդ շարքում մոր անունը հավաստի չի վերծանված. այդ մասում պակասող բառի վրա պետք է լինեին ոչ թե՛ զկէսն Սը- րբն և կէսն Խարունին, թլլ՝ զ կէսն իմ մա՛րն և կէսն Խարունին (նկ. 58): Զաֆադարյանի վերծանությունից ստացվում է, որ Մարծ-



նկ. 58

պանի մոր անունը բնագրի 2-րդ շարքում Սրէ է (ցանկում՝ Ստէ), իսկ 4-րդում՝ Սրբեն, ըստ այսմ, անբացատրելի է բ-ի առկայությունն այդտեղ, մինչդեռ մեր վերականգնած մասն տառաշարում բ-ն իր տեղում է:

Սրիի, Սրի արաբ. siti, sitti—ստիկին> անունը և նրանով բա-

306 Ստ. Օրբելյան, Պատմություն նահանգին Միտական, էջ 149, 162:
307 Ըր. Աճառյան, Հայ գավառական բառարան, էջ 960:
308 Ըր. Աճառյան, Արժատական բառարան, 2, էջ 75:

դարձված այլ իդ. անձնանուններ՝ Սիրիխարուն, Ալամօբբի, Գոհարսբի, Մամսբի, Նուսբի, Ամբարսբի, շատ տարածված են եղել մեկանուն ԺԲ—ԺԴ դարերում: Քննվող քնագրում ՍբԷ-ն շղեղը է համարել անձնանվան ուղիղ ձևը, ինչպես վարվել է վերծանողը: Սիրբի, Սբի և երկրորդ եզրում սրանցով կազմված բարդ անձնանունների սևու. տրական հուղովածները վիճաբերում և ձեռագրերի հիշատակարաններում կազմվում են է(ն) հուղակաղմիչով՝ Սիրբ, ՍբԷ:

Այս իրողությունը առաջին անգամ նկատել ու մեկնաբանել է Ն. Մառը «Վիճական տարեգիր» ժողովածուի առաջաբանում: Ավելի մանրամասն, նոր վկայությունների առկայամբ հնչյունափոխական նախ երևույթը՝ Սբի+այլ=Սբիայլ>Սբեայլ>Սբէ ներկայացված է նաև այդ հարցին նվիրված մեր հատուկ ուսումնասիրության մեջ՝ հրատարակված «Մառը և հայագիտության հարցերը» ժողովածուում (նկ. 59):



նկ. 59


**118. ՍԻՍԻԿԻՆ, ՍԻՍԻԱԹՈՒՆ, ԹԵ՝ ՏԻԿԱՅ...
ՄԵՐՈՒՆԻ ԽԱԹՈՒՆ**

Հայրավանքի և Վարդենիքի հուշարձանների անեղծ պահպանված հիշատակագրերում այս անունները վերծանվել են աղավաղ-

ված, ուստի հարկ է ներկայացնել նրանց ճշգրտումը: Հայրավանքի եկեղեցու ավանդատան պատին փորագրվածը կարդացվել է. «Ի սուանի սրբոյն Անտոնի : Ա : Ժամ արարեն Ախարայանի, : Ա : տիկնայ, ամուսնոյ, ե : Ա : էլիխաթունի» կնոջ բարեկալաբաց (Գ IV 76): Տիկնայ ձևը վերծանողը հասարակ անուն է համարում, սակայն այս բանն առանձին ոչ հուղվման է, միայն բարգրությունների երկրորդ եզրում կարող է ենթարկվել ա կամ ա հուղվման (Տղատիկնայ, Աստաթիկնայ): Ուրևմն արիկնայ պետք է դիտել իբրև բարդ անձնանվան երկրորդ բաղադրիչ, որից առաջ հարկ է որոնել բարգրության առաջին մասը: Արձանագրության զծագիր ընդօրինակությունից կարելի է ստույգ վերականգնել ամբողջ անձնանունը, ըստ այսմ, Ախարայանի բառից հետո գրված կետերն ավելորդ են, քանի որ քարի վրա այդ մասում եղծված կամ վնասված գրեր չկան և չեն եղել: Դրանց փոխարեն պարզ փորագրված են ՍԻՍ գրերը և հաջորդ ՏԻԿԱՅ, որոնք միացնելով կրտսեաներ ՍԻՍԻԿԻՆԱՅ, որից անձնանվան ուղիղ ձևը՝ ՍԻՍԻԿԻՆ (նկ 60):

Վարդենիքի «Դարբանդի իբրեք» հնամալում կանգնեցված ՉԾԳ (1304) թվականի խաչքարի հիշատակագիրը վերծանվել է. «Ես՝ Արբամ ձերունիս և Խաթուն, կանկնեցար զխաչս բարեխոս հոգոյ մեր» (Գ IV 164): Արձանագրության զծագիր պատկերում ձերունիս չի կարդացվում, քանի որ կան միայն ձևը գրերը, իսկ ունիս-ի փոխարեն շատ հասակ երևում են ՍԻՍ գրերը, որոնք պետք է միացնել հաջորդ՝ Խաթուն անվանը, և ամբողջ անձնանունը վերականգնել ՍԻՍԻԱԹՈՒՆ: Ինչ մնում է ձևը տառաչարքին, ապա այն հարկ էր միացնել Խաթուրդ Արբամ անվանը, որից հետո կատանանք ԱԲԻԱՄՅԵՐ անձնանունը, որոյի ի կազմությամբ անուններ միջնագրում գործածական են եղել Հայաստանում (տես՝ Ս Մայր > ձևը, ձևը բաղադրելով անձնանուններ): Մեր այս ճշգրտումներից հետո, որ կատարված են քնարի զծագիր պատկերի հիմամբ, Վարդենիքի խաչքարանի հիշատակագիրը կլինի. «Ես՝ Արբամձեր, Սիսխաթուն կանկնեցար զխաչս բարեխոսս հոգոյ մեր» (նկ. 61):

նկ. 60



Սիստիկին, Սիսխարուն և առաջին երրուս ՄԻՍ բաղադրելով (բաղաբ Կիլիկիայում) այլ իդ. անձնանուններ հայտնի մեջ տարածված են եղել ԺԹ—ԺԳ զգ.։ Հր. Աճառյանի ստուգարանությանը հրանք կազմված են ՄԻՍ բաղաբի և իգ. անունների հարադրությունից, ինչպես՝ Սիսամե, Սիսվարգ, Սիսրանգ, Սիսխարուն և այլն³⁰⁹։

114. ՍՈՐԵԿ (= ՈՐԹՍ ՍՈՐԵԿՍ)

Սո. Օրբելյանը նկարագրելով Սյունյաց Հակոբ Եպիսկոպոսի շինարարական գործերը, մեջ է բերում նրա ընդարձակ արձանագրությունը՝ փորագրված իր կառուցած տաճարի պատին, որը ցածք մեջ չի հասել և հայագիտությանը ծանոթ է պատմիչի բառացի մեջբերումից։ Բնագրից իմացվում է, որ Հակոբ Եպիսկոպոսը Սյունյաց իշխան Փիլիպիցի 12 հազար դրամով և մի մեծարժեք գոհարով գնել է Վարարակի շուրք, ջրանցքով Չազեձորից հասցրել մինչև Ցաթուտ և այստեղ պողարեր այգիներ տնկելով՝ առապար ու փշտա վայրերը դարձրել տնկալից և վարդուտ։ Աճա բնագրի համապատասխան հատվածը. «ե՛ս՝ Ցակոբ Միսնեաց Եպիսկոպոս գնեցի զՎարարակ շուրք յաստուածապա՛հ տեսուն Փիլիպպէ՛»՝ Միսնեաց տեսուն, ընդ 12 հազար դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիք ևւ մեծամեծ աշխատութեամբ ամի զշուրք ի լեռնէն Չազէձոր յւ բերի ի վարդուտս, և տնկեցի որսս սորեկս, և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պողալիցս...»։ Մինչև այս արձանագրությունը մեջ բերելը, Օրբելյանը նրա բովանդակությունը աղտոտ շարագրանքով առիկ է նախորդ էջում. «տնկեաց բազում այգիս և որսս սորեկս, էարկ տունկս ի զանազան պողարեաց ձիբնեկս և օղնեկս և նոննեկս, և յամենայն մրգարեաց արար դրախտս զարմանալիս»³¹⁰։

³⁰⁹ Հր. Անտոյան, Հայ. անձն. բառարան, Գ, էջ 525։
³¹⁰ Սո. Օրբելյան, «Պատմություն...», էջ 253, 254։

Այս վկայություններում անորոշ է որսս սորեկս կապակցությունը, որ ուսումնասիրողները տարբեր կերպ են հասկացել։ Սորեկ, սորիկ բառը հայ մի բանի բարբառներում նշանակում է կոտեմի նրման սերմով բույս մը, որմէ ձեք կհանեն³¹¹։ Պատմարան Գր. Գրիգորյանը որսս սորեկս հասկացել է հենց այս իմաստով, այսինքն Հակոբ Եպիսկոպոսի՝ Ցաթուտում տնկածը համարում է ձիբատու բույս՝ գանեկով, որ Տարեկի վանքը սորեկի դաշտեր ուներ Ցաթուտ կողմն վայրում, և որ այդ սորեկից ստացված ձեթը օգտագործվում էր վանական շենքերի լուսավորության համար և իբրև քայտուղ³¹²։ Սակայն վկայված կապակցության մեջ՝ որսս սորեկս, սորեկ չի կարող ձիբատու բույս լինել, այլ նշանակում է խաղողի լավագույն, ազնիվ, ընտիր որս, վազ, երբայցիցիներից փոխառված սորեկ բառը, որ այս նշանակությամբ բանիցս գործածված է նաև Ս. Գրքում՝ սորեկ, սորիկ, սովրէէ ձևերով և բացատրված նՆԲ-ում (Բ 750)։ Եվ պատահական չէ, որ Օրբելյանի երկի տվյալ կապակցությունը Մ. Բրոսեն ֆրանսերեն թարգմանել է cepe cuperbes = խաղողի ընտիր տնկիներ³¹³։ Նույն սորեկ, սովրէէ = խաղողի ընտիր որթ բառից է իր անունն ստացել խաղողի այգիներով հարուստ այն հովիտը Երուսաղեմի մոտակայքում, որտեղ ըստ Ս. Գրքի՝ «Միբեաց Սամփսոն կին մի առ եզերը հեղեղաբեր Սովրեկայ, և անուն նորա Գալիլա» (Գատաւորք, ԺԶ, 4)։

115. ՍՈՐԲԵՆՍ (< ՍՈՐԲԲԱՅ-Ս), ԹԵ ՍՈՐՍԵՆՍ

Այս անորոշ անձնանունը վկայված է Փոքր Մազրայում կանգնեցված խաչաքարերից մեկի 20է (1308) թ. հիշատակագրում, որի միակ վերձանությունը ստալիս է Ս. Բարխուդարյանը. «ե՛ս՝ Սուսբէս կանկնեցի զխաչս բարեխաւտութեան ծնողաց իմոց...» և այլն (Դ IV 343)։

«Գիլիանի» անձնանուններից ցանկում խաչարձանը կանգնեցնող

³¹¹ Հր. Անտոյան, Հայ. գաղտնական բառարան, էջ 978։
³¹² Գր. Գրիգորյան, Սյունիքի վանական կալվածատիրությունը, էջ 119։
³¹³ Historie de la Sloime par Stephannos Orbeian, ՍՊԹ, 1864, էջ 148—149։

զի անունը վերականգնված է Սուրբէս, որ առարկիւի է Տեղում մեր կատարած ընդօրինակութեան մէջ տվյալ տառաշարքը Սուրբէս է, որից անվան ուղիղ ձևը պետք է զննել ոչ թէ Սուրբէս կամ Սուրբէս, այլ՝ Սուրբայ, և ս զիմորոշ հողի հավելումով՝ Սուրբայս, ինչպէս արեւայ-ն, ծառայ-ս, Սասնայ-դ և այլն (նկ. 62):

ՅԱՐԽԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՂԱՂԱ...
 ԵՍԱՌԻՄԵՍԱԿՆԿԵՏԻՅԻՄԱՐՄԵՒԵՒԱՍ
 ՈՒԹԵՐՆՈՂԱՅԻՄՈՅՅԻՆԸՆԸ
 | ԷՐԻՔՍԱՆԱՐԵ
 2 | Ծէ

նկ. 62

Սուրբայ անվան ուղիղ ձևը վկայված է Սանահնի վանքի դավթի հետեւյալ տապանագրում. «Սըրիկ, Սուրբայ՝ աղիի Բեղիկ» (ԿՂՍ 142): Նույն անունը փորագրված է նաև Բարձրաբաշ վանքի ՈՂԶ (1247) թ. նվիրագրում. «Ես՝ Սուրբա՝ որդի Մալարին միաբանեցա Ս. ուխտիս և ըստ կարի ազնեցի տանս» (Մ2):

Սուրբայ անձնանունը Աճառյանի բառարանը չունի, ցարդ չի ստուգարանվել: Հայկանական է այն համարել Սմբատ, Սուրբատ անվան տարրերահանրից մեկը, Սուրբէս < Սուրբայս խոսակցական լեզվից հկող ձևը առաջանում է անվան վրա ս զիմորոշն ավելացնելով և տվյալ շեշտակիր զիբրում այ երբեմնի երկբարբառի պարզումով է(ն) ձայնավորի, որ տիրապետող օրինակություն էր Ժ—ԺԳ դարերի վիմագրերում ու ձևադարձի հիշատակարաններում (Նմմտ. այգի > էգի, տամզայ > տամզէս, տղայի > աղէի)³¹⁴:

³¹⁴ Ս. Ավդոյան, Վիտական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 167—168:

116. ՍՈՒՍՈՒՆԻ

Շիրակավանի անթվագիր, հավանաբար ԺԳ դարավերջի մի արձանագրության մեջ, որով թեթևացվում են վանքի սպասավորների հարկերը, ի թիվս այլոց, հիշատակվում է և սուսունի-ն: Բնագիրը գիտությունը հայտնի է Ն. Սարգիսյանի եզակի ընդօրինակությամբ, զովար է ստուգել, ուստի այդ հարկային տերմինի հարազատությունը իրականի հետ հնարավոր է հաստատել միայն նրա հավաստի ստուգարանությամբ: Ահա բառիս այդ միակ վկայության՝ մեր հարցի հետ առնչվող հատվածը. «Եղայս արձան անշինչ հաստատեցար, ով որ հկեղեցոյս զրանս կա և սպասարոյ է սմա, թէ արեղա, հթէ միակեց, թէ շատ տուար ունենան, հթէ քիշ, թէ շատ վաստակ ցանեն ևս թէ քիշ, ոչ շարիատ, ոչ համարիլէ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար, ոչ մեծ շար, ոչ փոքր հետ հկեղեցոյս սպասարոցս ոչ ում խաւք շինի...» (ՍԱՐ 171, ՂԱՇ 10, ՎՏ 247):

Հայագիտական գրականության մեջ սուսունի հարկային տերմինի մասին որոշակիորեն քիչ բան է հայտնի, քանի որ բառիս եզակի, մեկուսացված հիշատակությունը ավելին չի ստատ հարկի բովանդակության մասին: Ըր. Աճառյանի բառարանում սուսունի-ն բացատրված է՝ մի տեսակ հարկ, նույնը կրկնված է Կարսոյ անտիպ բառարանում³¹⁵:

Ակնհեր է, որ սուսունի կարող էր միայն մոնղոլական հարկ լինել, քանի որ Շիրակավանի մեջ բերված արտոնագրում այն հիշատակվում է իլիսանական հայտնի ալլ հարկերի՝ եզին բաղարի, կամարելի (ալլ բնագրերում՝ համբրիլէ), մեծ կամ փոքր շարի հետ միասին:

Իլիսանական ժամանակաշրջանում հարկատու բնակչությունից գանձվող հարկերի և սուրբերի անվանումները ուսումնասիրելիս մենք կանգ առանք շուսուն կամ սուսուն տերմինի վրա, որն իր հնչյունական տեսքով ամենից ավելի է համապատասխանում մեր բրննության առարկա սուսունի հարկին: Շուսուն կամ սուսուն էր կոչվում հարկատու բնակչությունից հավաքվող պարենամթերքը, որ ծախսվում էր մոնղոլական սուրճանդակների, երթեկող պետական

³¹⁵ Ըր. Աճառյան, Արմ. բառարան, 2, էջ 362, հայագետ Կարսոյ արխիվ, Մառնեպարան, ձևագիր, տվյալ բառի տակ:

պաշտոնյաներին կերակրելու համար: Այս սուրբը մտցվել էր զրեւս իլյանների առաջին տարիներին, և օտար պատմիչների վերկայությունը նրա զանձուրը շարունակվում էր նաև ԺԳ և ԺԳ դարերում: Այս հարկը հավաքվում էր նաև Ռսկի Հորդայի երկրներում, միայն թե այստեղ ստատուկի՝ ի մեջ մտնում էր ոչ միայն պարենամըրները, այլև արքունի փոստային կայանների (յամների) ձիերի կերակրման համար հավաքվող անասնակերը: Ինչպես հայտնի է, ԺԳ—ԺԳ դարերում մեծղոսկան ղրվանի պաշտոնյաների, սուրհանդակների և արտոնյալ վաճառականների երթևեկության համար պահանջվող պարենամըրների և յամների պահվող ձիերի անասնակերի՝ բնակչությունից հավաքվող հատույթը հայտնի էր համապատասխանաբար ուլուֆե և ալաֆե անվանումներով և այս իմաստով վերջիններս իրենց բովանդակությամբ հոմանիշ են ստատու կամ շտատու հարկային տերմիններին³¹⁶:

Այդ է պատճառը, որ ստատու (շտատու) լայն կիրառություն չունեցավ Արևելքի երկրներում և Ռսկի Հորդայում, ուստի և նրա հիշատակությունները հազվադեպ են. դրանցից մեկն էլ Երբակավանի արտոնագրերում ավանդված վկայությունն է:

117. ՍՐԱՀԱՆԳ

Բառս միջին դարերի մատենագրության մեջ ավանդված մի քանի անստույգ վկայությունների հիմամբ ստուգարանվել է Աճաղյանի բառարանում, բայց այժմ սրահանգ ծագում է պարս. sarhāng կամ sarhāng բառից, որ կազմված է sar = զուրի և āhang = զորք բաղադրիչներից և նշանակում է՝ յառաջընթաց զորաց, բանակի գլխատը³¹⁷:

Մանոթ վիենյով այս ստուգարանությունը և իրավամբ հերքելով նշվե ավանդ մեկնությունը (սրահանգ = շեղակալու սպանելոց կամ սրահան, սրիկայ)՝ բանասեր Պ. Սարգսյանը անկախաբար տալիս է մի նոր բացատրություն, որ բխում է բառի կազմությունից,

³¹⁶ Տե՛ս А. Али-Заде, *Եղբ. աշխ.*, էջ 242; И. П. Петрушевский, *Очерки...*, II, 1949, էջ 275—276:

³¹⁷ Լր. Անադյան, *Հայ. արմ. բառարան*, Զ, էջ 467:

բայ որի սրահանգ նշանակում է սուսահանգ, այսինքն՝ վրան սուր հազնոց (մարզ), լայնաբար՝ սպառազեն, քիչնապահ, կտրին զինվոր³¹⁸: Սարգսյանի այս մեկնությունը այնքան էլ համոզիչ չէ և ժողովրդական ստուգարանություն է հիշեցնում, սակայն մի կետում նրա դիտողությունը արժանի է ուշադրության:

Մեջ բերելով Մխիթար Գոշի Գատաստանագրքից սպախաբար վկայությունը (և ի նոցան է լինին սպախաբար շորս արք, որք զղէնան կրեն)³¹⁹, հեղինակը նկատում է, որ ԺԳ դարի մի ձեռագրում այդ բառի դիմաց լուսանցքում սրված է նրա տարբերվերցումը՝ սպաբար, և վերջինիս բացատրությունը՝ սրահանգ: Այստեղից այնչերև է, որ ԺԳ դարում սրահանգ հոմանիշ է եղել սպարաբի, որ նշանակում է բառացի զինակիր, քիկնապան, իսկ հետագայում՝ նաև բյուզանդական պալատական զինվորական աստիճան և քանիցս վկայված է Անիի բյուզանդական շրջանի արձանագրություններում՝ բաղադրված կանդիդատ բառի հետ՝ սպարաբ կանդիդատ > սպարաբ կանկիատ (Գ I 37):

Վիժական արձանագրություններում սրահանգ, սրբանգ բառը երկիցս հիշատակված է իբրև նույն անձի անուն: Ահա այդ վկայությունները. Արցախի Հավապտուկ վանքի բակում կանգնեցված խաչարձանի վրա, ՌԻԲ (1173) թ. սի հայրապետութեան տն Ստեփանոսի և ի Բագատրութեան..., ես՝ Սրահանգս՝ որդի Ջաղուր կանգնեցի զխաչս: Եուն վանքում, մի այլ խաչարքի հիշատակագրերում. սես՝ Սրբհանգս կանգնեցի զխաչս իմ հարն Ջաղուրս...» (ԳԷԽՊԼ 31):

Քվում է, այս բնագրերում Սրահանգ յանձնակնան ծագումը պետք է զնել ոչ թե յառաջընթաց զորաց կամ բանակի գլխատը իմաստից, այլ այդ բառի՝ զինակիր, քիկնապան, կտրին զինվոր, զինվորական նշանակությունից: Եունն են հաստատում և սրահանգի մատենագրական վկայությունները, որոնցում ամենուրեք առկա է ոչ թե բանակի գլխատը, հրամանատար, այլ սովորական զինվորական, զորք կիրառությունը: Նշելի է, որ սրահանգ ձևի հրենագույն և հավաստի հիշատակությունը Մատթեոս Ուոհայնցու «Ժամանակագրության» մեջ է, որտեղից հետագայում կապակցու-

³¹⁸ «Բազմավեպ», 1928, Ե, էջ 142:

³¹⁹ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Ե., 1975, էջ 158:

Յյունն անփոփոխ արտագրվել է Վարզանի երկրում: Ահա համապատասխան հասվածքը. «Յայտմ ամի (չորրջ ԵԳ—1110-ական թվականներ) էառ թագաւորն Վրաց Գաւթի՛թ գրադարն Տփխխ ի Պարսից և արար սասաիկ կոտորածս զքաղաքն և արս հինգ հարիւր սրահանքս ի փայտն հաննայ սասաիկէր շարաշարս»³²⁰: Այս իմաստն է արտահայտում սրահանգ բառը նաև Վարթիլի ցետրերայումն և նրա հին հայերեն թարգմանության մեջ, հնակցայ նախադասութուններում. «Եւ թողիւլ անդ ամիրայ զորահանդն՝ շորա ի աեղի իր: Ձկնի աւուրց կկն սրահանգն ի վերայ Գորդայ, և յաղթահարեալ զհաց փարստական ի Գանձակ»³²¹: Ինչպես վրացերենը քննարկում, այնպես էլ հայերեն թարգմանության մեջ սրահանգ նշանակում է զորք, բանակ, զորական, թեև որոշ ուսումնասիրողներ սրահանգ մեծատառով գնելով՝ անձնանուն են համարել:

Այսպիսով, Ունհայեցու, այլև Վարդանի երկրում սրահանգված վկայություններից ահնհայտ է, որ սրահանգ նշանակել է ոչ թե բանակի զվատոր կամ յառաջընթաց զօրաց, այլ սպառազեն, բիկնապան, զինվորական, զորք:

118. (ՎԱՂԻՅԱՆԻ) ՈՌՈՒՅ (ԱՐՏՆ)

«Ես՝ Վահրամ ու ամուսին իմ, որզիրս իմ՝ Սմայատ, Ուրան տըվար Վաղիցանտ ոռուց արտն ի Ս. Սիոն, : Գ: Ժամ, : Բ: Ինձ, : Ա: ամուսին իմ Ջակտին...» (Գ III 156, 157):

Այս խաթարված արձանագրությունը փորագրված է Շառիվանքի Ս. Սիոն եկեղեցու հարավային մուտքի մոտ, ԺԳ դարի վերջերին (մինչև 1273 թ.): Բնագրի վերձանությունը առանձին զովարություններ չի հարուցում, և բոլոր ընդօրինակողները նրա հիմնական բովանդակությունը արտագրել են առանց զգալի ազավաղումների: Միայն նվիրված արտի անունը կամ նրա գտնված հանդամապը՝ մեր օրինակում Վաղիցանտ ոռուց (արտն), տարբեր ընթերցումներով է

հրատարակված բնագիրը ուսումնասիրողների գրքերում: Ալիշանի «Սիսականում», օրինակ, տպագրված է Վաղցանոյ ոռուց արտն (ՂԱՍ 152), որ մտածել է տալիս, թե տեղանունը կարող էր առաջանալ Վաղցանոյ ոռիվ (ռաիք, սեռ. ոռուց ()), թեև այս դեպքում սպասելի էր օրինակափ՝ ոռնեաց (հմմտ. Սեանի 874 արձանագրության մեջ վկայված «Եւ տվար վախմ զՎարսերն զԳոմձաոր, Ցամարբերդ, Ունեացափ...» և այլն): Սիոտեր և Քուչուկ-Շովհաննիսյանը նույնպես արտագրելով Վաղցանոյ ոռուց արտն, կապակցությունը թարգմանել են Вагцанское угодье виноградных лоз (MAK 82), այսինքն ոռուց համարում են խաղողի վազեր, որ, իհարկե, ընդհանուր ոչինչ չունի իրականի հետ: Ոռուց է կարդացել քննվող բառը նաև Քաչրերունի, առանց պարզելու նրա նշանակությունը տվյալ շրջապատում³²²:

Ս. Բարսեղարյանի վերձանությունը, որից քաղված է վերևում մեղերված վկայությունը, ստուգվում է Վայոց ձորի արձանագրությունների ժողովածուում (Գ III, լուսանկար 179) գետեղված հաշող լուսանկարով, ըստ այդմ հեղինակի ընդօրինակությունը բացարձակ նույնական է իրականի, քարի վրա փորագրվածի հետ, հետևապես, քննության անարկա կապակցությունը պետք է կարգալ. տվախ Վաղիցանտ ոռուց արտն (նկ. 63):

ԲԱԵՂԱԶԻՐԷՆԱՆԻ ՍԴՂԱՏԱ
 ԵՍՎԱԿԱՌԱԲԱՌԱՅԻՄՈՒԴՔԱ
 ԻՄՍՄՂԱՌԱՌԳԱՄԱԿԱՐ
 ՎԱՐՇԱՆԱՆՈՌՈՒՏԱՆՍ ԻՄԲԱՌՆ
 Գ:ՇԱԿԱ:Բ.ԻՆԳԱ:Ա
 ՋԱԿՏ.ՈՂԱՐԿԱԿԱՆՍՈՒՅԻՄ

նկ. 63

Այստեղից ահնհայտ է, որ նվիրված արտը գտնվելիս է եղել Վաղիցանտ ոռ (հոգնալի սեռականը՝ ոռից, բարբառներում ոռուց) զաշամատում: Ոռ մինչև հայերենում և հայ բարբառներում բացի

³²⁰ Մատթև Ունույեցի. Ժամանակագրություն, Վաղպատ, 1898, էջ 350, Վարդան Վարդապետ, Լուսաբուն պատմության, Վենետիկ, 1862, էջ 119:

³²¹ Քարթլի Ցետրերայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը, լույս բնծայեց Իլիա Աբուլաձե, Քրիտիկ, 1953, էջ 232:

³²² Քաչրերունի, Շառիվան վանքը, «Արարատ» 1888, Գ, էջ 164:

իր հիմնական իմաստից, նշանակում է նաև ամանի հատակ, առարկայի ետևի մասը կամ կարը, այլև՝ ծայրը, ծայրի մասը, վերջը, տակը: Այս իմաստով բառս «Գիրք վաստակոց»-ում հանդիպում է հետևյալ կապակցությամբ մեջ. «Ազդի շինել սուր բրտին, մէջ իբր կարաս, և զիր լորն անկղ, որ զինքն կարենաս զլիխվայր կախել ի ծառ կամ ի տեղ...»^{322*}, «այսինքն յառն նշանակում է ազդի (Յազար=բույս անկելու հողն աման) տակը, հատակը: Քիֆլիսի բարբառում վարֆ (=ոսֆ) ունի առարկայի վերջ, ծայր իմաստը, բայտ այդմ՝ զվիլի վուրումը=գլուղի ծայրին, գլուղի վերջում»³²³: Երևանի կամ Արարատյան բարբառում դործածական է այդու կամ արտի ոսֆը կամ ոսֆումը նույնպես ծայր, վերջ նշանակությամբ³²⁴, բայտ որում, այս դեպքում վերջը կամ ծայրը որոշվում է ուղղման համար հոսող ջրի ուղղության համաձայն:

Գալով մեր բնեմության առարկա Վաղիցանն ռոռոյ արուն կապակցությանը, ապա ռոռոյ դիտելով ոսֆ=վերջ, ծայր, տակ անհավան քառի սեռական հոլովածներ՝ պետք է կարծել, որ նվիրված արար գտնվելիս է եղել Վաղիցան կռչվող դաշտամասի վերջում, նրա ծայրին կամ տակին, բայտ այդմ տվյալ հաստատված կարելի է հասկանալ՝ Վաղիցանի վերջի, Վաղիցանի ծայրի կամ Վաղիցանի տակի, ներքևի արար:

119. ՎԱՆԵՑԻՔ ԲԱՌԸ ԱՎԱՆԻ 1813 Թ. ԱՐԱՇԱՆԱԳՐՈՒՄ

Ավանի ս. Հովհաննես եկեղեցու պատին փորագրված այս կարերն փմազիրը հայազիրությանը հայտնի է դարձել Կ. Ղաֆադարյանի՝ վերջերս հրատարակած վերծանությունից: Նվիրագրի հիմնական իմաստը առաջին տողերի մեջ է, որտեղ աներկրա վերծանված է. «Ես՝ խոյս ևս ամուսին իմ Շարար խաթուն մխարանեցար Սուրբ Յովանեսիս տվար : Ո : սպիտակ ի զինն Սեւրնճին այգոյն և զմեր զնամ տներն» (ԿՂԵ 203): Այստեղ կարծես ամեն ինչ պարզ է. նվիրատուները եկեղեցուն են տվել իրենց զնամ տները և

տնն Սեւրնճի այգու զնի մի մասը, այսինքն մասամբ զնն ու նրվիրել են Սեւրնճին պատկանող այգին: Թվում է, սրանով պետք է ավարտվեր նվիրագիրը և սովորականի նման հետևեին հաստացման և անձեթի ձևակերպումները, սակայն խոյս ու Շարար խաթունի նվիրագիրը շարունակել են այլ հեղինակներ, նույնպես տառանձնելով, որտեղ խոսքը դարձյալ նույն այգու մասին է. «Ձատ ի Լուսին: Ձծ : սպիտակէն մեր՝ վանեցիրս : էծՄ : սպիտակ այլ ենք տվել ի Սեւրնճին այգոյն զինն» (ն. տ.): Ինչպես ստույգ բացատրում է վերձանող Կ. Ղաֆադարյանը, այս հաստագից պետք է հասկանալ, որ խոյսի ու Շարար խաթունի հատկացրած 600 (ՁԾ) սպիտակից բացի, Սեւրնճի այգու զնի դիմաց 750 (էծՄ) սպիտակ էլ լրացուցիչ տվել են վանեցիք, այսինքն եկեղեցուն ընծայված այգու զներ կապված է ոչ թե 600, այլ 750-ով ավելի՝ 1350 սպիտակ:

Վանեցիք բառը Ղաֆադարյանը հասկացել է սովորական՝ Վանի քնակիչներ, Վանից կամ շրջակայից եկածներ իմաստով, զբանելով, որ 750 լրացուցիչ գումարը տվել են թերևս Ավանում բնակություն հաստատած կամ միտքի հետո վանեցիներ, որոնց անունները բնագրի հավելվածում չեն նշված: Այս բացատրությունն այնքան էլ համոզիչ չէ. անհասկանալի է, թե այդ ինչ վանեցիներ են, որ հայանվելով Ավանում, այդ ժամանակների համար այդպիսի պատկանելի գումար են հատկացրել վանքին, այն էլ առանց նշելու իրենց անունները և անհատույց: Ավելի հավանական է վանեցիք տվյալ իրադրության մեջ հասկանալ այդ բառի մյուս՝ վանական, վանեում ապրող, վանի մխարան իմաստով: Այսպես ընկալելով վանեցիք բառը, ընկնող նվիրագրի անտրոջ կապակցությունը կարելի է հասկանալ այն իմաստով, որ Սեւրնճի այգու արժեքի 750 սպիտակը իրենց միջոցներից տվել են վանքի մխարանները, որոնց անունները, բնական է, չպետք է նշվեր նվիրագրում:

Որ վանեցիք կարող է նշանակել նաև վանական, վանքի սպասավոր, մխարան, լավազույնս սպացուցում է Բագնալյի տաճարի նույն ժամանակների մի արձանագիր, որտեղ այն աներկրա կիրառված է մեր նշած իմաստով: Ահա այդ բնափոր. «Ես՝ Կոստեր Մըմանեցիկ սպախնեցայ ի Սուրբ Աստուածածինիս, զհիրատունն որ Պիշարանց կոչի, որ ծախել էին վանեցիքն, ևս դարձուցի ի վանք և ետու զին : Պ : սպիտակ» (ԿԵԱ 182): Այս նվիրագրից իմացվում է, որ Կոստեր Մմանեցիկ Պ (800) սպիտակով փրկագնել ու Բագնալյի

³²² 2. Գիրք վաստակոց, էջ 134.

³²³ 2. Անտոյան, Արժանատիան բարբառն, Ծ., էջ 519.

³²⁴ 2. Անտոյան, Գաղապական բարբառն, էջ 853—855.

վանքին է վերադարձրել Պիշարենց կալվոլը (կամ Պիշարենց նվիրած) հյուրանոցը, որ մինչ այդ վանքի միաբանները (վանեցիքն) ծախել էին, համաձայն վանքի կարիքները հոգալու նպատակով Ալլան անվիճելի է, որ վանեցիք այստեղ արտահայտում է միայն վանականներ, վանքի միաբաններ և ոչ թե վանի բնակիչներ, բաներ որ միայն վանական հայրերը կարող էին վաճառել վանքին պատկանող հյուրանոցը, որ ավելի ուշ 600 սպիտակով գնում և հա է վերադարձնում բարերար Կոստանը: Եվ իբրև չէ, որ Բագնաչի այս արձանագրության ֆրանսերեն բացատրականում Կ. Բանաչյանը վանեցիք բառը թարգմանել է les habitants du couvant = վանքի բնակիչ, վանական (KBA 183):

120. ՎԱՐԳԱՍԱՀ(Ց)

Այս անձնանունը վերծանվել է պատմական Վայոց ձորի այժմյան Գլաձոր գյուղի հարավային եզրին կանգնած խաչքարի ԶԿ (1311) թ. հետևյալ հիշատակագրում. «Ես՝ Վարդաշահ կանկնցի զխաչս յիշատակ ինձ ևս ձեռողաց իմոց» (Դ III 102): Անձնանունն արտասոց է, չի հանդիպում հայկական աղբյուրներում, ընդունելի սառազարանության չի ենթարկվում: Հաղիվ թե հնարավոր լինի Վարդավան ձևը գիտել իբրև բարդություն կազմված հայ. վարդ (կամ Վարդ) և արքա. ալան (=ալլան) բառերից, քանի որ ալլան բաղադրիչով անձնանուններ հայոց մեջ չեն հանդիպում:

Տեղում Վարդավան ընթերցումը նորից ստուգելով, համոզվեցինք, որ այն հարկ է շահել Վարդաշահ, ըստ որում ՚վ վերծանված գրի ահղում փորագրված է շղգղր չ: Այս ստույգ ըստ Աճառյանի կազմված է հայ. վարդ բառից կամ անունից և արքա. Տահ — քազավոր բառից, նշանակելով՝ վարդ քազավոր: Վարդաշահ իբրև ար. անուն բազմիցս վկայված է ԺԳ—ԺԸ ղղ. վիճագրերում ու ձևազրկերի հիշատակարաններում:

121. ՎԱՐԳԱՅ, ՄԻՐԱՅ(Ց)

Անորոշ անձնանունների այս տրական հոլովածները (ուղղ. Վա՞րդ, Մի՞ր) վերծանված են Ագարակաձորի գերեզմանոցում

կանգնած զեղաբանդակ խաչարձանի հիշատակագրում, որի միակ վերծանությունը տալիս է Ս. Բարխուդարյանը. «Ես՝ Արաս ու ալլ եղարքս կանգնեցար զխաչս ի բարեխառություն Մարկոսի և Վարդայ, Միրայ. թվին : ԶԼ :» (Դ III 26): Վերծանողը հնարավոր է համարում վերջին անունները ընթերցել նաև՝ Վարդ կամ Վարդան Ալլմիրա, առանց պարզելու այլմերա բաղադրիչի նշանակությունը: Մեր դաշտային գրառումներում ավյալ տառաչարքը վերծանված է Վարդայվիրայ և անվերապահորեն համարված է մեկ անձնանվան տրական հոլովածը, քանի որ բնագրում և շաղիպը որված է միայն նրանից առաջ՝ Մարկոսի և Վարդայվիրայ: Ուրեմն, վիճելի երկրորդ անձնանունը պետք է համարել Վարդամիր (> ար. Վարդամիրայ), ըստ այդմ ոչ մի հիմք չկա ավյալ տառաչարքը արտհետու և Վարդ (> Վարդայ), Միր (> Միրայ) անունները վերականգնելու:

Երկրորդ եզրում արքա. amir—իշխան բառով բաղադրյալ անձնանուններ հայոց մեջ հայտնի են միջնադարի վիճագրերից ու ձևաարերի հիշատակարաններից՝ Դուլամիր, Խանամիր, Դանամիր, Քուրդամիր և այլն: Խնդրո առարկա Վարդամիր բարդությունը Դուլամիր փոխառյալ ար. անձնանվան պատճենումն է, որտեղ պրս. ցալ բաղադրիչը փոխարինված է հայ. վարդ նույնիմաստ բառով: Վարդամիր անձնանվան ար. հոլովումն էլ գրի հավելումը՝ Վարդայվիրայ. բացատրվում է հին հայերենի այդ հնչյունի գրություն և արտասանության մեջ միջին դարերում առաջացած անհամաձայնությունը, երբ հնագին բառամիջում ա—ից հետո անհարկի չ էր գրվում, անկախ նրա արտասանությունից՝ աջայվերս, մեծայտան, միայրան, Գանձայար, վարդայվետ և այլն: Այս հնչյունափոխական երևույթը լայնորեն տարածված էր միջնադարի ձևագրերի հիշատակարաններում ու վիճական բնագրերում և դիտված է հայագիտական գրականության մեջ (ՎԱՀ 360—363):

122. ՎԱՐԳԸՄԲԵԼ (ՎԱՃԸՄԲԵՐ, ԳՈՐԳԸՄԲԵՐ, ՎԱՐԳԸՄԲԵՐ)

Կեղաոսի հուշարձանախմբի Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին փորագրված նվիրագրի մեջ հստակ հիշատակվում է Վարդմբել անունը՝ իբրև արձանագրության հեղինակ և նվիրատու: Արձանագրությունը մեզ է հասել միանգամայն անեղծ վիճակում, բն-

վերցվում և վերձանվում է գյուրութջամբ: Չնայած դրան, այս փոր-
րածավայ բնագիրը բանիցս ընդօրինակվել, հրատարակվել ու մեկ-
նաբանվել է զգալի տարրնթերցումներով ու աղավաղումներով:
Սույն բառարանության նպատակով մեզ ենք բերում Գ. Հովսեփյան-
նի նորագույն և ավելի հավաստի վերձանությունը՝ մեր ուղղումնե-
րով: ԵՔ: ՈՒԲ: կամաւ բարեխորհի աստուծոյ, ես՝ Վարդմբել, որ
գնեցի ի յերևան զՄեղիտանոյ շտոյն շարէրն ևւ ետու ի Ս. Գրիգորոս:
Սպասաւորք սորայ աւանդեցին տարին Բ: ժամ: Որ խտփանէ, իմ
մեղացս տէր է սուաջի սասունձոյ: Անէն (ԳՀեՊԳ 30):

Բոլոր ընդօրինակողները թվագիրը կարգացել են ՈՄԳ (1204),
որ հավանաբար ծագել է Ժ և Մ գլխագրերի նմանությունից (Շաս-
խաթունյանց, Սմբատյանց, Լալայան, «Լիմական տարեգիր»)։ Ա-
լիշանք առաջարկում է ՈՄԳ-ն ընթերցել ՈՄԳ, քանի որ նրա կարծի-
քով լուսանկարի վրա այդպես է երևում: Ստույգ չի կարգացվել նը-
վիրագրի ստորոգյալը՝ պարզ երեւացող գնեցի հրատարակվել է նո-
րոգեցի, որ անիրական է և սեփմասա (նորոգեցի էզոյն շարէլե")։
Մինչդեռ բնագրի ստույգ վերձանությունից պետք է հասկանալ, որ
նվիրատուն ոչ թե նորոգել, այլ գնել և վանքին է նվիրել այդու կամ
նրա եկամտի, բերքի շարեք, մեկ քառորդ մասը:

Տարբեր է վերձանվել և նվիրատուի անունը, իրականում և
բոլոր արտագրողների մտա այն Կարգմբել է, միայն Ալիշանը ա-
ռանց որևէ հիմնավորման, այդ բաղադրյալ անձնանունը երկու մա-
սի է բաժանում և հարցականով կարգում՝ Վարդ բմբել(“), բառ
հուշարվիին հակամետ լինելով սույն Վարդ-ին նույնացնելու նույն
հուշարձանի մի ուրիշ արձանագրության մեջ՝ հիշատակված երևա-
նի պատրոն Վարդի հետ (ՂԱԱ 262)։ Մեր նպատակից դուրս է արվ-
յալ բնագրի ժամանակագրական սահմանների քննությունը, միայն
սպաստվապես կարելի է պնդել, որ նրանում հիշատակվող Վարդմ-
բելը և պատրոն Վարդ երևանոյ տարբեր անձնավորություններ են,
և ոչ մի հարկ չկա Կեղառիսի վիձագրերում հիշատակվող այդ Վար-
դերին նույնացնելու (մի կրթող Վարդ էլ իր նազ ամուսնու հետ ըն-
ծանք են անվի վանքին և այդ մասին արձանագրելի Կեղառիսի գավ-
թի ձախ ավանդատան ձակատին (ԳՀեՊԳ 34)։

Կեղառիսի այս վավերագրի հետագա հետազոտողները հիմք
ընդունելով Ալիշանի ընթերցումը՝ քննվող անձնանունը բաժանել
են երկու մասի՝ Վարդ, բմբել և վերջինս համարել այլ լեզուներից

փոխառված իշխանական տիտղոս՝ պարոն, պատրոն իմաստներով:
Քանի որ տեղում, Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատին նը-
վիրատուի անունը հստակ փորագրված է Վարդմբել (ստուգված է
Ս. Բարխուդարյանի և մեր հավաքածուի անտիպ նյութերով), ուս-
տի Ալիշանի Վարդ բմբել հարցականով ընթերցումն ու բմբել կար-
ծեցյալ իշխանական տերմինի մեկնաբանությունը զրկվում են հիմ-
քից:

Այս բուրբից ակնհայտ է նաև, որ բմբել ընթերցումը անիրա-
կան է և հավանաբար առաջանում է բնագրում բ և ք գլխագիր առ-
նատեսականների նմանությունից: Մյուս կողմից, անիրական է նաև
այդ կարծեցյալ իշխանական տիտղոսի աներջ ստուգաբանությու-
նը, քանի որ միջնագրի գրական հուշարձաններում բմբել փոխառ-
ված տերմին գոյություն չունի: Կա դրան հայկական լեզվական մի-
ջավայրի ծնունդ բմբելբմբել բառը, որ ծագում է ընդ նախորդից՝
դի անկումով և ն անզային ձայնորդ մի վերածելով՝ հաջորդ բա-
ռի սկզբի շրթնային բաղաձայնի ազդեցությամբ: Հմմտ. բմբռ-
նել<ընդ բռնել, բմբրեել<ընդ բրել, բմբրեանել<ընդ բրեանել
(հանդիպում է նաև՝ բմբրեանել, բնդրեանել), բմբռչնել<ընդ
բռչնել և այլն³²⁵:

Ըմբելբմբել բառը առանձին գործածական չէ և հանդիպում
է միայն շարմբել, շարմբերություն, ղծախմբել, ղծախմբելի
կազմություններում, որոնք արտահայտում են ղծվարակի, ղծվա-
րաանելի, անտաանելի և առաջանում են շարի տված (բերած), ղծախ-
մբելով (բերած) իմաստներին³²⁶: Միայն վիձակական արձանագրու-
թյուններում մի քանի անգամ վկայված են բաղադրյալ անձնանուն-
ների՝ կազմված որևէ անձնանունից և բմբել կամ բմբել բառից, որ
առաջանում է բմբրեել բայից, ել-ի անկումով կամ յ>ք փոփոխու-
թյամբ (հմմտ. սիրել (նմ) >սիրել(նմ)): Ահա այդ հիշատակու-
թյունները. Հաղարծնի վանքում, ԺԳ դարի մի հիշատակագրում,
«Վարդավառին: Ա: ժամ արնեն Վաշբմբերին» (Գ VI 32): Շամշադի-
նի շրջանի Կապտավանք հուշարձանի ԺԳ դ. կեսերի արձանագրու-
թյան մեջ. «ես՝ Աբշել (նմ) Կարգմբերին, միարանեցա յայս ե-
կեղեցիս» (Մ2): Արցախի Հարցահանգիստ (Չովոսթ) գյուղի եկեղե-
ցում գտնվող խաչքարի երեսին. «ես՝ Մարգարիտ, դուստր Ուրտի-

³²⁵ Շր. Անտոյան, Հայ. արմ. բառարան, Բ, էջ 122:

³²⁶ Սո. Մալխոսյանց, Հայ. բաղադր. բառարան, Ա, էջ 512, Գ, էջ 15:

կայ կանկեցի զոր նշանս ի փրկութիւնն հոգոյն վարդաբերին եւ վարդաւորին, Մխիթարայ եւ Կանանինն Որբ լաղաթս յիշէր եւ զկտամ, որ գործող էր խաչիս» (ՄՀ—նկ. 64)³²⁷;



Նկ. 64

Քվում է, այս օրինակներում բարդ անձնանունների երկրորդ բազադրիչ ըմբե-ը (<ըմբել) կարող էր ծագել ընդ նախորդից եւ բե, բեռել արժատից, եւ ամբողջ բարդութիւնը կնշանակի ինչ-որ մեկի բերած կամ տված, ըստ այդմ Գորգըմբե = Գորգի (<Վերգ) բեւած, ալամ, Վաչըմբե = Վաչի (քանիցս վկայված անձնանուն) բեւած, Վարդըմբել = Վարդի բեւած եւ այլն:

Քանի որ երկրորդ եզրում ըմբել = ըմբեռ ունեցող բարդ անձնանունների առաջին բազադրիչը արական անուն է, պետք է կարծել, որ վերջինս արտահայտել է բազադրյալ անձնանուն ունեցողի ծնողին, հորը, ըստ այսմ, Վարդըմբեի հոր անունը Վարզ է եղել, Վաչըմբեի՝ Վաչ, Գորգըմբեի՝ Կերգ (= Գորգ) Եւ այլն:

³²⁷ Չցայի սյունիներումներով հրատարակված է Մ. Բարխուդաւանց, Արցախ, էջ 292, սկզբագրական հանգուս, Ե, էջ 309—310:

Միջին դարերի հայ մատենագրութեան մեջ բառս հայտնի է եղակի վկայութեամբ. Մատթեոս Ուսնայեցու ժամանակագրութեան մեջ Արծն բազադի մեծահարուստ բարեկեցիկուցոս Գալթուկի ունեցած կարողութիւնը ակնհայտ շափազանցումով ներկայացվում է սթառասուն ուղտ բարձան դրանձարանն նորա, ութ հարիւր վեցիկ եղանց ելանէին ի տանէ ետրա³²⁸:

Գրա փոխարեն բազմաթիվ են վեցկիի հիշատակութիւնները ժ—ԺԳ դարերի վիճագրական հուշարձաններում, որ լավագույն ապացույց է բառիս լայն գործածութեան ժամանակի խոսակցական լեզվում: Նախնազույն վկայութիւնը գտնում ենք Անիի Մարտաշարի 1056—1058 թթ. նշանավոր արձանագրութեան մեջ, որով բազադի բյուզանդական կտակցան Բազրատ Վրկաջին վերացնում կամ քննահանում է անեցիների հարկերն ու պարտույթները: Ահա բնագրի մեզ հետաքրքրող հատվածը Հ. Յորքելու հավաստի վերծանութեամբ. «Եւ ազատեցին զվեցկէ կոս, եւ զսայլի, եւ զկամիւն, եւ զանգարիոն...» (Գ I 37):

Այստեղ վեցկէ-ն բնվող բառի սեռական հոլովածն է (բնագրում զվեցկէ կոս = վեցկու, վեցկիի կոս), որի անփոփոխ ձևը կըլինի վեցկի: Է-ով սեռականի հոլովակազմիչը անծանոթ է հին գրական լեզվին կամ միջին հայերենին, սակայն շուտօր է կարծել, թէ վեցկէ գրութիւնը բնագրի հեղինակի կամ փորագրողի սխալի հետևանք է. ի հանդող բառերի, հատկապէս անձնանունների հոլովման համակարգում է հոլովակազմիչը օրինաչափ իրողութիւն է սեռ. արական հոլովներում է հանձափ է հանդիպում ժ—ԺԳ դարերի վիճագրերում եւ ձևադրերի հիշատակարաններում, այսինքն խոսակցական լեզվի ներթափանցումներով առատ գրական հուշարձաններում:

Բառիս մյուս վկայութիւնը Վայոց ձորում է, Նորայանքի Ս. Կարապետ եկեղեցու պատին փորագրված արձանագրութեան մեջ, ժԳ դ. առաջին կեսին. «Ես՝ Գաւթի կրտսեաւոր ետո իմ ինչր ի Սուրբ Վկայս, Խաչերծտոի ե Յայամաւոր եւ վեցկի եւ : Ի : յշխարս» (Գ III 213): Վեցկի կարդացվում է նաև Քանատի վանքի Ստեփանոս

³²⁸ Մ. Ռոմանյեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, էջ 103:

հուշարձանի հյուսիսային պատին, ժԳ դարավերջին փորագրված նվիրագրում. «ես՝ Քաճաճըս, դուսար Մխիթարս, թոռն հայաշահնի սվի : Ա : վեցկի իմ գերեզմանատունս» (Գ III 79) : Բառիս մյուս հիշատակությունները գտնում ենք Սանահնի վանքի ԶԺԳ (1264) և ԶԻ (1271) թթ. արձանագրություններում, ըստ որում այստեղ վեցկիին բնութագրվում է Ը—ՈՅ որոշիչով (նարկոց) : «ես՝ տէր Յովնանէս... ետու կարմնի մեծածախս պահարանն եւ էտու Ը ոց վեծկի պատրաստակեան» (ԶԻ) : «Հայրս Կիրակոս՝ առաջնորդ Սուրբ Ուխտիս, աշակերտ եղարքս ետու : Ը : ոց վեցկի եւ մեծածախս գաւազան, : Գ : շրջուս եւ այլ արդինս» (ԿՂՍ 118, 152) :

Հիշյալ բնագրերում հստակ երևացող վեցկի, վեծկի առաջարքը երկար ժամանակ անբացատրելի առեղծված է եղել վիճագրերն ուսումնասիրողների համար : Այսպես, Բրոսնե Սանահնի ԶԻ թվականի Ընոց ոսկի (ըստ Հովհաննես Ղրիմեցու բնթերցման) թարգմանել է 8 ոцц золота, անհասկանալի համարելով ուրևոց ոսկու ինչ լինելը, այսինքն ինչ կշռաչափի ոսկի լինելը : նույն հեղինակը Սանահնի ԶԺԳ թվականի վեցկի մեծածախս գաւազան (ըստ Ղրիմեցու բնթերցման) վարձանում է шесть драгоценных посохов, որ ընդհանուր ունին շունի բնագրի հետ³²⁹ : Կ. Բասմաշյանը Անիի, Բագնայրի և Մարմաշենի արձանագրությունների ֆրանսերեն ժողովածուում Անիի Մար ասճարի վիճագրի՝ զվեցկի կոր ֆր. թարգմանել է six cotées, այսինքն վեց կոս (КВА 36), որ նույնպես հնուս է երականից և անհիմաստ : Վեցկի կորը վեց կոս է ընկալել նաև պրոֆ. Ս. Հակոբյանը³³⁰ :

Կ. Ղաֆադարյանը ստույգ վերծանելով Սանահնի առաջին օրինակը՝ Ը ոց վեծկի պատրաստուրյան, երկրորդը կարդացել է՝ Էրչոց, վեցկի, որ հնուս է բարի վրա փորագրվածից :

Ներկայումս, երբ հավաստի վերծանված և դիտականոթեն հրատարակված են վեցկի բառի բոլոր վիճագրական վկայությունները, կարելի է պարզել նրա նշանակությունը և առուգարանությունը : Անտարակույս է, որ վեցկի ծագում է վեց թվականից և նախապես նշանակել է այն արորը կամ նախագուլթանը, որը բանեցվում էր վեց (եե՛ք գույզ) եզնեկով կամ գոմեշներով : Բառիս կազմության

համար պետք է մատնացույց անել հին գրական հայերենի վեցեակ գոյականի սեռական հոլովածը՝ եւս երկարբարսի պարզումով՝ վեցեկի, կամ վեցակի, որից ա եւ ե ձայնավորների անկումով, որ սովորական է խոսակցական լեզվում և հատկապես ժամանակի այլ վիճագրերում՝ վեցկի (հմտ) : Հենց Անիի նույն բնագրում՝ Բագրուս < Բագրատ, Բզներ < Բագվեյր, բածուր < բածուր, Աշնկի < Աշնակի, ձնեվորահակ < ձնեուտ և այլն) :

Հր. Աճառյանը վեց արմատի զավառական ձևերում վեցկիին հիշում է իբրև նորագոյացում, սակայն նրա հնազույն վկայությունն է համարում Անիի 1056 թ. զվեցկի-ն, որ առարկում է այդ կարծիքին³³¹ :

Ինչպես տեսանք, Սանահնի վիճագրերում վեցկին հանդիպում է Ը ոց որոշիչով, որ բառ Կ. Ղաֆադարյանի ստույգ մեկնումիսն, պետք է հասկանալ ուրևոց վեցկի, ուրևոց արոր, այսինքն մեծ արոր կամ նախագուլթան, որ գործի էր զրվում ութ (չորս զույգ) եզներով :

Արդի մի քանի խոսվածքներում վեցկի բառը պահպանվել է անփոփոխ կամ հնչյունական օրինաչափ փոփոխություններով : Այսպես, Բարեղդի խոսվածքում ունենք վեցկի = վեց լուծանի գուլթան, երեսնի բարբառում՝ վլսխի, հոշի և Արցախի բարբառներում՝ վոսկի, Վանի բարբառում՝ վիծկի = արոր իմաստով, առանց տարբերակելու նրա հզորությունը³³² : Վեսկի, վոսկի ձևերում ս սուլականի առաջացումը բացատրվում է վեցկի բառից և կիսաշփականի պարզումով—Ց = Թ + Ա և Թ շնչեղ-պայթյակների անկումով՝ վեցկի > վերսկի > վեսկի :

124. ՏԱԿՈՊԵՏՈՑ

Այս գրությունը բառու հիշատակվում է Օձուն գյուղի մոտ գրանդղող Հոսոմայր հուշարձանախմբի ներքին կենդեցիների գավթում կանգնեցված Տերունական խաչարձանի ընդարձակ արձանագրության մեջ : Այս կարեւոր բնագրեր փորագրվել է խաչքարի միակտոր

³²⁹ И. Крымский, Описание..., էջ 45, 46 :

³³⁰ Ս. Հակոբյան, Հայ գյուղացեացիական պատմություն, 1967, էջ 317 :

³³¹ 2. Աճառյան, Հայ. արմ. բառարան, 2, 651 :

³³² 2. Աճառյան, Հայ. գավառական բառարան, էջ 1000 :

պատմանդանի երեք երեսներին, ՈՍ (1201) Բվականին, պահպանվել է գրիթն անազարտ և կարդացվում է անսխալ: Չնայած դրան, բանասիրության հայտնի է միայն Ս. Ջալալյանցի ընդորհակալությունը, որը Բերի է և ունի զգալի այլընթերցումներ: Այստեղ մեջ ենք բերում տակապետոց վկայությանը հատկապես մեր վերծանությանը: Ե: ՈՍ: կանգնեցաւ տէրունականս: Ես՝ Առաքեալ, որդի Գրիգորի... շինեցի զգալիս, կանգնեցի զտէրունականս և ի ժամանակի ձնբութեան իմոյ ետու յիշատակ հոգո իմո և զբաւական փրկութեան անձին իմոյ աւուրն աշխարհութեան: Արևի և զմատնարկն, շինեցի տակապետոց... և ետու զմատնարկն ի քրատուն...», հետևում են հատուցման և անեծքի ձևակերպումները (ՍՃՃԱ 93, ՎՏ 45):

Արդ, ինչպե՞ս հասկանալ տակապետոց <տակառապետոց բառը, կամ ի՞նչ է կառուցել ու նվիրել վանքին Առաքելը: Հայերենի բառարաններում գրական աղբյուրների տակապետի վկայությունների հիմամբ բառի ծագումը զբովում է փոխառյալ տակաւ = գինու կարտա արմատից, որի միակ վկայությունը հանդիպում է Լաստիվերցու երկում՝ պահաւ կամ պակաւ տարրնեբրցումներով:

Լաստիվերցու Պատմության քննարկական քննությունները պարզում են, որ վկայված իրադրության մեջ խնդրո առարկա բառը անհրաժեշտ է վերականգնել ոչ թե պակաւ (<տակաւ), այլ պահաւ, որ կարող էր նշանակել պահեստ, շտեմարան, մառան³³³:

Տակաւ արմատից է սերում տակառապետ (տակառապետի տակառապետություն) բառը, որ նշանակում է մատակարար, մատրովակ: Տվյալ բացատրությունը տալիս է նաև Երմիա Մեդրեցի, տակառապետ բառահոգվածի առի ղեկով: ամենեցուն ըմպելեաց վերակացու կամ մատուցակց գլուխ³³⁴: Հ. Անճադյանը տակառապետ և նթագրում է պ՜. *takarpat ձևից, որ սլաբական պալատական ախադս է, բառ Ստ. Մալխասյանցի՝ արքունական սեղանի ըմպելիքների վրա հեղող պաշտոնյա կամ գլխավոր մատուցակ³³⁵: Հայագետ Յ: Կարսար համարել է Անճադյանի հետ, սակայն տա-

կառապետ բառի ծագումը դնում է ոչ թե պահպական *takarpat պատրաստի ձևից, այլ տակաւ արմատից, որ բանիցս վկայված է Անիի և արձակաչքի վիժական արձանագրություններում տակառ կամ տակաւթ-ի ձևերով (KWM): Այսպես, Հոռոմոսի վանքում ԺԳ դարի կեսերի մի նվիրագրում ունենք. Վարդանի՜ Վարդանց էտու զիմ գանձագին կուղպակն և ի ներհեն տակաւաի յԱնի: Նույնը Արք աղի՜ն տամարի մի քնագրում. «...և տակաւաի : Բ : աւր Պետրոսայ» (ՍՄԲ 115): Այս օրինակներում տակաւաի նշանակում է ներկող, ստան, ներհետում, զինու կրպակ նկարում, և կարող էր առաջանալ տակաւթ ձևից՝ ի վերջածանցի հավելումով:

Մեր քննության առարկա տակապետոց (<տակառապետոց) բառը այլուք հայտնի չէ և միայն ծագումնաբանական աղերս կարող է ունենալ վերը հիշված տակառապետ բառի հետ: Անտարակույս է, որ վկայված իրադրության մեջ՝ առիկ և զմատուցելն, շինեցի տակապետոց, բառա բմպելիքի վրա հեղող կամ գլխավոր մատուցակ նշանակությունը չունի, այլ՝ նորոտունի ալգում կառուցված խազողի մշակման կամ զինի ստանալու և պահպանելու հետ առնչող շինություն՝ հնձանի իմաստ, որ այս վերջին ձևով բազմիցս հիշատակվում է Ժ—ԺԳ դարերի վիժագրության մեջ: Այսպես մոտենալով հարցին՝ հաջով թե հնարավոր լինի տակապետոց բառիմաստի առաջացումը դեկ հին գրական հայերենի տակառապետ (տակառապետի, տակառապետություն) իմաստից: Ավելի հավանական է թվում բառի ծագումը համարել հայ մի բանի բարբառներում պահպանված՝ տախար, տաքար, արմատից, որ նշանակում է զինու հոտ, հնձանի ավազան, ֆաղցու եփելու կարաս³³⁶, Ըստ այդմ, տակառապետոց, տակապետոց կարող է նշանակել այն վաչքը, շնձքը, հնձան, որտեղ գանվում էր զինու հորը, հնձանի ավազանը, մի խոտքով, այդու մեջ կառուցված այն շինությունը, որտեղ մշակվում էր միրգը և պահպանվում ստացված զինին կամ մնացած արտադրանքը:

Մեր այս մեկնությունը չի կարելի սպառել համարել, բանի որ այս ղեկարմ բազմաբար բացատրություն չի ստանում պետ բառադրերի աեկությունը տակապետոց բարբուլության մեջ:

³³³ ՏՊ. Повествование варданаeta Аристкаеса Ластивертци, М., 1968, էջ 98, այստեղ պահաւը Բարդանեզում է хранящие.

³³⁴ Բարդերը հայոց արարեալ Երմիա վարդապետ, էջմիածնի, 1728, էջ 439.

³³⁵ Հբ. Անճադյան, Արմ. բառարան, Զ, էջ 746, Ստ. Մալխասյանց, Բաց. բառար., էջ 365.

³³⁶ Հ. Անճադյան, Հայ. գաղտնական բառ., էջ 1021, Ս. Ամատունի, Հայոց բառարան, էջ 621.

Տանձույալ առաջաբերի վկայությունը Հ. Աճառյանը բաղել է Հալոյց թափ արձանագրություններից և տեղագրերի Վերամտական բառարանում», իբրև հայերենի անհայտ իմաստով նոր բառարմատ: Բնագրի համադաստասխան հատվածը բառ Մանկունու ընդօրինակության կարգաջզվում է. «Ես՝ Գիրք և ամուսին Շարարս միարանեցի Ամենափրկչիս և զնեցար զՏանձույան, Զոչիկին, որ ընիս սպ և տուար ի սուրբ ուխտս...»: 4. Կոստանյանցը «Վիճակյան տարեգրում» արատագրելով այս արձանագրությունը՝ Տանձույան մեծատառ է դնում, այսինքն դիտում է իբրև դաշտամասի անուն (ՎՏ 136): Աճառյանը առարկում է զրա ղեմ և իր հերթին փորբաքառով գրելով նույն բառը, անհայտ իմաստով նորագյուտ արձատ է համարում³³⁷:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ Գիրք և Շարար ամուսինների նվիրագրության մեջ Տանձույալ բառը չի կարգաջզվում և բնագրի ոչ ստույգ ընդօրինակության արդյունք է: Վրիպումը առաջինը մատնացույց է արել Թ. Ավգալբեզյանը «Մի դաղտեիք...» հայտնի հոդվածում, որտեղ հեղինակը առանց արձանագրության նոր, ավելի հավաստի վերձանություն, դատողության ուժով ճշտում է Մանկունու թույլ տված աղավաղումները³³⁸:

Ավելի ուշ Գ. Լոճվափյանը հրատարակելով նույն արձանագրությունը, իրականի հետ ավելի նույնական ընդօրինակությամբ, ցույց է տալիս, որ Տանձույան սխալ բառանջատման արդյունք է և արհեստական (ԳՂԶ 23): Ահա բննությունը առարկա հատվածի նորագույն, ստույգ վերձանությունը. «Ես՝ Գիրք և ամուսին իմ Շարարս միարանեցար Ամենափրկչիս և զնեցար զՏանձույանցո Շիկի նորքի ի Ռ: սպիտակ և տուար ի սուրբ ուխտս» (ՄՀ): Այսինքն, Գիրք և Շարար նվիրատուները հազար սպիտակ դահլիճանով զնել և Հալոյց թափ վանքին են նվիրել Տանձույանը (<Տանձույանը) դաշտամասում գտնվող Շիկի նորքը (այդի նորատունկ): Ուրեմն այս բնագրում տանձույալ բառ չկա և այն պետք է հանել հայերենի բառարմատների թվից:

³³⁷ Հր. Աճառյան, Հայ. արմ. բառարան, 2, էջ 772:

³³⁸ Թ. Ավգալբեզյան, Հայագիտական հետազոտություններ, 1969, էջ 317:

Այս առաջաբերը վկայված է Հոռոմոսի վանքի և Արջուտիճ հուշարձանի երկու նվիրատվական արձանագրություններում, որոնք բանասիրությունը հայտնի են ն. Սարգիսյանի միակ, անստուգելի ընդօրինակությամբ, որ մեջ ենք բերում անփոփոխ: Հոռոմոսի վանքում, հավանաբար ԺԳ դարի կեսերին. «Ես՝ Վարդաճիժ Վարդանյան կտու զիմ զանձազին կուղպակն և ի ներքին տակառքի լլնի, ի վերի փողոցին, քանկից է Տիգրանե...» Արջուտիճի տանգրի պատին, նույն ժամանակներին վանքին նվիրված այլ արձանների շարքում՝ «Եվ տակառքի Ռ: ար ժամ Պետրոսու» (ՍԱԲ 152, 192):

Տակառ(ի) բառը գրական աղբյուրներում և արդի խոսակցական լեզվում չի հանդիպում, և նրա մեկնությունը չենք գտնում հայերենի բառարաններում: Արդյոք մեջ բերված վկայություններում խոսքը սովորական տակառներ (տակառ) նվիրարերիլու մասին է, թե տակառի կազմությունը նոր, անձանոթ հասկացություն է արտահայտում: Հոռոմոսի և Արջուտիճի վկայություններին առաջինը անդրադարձել է Մ. էմինը և այդ բնագրերը ուսուներեն թարգմանելիս տակառի-ն անհասկանալի համարելով բաց է թողել (ԻՊՅԱ 35, 70):

Ավելի հիմնավոր հիշյալ բառիս վկայությունները բննում է հայագետ Կարսոթ՝ միջին հայերենի իր անտիպ բառարանում: Երկու դեպքում էլ Կարսոթ տակառի-ն հասկանում է իբրև տակառ բառի զրարարյան հոդանակին՝ տակառ, բառ որում էսպիս շղեկով Սարգիսյանի բառանջատումը: Ըստ Կարսոթի առաջին վկայությունը պետք է կարգել՝ էտու զիմ զանձազին կուղպակն և ի ներքին տակառ ի լլնի, որպես թե նվիրատուն Հոռոմոսի վանքին է ընձայել տակառ ի լլնի, այսինքն՝ տակառներ Անիում: Ի նախդիր կրկնությունը (ի լլնի) սպասելի էր Անիի և մերձակալքի այդ դարերի վրձնագրության մեջ և չի կարող լուրջ առարկություն հանդիսանալ սովյալ վերձանության համար: Հարկ է նշել, որ տակառ բառը գրական երկերում լայն տարածում չի ունեցել և ավանդված է միայն կաստիվեցոյ միակ, այն էլ անստույգ վկայությամբ պահառ, պակառ, որ հետազոտողները ինքուրույն բառ են համարում՝ պանես, պանեսան իմաստով, ուրեմն անկաս տակառ արմատից

(տես Թակղպետաց բառաճողվածք)³³⁹, ինչպես նաև նույն բառի մի քանի ավանջավոր կողմություններով (Թակղապետ, Թակղապետարիւն): Նույնն է վիճակը նաև արդի բարբառներում, ուստի բառիս ինքնուրույն գործածությունն Անիում անհավանական է դառնում: Կարսուր միաժամանակ աստղաբերում է կուլժպակն ևս ի ներքին Թակղախի վերծանելի կուլժպակը և իր միջի (Թակղախն): Ստացվում է, որ Հռոմոսի վանքին նվիրել են կրպակը և նրա մեջ դռներվող Թակղաները: Այս բացատրությունն և մանավանդ արձանագրությունն նման բառարամանման հետ թվվար է համապատասխան, և ահա թե ինչու. նախ, և թե խոսքը ԹակղաճԵՐ (Թակղախ) նվիրելու մասին լինել, սպասելի էր այդ բառի օրինաչափ նախորդով հայացական հոլովք՝ գտակառու կամ Թակղառ ձևը և ոչ թե Թակղախ(ի), և այսպե, Անիի և մերձակալքի մի շարք հուշարձանների վիճազրությունն մեջ բազմիցս հանդիպում է (ի) ներքին (նաև ի վերև) մակրայր, ամենուրեք ներքև, ներքևի մասում, ցած, ցածում՝ նշանակութամբ, և հայտնի չէ որևէ վկայություն, որտեղ ներքև-ը կիրառված լիներ (ի) մեջ կապի փոխարեն (հմտ. Հռոմոսի վանքում. «էտու... դիմ գանձազին կուլժպակն... ներքի դիմն քանեկից է Աւետիցն», «: թ: կուլժպակի կտերն, մեկն ի վերա կուլժպակին է և մէկն իւրենն գիւմաց, որ դաղայն է ներքև...» «Փռկարարաց կուլժպակն ևս տունն ի ներքեն», «Ես՝ Խաչերես... Ետու դիմ գանձազին և թե կուլժպակն ի շարի, վեց ի վերեն և մին ի ներքեն, մղթիին ընդդեմ ևս էրեք տուն ի ներքեն», Բագնալարում՝ «տուաք զմեր տաճարն ևս զսարաույթն ևս ի ներքեն տուն ի Ս. Աստուածածնիս...» և այլն (ՍԱԲ 155, 156, 179):

Ոչ մի տարակույս չի կարող լինել, որ հիշված օրինակներում (ի) ներքև մակրայր գործածված է միայն և միայն ներքև, ներքևի մասում, ցածում իմաստով և ոչ մի հիմք չկա այն հասկանալի իբրև (ի)մեջ կապ:

Մեզ ավելի հավանական է թվում կարծել, որ Թակղախ(ի) բառը ծագելով Թակղա արմատից (< Կ՛հլ. *lakar, պարս. takar = կարսա, ասփար) վկայված իրարությունն էն հանդես է գալիս իբրև նույն բառի անեղական ձևը (Թակղախ), որն ի գոյականակերտ վերջա-

ծանցի հավելումով ստացել է ինքնուրույն նշանակություն, արտահայտելով՝ Եկուղ, մասան, ներհատուն, ներհանախ, գիւս և կուլժպակն կրպակ բառիմաստները:

Այսպիսի բառիմաստի առաջացումը վաճառաչ՝ Անիում օրինաչափ է. բաղադրի սկզբումները ցույց են տվել, որ Անիի առևտրական և արհեստավորական թաղամասերում կամ շարքերում շինությունները կրկնաճարի են եղել, ընդ որում ներքնաճարի սենյակներում համաի տեղավորված են եղել արհեստատեղները և խառնով-կրպակները, իսկ վերնաճարում՝ անցքիներ ընկալարանները կամ հյուրանոց-խանայարները, փնդուկները: Հենց մեջ թիքած արձանագրություններից պարզվում է, որ վարդաճիթ վանքին ներկրել է Անիում գտնվող իր կրպակը, որի ներհանախը (ի ներքեն) նկուղ, մտան կամ զինեանաղի կրպակ է եղել (Թակղախ): Ինչպես արդեն նշել ենք, ի ներքև կարող է արտահայտել նաև Հորդոսական հնավորության իմաստ, բայց այժմ, մեր թվարկած մի քանի դեպքերում առկա է հենց այդ կիրառությունը (տուաք զմեր տաճարն և զսարաույթն ևս ի ներքեն տուն):

127. ՏԱՍԱՆՈՒՐԶԱՄ

Այս բարդությունը փորագրված է Արցախի Դադի վանք հուշարձանաձմերի կաթոլիկե կեղծիցու արձնալան պատի ՈԿԳ (1214) թ. շինարարական-նվիրատվական արձանագրության մեջ, որտեղ բընադրի համապատասխան հատվածը Ս. Բարխուդարյանի վերծանությունը կարգաջվում է. «Ես ևս կամաք տուի ի Ս. կաթոլիկէն : Ա: շարեցահող, : Ի: շինակնատուն, : Ա: վաղաց, արձախի տուփ ևս ստառաշորջառ պատուական...», հետևում են հատուցման և անեմքի բանձները: Այս կարևոր քնադիրը այլևայլ տարնվիրացումներով հրատարակվել է քանիցս, սակայն նրա սպառել մեկնարանությունը, հատկապես նրանում հիշատակված մի շարք բառերի քննությունը չի կատարված, որի հետևանքով ամբողջ արձանագիրը մնացել է բոս էություն չբացահայտված: Անորոշ բառերից է վանքին նվիրված կալվածքների շարքում հիշատակված ստառաշորջառը, որ քնադրի նախորդ հրատարակումներում մթազնել, չի վերականգնվել: Բարդությունը զրական աղբյուրներում չի հանդիպում և

³³⁹ Повествование вардапета Аристакеся Ластивертци. М., 1968, էջ 98, արտեղի պ հարթ թարգմանված է քրավիստե.

այդ պատճառով տեղ չի գտել բառարաններում: Դադի վանքի վիճակագրերը հրատարակողները բառի մեկնությունը չեն անդրադարձել:

Տառաչուրջառ բարդության իմաստը պետք է մակարերել շուրջառ բաղադրիչից, որ նշանակում է փիլոն, նափոռ, կոզոր, աղաբողոն: Շուրջառ միջին դարերի վիճակներում բազմաթիվ վկայություններ ունի, ոչ միայն ինքնուրույն կիրառությամբ, այլև մեծ մասամբ որևէ որոշիչով, որ բնութագրում է այդ հազուադեպ հատկապես ինչ նյութից կամ գործվածքից լինելը: Այսպես, ունենք՝ շուրջառ նասիճ, շուրջառ առլաս, շուրջառ մախմուր, նափոռ նասիճ, շուրջառ վառ և այլն: Իսկ ի՞նչ է նշանակում տառաչուրջառ բարդության տառ բաղադրիչը: Մինչև բնագրի հավաստի վերծանությունը, հակված է ինք կարծելու, որ տվյալ տառաչաբբը սխալ է բնագրիցնակված և պետք է լինի՝ տեսաչուրջառ, այս ղեպում դյուրին կլինի նրա ստուգաբանությունը՝ տեռից, շլառից, բարակ գործվածքից կարված հագուստ, վերարկու: Սակայն համոզվելով, որ բարի վրա փորագրված է տառաչուրջառ, առաջարկում ենք նրա հետևյալ ստուգաբանությունը: Ակներև է, որ տառ բառը տվյալ բարդության մեջ ցույց է առլիս շուրջառի ինչպիսի՞ն, ի՞նչ նյութից կամ գործվածքից կարված լինելը, ուստի հարկ է պարզել տառ արմատի իմաստը: Տառ արմատական բառը առանձին գործածական չէ հայերենում, սակայն պահպանվել է տառասոց բարդության մեջ, որ կազմված է տառ = մորթի և տոկ = մուլտակ, վերաբեր արմատներից և նշանակում է մորթի վերաբեր, մուլտակ³⁴⁰: Այստեղից, Դադի վանքի 1214 թ. արձանագրության մեջ ավանդված է տառ = մորթի արմատի երկրորդ կիրառությունը (առաջինը՝ տառասոց) տառաչուրջառ բարդության կազմում, որ նշանակում է մորթի կամ կաշվե շուրջառ, նափոռ:

³⁴⁰ Է. Աղայան, Բառարանական և ստուգաբանական հնագիտություններ, Ե, 1974, էջ 141—142:

Այս տառաչաբբը վիճակում է իտրանաչառի տաճարի արևմտյան պատին, մուտքի վերևում փորագրված նվիրատվական արձանագրության մեջ, որի միակ ընդգրկնակությունը տալիս է Կ. Ղաֆադարյանը: Ահա ամբողջ վիճակը ըստ այդ վերծանության. «Ի Ս՛ՂԵ (1246) նուսատ ծառս սասուծոյ ևս՝ տէր ներսէս Աղուանից կաթողիկոս միաբանեցա ի իտրանաչառտ Սըրոյ Աստուածածնիս, յիշատակ հաստատելոցն զառգ լեկեղեցիս իր խորանաբն, և և՛ ու՛մար վանական վարդապետն՝ շիեղի վանքս, ի տանի Ս. մուղղոյն նիկիս. փրկեալ Քրիստոսի Բարինա թոյր ծալալին, մայր Տենորդե»³⁴¹: Ինչպես նկատվում է, տվյալ հրապարակումով արձանագրող ոչ մի չափով չի ամբողջացնել և, ընայած տառածների անաղարտ պահպանությանը, շատ կետերում անորոշ է ու կասկածելի: Այսպես, երկրաչառի է նվիրագրի հեղինակը, եթե նախաբանում իտրանաչառ վանքին միաբանել ու պատարագածում է ստացել Աղվանից (իմա Արցախական աշխարհի) կաթողիկոս Ներսեսը, ապա շարունակության մեջ հիշատակված է նաև Տենորդեի մայր և Ջալալի թույր ում Բարինա, որի առնչությունը Ներսեսի կամ նվիրագրի հետ զմար է որոշել:

Վերծանողը տվյալ բնագիրը մեջ է բերել իտրանաչառի վանքը հիմնող վանական վարդապետի հիշատակության առիթով և նրա պարագաներին չի անդրադարձել: Հր. Աճառյանը հիմք ընդունելով Ղաֆադարյանի սույն վերծանությունը, Տենորդե կազմությունը ար. անձնանուն է համարում, առաջացած տէր—սեռ. տեսանք + որդի բառերից՝ Տենորդի, որի սեռականը ե հանգով՝ Տենորդե»³⁴²:

Իտրանաչառի սույն արձանագրության լրակատար, ավելի հավաստի ընդգրկնակությունից պարզվում է, որ՝ Ա. Աստվածածնի եկեղեցու մուտքի վերևում փորագրված են երկու առանձին, ինքուրույն նվիրագրեր, որոնք Կ. Ղաֆադարյանի վերծանությամբ ձուլվել են իրար և ներկայացվել իբրև մեկ ամբողջական բնագիր, Բարձանագրության՝ փրկեալ Քրիստոսի բառերով սկսվող մասը:

³⁴¹ Կ. Ղաֆադարյան, Պատմահայագրական դիտողություններ նոր-բերդի կուրիական իշխանության մասին, Տեղեկագիր ԱրմՖանի, 1935, № 4—5, էջ 177:

³⁴² Հր. Աճառյան, Հայ. անձն. բառարան, Ե, էջ 142:

նախորդի՝ ներսև կաթողիկոսի նվիրազորի հետ կապ չունեցող, ինքնուրույն ավարտուն հրշատակազոր է, որ Ղաֆազարյանի հրապարակման մեջ մնացել է թերի, անավարտ: Անա երկրորդ նվիրազորի մեր վերանությունը. սփրիկալ Քրիստոսի Բարխեմա՝ թուր ձալալին, մայր տեղեորդև Կիրիկի միաբանցից աք նեմանիս եւ ետու արդինս...», հետևում են հատուցման ու անենթի բանաձևերը (ՄՀ):

Թևև Բարխեմայի այս արձանագրերն անթվական է, նրա փորագրումը նախորդին ժամանակամերձ պետք է լինի, այսինքն ՈՂՆ—1246 թվականին, կամ դրանից որոշ ժամանակ անց: Տեղեորդև ձևի բառարևնության առումով կարևոր է որոշել Բարխեմայի նվիրազորի և նրանում հրշատակված անձերի ժամանակագրությունը:

1. Նվիրատու Բարխեման՝ ձալալի բույրը, Կիրիկի մայրը, այլ աղբյուրներից հայտնի չէ և չի կարող կուլում ծառայել բնազորի ժամանակը որոշելու համար: Կյուրիկյան իշխանների տոհմազորությունից հայտնի է Կյուրիկե Գ թագավորի հինգ դուստրերից կըրտաներ Բարխեման, որը անգավորել լինելով, խնամակալեց իր կղբորը՝ վաղամեռիկ Աբաս Բ թագավորին ու Աղսարթանին, 1181, 1200 թթ. մասնակցեց Սանահեի և Հաղբատի վանական շենքերի կառուցումներին (ԿՂՍ 114, ԿՂՀԲ 175—176): Այս Բարխեման չի կարող ետրանաշատի քննության առարկա նվիրազորի հեղինակը լինել, քանի որ ըստ հավատի տոհմազորության ձալալ (= Ջալալ) անունով կղբայր և Կյուրիկե անունով որդի չի ունեցել:

2. Բնագրում նշված՝ Բարխեմայի եղբայր ձալալը ևս այլուր չի հրշատակված, պատմությունը հայտնի չէ, և ընայած աղբյուր ժամանակների մոտիկությունը, անհնար է նրան նույնացնել Արցախական աշխարհի հայտնի տիրակալ Հասան Ջալալի հետ. դրա դեմ առաքելում է ամեն ինչից բացի նաև վերջինիս տոհմածառը, ըստ որի Հասան Ջալալը ունեցել է 3 կղբայր (Ջաբարի, Իվանե, Նասր-Գալալ) և մի թույր, բայց Մարիան անունով³⁴³:

3. Նվիրազորի՝ Բարխեմայի որդի Կիրիկի ամենայն հավանականությամբ Մամնարեղի իշխան Կիրիկի Թագրատունին է, Աղսարթան Ա-ի որդին, որ ցայժմ հայտնի էր միայն Կիրակոս Գանձակցու մի վկայությունից. «Եւ այսա Տէրունականն, և ի յերգեզման-

քրն, և ի Մամնարեղ, զոր ունէր Կիրիկէ Թագրատունի, որդի Աղսարթանայ»³⁴⁴, Այս Կիրիկի Թագրատունի՝ քննության առարկա արձանագրից, իրրի միաբանող հրշատակվում է նաև նույն ետրանաշատի ՈՂՆ (1246) թ. հետևյալ բնագրում. «Ես» Կիրիկի միաբանեցա ի Ս. Ածամինս, և հայր Պաղոս եւ Վանական Վարդապետ ի խումշ շինող վանից, հաստատեցին մեզ Գ սեղան պատարաց ասաց եկեղեցիս, Բ յայնուրեան տանին, Բ փոխման»³⁴⁵, Այստեղ Կիրիկին հանրես է գալիս առանց տխրոսավորման և տոհմազրական տեղեկությունների, նվիրագրում չեն նշված միաբանողի բնածայած արժեքները, սակայն հատուցված պատարացածածների քանակից երևում է, որ դրանք պատկանելի են եղել, արժանի Կյուրիկյան տոհմի շատավորների հեղինակությունը: Բառացիորեն նույն ձևակերպումն ունեն նաև Աղվանից ներսև կաթողիկոսի և Կյուրիկեի մայր Բարխեմայի վերնում իբրևում նվիրազորը, իբրևություն, որ լավագույնս ապացուցում է միաբանողների բարձրաստիճան հոգևոր կամ աշխարհիկ անձեր լինելը:

Տեղեորդև որոշիչը՝ դրված Կիրիկի անվան վրա նույնպես վերկայում է, որ վերջինս սովորական, շարքային մահականացու չէ, այլ Կյուրիկյան թագավորական, իշխանական տան ազդեցիկ ներկայացուցիչներից մեկը՝ Մամնարեղի տերը, որի մասին նրա մայր Բարխեման փորագրել է առլիս՝ մայր տեղեորդև Կիրիկի—տիրոջ որդի Կյուրիկիս մայրը:

Այսպիսով, շտաբիկելով տեղեորդև բարդություն՝ Անճույանի առաջարկած ստուգարանությունը, գտնում ենք, որ Բարխեմայի նվիրազորի վկայված կապակցություն մեջ այն չպետք է անձանուն համարել, ինչպես վարվել են բնագրի վերծանող Կ. Ղաֆազարյանը և այդ հիմամբ բառս ստուգարանողը: Արձանագրի լրակատար վերծանությունից երևում է, որ նրանում տեղեորդև անունով անձ չի հրշատակված, և այդ բարդ կիրառված է իրրև որոշիչ Բարխեմայի որդի, Մամնարեղի տեր Կյուրիկի Գ-ի (բայ Գ. Մովսեսյանի՝ Կիրիկի Գ)³⁴⁶, ըստ այսմ, տվյալ նախադասությունը՝ Փեղկալ Քրիս-

344 Կ. Գանձակցի, Պատմություն Հայոց, Ե, 1961, էջ 243:

345 Կ. Ղաֆազարյան, ՊատմաՇնագիտական դիտողություններ..., էջ 175:

346 Գ. Մովսեսյան, Լոսի Կյուրիկեան թագաորներու պատմութիւն, Վիեննա, 1923, էջ 67:

343 Թ. Ուլստրայտն, հաշիկի իշխանությունը I—XVI դարերում, Ե, 1975, էջ 453:

տասի Բաւրիեան, Բոյր ձալալին, մայր տեւեռողեա կիւրիկի միարանեցա, պետք է հասկանալ՝ Քրիստոսի փրկած Բաւրիեան, Զալալի Բոյր, տիւրողի (=տիրեղ ուղի) կիւրիկէն մայր միարանեց... և այլն: Փրկեալ Քրիստոսի Բաւրիեան կապակցությունը կարող է ակնարկ լինել կամ Բաւրիեայի առաջացած տարրի, կամ որևէ արհաւիրքից ազատվելու, անտից ապաքինվելու մասին: Տեւեռողեա կիւրիկի սեռ, արական հոլովածն է տեւեռողի կիւրիկի կապակցութեան, բոս այսմ, ի հանդիպումները այդ հոլովներում օրինաչափորեն ունենում են ե կամ է հոլովակազմիչ, իբրև արդյունք՝ ի+այ=իայ>եայ>է հնչյունափոխութեան՝ տեւեռողի>տեւեռողիայ>տեւեռողեայ>տեւեռողե, տեւեռողէ³⁴⁷:

129. ՏԻՐԱՄԱՒՐՆ (<ՏԻՐԱՄԱՅԻՐ), ԹԵ՝ ՄԻՐԱՅ, ՄԱՒՐՆ

Այս անորոշ անձնանունը Ս. Բարսիւղարյանը վերծանել է Վարդենիկի գերեզմանոցում կանգնած խաչքարի ՉԻՔ (1290) թ. հիշատակագրում. «կանկնեցա Ս. խաչս իշխանութեան բարեպաշտ արքայի Ամիր Հասանայ, բարէխառ Շահնայ և Միրայ, մարն եւ զաւակաց իւրոց» (Գ IV 150): Իրոց, ո՞ւմ բարխառութեան համար է կանկնեցվիլ խաչարձանը, կամ ինչպես վերծանել տապանագրի անձնանունները: Այս բնագրի առաջին վերծանող Սմբատյանցը և սրա հետևողները կալանքի մովայ մասում ունեն՝ բարխառ տեւեռանայ և Միւրայ՝ մարն և զաւակաց իւրոց, որ անիմաստ է, բանի որ Շահանն ու Միրը զիտված են իբրև ինչ-որ նորոգ անձի մայր և զավակներ: Բարսիւղարյանի բառանշտումից հասկացվում է, որ խաչքարը կանկնեցվել է ի բարխառություն Շահնայ (=Շահան), Միւրայ (<Միր), մարն և զաւակաց իւրոց, բոս այսմ, ենթադրվում է, թէ Շահանն ու Միրը ամուսիններ են:


Այս մեկնությունը անհավանական ենք համարում 2 պատճառով. ա. ինքն անգամ ընդունենք Միր-Միւրայ ընթերցումը, ապա այն բացառվում է, բանի որ արական անձնանուն լինելով, չի կարող ներ-

կայանել Շահանի կնոջը, ինչպես ստացվում է ավայ վերձանութեամբ:

բ. Բնագրի եւ Միւրայ մարն տառաչարի ընթերցումը ճշգրտման կարգի է զգում. լուսանկարի վրա պարզ երևում է, որ առաջին գիրը ոչ թէ Մ պետք է կարգալ, այլ Տ, բանի որ նրա հորիզոնական սանդղե ուղի չէ, ինչպես ողորմի, Ամիր Հասան, մարն բառով, այլ զգալի շափով կորացած և նման բարեպաշտ բառափոխում փոքրացված Տ-ին (նկ. 65):

Այսպես վերծանելով, կունենանք ոչ թէ Միւրայ, մարն, այլ Տիրայմարն, որտեղից անվան ուղիղ ձևը՝ Տիրայմայր, Տիրամայր, իսկ բնագրի անորոշ հատվածը՝ բարխառ Շահնայ եւ Տիրայմարն եւ զաւակաց իւրոց: Այս անձնանունը կարողացվում է նաև Դիլիջանի երկրագիտական թանգարանում ցուցադրվող փորրիկ խաչքարի հետևյալ հիշատակագրում. «Տիրամայրն, Լայսն (կամ տիրամայրն Լայսն) և Կիւրկալ յիւնեցիկ» (Գ VI 19): Նույն հոլովով անունը վկայված է Բաղնայրի տաճարի ՈԳԻ (1215) թ. նվիրագրի հետևյալ բանաձևում. «Եւ ապաստարք փոխարէն ինձ հատոցին յամէն ամի եւ ար պտարաղ, Ի ինձ՝ Յոհանիսի, Ե՝ Միւվարդին, Բ՝ Տիրամարն, Բ՝ խոցաբեղին» և այլն (KBA 159):

Ինչ մնում է Տիրայմարն բառի մեջ յի- անհարկի կիրառությանը, ապա այս կարգի բարդ բառերում ա հոգակապից հետո հանդիպող յ-ն բազմիցս վկայված է միջնադարի վիճազրեում ու ձեռագրերի հիշատակարաններում, որտեղ այս իրողությունը յուրատեսակ օրինաչափություն էր վերածվել: Այսպես, Հայրավարի ԺԳ դարի մի նվիրագրում ունենք. «Ես՝ Նաճայպետա (<Նաճայպետ) տիլ գիմ հողո բածինն յիկեղեցիս» (Գ IV 75): Նույն ժամանակների այլ վիճագրերում վկայված են՝ փակայկալ (<փակակալ), միայբան, Նոցայվան, Վանայվան, պարտայվան, տապանատուն և այլն:



նկ. 65

³⁴⁷ Մանրատան՝ «Մար և հայագիտության հարեբեր» ժողովածու, 1968, էջ 161-163.

Այս տառաշարքը կարգացվում է Սանահնի վանքից ոչ հեռու, Սաղաձորում կամ Սեփղզազ ձորում կանգնեցված խաչարձանի հիշատակագրության մեջ, որ առաջինը հրատարակել է Ս. Զալալյանը 1842 թ.: Նույն բնագիրը գրեթե անփոփոխ, միայն երկու մասի բաժանված՝ իբրև խաչքարի ճակատամասի և թիկունքի արձանագրություններ, տեղ է դրել Նաև Հովհաննէս Արիմեցու գրքում, որ հրատարակվել է 1863 թ.: Բնագրի նորագույն հրատարակությունը պատկանում է պրոֆ. Կ. Ղաֆադարյանին, որը տեղում չի տեսել հուշարձանը և նրա արձանագրությունը անփոփոխ արտադրելով՝ Զալալյանցից և Արիմեցուց, դրանք տեղավորելով՝ Զալալյանցի ընդօրինակությունը Հաղբասի վիմագրերի ժողովածուի մեջ, իսկ Ղարիմեցունը՝ Սանահնի (ՍՋԸԱ 80, ԿՂՄ 188, ԿՂԸԲ 263)՝³⁴⁵.

Արձանագրության սուկա վերձանությունը տառապում է այլ կարգի անհամապատասխանություններով, որոնք անտեսվել են բուլղար ճեպագետոլոգների կողմից և զգալի շափով անվստահելի են դարձրելով բնագրի արտագրությունը: Գրանցից նշելի են. արձանագրության առաջին մասը Արիմեցու մոտ թվագրված է Ո (1151 թ.), իսկ երկրորդ մասը՝ ՈՒԷ (1178): Նույն բնագիրը Զալալյանցի գրքում թեև սպառված է իբրև մեկ արձանագրություն, բայց և ունի երկու տարբերիվ Ո և ՈՒԷ: Կ. Ղաֆադարյանը, ինչպես տեսանք, իր երկու ժողովածուներում արտագրելով Արիմեցու և Զալալյանցի ընդօրինակությունները՝ Արիմեցու Ո (1151) թվագիրը ուղղելի է համարում ՈՒԷ (1178) և ոչինչ չի հիշում Զալալյանցի ՈՒԷ (1198) թվագրի մասին: Բացի դրանից, Ղաֆադարյանի «Հաղբասու» գրքում այս բնագիրը հրատարակվել է իբրև մի արձանագրություն, թվագրված ՈՒԷ, իսկ «Սանահնի» գրքում զործ ունենք երկու ստանձինի շինարարական հիշատակարանների հետ, փոքրզգրված նույն խաչքարի վրա, նույն թվակներով՝ ՈՒԷ (ԿՂԸԲ 263, ԿՂՄ 188):

Ընդ տարակարգի տեղիք է տալիս և այն պարագան, որ բնագիրը շարադրվում է երկու անձերի կողմից առանձին-առանձին, ըստ որում երկուսն էլ գրեթե միևնույն իրողությունն են հաղորդում՝

այդի անկելու և խաչ կանգնեցնելու մասին՝ «ես՝ տէր Յովհաննէս անկեցի զայս սնյարկս...», «ես՝ Գրիգոր վարդապետ եոր շինեցի զայդս և կանգնեցի զսալսս»:

Մյուս կողմից, այս անստույգ բնագրի հիմամբ Կ. Ղաֆադարյանը Հաղբասի առաջնորդները ու վանահայրերի ցուցակում տեղ է հասկացրել նաև սույն երկրորդ արձանագրի հեղինակ Գրիգոր վարդապետին (առանց հիմքի ուղղելով՝ Գրիգորիս եպիսկոպոս), որը, ըստ հեղինակի, Զաքարյան իշխանների թեոթոզին էր, պատրոն Գոփի որդին (ԿՂԸԲ 275):

Իսկ մինչ այդ՝ 1957 թ. հրատարակած Սանահնի վանքի մասին մեկնագրության մեջ ընտելյան առարկա բնագրի Գրիգոր վարդապետը նույնացվել է Գրիգոր Տուտեռզու հետ, որը իբր, մի այդի է անկել և խաչքար կանգնեցրել իր և վանքի անտարբեղ հայր Հովհաննեսի հիշատակին (ԿՂՄ 51): Իրականում 1178 կամ 1198 թ. Սաղաձորում կանգնեցված խաչարձանի հիշատակագրության հեղինակ Գրիգոր վարդապետը, իբրք, Գոփ Զաքարյանի և Հասանի որդին էր, սակայն նա ոչ այդ ժամանակ, ոչ էլ հետագայում Հաղբասապանների ստաշնորդ չի եղել, և բավարար հիմքեր չկան նրան նույնացնելու Գրիգոր Տուտեռզու վարդապետի հետ³⁴⁶:

Կերբ շարադրվածից ակնհայտ է դառնում, որ խնդրո առարկա արձանագրում փորագրված անյարկ տառաշարքի ընթերցումը կասկածելի է, քանի որ անհայտ է հուշարձանի տեղը, և լուսանկար չունենալու պատճառով անստուգելի է բնագրի ընթերցումը: Այստեղանդեք, կարելի է պայմանական կերպով ընդունել մեզ հասած քառի իսկությունը և փորձել պարզել նրա արտահայտած իմաստը: Մատենագրական աղբյուրներում ըստ չի հանդիպում և այդ պատճառով հայերենի բառարաններում չի արտացոլվել: Հովհաննես Արիմեցու կողմից ժողովածուում Բրտանե անյարկը թարգմանել է խաղաղի այգի (насадил вино радник), հափանաբար հիմք ընդունելով ոչ այնքան քառի աստղաբանական ընտելյանը, որքան տվյալ կասկածագրության մեջ նրա ակնհայտ կիրառությունը՝ անկեցի զայս անյարկ:

Տեղարկ կարող էր ծագել տունկ և աղկանկ կամ յարկանկ =


³⁴⁵ И. Крымский, Описание. . . էջ 50:

³⁴⁶ Սանահնահ՝ Բ. Ալլարբյան, Ծարեթի իշխանությունները Հաղբաս և Սանահնի վանքերի առաջնորդներ, «Էջմիածին», 1974, ԺԱ, էջ 45-46:

շինել, կառուցել, ձգել բառերից, ըստ այսմ, տեկարի > տեկյարի և կ-ի անկումով՝ տեկյարի, որ կարող էր նշանակել՝ տեկվածք, տեկի-ներ, այցի: Բառիս կազմության համար համեմատելի են՝ տեկարի = բույս տեկող, երգարկ = երգ շինող, ստեղծող բարդությունները³⁵⁰:

131. ՓԱՌՇԻԿ (ՓԱՐՇԻԿ, ՓԱՐՉԻԿ) ՍԱՐԳԻՍ

Անիում Աբլղարիք Պատշավունու 1036 թ. կառուցած Փրկչի տա-
ճարի գմբեթարդներից մեկի գունավոր որմնանկարների վրա պահ-
պանվել է նրանց հեղինակի ձեռագիրը պատկերն ու Մատթեոս ավե-
տարանչին ուղղված հետևյալ բարեխոսությունը. ՍՈՒՐԲ ԱԻՆՏԱ-
ՐԱՆԻՉ ՔՐԻՍՏՈՍԻ, ԲԱՐԵՆԱՍԻՄԵՆ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇ-
ԿԱՆՍ (նկ. 66): Անիի ճարտարապետական կրթողները հետազո-



Նկ. 66

տողներ Ն. Մառք, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին համողիչ ցույց են տվել, որ Մատթեոս ավետարանչի նկարի ղեմաց պատկերված ձեռ-
կալուր անձը տաճարի գմբեթարդները որմնանկարող վարպետն է, որի անունը ըստ ինքնապիր հիշատակագրության, վերականգնվում

³⁵⁰ Հր. Անտոյան, Հայ. արմ. բառարան, Ա, էջ 321:

է՝ ՍԱՐԳՍԻ ՓԱՌՇԻԿ (> ՓԱՌՇԿԱՆ)³⁵¹: Հաստատված է նաև, որ Փրկչի գմբեթարդները նկարագրողվել են ոչ թե տաճարի կառուցման ժամանակ՝ 1036 թ., այլ ավելի ուշ՝ ժԳ—ժԴ դարերում կատարված նորոգումների ընթացքում, ըստ որում, հայ արվեստի պատմու-
թյամբ դրավող մասնագետները հզամ ավայելեով զժվարանում են որոշել այդ որմնանկարների ստույգ ժամանակը:

Անիի վիմական արձանագրությունների վերջերս հրատարակ-
ված ժողովածուի նյութերը հնարավորություն են տալիս ստուգա-
պես որոշելու, թե երբ են տեղի ունեցել տաճարի նորոգումները, և
դրանցից որի ժամանակ են նրա գմբեթարդները որմնանկարվել:
Ըստ տաճարի որմերին փորագրված արձանագրությունների ժԲ—
ժԴ դարերում հուշարձանը նորոգման է ենթարկվել 3 անգամ: Սկը-
սվել վերջինից. ՉՂԱ—1342 թ. Ջաթարյանների շտապիչ վահճարմ
ձեռնարկել է միայն գմբեթի նորոգումը, որը նրա հրամանով ավար-
տել է ոմն Գրիգորի որդի Ասիլը: Ահա այդ մասին պատմող արձանա-
գիրը. «Ես՝ աթապակ վահճամ, որդի Իսանի, որդուն մեծին և հուս-
րին Ջաթարիաի վերստին նորոգեցի զկումբեթ Սուրբ Փրկչիս...: Ես՝
Ասիս, որդի Գրիգորո առաքեցա պատրուսին հրամանան աթապակ
վահճամ և եկել կատարեցի մեծ ջանի և աշխատությանբ զհրա-
մանյա» (Գ I 44):

Այս բնագրից ահեղն է, որ 1342 թ. վերանորոգման ընթաց-
քում որմնանկարներ գուն գմբեթի ներսում չեն արվել, բանի որ նրա
առկա ձեփածածկույթը այդպիսի նկարների հետքեր չի պահպանել:

Փրկչի վերանորոգման մասին հաջորդ հիշատակությունը վե-
րաբերում է 1271 թ. (Հ. Օրբելին այս արձանագրության թվականը
զետում է ըստ նախորդ վերանորոգների ՉԽ—1291 թ., մինչդեռ՝ Իրա-
կանում և «Իրվանի» I պրակում թվագիրը ՉԽ—1271 է). ըստ այս
արձանագրի, ոմն Մխիթար Շերասցի սուրբ նշան է տվել Փրկչին,
կառուցել տաճարին կից զանգակատունը և նրա համար զանգակներ
բերել. «Ես՝ Մխիթար Շերասցի... սուրբ նշանս ետու ի Փրկչիս և
բերի զանգականիս և շինեցի զանգակատունս ի հալալ արդևեց ի-
մոց» (Գ I 43): Այստեղ ըստ էության գործ ունենր զանգակատան

³⁵¹ Братская помощь армянам, М., 1898, էջ 207, էջ 207, Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ա, 1942, էջ 166,

И. Орбели, Избранные труды, т. 5, 1963, էջ 127:

շինարարական արձանագրության հետ և Փրկչին խաչ նվիրելուց բացի, ոչինչ չի ասված բուն տաճարում կատարված նորոգումների, առավել ևս որմնանկարան մասին, թեև բնագիրը փորագրվել է ոչ թե զանգակատան, այլ տաճարի պատին արտաբուստ:

Մնում է հուշարձանի նորոգման ամենավաղ հիշատակությունը՝ Տրդատ բահանայի երկարաշունչ արձանագիրը, մուտքից արև-մուտք, արտաքին կամարներից մեկի մեջ, որտեղ հեղինակը հայտնում է զանձագին Նայրեմիխ Սուրբ Փրկիչը նորոգելու և վանքին բազմաթիվ կալվածներ տալու մասին. «Յամի : Ո՛նի : (այլ ընդօրինակություններում՝ Ո՛նի) թուականին (1193), ես՝ Տրդատ բահանան եւ զուգակից իմ խուշուր շինեցար վերջստին զմեր զանձագին հայրենիքս զՍուրբ Փրկիչս շատ աշխատութեամբ եւ նորոգեցար յառաջին պայծառութիւն... շինեցար սմա ժամատունն ամբարանն եւ ձմեռանոց...» այս թվարկվում են նվիրված արժեքները (Գ I 47): Հավանական է, որ հենց այդ ժամանակ էլ որմնանկարվել են տաճարի ութ կիսակլոր զմբէթարդները, այդ է ակնարկում բնագրի ձևակերպումը. շատ աշխատութեամբ... նորոգեցաւ յառաջին պայծառութիւն:

Ամեն ինչից կրնում է, որ նույն Սարգիս Փառչիկն է հիշատակված նաև իսկոնքի Ս. Սարգիս եկեղեցու մտո կանգնեցված խուշարձանի ճակատին Ո՛ԿԵ (1216) թ. փորագրված նվիրագրում: Այս բնագիրը դիտական վերծանություն չունի և բանասիրությանը հայտնի է անցյալ դարավերջում կատարված ընդօրինակությունները, որոնց հավաստիությունը լուսանկար չունենալու պատճառով զրկվում է կրաշիփավորելու: Ահա այդ արձանագրության համապատասխան հատվածը՝ Կրպիկ եւ Հուսիկ նպիտկողստի վերծանությունից. «Ե Կոդը Նային այգին, որ Յոհանէս տունաւ է յիշատակ իւր զստերն Մամիկն՝ Գ : ար պատարագ Մամիկն : Ա : ար Մամբանին, : Բ : ար պատարագ ՍԱՐԳՍԻ ՓԱՐՇԿԵԱՆՍՍ, որ կրտ ի Քարխինակնէն : Ժ : բոսին տեղ...»³⁰²: Ինչպես ակնհայտ է զույգագրական արձանագրության մեջ բերված հատվածից, նվիրատու Սարգիսի ազգանունը կամ մականունը այստեղ ոչ թե Փառչիկ կամ Փարչիկ է, այլ Փարչկեանց, որ կարող էր առաջանալ Փարչկեանեմ (<փարչիկ) հավաքական սոհմանունից:

Առկա տվյալներով դժվար է հավաստել, թե Փրկչի որմնանկարի Սարգիս Փառչիկը նույնն է իսկոնքի խուշարձանի Սարգիս Փարչկեանցի հետ, և վերջին դեպքում հիշատակվել է նրա ազգանունը՝ Փարչկեանց, դարձյալ առաջացած Փառչիկ, Փարչիկ ձևերից: Հնարավոր է նաև, որ իսկոնքի խաչագրի վրա կա փորագրված է նրա Սարգիս Փարչկեան և ընդօրինակողներն են այն զիտել իբրև Սարգիսի ազգանուն և վերծանության մեջ դարձրել Փարչկեանց, մանապես որ նույն շփոթությունը տեղի էր ունեցել նաև Փրկչի որմնանկարի զրահագրության վերծանության դեպքում, երբ պարզ զրված Սարգիս Փառչկեան Քորմանյանը, հավանաբար նույն հիմունքով, կարգացել էր Սարգիս Փառչկեան:

Ամենայն հավանականությամբ Փրկիչ տաճարի որմնանկարին Սարգիս Փառչիկի և իսկոնքի նվիրագրի Սարգիս Փարչկեանցի հետ նույնը պետք է լինի Ստանհի հուշարձանախմբից ոչ հեռու, «Թե-փակեր» կոչվող հնազույն (1011 թ.) խուշարձանի մոտ ընկած տապանաքարի հիշատակագրության մեջ հիշատակված Սարգիս Փարչիկը: Կ. Ղաֆազարյանի հավաստի վերծանությամբ այդ տապանագիրը կարգացվում է. ՍԱՐԳԻՍ, Ո՛Բ է ՓԱՐՇԿԻ (ՆԿ. 67): Վերծանողը որևէ բացատրություն չի տալիս թագավորի անձի կամ տապանաքարի մասին, միայն նրա ժամանակը համարում է ԺԲ-ԺԳ ղղ., և անձնանունների ցանկում Փարչիկ մեծատառ զբնելով, հավանաբար այն դիտում է իբրև հանցուցյալ Սարգիսի ազգանուն կամ մականուն (ԿՂՍ 181, 200): Հավանաբար հեղինակը նկատի չի ունեցել Փրկչի Սարգիս Փառչիկի և իսկոնքի Սարգիս Փարչկեանցին, այդ պատճառով էլ անտեսել է սրանց և Ստանհի տապանաքարի Սարգիս Փարչիկին նույնացնելու հնարավորությունը, մինչդեռ հիշյալ անձերի միայն այդպիսի անունակալը անհերքելի մերժությունը որոշակի հիմքեր էր բնձեռում այդպիսի նույնացման համար: Սակայն նշված Սարգիսների նույն անձը լինելու լավագույն ապացույց կարող է ծառայել այդ անվանը որոշիչ ծառայող Փառչիկ, Փարչիկ, Փարչկեանց (<փարչիկ) հարազրի ստուգարանությունը: Արդ, ի՞նչ է նշանակում փառչիկ, փարչիկ բառը. արդյոք այստեղ զործ ունենք սովորական մականվան կամ ազգանվան հետ, թե՞ այս բառով մատուցույց է արվել Սարգիսի՝ ո՞վ, որտեղացի՞՝ լինելը, ի՞նչ գրառ-

Ս Ա Ր Գ
Ի Ս : Ո՛ Բ Է Փ Ա Ր Է
Ի Կ
Կ Գ

³⁰² Ազգագրական հանգան, 1896, Ա, էջ 45, Սևրաբառ, 1904, էջ 991.

մունք, արհեստ, մասնագիտություն ունենալը, ինչպես պայտօվում էր նման ղեկավարում: Սանահճի տապանագրի ձևակերպումը, որ զգալի ապահ շեղվում է սովորական հիշատակագրություններից, պինճաչտորին ցույց է տալիս, որ փարզի բառն այս կապակցության մեջ ոչ թե Սարգսի ազգանունն է, այլ նրա զբաղմունքի, արհեստի, մասնագիտության բացահայտը, բոտ այսմ, Սարգիս: որ է փարզիկ, պետք է հասկանալ՝ Սարգիս, որ փարզիկ է, ինչպես կարող էր լինել՝ Սարգիս, որ է ծաղկող (արբ ծաղկող է), որ է կազմող, որ է զբժող, որ է ոսկող և այլն: Եվ իրոք, եթե փարզիկը լիներ Սարգսի ազգանունը կամ մականունը, այդ դեպքում տապանագրում կունենայինք օրինաչափ՝ Սարգիս Փարզիկ, Սարգիս Փարզիկան, Սարգիս Փարզիկեցի, Սարգիս ողի Փարզիկան և այլն, մինչդեռ բարի վրոտ պարզ փորագրված է. ՍԱՐԳԻՍ: ՈՐ է ՓԱՐԶԻԿ: Այստեղից ակներև է, որ Փրկչի որմնանկարի բարեխառնակնում և Սանահճի տապանագրում փառչիկ, փարզիկ հարկ է դնել փորքատառով և դիտել իբրև Սարգսի արհեստը, զբաղմունքը մասնանշող օրոշչը բառ, իսկ երժկոների նվիրագրի Փարզիկանցը (եթև այն ստույգ է կարգազվել)՝ նրբա տունմանունը, որը կարող էր առաջանալ նույն արհեստի, մասնագիտության փարզիկ նախածնից:

Իսկ ի՞նչ մասնագիտություն, արհեստ է արտահայտում փառչիկ, փարզիկ (փարզիկանց) բառը: Քանի որ Փրկչի որմնանկարի բարեխառնության տակ պահպանվել է արհեստաղբի անունը և սըրբան հարագրված մասնագիտությունը՝ ՍԱՐԳԻՍ ՓԱՐԶԻԿ, ուրեմն վերջինս պետք է նշանակէր՝ նկարիչ, որմնանկարիչ, շենքերի ներսի ձեփնծածիլ պատկերազարդող և այլն, ինչպես ձեռագրերի մեքերանկարների տակ ունենք նրանց հեղինակների մասին նշումներ՝ ծաղկող, ճաղաչ, նկարող, գրիչ, խաչքարերի բանդակազարդերի մեջ կամ վիմագրերի վերջում՝ կազմող, հորինող, Բարգառ, գծող և այլն:

Փառչիկ, Փարզիկ բառի ստուգաբանությունը հաստատում է այս նկարությունը. պարս. [ՃՏ արմատի դիմաց բառարանները տալիս են՝ գուրգ, կարպետ, ծածկույթ, տապաստակ, փովածի փաստաներ, բոտ այսմ, իկ հայ. վերջածանցի հավելումով՝ [ՃՏ]Կ=Փարչիկ կարող էր արտահայտել հիշյալ իմաստների հետ առնչվող արհեստ-արվեստ, այսինքն պատերի ձեփածածկույթը նկարող, գոր-

գածն կամ կարպետածն հարգարող, ծածկող, մի խոսքով որմնանկարիչ:

Հայ արվեստի պատմությունից հայտնի է, որ Բագրատունիների ստան Անիում և մերձակայքում ճարտարապետական ձևերի բուռն վերելքի հետ, բարձր զարգացման է հասնում նաև հոգևոր և աշխարհիկ շենքերի ներքին մակերեսները նկարազարդելու, որմնանախշերով ու այլ գեղազարդալի միջոցներով հարգարելու արվեստը, որի առանձին բեկորները մեզ են հասել և նկարազարված են մասնագիտական գրականության մեջ: Անիում տեօրինական և տերունական նկարներով պատկերազարված են նաև Փրկչի, Տիրաբն Հունեցի կառուցած, Առաքելոց, Բախտաղեկի եկեղեցիները, Պարոնի պալատը, քաղաքացիական այլ շենքեր, նաև ունեոր անեցիները բրնձակարանները: Որմնանկարներ են ունեցել Աղթամարի, Մրենի, Հոռոմսի տաճարները: Բնական է, որ շենքերը որմնանկարելու արվեստը ևս պետք է ունեցր ճամբարապետական վարպետ կառուարի, ինչպես նույն Անիում և մերձակայքում ունենք քաղաքալի նոր կենցաղն ու մշակույթն արտացոլող արհեստների, արվեստների բնիկ կամ փոխառյալ բազմաթիվ անվանումներ՝ Բարգառ, լաբար, փովար, սարաք, գծող, գրիչ և այլն:

Փրկչի տաճարի որմնանկարում հիշատակված Փառչիկ անվանումը վկայում է, որ որմնանկարչությունը ինքնուրույն մասնագիտություն էր դարձել բարգավաճ Անիում այն շափով, որ հարկ էր զբաղվել այն առանձնացնելու թղթի կամ մազաղաթի վրա ծաղկող, սակող, նկարող վարպետներից՝ հատուկ փոխառյալ տերմինով որակելով այդ արվեստավորներին: Այդ է պատճառը, որ պատմական Հայաստանի այլ գավառներում որմնանկարիչ վարպետներին տրված՝ գեղագեղիչ, նկարիչ, զօռակ, պատկերազարծ անվանումներից հիմաք Անիում ունենք նույն մասնագիտությունն արտահայտող նոր, պատկերներից փոխառված փառչիկ, փարչիկ տերմինը, որը իմաստմանակ վկայում է այդ արհեստ-արվեստի ուրույն, մյուս նկարիչ արվեստավորներից տարբերվող առանձնահատկությունների մասին:

Փառչիկ, փարզիկան, փարչիկ պարս [ՃՏ արմատից սերած ձևերի հնչյունական աննշան տարբերությունները շեն կարող լուրջ առաքիություն լինել ինչպես բառի մեր տված ստուգաբանության, այնպես էլ նրա երեք վկայությունները նույնացնելու համար: Պատ-

մական հնչյունարանությունից դիտենք, որ հյարս. i-ն հայերենում աստաղարձվում է հ-ով՝ farsax, farsax—հրասախ, farhang—հրահանգ, իսկ ալեյի ուշ շրջանի փոխառություններում՝ նաև փ-ով՝ farman—փարման, fadan—փաղան, fānid—փնեհիտ և այլն³⁵⁵: Այսպիսով, fārş արմատի նախահնչուշ i-ն հայերենում օրինակաբար կարող էր վերածվել փ-ի՝ փաշ-իկ: Մյուս կողմից, բառամիջի ր-ի ալեյի թրթռուն դառնալը՝ փառչկան, ինչպես նաև շ>ջ ձայնեղացումը արդյունք են վկայված ժամանակաշրջանի բարբառային արտասանության ազդեցություն:

182. ՓԱՍ, ՓԱՍԳԻ (<ՓԱՍ ԳԻՆԻ)

Պատմական վայոց ձորի ն. Ուլգյուր գյուղատեղի Աստվածածին եկեղեցու հարավային պատին փորագրված ՉԿ՛ (1308) թ. կարճատև նվիրագիրը, շնայած տառածները բիշ քի շատ բարձր պահպանությունը, հավաստի չի ընդօրինակված և առկա վերծանությունը գրեթե անիմաստ է: Ահա բնագիրը՝ Ս. Բարխուդարյանի առավել ամբողջական ընթերցմամբ. Ես՝ Փամբա խարունա տվի Աստուածածնին : : ... բաժակ ի Մեռալվաճոռո, իմ լեռ եմ իմ որդիքն տան անխափան, ով շառ իմ մեղացն տեր է: ՉԿ՛ է: (Գ. III 35): Այստեղ պարզ չէ, թե նվիրատուն լ (30) բաժակ ի՛նչ է տվել եկեղեցուն, բայի որ այդ մասում մի քանի տառատեղ բարբ քարշված է: Նախորդ ընդօրինակողները բնագրի տվյալ հասցվածք վերծանել են՝ տան Աստուածածնի սուրբ վառուց Բ... բաժակ ի Մեռուկվաճոռ, որ ալեյի անորոշ է, հետո իրականից, ուստի և չի կարող նպատակ ներձված հատվածի ալեյի հավաստի վերականգնմանը (ՂԱՍ 167):

Տեղում և արձանագրության լուսանկարի վրա ալեյի ուշադիր ատուգելով պահպանված տառաշարերի ընթերցումը, առաջարկում ենք բնագրի անորոշ հատվածի հետևյալ վերծանությունը. Ես՝ Փամբա խարունա տվի Աստուածածնին : : լ: փաս զրի՝ բաժակ ի Մեռուկվաճոռ..., և այլն (նկ. 68): Քարի վրա առաջին տողի վերջում հստակ կարդացվում է : : լ: փաս զրերը, որոնցից հետո մոտ 2 տառատեղ ոչինչ չի երևում. հետևելով այս կարգի այլ բնագրերի ձևա-

կերպմանը, տողավերջում վերականգնեմ. 3 ենք զի զրերը և փասքի բարդությունը կամ հայացվումը (Գ. III, լուսանկար 23): Այսպիսով, Քամբա խարունը իր Մեռուկվածում գտնվող այդու բերքից (վայոց ձորի այլ վիճազարեքից և Ստ. Պրբելյանի «Պատմությունից» հայտնի է, որ Մեռուկա ձորը կամ Մեռուկաձոր խաղողի այգիներով հարուստ գյուղ էր Յաղաց բար վանքի մերձակայքում)³⁵⁴ 30 փասքի է հաս-

Բ Ս Ս Ա Մ Ո Ր Ա Ն Ա Ա Ո Ա Ն Ա Ս Ա Ն Ա Ս Ա Ն Ա Ս Ա Ն Ա Ս Ա Ն Ա Ս .
 Բ Ա Ս Ա Վ Ի Մ Տ Ն Ո Ա Վ Ճ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Տ Ե Ա Մ Ո Ր Դ Դ Բ Ն
 Ե Ա Ն Ա Ն Ա Մ Մ Ա Ս Ա Վ Ա Ս Ա Ն Ա Վ Չ Ե Ա Ւ Մ Ե Ղ Վ Տ Ն Ե Ե Ե Ղ Ե Ղ Ե Լ

կացրել վանքին, իբրև բաժնի (կամ բաժնիկի՝) պատարագի ժամանակ հաղորդության զինի. օգտագործելու համար: Ուրեմն բաժակ բառը տվյալ իրադրության մեջ չպետք է հեղուկաչափի միավոր կամ անոթ համարել, այլ եկեղեցական-ծիսական տերմին՝ պատարագի ժամանակ հավատացյալներին բաժանվող զինի³⁵⁵: Ըստ այդմ տրվյալ նվիրագրով եկեղեցուն ընծայվել է լ (30) փասքի: Բաժակ կամ բաժակի անբմիջը նույն իմաստով է կիրառված Անիի Փրկիչ եկեղեցու նՁե (1036) թ. հետևյալ արձանագրում. «Ընծանաց չիւր շի-նեակ եկեղեցիս ի Սուրբ Փրկիչս բաժակի վասն փրկական խորհրդոյն, իշտանակ հողոս իրոս» (Գ. I 48):

Արդ, ի՛նչ է նշանակում փասքի կամ փաս բառը տվյալ կապակցության մեջ: Փասք իբրև հեղուկաչափի միավոր հայադիտությանը հայտնի է դեռ դասական մատենագրությունից. հնագույն վկայությունները պահպանվել են Մովսես Կաղանկատավացու և Անանյա Շիրակացու երկերում: «Աղվանից պատմություն» մեջ արտացոլված Աղվանի նշանավոր ժողովի սահմանումների՝ քահանաներին հասանելիք պաղիի շափր որոշող 4-րդ հոդվածում ասված է. «Պատուք ի ժողովրդեն էրիցուն՝ կարգն այս լիցի, իտանիկն՝ Գ զրի ցորենն, Զ զրի ցորի և ժՉ փաս քաղցու»³⁵⁶: Նույն բառը Անանյա Շիրակա-

³⁵⁴ Ստ. Սեբրիան, Պատմություն... էջ 424, Գիվան, III, էջ 35, 57, 124, 124:
³⁵⁵ Չբ. Անույան, Հայ. արձ. բառարան, Ա, էջ 331:
³⁵⁶ Մովսես Կաղանկատավացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 99, Կանոնադիրը հայոց, Երևան, 1971, էջ 94:

³⁵³ Չբ. Անույան, Հայոց լեզվի պատմություն, Ա, Ե., 1940, էջ 263, 290:
 332

ցու «Յաղագս Հարցման և լուծման» երկի ԺԳ հարցման մեջ հիշատակված է Հեռեկյալ կապակցություններում. «եւ գմնացեալն յալլ ամանս հանին և էր փաս յիսուն և շորր...» «էր զինին փաս հարիր և քան և վեց» (ՕՈՒՏ 516): Երիրակացու «Երախճակահանում» փաս կարգացվում է Թ-րդ իրախճակահանի հետեկյալ հատվածում. «Անասու-չի՛ր ցընկերն քո մինչ վաճառեո զինք փաս Կ և տաս զհինգն չերկու դրամ», «Ասասչի՛ր զվ միաձևն երեք փասս դրամ մի և զվ միաձևն Բ փասս դրամ մի»³⁵⁷:

Փաս տերմինի այս նշադույն վկայությունների մեկնություններում բառիս ստուգարանությունը և նրա արտահայտած հնդուկա-չափի որոշումը չի հանդիպում: Հետազոտողները սուկ նշել են այդ չափի առկայությունը, առանց պարզելու նրա ծագումը կամ մեծու-թյունը: Միայն Հր. Աճառյանը, հետևելով ՆՃԲ-ին (Ք, էջ 335), իր ձեռքի տակ եղած հիշյալ վկայությունները առանց բավարար հիմ-քի ուղղում է Բաս (կարող էր առաջանալ նախահունչ փ, ք զլիսագիրք տառանկների շփոթումից) և նրա համար կանխադրում պէ՛. *kās, պր. kās—մի տեսակ մեծ ու ասփակ բովակ, նախածնը, սակայն սարողությունն անորոշ³⁵⁸: Աճառյանի այս մեկնությունն անընդու-նելի է թեկուզ այն պատճառով, որ բառիս բուր հիշատակություն-ներում հստակ կարգացվում է ոչ թե Բաս կամ րաս, այլ միայն փաս, և տվյալ ուղղումը ոչ մի չափով չի արդարացվում: Ընդդ. է Կա-ղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի ուշ շրջ-անի մի քանի դրազերերում Աղվենի ժողովի սահմանումների փա-սը շեղված և վերեում այլ թառնարով գրված է Բաս կամ րաս, սա-կայն, ինչպես պարզել են այն «Պատմութիւն», այլև Աղվենի ժողովի կանոնների քննական բնագրեր կազմողները, ուղղումը կատար-ված է գրիչների կողմից փաս բառը չհասկանալու և այն ժողովըր-դական ստուգարանությունը ընկալելու պատճառով, ըստ այդմ, ուղղումը զուրկ է բնագրական հիմքից³⁵⁹: Մասքի դրանից, ինչպես ստորև կանեններ, փաս հնդուկաչափի վիճադրական բուր վկայու-թյուններում ևս աներկրա կարգացվում է միայն փաս կամ փասգի:

Անանիա Երիրակացու խնդրագրերի բացատրականում Գ. Տեր-Մը-կերտչյանը համոզիչ առարկելով փաս-բաս նույնացման դեմ, փա-սը համեմատում է դերմ. Fass—տակառ, անոր ձևի հետ, որ Աճառ-յանի կարծիքով անհամոզի է³⁶⁰:

Փաս, փասգի կազմության սույն բառաքննության նպատակը նրա ափելի հավաստի ստուգարանությունը չէ, որ մեզ ևս չի հա-ջողվել, այլ բառի նոր, գիտությանն անձանոթ վկայությունների քննությունը, որի միջոցով նախադր է պարզել այդ հնդուկաչափի կիրառություններն ու մեծությունը վկայված ժամանակաշրջանում:

Հնագույն վիճադրական հիշատակությունը փորագրված է Ան-բերդի եկեղեցու բարավորի 1026 թ. շինարարական-օրնագրային՝ մեզ անհայտ ծանոթ արձանագրության մեջ, որի հեղինակն է եկեղե-ցին ու ամրոցը կառուցող, Բագրատունչաց Հայաստանի ականաժողը պետական-գինեղորական զործիչ Վահրամ Պահլավունին: Անս այդ կարևոր հրամանագրի՝ մեր հարցի հետ անընդող հատվածը, որտեղ սահմանվում են նոր հաստատված նպիսեղոյսական աթոռին հատ-կացվելից հասույթի՛ պտղի շափերը. «Ամին ե՛ն (1026) ես՝ իշ-խան Վարճամ շինեցի զկարողիկես արառ ճարպետական և սահ-մանեցի պտուղ նիզի տունն. Բ. կապին ց ու Եան, յԱրագածունն յեզին. Բ. փասգի, ի Քաղոցաշախ բարակն. Ժ. լիար, յԱբերդի պը-տուղ ի տունն. Գ. կապին ց ու Եան, Ա. կապանառ... այնուհետև հիշատակվում են եկեղեցական արարողությունների զիմաց անըն-դելից այլ հասույթներ և անեծքի. հասուցման ձևակերպումները (Նկ. 2): Այս օրինականացմամբ Աբերդի նպիսեղոյսական (=հարապետական) աթոռին Արագածտուն զավտրի յուրաքանչյուր այդուց իբրև պտղի պետք է արվեր Բ (2) փասգի կամ փաս գինի³⁶¹, Քասգի տերմինի մյուս հիշատակությունը Աշտարակում է, կամբը-րավոր Հնագույն եկեղեցու պարսպի հարավային մուտքի բարավորի 1325 թ. շինարարական-նվիրատվական արձանագրում, որը նույն-

360 Փայտա Տեր-Միգայան, Անանիա Երիրակցի, Վաղարշապատ, 1896, էջ 16, 2ւ. Աճառյան, Արժ. բառարան, 2, էջ 1404—1405:


361 Վահրամ Պահլավունու այս կարևոր հրամանագիրը գիտականորեն չի հրա-տարակված և ոչ մի մեկնարանության չի արժանացել: Գիտական անձուկ շրջա-նների հայտնի է Բ. Տեր-Միխայելի, Ն. Տեղաբակու պակասավոր հրոգարակում-ներով, որոնք ըստ կենտրոնում առեղվածային են (ԵՂՃԻՔԻՆ, 1961, № 5, էջ 47—49, Н. Токарский, По страннам истории арм. архитектуры, Е., 1973, էջ 43:

357 Երիրակացու մատենագիտությունը, Երևան, 1944, էջ 234:

358 Հր. Աճառյան, Արժ. բառարան, 2, էջ 1404:

359 ՏՆ՝ Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիր, գիրք Ա, գլ. Բ2, Կանոնգրք հայոց, Բ, Երևան, 1971, էջ 9:

պևս համարյա անծանոթ է գիտությունը, ուստի և մեջ է բերվում լը-
բրիվ, մեր վերծանությունը. «Կամա՛ս ամենապալին աստուծոյ և Ի-
զորութեանք պարոն Ազրուդային եւ Սիբիի խաթունին, ես՝ Աննա-
տրս եւ Ղուտալարս միաբանեցար Սուրբ Աստուածածնին եւ շի-



Նկ. 69

նեցար զպարխպս, զըրբջայմազն եւ զդուրն, յիշատակ մեզ եւ զա-
վակի մեր՝ Զաբարի: Եւ ավի տարենն Ի (Ժ՞) փասցի, Ի Թամարայ աշ-
ղոջն: Ով որ զայգին ոտէ, բաժակ տա: Եւ սպասաւորք սրբոյս խոս-
տացան տարեն: Բ: ար պատարագ՝: Ա: Աննաուրին: Ա: Ղուտալ-
լարին, Ի տանի Աստուածածնին կատարեն Թվին 22Գ» (Նկ. 69,
69 ա)³⁶²,

Ինչպէս ակներև է, քննվող բառի վիճազարկան բուրդ վկայու-
թյուններում (Անրերդի եկեղեցի, Վաչոց ձորի Ուլղուր դյուզատեղ, Աշտարակի Կարմրավոր եկեղեցի) հասակ փորագրված է ոչ թե փաս, այլ փասցի, ըստ որում առանց կցագրի կամ հապավման նշան-
պատվի, այսինքն ավյալ կապակցութեան կրճատ գրութիւնը բա-
ցատվում է: Հավանական է մտածել, որ վկայված ժամանակաշր-
ջանում (Ժ—ԺԳ զդ.) փաս հնգուկաշափի միավորը հիմնականում
կիրառվել է Բաղդոսի կամ զինու բանակը որոշելու համար, ուստի
և փաս գինի ազատ կապակցութիւնը երկար գործածվելով, դարձել

է կայուն՝ փասցին, որից էլ վերջին վանկի սղումով կամ հապուր-
դիայի օրենքով՝ փասցի (հմտ. բաժակապլ-բաժակալ, աշխահա-
նայաց-աշխահայաց, տավարաւած-տավարած և այլն):

Վահրամ Փահլավունու 1026 թ. օրինականացման ստույգ մեկ-
նաբանութեան, հատկապես նրանում սահմանված պտղիի շափերը
որոշելու համար կարեոր է պարզել, թե փաս կամ փասցի հնգուկա-
շափը ինչ մեծութիւն է ունեցել դոնե վկայված ժամանակներում:



Նկ. 69 ա

Ստուճանախորդները այս հարցին չեն անդրադարձիլ, քանի որ, ինչ-
պես ասվեց, այս տերմինի վիճազարկան հիշատակութիւնները ան-
հայտ են նզել հայագիտութեանը, իսկ Կաղանկատվացու և Շիրու-
կացու մասնագրական վկայութիւնները էլ բավարար հիմքեր չեն
տալիս նրա ժամաշաշափը որոշելու համար: Խնդիրը պարզարան-
ելուն մեծ նպատակ է բերում վաս բառի մի նոր մասնագրական վը-
կայութիւնը, որը հնարավորութիւն է ապիս ստուգապես սահմա-
նել ավյալ հնգուկաշափի հարաբերութիւնները այլ միավորների
հետ, եւս նրա իրական մեծութիւնը: Փաս կարգաց-
վում է Եսայի Նշեցու՝ «Անկնութիւն մարգարէին եղեկիէլի» աշխա-
տութեան այն մասում, որտեղ Ս. Գրքի տարբեր շափակաշային միա-
վորների արտահայտվում են հայկական միջավայրում կիրառվող
անդրական համապատասխանութիւններով: Մասնավորապէս աշ-
խարհիկ իշխանավորներին ու եկեղեցու սպասավորներին հասանե-

³⁶² Թնայրի նախորդ հրատարակութիւններում, Ի թիվս այլ տարբերքում-
ների, ավյալ կապակցութիւնը վերծանված է՝ և ավի սարեհե՛ ժ... յայցոյն, այ-
սինքն փասցի աստուաշարը մթաղեկ, յի վերականգնվել (ՇՍԲ 88, ՂԱՍ 187),

չիբ պտղի շափերը որոշող հաստվածի՝ ձկնի վերաբերող պարբերությունը Եսայի Նշեցիի թարգմանելու մեկնաբանել է. «Եւ հրաման ձկնի թրստ մի իւրոյ տասներորդ սափորն, զի տասն քսեստն է սափոր մի...», «Զէթ որ տան պտուղ քահանայիցն քսեստ մի, որ լինի ի սափորէն, որ է փաս մի, ի տասնէն մինն»³⁶³:

Այստեղից, Եսայի Նշեցիի ձկնի ծավալաչափի փաս միավորը հավասարեցնում է սափորի հետ, և նրանց մեծությունը համարում է 10 ԲԱՍԱ: Եվ քանի որ այլ աղբյուրներից հայտնի է քսեստի մոտավոր միջին կշռաչափը՝ 532 կրամ (տարբերակներ՝ 544, 589, 652), ուրեմն հայկական փասի կամ նրան հավասար սափորի կշիռը կլինի՝ 0,532 · 10 = 5,32 կգ (5,44, 5,89, 6,52 կգ):

Ինչ մնում է Եսայի Նշեցուն ժամանակամերձ փաս, փապղի վիճադրական հիշատակությունների, ապա ըստ աստմանված համապատասխանության, հաստատուպես որոշվում է, որ Վահրամ Պահլավունու հրամանագրով Արագածոտն թևի յուրաքանչյուր այգուց (չէկին) եպիսկոպոսական աթոռին իբրև պտղի է հատկացվելու Բ (2) փապղի = մոտ 10—11 լիտր զինի: Ուղղաթի նվիրատու Քամիա խաթունը Աստվածածին եկեղեցու հաղորդության համար ՄՏՈկաձոր գյուղում գանձվող իր այգու բերքից և (30) փաս = 159—160 լիտր զինի է հատկացրել: Եվ վերջապես Անավոր և Ղուտալչաք ամուսինները Աջառարկի վանքին նվիրել են թամիրի (գ. Ղյուլմաիր, այժմյան Ոսկեվազ) այգու բերքից Ժ (10) կամ Ի (20) փաս = 53 կամ 106 լիտր զինի, նույնպես իբրև բաժակ՝ հաղորդության զինի օգտագործելու համար:

133. ՓՈՇԱԸԱՆՆԷ, ԹԵ՝ ՓՈՂԱԸԱՆՔ

Պատմական Սյունյաց նահանգի հոգևոր առաջնորդ, ականավոր պատմիչ Ստ. Օրբելյանը Նորավանքում թողել է մի ընդարձակ կալվածագիր-նվիրատվություն (ՉԽՆ—1298 թ.), որտեղ բազմաթիվ դանձազին կամ հարկների գյուղեր ու կալվածքներ է ընծայում եպիս-

կոպոսանիտ վանական կենտրոնին: Միանգամայն անկեղծ պահանջված այս արձանագրությունը վերծանվել, մեկնաբանվել է քսեցից և նրա բովանդակությունը տարակույս չի հարուցում: Սակայն վանքին օտարած գյուղերի շարքում հիշատակված Փողանակ կամ Փռչանակ տեղանունը մնում է անորոշ և կարոտ ճշգրտման:

Այս րեազրի համապատասխան հատվածը Բարխուդարյանի հավաստի վերծանությամբ, որ նաև ստուգվում է զբոսով զետեղված հասակ լուսանկարով. «Ետու զիմ հոգր մասն... զՉվա զեղն իւր բուրբ օր սահմանաքն, զոր զնել էր իմ անբարպէն, ի Ջալալէն և ավելի զինն : ԻՒՒ : (21) հազար դրամ եւ Փռչահանքն զՍուրբ Սահակ եւ զԵրեսաշէնն» (Դ III 216): Նախ քանզոր ընթերցման մասին, տրվալ է հատվածում եւ փառահանքն պետք է ուղղել՝ եւ ի Փռչանակն, այսինքն բաց է թողնվել ի նախիրքը (տե՛ս լուսանկար 227): Լախորը հրատարակիչները պարզ կարգացվող Փռչանակն տեղանունը հավանաբար Ստ. Օրբելյանի «Պատմության» ձեռագիր տարբերակների հետեղությունը վերականգնել են՝ Փռչանակն և այն նույնացրել Վայոց ձորի արծաթի, կապարի հանքավայրի՝ Գյումուշխաննի հետ, որը գտնվում է Գեղեվանքի մերձակայքում (ՍՃՃԲ 175—176, ՂԱՍ 196): Միայն Ախլշանը Փռչանակնը այլ հանքերով հարուստ վայր է համարում (գյուղ) և տարբերում արծաթի, կապարի հանքավայր Գյումուշխաննից (ՂԱՍ 91, 93, 107):

